


ՔՆԱՐԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ
ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ
ՏԱՐԻՆԵՐԻՆ





АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

КНАРИК ГРИГОРЯН

КОЛХОЗНОЕ КРЕСТЬЯНСТВО
СОВЕТСКОЙ АРМЕНИИ В ГОДЫ
ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ
(1941—1945)

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН

1979

338.1K/47.925γ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԽԵՍՏԵՍՈՒՏ

A 11
64543

ՔՆԱՐԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՍՈՎԼԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ
ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ
(1941—1945)

1486-80



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ

1979

Պատասխանատու խմբագիր՝
պատմական զիտուրյունների բեկնածու
Գ. Մ. ԳԵՂԱՄՅԱՆ

Գիրքը հրատարակուրյան են Երաշխավորել գրախոսներ՝
պատմական զիտուրյունների բեկնածու Ե. Մ. ԽԱԼԵՅՅԱՆԻ
և Կ. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

Գրիգորյան Փ. Գ.

Գ 888 Սովետական Հայաստանի կոլտնտեսային գյուղացիությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941—1945) /Պատ. խմբ. Գ. Մ. Գեղամյան.—Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1979.—198 էջ.

Աշխատության մեջ արխիվային փաստաթղթերի հիման վրա ցուց է տրված հայ աշխատավոր գյուղացիության հերոսական աշխատանքը, նրա բարձր զիտակցությունը և վառ հայրենասիրությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին:

Առանձին տեղ է հատկացված կոմունիստական կուսակցության, սովետական կառավարության կազմակերպած համաժողովական զամպանիաներին և այդ գործում աշխատավոր գյուղացիության ներդրած ավանդին:

Գ 0505030202 9(C43) 2
703(02)-79 27-78 ԳՄԳ 63. 3(22) 7

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակուրյուն, 1979:

Ն Ե Ր Ա Շ Ո Ւ Ի Թ Յ Ո Ւ Ն

Սովետական պատմագիտության կարևորագույն խընդիրներից է բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության պատմության գիտական ուսումնասիրությունը։ Առանց այդ հարցի բազմակողմանի մշակման անհնարի է վերհանել սովետական հասարակության ամբողջական պատմությունը։

Գյուղացիության պատմության ուսումնասիրությունն ունի գիտական և բաղաբական կարևոր նշանակություն։ Պրոլետարիատի գիտատուրայի հաստատումից հետո մեր երկրում սոցիալիզմի կառուցման ամենադժվարին և ամենաբարդ խնդիրը մանրգյուղացիական տնտեսությունների միավորումն էր կոլեկտիվ տնտեսությունների մեջ։ Կուսակցության ղեկավարությամբ այդ խնդրի իրագործումը արմատապես փոխեց գյուղացու կյանքի պայմանները և նախադրյալներ ստեղծեց գյուղատնտեսության հետագա զարգացման համար։ Այդ մասին ՍՄԿԿ ծրագրում ասված է. «Սովետական գյուղի անցումը խոշոր սոցիալիստական տնտեսության՝ մեծ հեղափոխություն էր տնտեսական հարաբերությունների մեջ, գյուղացիության կյանքի ամբողջ կացութաձևի մեջ։ Կոլեկտիվացումը գյուղը ընդմիշտ փրկեց կուսակցին ստրկացումից, դասակարգային շերտավորումից, քայլայումից և աղքատացումից։ Լինինյան կոռպերատիվ պլանի հի-

ման վրա գյուղացիական դարավոր հարցը գտավ իր իսկական լուծումը»¹:

Ինչպես ամբողջ Սովետական Միությունում, այնպես էլ նրա բաղկացուցիչ մասը կազմող Հայաստանում հաղթանակեց կոլտնտեսային կարգը, որի շնորհիվ գյուղում տիրապետող դարձավ սոցիալիստական տնտեսաձերը: 1940 թ. տվյալներով Հայաստանում գյուղատնտեսության կոլեկտիվացումը տնտեսությունների ընդունակության գծով կազմում էր 98,3%, իսկ ցանքատարածությունների գծով՝ 99,9%²: Այդ ժամանակ հանրապետությունում կային 1030 կոլտնտեսություն, 14 սովորություն և 33 ՄՏ կայան: Ցանքատարածությունները կազմում էին 433,7 հեկտար³: Գյուղում ամբողջովին վերացվեցին կուլակային տարրերը և նրանց մնացորդները: Փոխվեց գյուղացիության սոցիալական դեմքը: Աճեց նրա քաղաքական ու տնտեսական ակտիվությունը: Պատմական կարճ ժամանակահատվածում մանր արտադրողների դասկարգից հայ գյուղացիությունը վերափոխվեց կոլտնտեսայինի և իր սոցիալական էությամբ մերձեցավ բանվոր դասկարգին: Համաժողովրդական պետական և կոլտնտեսային կոռոպերատիվ սեփականությունների մերձեցումը սոցիալտնտեսական ամուր հիմք ստեղծեց այդ դասակարգերի շահերի ընդհանրության համար:

Խոշոր, մեքենայացված, բարձր ապրանքային սոցիալիստական գյուղատնտեսության հաղթանակը ապացուցեց սոցիալիստական սիստեմի առավելությունները կապիտալիստական և մանրացված, անհատական տնտեսությունների նկատմամբ: Գյուղի աշխատավորների քրտնաշան աշխատանքի շնորհիվ կատարվեցին և գերակատարվեցին նախապատերազմյան տարիների պլանները, որի համար էլ ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության 1940 թ. նոյեմբերի

1 «Սովետական Միության կոմունիստական կուսակցության ծրագիրը», Երևան, 1961, էջ 15:

2 «Народное хозяйство Армянской ССР, Стат. сборник», Госстатиздат, Ереван, 1957, стр. 55.

3 Նույն տեղում:

23-ի հրամանագրով Հայաստանի գյուղատնտեսության մեջ առավել աշքի ընկած 309 առաջավորներ պարզեատրվեցին շրանշաններով ու մեղալներով⁴: Իսկ 1939—1940 թթ. ժավալված սոցիալիստական մրցության բարձր ցուցանիշների համար հարյուրավոր կոլտնտեսականներ դարձան Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսի մասնակիցներ:

Սոցիալիստական հասարակարգի կառուցման կարևորագույն օղակներից է կուտուրական հեղափոխությունը, որը հայ գյուղացուն դուրս բերեց հոգեոր ստրկությունից ու խավարից: Նախապատերազմյան տարիներին Հայաստանը դարձել էր բարձր գրագիտության երկիր: 1940—1941 ուսումնական տարում գյուղական վայրերում գործում էին 1020 դպրոց, որից 551-ը՝ յոթնամյա և 234-ը՝ միջնակարգ⁵:

Սոցիալիստական շինարարության պրոցեսում աճեց, կատարելագործվեց սովետական դարաշրջանի նոր մարդը, օժտված չերմ հայրենասիրությամբ, ժողովրդի ընդհանուր գործի նկատմամբ անսահման նվիրվածությամբ: Բարյական բարձր հատկանիշները սովետական մարդկանց մոտ մշակվեցին ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառներում կատարած անձնուրաց աշխատանքի մեջ, կոմունիստական կուսակցության ու սովետական կառավարության առաջադրանքները կատարելու ընթացքում:

Հայրենական մեծ պատերազմի առաջին տարիներին կոլտնտեսային գյուղացիությունը կազմում էր ՍՍՀՄ ազգաբնակչության մեծ մասը և սովետական բանակի հիմնական համալրողն էր:

Բանվոր դասակարգի, գյուղացիության ու մտավորականության բարյարազարքական միասնությունը հանդիսացավ Հայրենական մեծ պատերազմում Սովետական Միության հաղթանակի կարևորագույն գրավականներից մեկը:

⁴ «Правда», 24 ноября 1940 г.

⁵ К. С. Худавердян. Культурная революция в Советской Армении, Ереван, 1966, стр. 193.

Սովետական իշխանության տարիներին Հայաստանում հրատարակվել են բազմաթիվ մենագրություններ, հոդվածներ, ստեղծվել են կոլեկտիվ աշխատություններ, կազմվել են ժողովածուներ՝ նվիրված Սովետական Հայաստանի պատմության ընդհանուր հարցերի մեկնաբանմանը, որոնցում արծարծվել են նաև գյուղացիության պատմության հարցերը։ Մի շարք աշխատություններ նվիրված են հանրապետության գյուղացիության պատմությանը։ Սովետական Հայաստանի գյուղացիության պատմության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում Հայրենական մեծ պատերազմի ժամանակաշրջանը։ Սովետական ամբողջ ժողովուրդը, այդ թվում կոլտնտեսային գյուղացիությունը Սովետական Միության Հայրենական մեծ պատերազմի տարիներին հանդես բերեց պատմության մեջ շտեսնված համաժողովրդական շահերի բարձր գիտակցություն։ Նա իր կատարած անձնվեր աշխատանքով ցույց տվեց, որ անսահմանորեն նվիրված է սոցիալիստական կարգերին և պատրաստ է կյանքի գնով պաշտպանելու իր հայրենիքը։

Վաղուց ի վեր հաստատված ճշմարտություն է, որ պատերազմի բախտը վճռվում է ոչ միայն ուղմաղաշտում, այլև թիկունքում։ Հայտնի են այդ առթիվ Վ. Ի. Լենինի ասված հետեւյալ խոսքերը. «Պատերազմում հաղթում է նա, ով ավելի շատ ռեզերվներ, ավելի շատ ուժի աղբյուրներ, ավելի շատ դիմացկունություն ունի ժողովրդական զանգվածում»։

Հայրենական մեծ պատերազմի տարիներին գյուղացիությունը ուղմանակատին տալիս էր ոչ միայն հայրենիքին անսահմանորեն նվիրված մարտիկներ, այլև նյութական հսկայական միջոցներ՝ հաց, պարենամթերք, հանդերձանք, իսկ ուղմական արդյունաբերությանը՝ հումք։ Նյութական բարիքները մեծ մասամբ ստեղծվում էին գյուղում, կոլտնտեսային գյուղացիության աշխատանքով, պատերազմա-

6 Վ. Ի. Լենին, Երկեր, Հատ. 30, էջ 75։

կան ծանր ու դժվարին պայմաններում։ Այդ տարիներին նրա ապրած աշխատանքալին, հոգևոր ու կուտուրական կյանքի պատմությունը կարեւոր օղակ է սովետական հասարակության պատմության ընդհանուր շղթայում, ուստի և առանց զյուղացիության պատմության ուսումնասիրության հնարավոր չէ ստեղծել Հայրենական մեծ պատերազմի ամբողջական ու լիարժեք պատմությունը։

Հայրենական մեծ պատերազմի շրջանի սովետական զյուղացիության պատմության ուսումնասիրությունը սկըսվել է պատերազմի ավարտից անմիջապես հետո։ Այդ հարցով զբաղվել են շատ պատմաբաններ, տնտեսագետներ։ 1945—47 թթ. լույս են տեսել Վ. Գ. Վենժերի, Ի. Ե. Կանտաշերի, Ե. Ս. Կարնավովայի, Ա. Պ. Տերյանի, Ն. Ա. Վոլոնեսինսկու աշխատությունները, որոնք արժեքավոր տեղեկություններ են պարունակում զյուղատեսության նյութատեխնիկական բազայի փոփոխության, աշխատուժի օգտագործման և այլ հարցերի մասին։ Սակայն անհատի պաշտամունքի հետևանքով, նշված աշխատություններում թույլ են տրված որոշ սխալներ։ Այդ տարիներին եղան նույնիսկ հեղինակներ, որոնք պատերազմը համարեցին ժողովրդական տնտեսության զարգացումը խթանող մի ուժ։ ՍՄԿԿ Համագումարից հետո հետազոտողները լայն հնարավորություն ստացան օբյեկտիվ կերպով լուսաբանելու ինչպես նախապատերազմյան, այնպես էլ պատերազմի տարիների պատմությունը։ Այդ տեսակետից սովետական պատմագիտության մեջ խոշոր ներդրում է «Սովետական Միության կոմունիստական կուսակցության պատմությունը» (Փաստաթղթեր և նյութեր) ժողովածուն⁷։

Հայրենական պատերազմի պատմության վերաբերյալ սովետական պատմագիտության հաջողություններից պետք է համարել «Սովետական Միության 1941—1945 թթ. Հայրենական մեծ պատերազմի պատմություն» վեցհատորյա

⁷ «История Коммунистической партии Советского Союза (июнь 1941—1945 гг.)» Документы и материалы. Изд-во полит. лит. М., 1970.

աշխատության⁸ հրատարակումը, որտեղ լուսաբանված են Հայրենական պատերազմի պատմության բոլոր փուլերը մեր երկրի հասարակական ու քաղաքական կյանքում և էկո-նոմիկայի մեջ տեղի ունեցած երեսությունները։ Առանձին գլուխներ են նվիրված թիկունքի աշխատանքներին։

Այդ հարցերը համառոտ շոշափվել են նաև Հայրենա-կան պատերազմի պատմությանը նվիրված մեկհատորյակում⁹։

Հրապարակի վրա են մի շարք այլ աշխատություններ, որոնք նվիրված են Սովետական Միության տնտեսության, բանվոր դասակարգի և հատկապես կոլտնտեսային գյուղա-ցիության հերոսական աշխատանքի լուսաբանմանը։ Այդ տեսակետից մեծ հետաքրքրություն է ներկայացնում Յու. Վ. Հարությունյանի մենագրությունը¹⁰։ Կոլտնտեսային գյուղա-ցիության Հայրենական պատերազմի ժամանակաշրջանի պատմության ուսումնասիրությամբ զբաղվել են նաև միու-թենական մյուս հանրապետություններում։

Սովետական Հայաստանի գիտնականները և իրենց ու-սումնասիրություններում անդրադարձել են կոլտնտեսային գյուղացիության՝ Հայրենական պատերազմի շրջանի պատ-մության հարցերին¹¹։ Այդ աշխատություններից արժանի են

8 «История Великой Отечественной войны Советского Союза 1941—1945 гг» (в шести томах), М., 1960—1965.

9 «Великая Отечественная война Советского Союза» 1941—1945 гг. (Краткая история), М., 1967, 1970.

10 Ю. В. Арутюнян, Советское крестьянство в годы Великой Отечественной войны, М., 1963, 1970.

11 Ա. Մնացականյան, Հայ ժողովորդը Հայրենական մեծ պատե-րազմում, Երևան, 1954, Կ. Միրզախանյան, Հայաստանի կոմերիտմիությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին, Երևան, 1956, «Մեծ Հռոմեացիրի դրոշի ներքո» (Հոդվածների ժողովածու), Երևան, 1957, «Հայաստանի կոմոնիստական կուսակցության պատմության ուրվագծեր», Երևան, 1958, 1971, Ս. Պ. Աղայան, Ե. Մ. Խաչելյան, Ուրվագծեր Սովե-տական Հայաստանի պատմության, պրակ 3, Երևան, 1960, «Սովետական Հայաստանի պատմության 1920—1960 թթ.», Երևան, 1960, Հ. Ա. Խաչատրյան, Հայաստանի կոլտնտեսային գյուղացիությունը Հայրե-

Հիշատակման «Հայաստանի կոմունիստական կուսակցության ուրվագծերը» և «Հայ ժողովրդի պատմություն» մեծածավալ աշխատության VIII հատորը։ Վերը նշված աշխատությունների՝ Հայրենական մեծ պատերազմին հայ ժողովրդի մասնակցությանը նվիրված բաժինները գիտական ծավալուն ուսումնասիրություններ են և արժեքավոր ներդրում պատմագիտության մեջ։

Պատմագիտության մեջ աշքի ընկնող երկույթ է «Советская Армения в годы Великой Отечественной войны (1941—1945)» փաստաթղթերի և նյութերի ժողովածությունը։ Այն նվիրված է թիկունքում Սովետական Հայաստանի տնտեսության բոլոր բնագավառների աշխատանքների վերհանմանը Հայրենական պատերազմի տարիներին, ինչպես նաև ուսումնակատում ու թշնամու թիկունքում սովետական բազմազգ ժողովրդի դավակների շարքերում մարտնչած հարյուր-հազարավոր հայ բաջորդիների մարտական սիրագործություններին և սփյուռքահայության

նական մեծ պատերազմի տարիներին, «Բանքեր Հայաստանի արխիվներ», Երևան, 1961, Գ. Գոյան, Հայաստանի գյուղատնտեսության մեթենայացումը 40 տարում, Երևան, 1961, Հ. Յովանյան, Հայաստանի սոցիալիստական էկոնոմիկայի զարգացումը, Երևան, 1962, Վ. Ղազախյան, էջմիածնի շրջանի և 3 սովորություն (1921—1962), Երևան, 1964, «Հռկտեմբերը և Հայաստանի տնտեսական զարգացումը», Երևան, 1967, «Հայաստանի լենինյան կոմերիտմիության պատմություն», Երևան, 1968, Գ. Գեղամյան, Հայաստանի կոլտնտեսային գյուղացիությունը սոցիալիզմի վերջնական հաղթանակի ժամանակաշրջանում (1946—1958), Երևան, 1968, Լ. Կ. Մարտիրոսյան, Սովետական Հայաստանի կանագը Հայրենական մեծ պատերազմի տարիներին, Երևան, 1968, «Հայ ժողովրդի պատմություն», հատ. 8 Երևան, 1970, Գ. Գ. Գրիգորյան, Հայ ժողովրդի մասնակցությունը Կովկասի պաշտպանությանը, Երևան, 1971, Ա. Ն. Մնացականյան, Միասնական շարքերում, Երևան, 1975,

«Народное хозяйство Армянской ССР, Стат. сборник», Е., 1957,
«Сельское хозяйство Армянской ССР, Стат. сборник», Е., 1962;
«Культурное строительство Армянской ССР, Стат. сборник», Е., 1962;
К. Худавердян, Культурная революция в Советской Армении, Е., 1966; «Советская Армения в годы Великой Отечественной войны (1941—1945)», Сборник документов и материалов, Е., 1975.

ակտիվ մասնակցությանը Սովետական Միության Հայրենական մհծ պատերազմին։ Ժողովածուն արժեքավոր նյութեր է պարունակում նաև հայ գյուղացիության վերաբերյալ և մեծապես նպաստում է գյուղացիության պատմության մշակման գործին։

«Սովետական Հայաստանի կոլտնտեսային գյուղացիությունը Հայրենական մհծ պատերազմի տարիներին» աշխատությունում մենք անդրադարձել ենք պատերազմի պահանջներին համապատասխան գյուղատնտեսության վերակառուցման, կոլտնտեսային գյուղացիության թիկունքում կատարած անձնուրաց աշխատանքի, գյուղում տարվող գաղափարական աշխատանքի, սոցիալիստական մրցության ծավալման և գյուղի աշխատավորների կողմից ուղմաճակատին ցույց տրվող համաժողովրդական օգնության հարցերին։

Սույն թեման լուսաբանելիս դեկավարվել ենք մարքսիզմ-լենինիզմի դասականների դրույթներով, ՍՄԿԿ Կենտկոմի և սովետական կառավարության, ՀԿԿ Կենտկոմի և Հայկական ՍՍՀ կառավարության համապատասխան որոշումներով ու դիրեկտիվներով։ Աշխատությունը շարադրելիս օգտագործել ենք ՍՄԿԿ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական մասնաճյուղի, Հայկական ՍՍՀ Հռկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական, ԳԱ պատմության ինստիտուտի Հայրենական մհծ պատերազմի պատմության կաբինետի և մի շարք շրջանային սովետների պետական արխիվների նյութերը։ Օգտագործել ենք նաև միութենական, հանրապետական, շրջանային ու ուղմաճակատային մամուլը և հրապարակի վրա եղած գրականությունը։

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ
ՊԱՀԱՆՁՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ

Սովետական Միության 1941—1945 թթ. Հայրենական մեծ պատերազմը մեր ժողովրդի վերապրած պատերազմներից ամենագաժանն ու ամենածանրն էր:

Ստրկացնելով Եվրոպայի ժողովուրդներին, եվրոպական երկրների տնտեսությունը ծառայեցնելով պատերազմի շահերին, Հիտլերյան Գերմանիան խախտեց 1939 թ. օգոստոսին կնքած սովետագերմանական շարձակման պակտը և 1941 թ. հունիսի 22-ին հանկարծակի հարձակում գործեց մեր հայրենիքի վրա:

Սկսվեց Հայրենական մեծ պատերազմը: Խաթարվեց սովետական ժողովրդի խաղաղ, ստեղծագործ կյանքը: Սոցիալիստական հայրենիքը պաշտպանելու համար ուժի ելավ սովետական ամբողջ ժողովուրդը: Հիտլերականներն սկզբում հույս ունեին կարճ ժամանակամիջոցում ջախջախել սովետական բանակի հիմնական ուժերը, քայլացել մեր երկրի արդյունաբերական կարևորագույն կենտրոնները, ընկճել սովետական ժողովրդի կամքը: Այդ պատերազմի ըուն նպատակը սովետական հասարակարդի տապալումն էր ու սովետական ժողովրդի ստրկացումը: Սակայն գերմանական զավթիչներն իրենց հաշիվներում շարաշար սխալվեցին: Նըրանք շկարողացան տեսնել ու հասկանալ այն հսկայական, արմատական փոփոխությունները, որ տեղի էին ունեցել մեր երկրում նախապատերազմյան հնդամյակների տարիներին: Հզորացել էր երկրի նյութատեխնիկական բազան, բարձրացել ժողովրդի տնտեսական, հոգևոր ու գիտակցա-

կան կյանքի մակարդակը։ Հիտլերականները նպատակ էին դրել ոչնչացնել այն ամենը, ինչ այնքան նվիրական էր սովետական երկրի ամեն մի քաղաքացուն։

Տարիների ընթացքում ձեռք բերած հաջողություններն արյան գնով պաշտպանելու վճռականությամբ լի, սովետական մարդիկ մեր անծայրածիր հայրենիքի բոլոր քաղաքներում ու գյուղերում, խուսորներում ու առևներում հավաքվում էին միտինգների, իրենց ցասումն արտահայտում անարգ թշնամու ունաճգությունների դեմ, սերտորին համախմբվելով բոլշևիկյան կուսակցության և սովետական կառավարության շուրջը։ Նման միտինգներ ու ժողովներ տեղի ունեցան նաև Հայաստանի քաղաքներում ու գյուղերում։ Իրենց բազմամարդ միտինգներում հայ աշխատավոր գյուղացիները երդում տվեցին՝ եղբայրական մյուս ժողովուրդների զավակների հետ ուսումնական տված պաշտպանել հայրենի հոգը օտարերկրյա զավթիչներից, մեկ մարդու նման կանգնել Հայրենիքի պաշտպանների առաջին շարքերում և կրծքով պաշտպանել Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության նվաճումները։ Կամոյի (Նախկին՝ Նոր Բայազետի) շրջանի աշխատավորները հունիսի 23-ին, հավաքվելով միտինգի, իրենց ընդունած բանաձեռում դրեցին. «Նոր Բայազետի շրջանի աշխատավորներս հայտարարում ենք մեր կամքը, մեր պատրաստակամությունը, մեր պարտիայի ու կառավարության առաջին իսկ կոչին լինել սովետական բանակի շարքերում և կրծքով պաշտպանել մեր ազատությունը, մեր հայրենիքը։ Մենք կրկնապատկելու ենք մեր եռանդը, մեր աշխատանքի թափը, մեր բոլշևիկյան զգոնությունը, մեր աշխատանքների տարրեր ճակատներում բերքահավաքի, պետական պարտավորությունների կատարման և ամենօրյա աշխատանքներում... Գերմանացիները Մոսկվան չեն տեսել և չեն էլ տեսնի։ Իսկ մոսկվացիները և ամբողջ մեր ժողովուրդը շատ լավ են ճանաշում Բեռլինի դռները, մենք արդարացի ենք, հաղթանակը մերը կլինի»¹։

1 «Բայազետի կոլխոզնիկ», 24 հունիսի 1941 թ.։

Հրազդանի (Նախկին՝ Ախտայի) շրջանի 500 երիտասարդ աղջիկներ շրջանային հավաքում վրեժի բուռն ցասումով լսեցին գերմանական ֆաշիզմի կողմից սոցիալիզմի երկրի վրա հարձակում գործելու լուրը և իրենց ընդունած կոչ-նամակում՝ ուղղված հանրապետության բոլոր կոմերիտուհիներին և աղջիկներին, գրեցին. «Այս պատերազմը մեզ համար Հայրենական պատերազմ է։ Մեր հերոսական Կարմիր բանակը ինչպես միշտ, այնպես էլ այս պատերազմում կհաղթանակի, որովհետև նրան կոփել և զինել են բոլշևիկյան փառապանծ պարտիան, սովետական հզոր կառավարությունը»։

Մենք ինչպես միշտ, այնպես էլ այժմ առանց խուճապի մատնվելու, պատրաստ ենք ամեն կերպ օգնել մեր հարազատ ու հերոսական կարմիր բանակին՝ թշնամուն կործանիչ և ոչնչացնող հարված հասցնելու համար։ Մենք կոչ ենք անում Հայաստանի բոլոր կոմերիտականներին և ոչ կոմերիտականներին՝ բանակ զնացող մեր եղբայրների աշխատանքը փոխարինել աղջիկներով ու կանացով։

Մեր գործն արդար է, կճզմենք ֆաշիզմը, հաղթանակը մերը կլինի, որովհետև մեզ հետ է ամբողջ աշխարհի պրոլետարիատը և աշխատավորությունը»²։

Նման բազմամարդ միտինգներ տեղի ունեցան Արտաշատում (Նախկին՝ Զամարլու), Եղեգնաձորում (Նախկին՝ Միկոյան), Հոկտեմբերյանում, Դիլիջանում, Մարտունիում և հանրապետության մյուս շրջաններում։ Միտինգների մասնակիցներն իրենց պատրաստակամությունն էին հայտնում կրծքով պաշտպանել Հողն Հայրենական, իսկ թիկունքում մնալու դեպքում՝ աշխատել կրկնապատկված եռանդով։

Պատերազմի առաջին իսկ օրերից սովետական բանակի շարքերը զրուակոչվեցին հազարավոր հայ երիտասարդներ։ Դեռևս շզորակոշված երիտասարդներից շատերը, ինչպես նաև զինվորական տարիքից դուրս հարյուրավոր քա-

2 «Սովետական Հայաստան», 28 հունիսի 1941 թ.։

ղաքացիներ դիմում էին ներկայացնում՝ կամավոր ռազմաճակատ մեկնելու համար։ Զինվորական կոմիսարիատներն էին գալիս բոլոր տարիքի ու մասնագիտության մարդիկ, օրու գիշեր չէին ղաղարում զորակոչի աշխատանքները։

Այդ օրերին «Սովետական Հայաստան» թերթում հրապարակվեց «Կարգապահություն», կազմակերպվածություն, անձնազոհություն» առաջնորդողը, որտեղ ասված էր. «...մեր երկրի ամբողջ բնակչությունը, բոլոր բանվորները, գյուղացիներն ու ինտելիգենցիան, տղամարդիկ և կանայք, հարկ եղած գիտակցությամբ կվերաբերվեն իրենց պարտականություններին, իրենց աշխատանքին։ Մեր ամբողջ ժողովուրդը այժմ պետք է լինի համախմբված ու միասնական, ինչպես երբեք։ Մեղանից յուրաքանչյուրը պետք է իրենից ու ուրիշներից պահանջի կարգապահություն, կազմակերպվածություն, անձնազոհություն (ընդգծումը մերն է—Փ. Գ.), ինչպես վայել է իսկական սովետական հայրենասերին, ապահովելու համար կարմիր բանակի նավատորմի և ավելացիայի բոլոր կարիքները, ապահովելու համար հաղթանակը թշնամու նկատմամբ»³։

1941 թ. հունիսի 30-ին ՍՍՀՄ Գերագույն Սովետի նախագահության, ՍՍՀՄ ժողովության և ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի որոշմամբ ստեղծվեց Պաշտպանության պետական կոմիտե՝ ի. Վ. Ստալինի գլխավորությամբ։ Պետության մեջ ամբողջ իշխանությունը կենտրոնացվեց Պաշտպանության պետական կոմիտեի ձեռքում։

ՍՍԿԿ-ը և Սովետական կառավարությունը հենվելով վ. ի. Լենինի՝ սոցիալիստական հայրենիքի պաշտպանության մասին դրությների վրա, պատերազմի առաջին իսկ օրերին մշակեցին թշնամու դեմ կովելու համար սովետական ժողովրդի բոլոր ուժերի մորիլիղացման ծրագիր։ Դրանք ՍՍՀՄ ժողովության և ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի մերձճակատային մարդերի կուսակցական և սովետական կազմակերպություններին ուղղված 1941 թ. հունիսի 29-ի հայտնի դիրիկտիվ-

3 «Սովետական Հայաստան», 24 հունիսի 1941 թ.։

ներն են⁴: Նրանցում մերկացված էին գերմանական իմպերիալիստների հանցագործ մտադրությունները և կոչ էր արվում սովետական ամբողջ ժողովրդին՝ գիտակցել վտանգի խորությունը, աշխատանքները վերակառուցել ուղղմական ձևով, կազմակերպել համակողմանի օգնություն ուղղմաճակատին:

Այդ դիրեկտիվները կուսակցական, պետական և հասարակական կազմակերպությունների, սովետական բազմազգ ժողովրդի գործունեության, երկիրը պատերազմի պահանջներին համապատասխան վերակառուցելու հիմնական ծրագրերն էին: Նրանց մեջ արտահայտված էր մեր ժողովրդի մարտական ու աշխատանքային նշանաբանը՝ «Ամեն ինչ ուազմաճակատի, ամեն ինչ հաղթանակի համար», որը և այդ դիրեկտիվների գլխավոր գաղափարն էր: Դիրեկտիվները մորթիկացնում էին սովետական ժողովրդի բոլոր ուժերը թշնամուն չախչախելու համար: Կուսակցության ու կառավարության այս դիրեկտիվներն ունեին ուղղմաքաղաքական հսկայական նշանակություն:

Սովետական մարդիկ միահամուռ պաշտպանեցին կուսակցության մարտական ծրագրերը և նրա կոչին պատասխանեցին աշխատանքային ու մարտական նորանոր սիրանքներով: Ուժեղացավ կամավորների հոսքը դեպի բանակ: Նըրանց փոխարեն գործարաններում ու հանքերում, կոլտնտեսություններում ու սովորողներում, հիմնարկ-ձեռնարկություններում աշխատանքի անցան կանայք, ծերերը, անշափահասները:

Սովետական մարդիկ ներգրավվեցին ժողովրդական աշխարհագորի ստեղծման մասսայական շարժման մեջ: Կուսակցական կազմակերպությունների նախաձեռնությամբ ժողովրդական աշխարհազորից բացի ստեղծվեցին կործանիչ գումարտակներ՝ լրտեսների, խուճապահարների և վնասարարների դիմ պայքարելու համար, ինչպես նաև ինքնա-

4 «Коммунистическая партия в Великой Отечественной войне (июнь 1941—1945 гг.)». Документы и материалы, Изд-во полит. лит. М., 1970, стр. 41—43.

պաշտպանության զանազան խմբակներ, որտեղ մարդիկ, առանց արտադրությունից կարվելու, ուսումնասիրում էին ուղմական գործը: Մեր կուսակցության առաջ քաշած առաջնահերթ տնտեսական խնդիրն էր՝ ժողովրդական տնտեսությունը կարճ ժամկետում վերակառուցել ուազմական ձեզվով, ուազմաճակատին տալ բավարար քանակությամբ ուազմական տեխնիկա և սպառազինություն, առաջին հերթին տանկեր ու ինքնաթիւններ: Այս առաջազդրանքի կատարմամբ պետք է վերացվեր թշնամու ուազմատեխնիկական գերազանցությունը և բարձրացվեր սովորական բանակի մարտունակությունը:

Ինչպես Սովորական Միության մյուս հանրապետությունների, այնպես էլ Հայաստանի աշխատավորները բազմակողմանի օգնություն ցուց տվեցին սովորական բանակին, ժամանակին համարեցին նրա շարքերը: Հանրապետության աշխատավորները կարգավորեցին նաև զորք ու ուազմական բեռներ փոխադրող տրանսպորտի արագ երթեվնեկությունը, ապահովեցին բոլոր հիմնարկ-ձեռնարկությունների, գործարանների ու ֆաբրիկաների, հանքերի ու էլեկտրակայանների հեռախոսային ու հեռազրական կապի աշխատանքը:

Պատերազմը լուրջ ու դժվարին խնդիրներ առաջադրեց նաև կոլտնտեսային գյուղացիությանը: Թիկունքային հանրապետություններից, այդ թվում Հայաստանից, պահանջվում էր առավել շափով օգտագործել բոլոր հնարավորությունները՝ ցանքատարածություններն ավելի ընդարձակելու, բարձր բերք ստանալու, անասունների գլխաքանակն ու մթերատվությունը ավելացնելու, այսինքն էր և պաղատու ծառերի, տեխնիկական ու բանջարաբոստանային կուտուրաների ցանքատարածություններն ընդարձակելու, ուազմաճակատի և թիկունքի օրավոր աճող պահանջներն ապահովելու համար: Սակայն այս խնդիրների լուծումը կապված էր մեծ դժվարությունների հետ: Նախ՝ պատերազմի սկզբում մեր երկրի գյուղատնտեսական մի շարք կարևոր շրջաններ, որոնք մինչեւ պատերազմը տալիս էին գյուղատնտեսության

Համախառն արտադրանքի 38%-ը, շաքարի՝ 84%-ը, ժամանակավոր զավթվել էին թշնամու կողմից: Այդ շրջաններում էին գտնվում նաև խոշոր եղջերավոր անասունների 38%-ը և խոզերի 60%⁵, չաշված հացահատիկային կուլտուրան: Հետևաբար պարզ է, թե ինչպիսի ծանրություն պետք է ընկած լիներ թիկունքային հանրապետությունների, այդ թվում և Հայաստանի վրա: Զնայած նման դժվարություններին, այնուհանդերձ 1940 թ. համեմատությամբ, 1941 թ. աշնանացանի ցանքատարածությունները Միության մեջ աճեցին 2 մլն հեկտարով: Դա պատերազմի պահանջներին համապատասխան գյուղատնտեսության վերակառուցման առաջին արդյունքն էր:

Մյուս դժվարությունը գյուղատնտեսության մեջ որակյալ կազմերի և աշխատող ձեռքերի պակասի առաջացումն էր: Պատերազմի հետևանքով գվալի շափով կրծատվել էր բանվորական ուժը: Անհրաժեշտ էր արագ կերպով համալրել այն:

Երրորդ դժվարությունը տեխնիկայի, պահեստամասերի խիստ կարիքն էր: 1941 թ. երկրորդ կեսից մինչև 1942 թ վերջը գյուղատնտեսությանը արակտորների, կոմբայնների, գյուղատնտեսական այլ մեքենաների, գործիքների, վերանորոգող սարքերի, պահեստամասերի մատակարարումը հասել էր նվազագույնի, իսկ երկրին և բանակին պարենով մատակարարելու հիմնական ծանրությունն ընկած էր գյուղատնտեսության վրա: Այս դժվարին խնդիրը գյուղացիությունը պարտավոր էր լուծել այն պայմաններում, եթե խիստ կրծատված էին թե՛ աշխատող ձեռքերը և թե՛ քաշող ուժը, ՄՏ կայաններում և կոլտնտեսություններում քաշող անասունների գլխաքանակը կրծատվել էր 32%-ով, իսկ ավտոմեքենաների թիվը՝ 89%-ով:

Գյուղատնտեսության մյուս դժվարություններից մեկն էլ այն էր, որ կրծատվել էին վառելանյութն ու պարարտա-

⁵ «Великая Отечественная война Советского Союза 1941—1945 гг.» (Краткая история), М., 1967, стр. 104.

նյութը: Եթե 1940 թ. Միության մեջ մեկ տրակտորին հասնում էր 8,1 տ. վառելանյութ, ապա 1942 թ. այն կրճատվեց մինչև 4,7 տ, իսկ 1943 թ. հասավ 4,2-ի: Հետեւաբար, 1940 թ. համեմատությամբ վառելանյութի մատակարարումը կրճատվեց 48%-ով: Ինչ խոսք, այս ընդհանուր ցուցանիշները վերաբերում էին նաև Հայաստանի գյուղատնտեսությանը:

Գյուղատնտեսության նյութատեխնիկական բազայի կըրճատումը հասցրեց ՄՏ կայանների և կոլտնտեսությունների տեխնիկական վիճակի վատթարացմանը, որը անխուսափելի որքեն աղղեց արտադրողականության վրա: Գյուղատնտեսության մեջ ստեղծվեցին այլ կարգի գժվարություններ, որոնք հաղթահարվեցին կոլտնտեսային կարգերի գերազանցության և գյուղի աշխատավորության ուժերի մոբիլիզացման, համառ ջանքերի և անձնական զրկանքների գնով: Պատերազմի ամբողջ ընթացքում կոլտնտեսային գյուղացիությունը հանդիս բերեց հայրենասիրության, անձնազոհության ու սովետական կարգերին մինչև վերջ նվիրվածության օրինակ:

6 «Социалистическое сельское хозяйство», 1945, № 10, стр. 7.

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԹԻԿՈՒՆՔԸ ՌԱԶՄԱՑԱԿԱՏԻ
ԱՄՈՒԲ ՀԵՆԱՐԱՆ

ԳՅՈՒՂԲ ՌԱԶՄԱՑԱԿԱՏԻՆ

Հայրենական մեծ պատերազմի առաջին իսկ օրից գյուղի աշխատավորության հրատապ խնդիրը դարձավ բանակին ու բնակչությանը հացով և պարենամթերքով, իսկ արդյունաբերությանը՝ հումքով ապահովելու հարցը։ Սակայն, ինչպես վերևում նշեցինք, այդ կարևոր խնդրի իրականացումը կապված էր պատերազմի հետեւանքով առաջացած մի շարք դժվարությունների հաղթահարման հետ։ Գյուղի աշխատավորներից պահանջվում էր հնարավորության սահմաններում վերացնել, կամ մասամբ թիթեացնել առաջացած այդ դժվարությունները, և կատարել կուսակցության, կառավարության ու ժողովրդի հրամայական պահանջը։ Առանց հացի և պարենամթերքի անհնարին էր մտածել հաղթանակի մասին։ Հետևաբար պարզ էր, թե ինչպիսի ծանր, պատասխանատու և անխուսափելի անհրաժեշտություն ներկայացնող խնդրի էր դրված մեր գյուղի աշխատավորների առջև։ Եվ նրանք այն պատվով կատարեցին։

Պատերազմական տարիներին ամուր և կազմակերպված թիկունք ունենալու անհրաժեշտության հարցին անդրադառնալով, գետես 1919 թ. օգոստոսին Վ. Ի. Լենինը գրել է. «Կարմիր բանակը, առանց հացի պետական մեծ պաշարների, վկարող ամուր լինել, որովհետև առանց դրան՝ չի կարելի բանակը ո՞չ ազատ տեղաշարժել, ո՞չ էլ նրան ինչպես հարկն է

պատրաստել: Առանց դրան՝ շի կարելի բանակի համար աշխատող բանվորներին պահել»¹:

Դեկավարվելով մեծ կենինի վերոհիշյալ ցուցումով, կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը մեծ ջանքեր գործադրեցին բանակը ամուր և հուսալի թիկունքով ապահովելու համար: Այդ նպատակով թիկունքի ողջ աշխատանքը վերակառուցվեց ուղղմական պահանջներին համապատասխան, ամեն ինչ ենթարկվեց ուղղմաճակատի շահերին, հաղթանակի դործին: Ամբողջ երկրը մեկ միասնական մարտական ճամբարի վերափոխելու անհրաժեշտությունը պահանջում էր կարճ ժամկետում վերակառուցել տնտեսությունը, այն հարմարեցնելով պատերազմի պահանջներին: Կոմունիստական կուսակցությունը և նրա կինտրոնական Կոմիտեն այս ուղղությամբ հսկայական աշխատանք կատարեցին: Կարճ ժամանակամիջոցում ողջ ժողովրդական տնտեսությունը, այդ թվում և զյուղատնտեսությունը, գրվեց ուղղմական ոելսերի վրա:

Մեր կոլտնտեսականները 1941 թ. բերքը հարկադրված եղան հավաքելու պատերազմական իրազրության պայմաններում: Տեղերում բերքահավաքը կազմակերպված անցկացնելու, բերքն անկորուստ հավաքելու համար կուսակցության և կառավարության կողմից եղան հատուկ հրահանգներ: «Պրավդա» թերթը օգոստոսի 7-ի առաջնորդողում գրեց. «Պատերազմի ժամանակ պահանջվում է բացառիկ խնայողություն: Թանկ է աճեցված ու հավաքված հացահատիկեցուրաքանչյուր փութը... Որքան ավելի շատ լինեն հացահատիկն ու այլ մթերքները, այնքան ավելի շատ պարենացին ռեսուրսներ ու ռեզերվներ կունենա Սովետական երկրը: Հիշելով այդ, կոլտնտեսականները խնամքով հավաքում են բերքը, աշխատելով դաշտում շթողնել շնձված ոչ մի հասկ, գետեն ընկած ոչ մի հատիկ: ...Բերքահավաքի ժամանակ կորուստներ թույլ տալը, մանավանդ այժմ, պատերազմի օրերին, հանցագործություն է»²:

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 29, էջ 688:

2 «Սովետական Հայաստան», 9 օգոստոսի 1941 թ.:

Խաղաղասեր ուժերի մոբիլիզացման համար մեծ ու կարևոր նշանակություն ունեցավ Սովետական Միության կանանց դիմումը՝ ուղղված ՍՍՀՄ-ի և աշխարհի բոլոր կանանց: Դիմումում բնութագրվում էր զավթած երկրներում հիտլերականների վարած զաղրելի քաղաքականությունը և կոչ էր արվում բոլոր կանանց՝ համառ և տքնաշան աշխատանքով օգնել պազմաճակատին: «...Մենք գիտենք, որ հաղթանակը հեշտությամբ ձեռք չի բերվի, — զրված էր այնտեղ, — ուրեմն թող ձեղանից յուրաքանչյուրի սիրուղ դառնա արիության անսպառ աղբյուր: ...Տնային տնտեսությներ, այժմ ձեր հոգատար ձեռքերն են հարկավոր արտադրությանը: Ուրեմն գնացեք ֆարբիկաներն ու գործարանները: Բանվորութիներ, կոլխոզնիկութիներ և ծառայողներ, էլեկտրահողեն տիրապետություն մասնագիտություններին, դագգահների, տրակտորների, կուլտուրայի և արվեստի տեղամասերում, էլեկտրականորեն փոխարինեցեք նրանց, ովքեր գնացել են առաջավոր դիրքերը: ...Մեր նվիրական ուժերը տանք այն բանին, որպեսզի պահպանենք մեր զավակների թանկարժեք, հարազատ արյունը: Բոլորս դառնանք հմտա, քնքուշ քույրեր, հիվանդապահներ, դոնորներ...»

Ամբողջ աշխարհի կանայք: Սովետական Միության ժողովուրդները պատերազմ են մղում ամբողջ մարդկության թշնամի՝ ֆաշիզմի դեմ: Այդ պայքարին պետք է միանան աշխարհի բոլոր կանայք... Զեր սեփական փրկությունը, ձեր երեխաների փրկությունը՝ մեր հաղթանակի մեջ է»³: Պատերազմի առաջին իսկ օրվանից սովետական միլիոնավոր կանայք գործարաններում, ֆարբիկաներում, կոլտնտեսային դաշտերում ու ֆերմաներում փոխարինեցին ուազմաճակատ մեկնած իրենց հարազատներին: Նրանք կանգնեցին դագգահների, մեքենաների առաջ, անդադրում աշխատեցին կոլտնտեսային դաշտերում: Պատերազմի տարիներին թիկունքի հիմնական ծանրությունը իրենց ուսերի վրա կրելով, սո-

վետական կանայք դարձան սոցիալիստական մրցության առաջավորներ և իրենց անձնուրաց աշխատանքով՝ ամրապնդեցին մեր երկրի թիկունքը:

Համեմ(բ)կ Կենտկոմը և ՍՍՀՄ Ժողկոմիորհը կոչերից ու հրահասգներց բացի, որոշում կայացրին գյուղատնտեսական աշխատանքներում քաղաքացին ու գյուղական վայրերի աշխատունակ բնակչության հավաքագրման կարգի մասին: Այդ որոշման համաձայն ստարտադիր կարգով, ինչպես գյուղի, այնպես էլ քաղաքի աշխատունակ բնակչությունն ընդգրկվեց գյուղատնտեսական աշխատանքի մեջ: Աշխատանքի անցան թոշակառուներն ու անշափահասները: Փոխարինելով ռազմաճակատ մեկնած իրենց հարազատներին, նրանք հավաստիացնում էին, որ կանեն ամեն ինչ սովորական բանակի թիկունքն ավելի ամուր ու հուսալի դարձնելու համար: Այսպիս, Հայկական ՍՍՀ Գորիսի շրջանի աշխատավորներն իրենց զավակներին ռազմաճակատ ուղարկելիս Պաշտպանության պետական կոմիտեին ուղղած նամակում գրեցին. «...Մենք գորիսեցիներս պատվով կկատարենք այն խնդիրները, որ գուր զրել եք սովորական ժողովրդի առջև, մենք կանենք ամեն բան, մեր փառապանծ կարմիր բանակի հզորությունն ուժեղացնելու համար, կտանք ավելի ու ավելի շատ հաց, միս, տաք հագուստ և հումք արդյունաբերության համար, էլ ավելի կամրապնդներ Սովետական Միության ժողովուրդների անխորտակելի բարեկամությունը»⁴:

Հրազդանի շրջանի Աթարբեկյան, Զրառատ (նախկին՝ Ռնդամալ), Ալափարս, Հրազդանի սովխող (նախկին՝ Ներքին Ախտա) և այլ գյուղերում տեղի ունեցած քաղմամարդ միտինգներում կոլտնտեսականները վերցրին նոր, գործնական պարտավորություններ՝ բերքահավաքը անկորուստ հավաքելու, պետության հանդեպ ստանձնած իրենց պարտավորությունները արագործն կատարելու, հանրային սեփականությունը պահպանելու և խնամելու մասին: Աշտարակի շրջանի Եղվարդ գյուղից հաղորդում էին, որ «մեր կոլխոզից

4 Մէի Հայկական մասնաճյուղի կուսարիսիվ, ֆ. 15, ց. 3, գ. 1, թ. 2:

զգալի թվով երիտասարդներ պարտիայի ու կառավարության առաջին իսկ կոչով մեկնեցին սովետական բանակ։ Սակայն նրանց բացակայությունը բոլորովին շաղգեց մեր աշխատանքների վրա։ Նրանց փոխարինելու եկան հարցուրավոր հայրենասեր կանայք, մեծահասակներ ու պատանիներ։ Աշխատանքի ընդունակ բոլոր կոլխոզնիկները մասնակցում էին բերբահավաքին։ Զկա ավելի մեծ ու պատվավոր գործ, քան մեր սրբազն հայրենիքի պաշտպանությունը»⁵։

Հայաստանի կանանց մորիլիզացման գործում կարևոր նշանակություն ունեցավ 1941 թ. հունիսի 26-ի երկանի արտադրական ձեռնարկություններում աշխատող մի խումբ կանանց բաց նամակը՝ ուղղված Հայաստանի բոլոր կանանց։ Այդ կոչ-նամակում նրանք գրում էին. «...Այժմ հասել է ժամը, երբ մեր երկրի բոլոր կանայք պետք է մեկ մարդու նման դուրս գան պայքարի, գործարանում թե կոլխոզում, հիմնարկում թե ֆրոնտում զենքը ձեռքին օգնեն կարմիր բանակին, գաղաղած թշնամուն մինչև վերջ զախշախելու համար։

Դեպի դադահներ, դեպի մեքենաներ, դեպի զենք։ Փոխարիններ մեր ամուսիններին, մեր եղբայրներին, և եթե երկիրը պահանջի, նրանց հետ կողք-կողքի դիրքերը մեկնենք։ Քեզ, հայրենիք, երդվում ենք, որ ոչ մի օր, ոչ մի ժամ, ոչ մի րոպե մեր հայրենիքը չպիտի զգա իր որդիների բացակայությունը, նողկալի թշնամին պիտի չնշվի երկրի երեսից միանգամ ընդմիշտ»⁶։

Նույնպիսի բովանդակությամբ նամակ գրեցին Լենինականի մանարան գործարանի կին աշխատողները։ Այդ դիմում-կոչերը լայն արձագանք գտան հանրապետության նաև մյուս քաղաքներում ու շրջաններում։ Ի պատասխան այդ դիմում-կոչերի, տեղի ունեցան հակաֆաշիստական միտինզներ, որոնց մասնակից կանայք իրենց կամքը, պատրաստակամությունը հայտնեցին ուաղմաճակատ մեկնած հա-

5 «Սովետական Հայաստան», 11 հունիսի 1941 թ.։

6 «Սովետական Հայաստան», 26 հունիսի 1941 թ.։

բազատներին փոխարինելու, աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու, ուղղմաճակատի պատվերները կատարելու և գերակատարելու, սովետական բանակին օգնելու, հաղթանակը թշնամու դեմ ապահովելու համար։ Կանայք և աղջկները խմբերով դիմում էին կառավարությանը՝ բանակ մեկնելու, գործարանում և կոլտնտեսությունում աշխատելու ցանկությամբ։ Խնչակն քաղաքի, այնպես էլ գյուղի աշխատավորությները, մեր հայրենիքի ծանր օրերին ցուցաբերեցին վառ հայրենասիրություն և դիմակայելով ամեն մեր փորձության, դարձան ամուր հենարան սովետական բանակի համար։

Հայրենական պատերազմի ծանր օրերին սովետական կանանց եռանդուն ու անձնազոհ աշխատանքի մասին են վկայում արխիվային բազմաթիվ փաստաթղթեր։ Դրանցից մեկում գրված է, որ էջմիածնի շրջանի ավելի քան 3000 կանայք գերանդիներն ու մանգազները ձեռքներին դուրս են գալիս կոլտնտեսային դաշտերը հնձելու։ Միայն հունիս ամսագլանցին բանի օրում նրանք հնձում են 1100 հա հացահատիկ։ Կիրովականի Համզաշիման գյուղում 25-ամյա, շորս երեսաների մայր Արուսյակ Խառաւոյանը ուղղմաճակատ մեկնած ամուսնուն փոխարինելու ցանկությամբ դիմում է կոլտնտեսության վարչությանը՝ խնդրելով իրենից բացի «ամուսնու մաճը ու որի շտալ»։ Նա այդ մաճով և՛ վար էր անում, և՛ հնձում։ Նրա եռանդուն աշխատանքի օրինակին էին հետևում գյուղի մնացած կանայք⁷։

Պատերազմը սկսվելու առաջին իսկ օրից Վարդենիսի շրջանի կոլտնտեսություններում եռանդուն աշխատանք է տարվում։ Հունիսի 20-ին շրջանի կոլտնտեսություններում աշխատում էին 2525 կին, մոտ մեկ ամիս անց նրանց թիվը հասավ 4350-ի⁸։

Մարտունու շրջանի 21 կոմերիտուզիներ ներկայացան կուսշրջկոմ և խնդրեցին իրենց ուղարկել դաշտ՝ տրակտորի

7 Մէկ Հայկական մասնաճյուղի կուսարխիվ, ֆ. 1, ց. 31, գ. 9, թ. 92, 94։

8 Տե՛ս «Սովետական Հայաստան», 13 հունիսի 1941 թ.։

վրա աշխատելու: Մեկնելուց առաջ միտինգում նրանք ասացին. «Եթե հայրենիքը պահանջի, տրակտորի ղեկից մենք կանցնենք տանկերի վրա և կարմիր բանակի մարտական շարքերում կմարտնչենք Հիտլերի ավաղակային բանդաների դեմք⁹: Իսկ Աբովյանի շրջանի 40 կոլտնտեսուհիներ մեքենատրակտորային կայանում փոխարինեցին ուղղմանակատ մեկնած տրակտորիստներին ու կոմբայնավարներին:

Կանանցից բացի, դաշտ էին գուրս գալիս նաև ծերունիներն ու անշափահասները: Այսպես, Կիրովականի Համզաշիման գյուղում 89-ամյա Սերգո բիձան (Թանիելյանը) իր հետ դաշտ տարավ գյուղի բոլոր ծերունիներին: Իրենց զավակներին ուղղմանակատ ուղարկելիս Կոտայքի շրջանի Աղջարեղի գյուղի ծերունիները պարտավորվեցին. «Թշնամուն մենք իխինք ոչ միայն ուղղմանակատում, այլև անկորուստ ու որակով առատ բերք հավաքելով»¹⁰: Իսկ Ալավերդու շրջանի Հաղվի գյուղից Անուշ մայրիկը (Օհանյան), որը ուղղմանակատ էր ուղարկել իր 10 որդիներին և 5 թոռներին, երիտասարդի ավլունով օր ու գիշեր աշխատում էր կոլտընտեսային դաշտում, 1942 թ. ընթացքում վաստակել էր 180 աշխօր, ուղղմանակատում գտնվող իր որդի Սուրենին գրում էր. «Սուրեն ջան, թշնամին մեզ վրա է հարձակվել, ուզում է քանդել իմ օջախը, անպատճել իմ հարսներին, աղջիկներին, կոտորել իմ զավակներին, որբացնել իմ թոռներին: Եթե մենք նրան չգիմազրենք, ապա ո՞վ պետք է դիմադրի: Դու քո տասը նղրայրներով դիմացեք ծանր վերքերին, քաջ կովեցեք ու բարձր պահեք Օհանյանց գերդաստանի պատիվը: Կնոշդ ու երեխաների մասին մի մտածիր, բալաջան ինչպես ձեզ եմ պահել ու մեծացրել, այնպիս նրանց կպահեմ: Պառավ եմ, բայց կոներումս զեռ ուժ կա, աշքերումս լույս, սրտումս հավատք: Մենք բոլորս էլ աշխա-

9 «Սովետական Հայաստան», 26 հունիսի 1941 թ.:

10 «Սոցիալիստական տեմպով», 12 հուլիսի 1941 թ.:

տում ենք կոլխոզում։ Ես անասնապահական ֆերմայի կով կթողն եմ։ Ունեմ 180 աշխօր»¹¹։

Նման օրինակները եղակի չեին։ Գյուղի աշխատավորները դաշտ էին դուրս գալիս լուսաբացին և վերադառնում ուշ երեկոյան։

Բերքահավաքը ժամանակին ավարտելու, բերքի կորուստ շտալու համար կուսակցության ու կառավարության որոշման համաձայն 1943 թ. հուլիսի 1-ից մինչև օգոստոսի 31-ը գյուղատնտեսական աշխատանքների մեջ ընդգրկվեցին Հայաստանի քաղաքային բնակչությունից, բուհերից, տեխնիկումներից, դպրոցներից 20015 մարդ¹²։

Հայաստանում պատերազմի տարիներին կար 1035 կոլտնտեսություն և 15 սովխող, որոնք հաղթահարելով պատերազմի հետևանքով առաջացած դժվարությունները, 1941 թ. կազմակերպված անցկացրին ոչ միայն բերքահավաքը, այլև գյուղատնտեսական մյուս աշխատանքները։ Չնայած գյուղատնտեսական աշխատանքների ամենաեռուն շրջանում սկսվեց պատերազմը, բայց և այնպես կոլտնտեսային գյուղացիությունը ժամկետից 20 օր առաջ կատարեց պետությանը հացահատիկ հանձնելու իր պարտավորությունները։ Այդ մասին ՀԿ(Բ)Կ Կենտկոմի IX պլենումը 1941 թ. նոյեմբերի 19-ին արձանագրում է, «Հանրապետությունը կատարեց հացահատիկի մթերման պլանը 100%-ով, բնավարձինը՝ 98,5, մսինը՝ 98,8, կաթինը՝ 99,4, պանրինը՝ 92,7, բրդինը՝ 96,6, կաշվինը՝ 70, կարտոֆիլինը՝ 91,8, խոզինը՝ 100 %-ով»¹³։ Ինչպես տեսնում ենք, հիմնականում կատարված էին պետական բոլոր պարտավորությունները։

Աշտարակի, Ապարանի, Ղափանի, Էջմիածնի, Վարդե-

11 «Սովխտական Հայաստան», 1 նոյեմբերի 1942 թ. (Օհանուանների ընտանիքից զոհվել են 5 եղբայրները՝ Արտաշեսը, Սուրենը, Ավետիքը, Լևոնը և Կոստանդինը):

12 Տե՛ս ՀՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության Պետական Կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՀՀՍԾՊԿԱ), ֆ. 113, ց. 9, գ. 162, թ. 16։

13 Միև Հայկական մասնաճյուղի կուս, արխիվ, ֆ. 1, ց. 30, գ. 19, թ. 24։

նիսի, Կամոյի, Արթիկի և Ազիզբեկովի շրջաններն արդեն սկսել էին աշնանացանը, որպեսզի 1942 թ. դարձնեին բարձր բերքի տարի:

Գյուղատնտեսության հիմնական հարցերից մեկն էլ կաղրերի պատրաստումը, վերապատրաստումն ու տեղաբաշխումն էր: 1941 թ. աշնանից հանրապետությունում կազմակերպվեցին տրակտորիստների, կոմբայնավարների, օղակվարների, բրիգադավարների, ֆերմայի վարիչների, կոլտնտեսության նախագահների կարճատև դասընթացներ, որոնք 1942 թ. փետրվարին տվեցին առաջին շրջանավարտները: Այդ կարճատև դասընթացներն ավարտեցին 16 հազար մարդ¹⁴:

Պատերազմի սկզբից աշխատող ուժի պակասի հետևանքով կանայք մեծ հոսանքով ընդգրկվեցին գյուղատնտեսական աշխատանքների մեջ: Իսկ 1942 թ. սկսած գյուղատրնտեսական աշխատանքների հիմնական ծանրությունն ընկավ կանանց ուսերին: Բավական է նշել այն փաստը, որ Հայաստանի կոլտնտեսություններում աշխատող 173.276 կոլտնտեսականների կեսից ավելին կանայք էին¹⁵, իսկ 1944 թ. գյուղատնտեսության աշխատողների թվում կանայք արդեն կազմում էին 68,3%-ը: Նրանք էին, որ վաստակեցին բոլոր աշխարհի 49,7 տոկոսը: 200 աշխարհից ավելի վաստակած կանանց թիվը կազմեց 24,8 հազար, այն դեպքում, երբ 1940 թ. այդպիսիները միայն 7,2 հազար էին¹⁶:

1942 թ. փետրվարին «Պրավդան» «Ավելի համարձակություն» առաջարկում կանանց ղեկավար աշխատանքի առաջ քաշել կոլխոզներում» առաջնորդողում գրեց: «Կոլխոզների առջև ծառացել են նոր, պատասխանատու խնդիրներ՝ ուղղմանակատին և երկրին տալ ավելի ու ավելի շատ պարենամթերք, գյուղատնտեսական հումք: Լուրջ պարտականություններ են ընկել կանանց վրա, որոնք այժմ գյուղում հիմնական աշ-

14 ՀՀՍՇՊԿ արխիվ, ֆ. 122, ց. 3, գ. 41, թ. 35:

15 Նույն տեղում, ֆ. 163, ց. 12, գ. 46, թ. 2:

16 «Սովետական Հայաստանի տնտեսական զարգացումը, 1920—60 թթ.», 1960, Երևան, էջ 259:

խատողներն են: Եվ կանայք գյուղում մնացած տղամարդկանց հետ միասին, գործադրում են բոլոր ջանքերը որպեսզի պատվով կատարեն իրենց պարտքը Հայրենիքի հանդեպ:

Կոլխոզային գյուղերում բառիս բուն իմաստով չկա ոչ. մի աշխատանք, որ չկատարեն կանայք: Նրանք փոխարինում են կարմիր բանակ կանչված տրակտորիստներին, կոմբայնավարներին, վարորդներին, ՄՏԿ-ների ու սովխոզների նորոգող բանվորներին, համառորեն տիրապետելով մերենաներին:

Առաջավոր կոլխոզնիկուհիները կարող են կարճ ժամանակամիջոցում դառնալ հիանալի կազմակերպիչներ, կոլխոզների, անասնապահական ֆերմաների լավ զեկավարներ... Կուսակցությունը և սովետական կազմակերպությունները, ՄՏԿ-ների քաղբաժինները պարտավոր են դեկավարաշխատանքի առաջ քաշված կանանց ցույց տալ ամենօրյա օգնություն, սովորեցնել ու դաստիարակել նրանց»¹⁷:

Կուսակցության ու կառավարության պահանջի համաձայն Հայաստանում 754 կին առաջ քաշվեցին որպես օդակավարներ, բրիգադավարներ, ֆերմայի վարիչներ, կոլտրնտեսային վարչության և գյուղական սովետի նախագահներ: Այդ գործում աշքի ընկան էջմիածնի, Ստեփանավանի, Հոկտեմբերյանի, Նոյեմբերյանի, Հրազդանի, Աշտարակի և այլ շրջաններ: Հրազդանի շրջանի նախկին Աթարբեկյան գյուղի կոլտնտեսուհիներ Հայկուշ Մարգարյանը և Հայկանուշ Մնացականյանը դարձան օղակավարներ: Հոկտեմբերյանի շրջանի լենինի անվան կոլտնտեսությունից 18-ամյա Վահանդուստ Կարապետյանը եղբոր ուղարմաճակատ մեկնելուց հետո, ավարտեց տրակտորիստների երկամսյա դասընթացները և դարձավ Հոկտեմբերյանի ՄՏ կայանի լավագույն տրակտորիստուհիներից մեկը: Էջմիածնի «Անաստված» կոլտնտեսությունում Մարիամ Եղիազարյանը, Հայաստան Ամիրյանն առաջ քաշվեցին և նշանակվեցին բրիգադավարներ,

17 «Правда», 6 февраля 1942 г.

իսկ Օֆիկ Ղաղարյանը, Վարդուշ Մարգարյանը և էմմա Եղյանը՝ օղակավարներ: Սիսիանի շրջանից կուսիկ Հարությունյանը ընտրվում է Լեռնաշենի գյուղսովետի նախագահ, Համեստ Ղաղարյանը՝ Բորիսովկայի գյուղսովետի նախագահ: Շահումյանի շրջանի կոլտնտեսային վարչության նախագահ է նշանակվում նազանի Գալստյանը (հետագայում՝ սոցիալիստական աշխատանքի հերոս):¹⁸

Կանանց օգնելու, սովորեցնելու և նրանց գյուղատնտեսական զանազան աշխատանքներում առաջ քաշելու գործում խրախուսելի աշխատանք կատարեցին Կամոյի շրջանի կուսակցական և սովետական կազմակերպությունները: Այդտեղ 1—2 ամսում 124 կին առաջ քաշեցին որպես գյուղսովետի, կոլտնտեսության նախագահներ, ֆերմաների, բրիգադների և օղակների ղեկավարներ:

Գյուղատնտեսական աշխատանքներում կանանց ուժն ավելի լրիվ օգտագործելու նպատակով ՀԿ(Բ)Կ Կենտկոմը, կուսակցության շրջանային, քաղաքային կոմիտեները և տեղական սովետները ժամանակին զբաղվեցին նաև մանկամսուրների և մանկապարտեզների կազմակերպման, կազրերի կոմալեկտավորման հարցերով: Մանկամսուրների և մանկապարտեզների համար առանձնացվեցին հարմարավետ շենքեր, կահույք, անհրաժեշտ քանակությամբ սննդամթերք, սպասքի միջոցներ, համապատասխան ուսուցչադաստիարական, բժշկական բարեկամության, անձնակազմ և այլն: 1942 թ. գարնանացանի ընթացքում 2735 մանկական հրապարակներում տեղավորված էին ավելի քան 100 հազար երեխա:¹⁹

* * *

Հայաստանը մինչև պատերազմը հացը հայթայթում էր մեր երկրի մյուս շրջաններից: Անգամ 1942 թ. մարտին ՍՍՀՄ ժողկոմիորհը Հայաստանի կոլտնտեսություններին

18 Մանրամասնությունները տե՛ս Լ. Մարտիրոսյան, Սովետական Հայաստանի կանաք Հալբենական մեծ պատերազմի տարիներին, Երևան, 1968:

19 «Սովետական Հայաստան», 25 մարտի 1942 թ.:

որպես սերմացու բաց թողեց 20 տ կորեկ, 320 տ վուշ, 94 տ արեածաղիկ և այլն: Պատերազմի պայմաններում նա ոչ միայն իրեն պետք է ապահովեր հացով, այլև հացահատիկ հանձներ պետությանը: Հետեւաբար կոլտնտեսալին գյուղացիությունը մեծ ջանքեր գործ զնելով այդ բնագավառում նույնպես որոշ հաջողությունների հասավ: Պատերազմի տարիներին Հայաստանում կրթատվեցին բամբակի ցանքատարածությունները և ի հաշիվ գրանց ավելացան կարտոֆիլի, ծխախոտի և մանավանդ հացահատիկի ցանքատարածությունները: Կոլտնտեսականներն օգտագործում էին այն բոլոր հողերը, որտեղ հնարավոր էր ցանք անել:

Պատերազմի տարիներին գյուղատնտեսության վերակառուցումը պահանջում էր կոլտնտեսություններում, ՄՏ կայաններում և սովորողներում նոր ձևով կազմակերպել աշխատանքները: Լայն տարածում գտավ բրիգադային և օդակային աշխատանքի կազմակերպման ձևը: Գյուղատնտեսության արտադրությունը կազմակերպելու գործում կարևոր նշանակություն ունեցան ՄՍՀՄ ժողկոմիորհի և Համկ(բ)Կ Կենտկոմի 1942 թ. սկզբին ընդունած մի շարք որոշումները՝ կոլտնտեսականների համար աշխատերի պարտադիր մինիմումը բարձրացնելու, գյուղատնտեսության առաջավորներին նյութապես խրախուսելու, ՄՏ կայանների աշխատողների հաստիքների, դրույքների և նրանց համար պարգևներ մըստցընելու վերաբերյալ: 1942 թ. ապրիլի 13-ին, երբ Հրապարակվեց ՄՍՀՄ ժողկոմիորհի և Համկ(բ)Կ Կենտկոմի «Կոլտնտեսականների համար աշխատերի պարտադիր մինիմումը բարձրացնելու մասին» որոշումը, բոլոր շրջաններում տեղի ունեցան կոլտնտեսականների ընդհանուր ժողովներ, որոնք հավանություն տվեցին այդ որոշմանը և ընդգծեցին նրա կարեւոր նշանակությունը կոլտնտեսալին արտադրությունը կազմակերպելու գործում: Այդ որոշմամբ վերացվեց այն անհամապատասխանությունը, որն առաջացել էր պատերազմի հետեւանքով գյուղատնտեսական աշխատանքների ծավալի և աշխատող ձեռքերի քանակի միջև: Այդ անհամապատասխանությունը վերացվեց նաև վառ հայրենասիրությամբ խանդա-

վասված, աշխատանքային մեծ հուանդով լցված կոլտնտեսային գյուղացիության անձնագործ աշխատանքի և գյուղատնտեսական աշխատանքներում լրացուցիչ բանվորական ձեռքերի ընդգրկման շնորհիվ: Եթե 1940 թ. աշխատունակ կոլտնտեսականներից 16 հազարը ու մի աշխօր չուներ, 1942 թ. նրանց թիվը նվազեց 8 հազարով, 1943 թ. հասավ 2 հազարի: Եթե 1940 թ. կոլտնտեսականների միայն 20 %-ը ուներ 100—200 աշխօր, ապա հետազայում այն կրկնապատկվեց:

Կոլտնտեսային արտադրության մեջ կանանց և անշափահանների մեծ մասնակցության մասին են վկայում հետեւյալ թվերը. եթե 1940 թ. 146 հազար աշխատունակ կանանց 133 հազարն էր ընդգրկված գյուղատնտեսական աշխատանքների մեջ, ապա 1942 թ. 150 հազարից 147 հազարն էր ընդգրկված: Համարյա նույն պատկերն ուներ նաև անշափահանների մասնակցությունը: Եթե 1940 թ. 86 հազար անշափահաններից գյուղատնտեսական աշխատանքներին մասնակցում էին 64 հազար, ապա 1942 թ. նույն 86 հազարից՝ 78 հազարը²⁰: Կոլտնտեսականի տարեկան աշխօրերի մինիմումն այդ որոշմամբ սահմանվեց 120, բացառությամբ բամբակացան շրջանների, որոնցում այդ չափը կազմում էր 150 աշխօր: Գյուղում ծավալվող սոցիալիստական մրցության շնորհիվ աշխօրերի սահմանված մինիմումը հաճախ կրկնապատկվում կամ հուապատկվում էր: Յուրաքանչյուր աշխատող կնոջ աշխօրերի տարեկան միշին քանակը եթե 1940 թ. կազմում էր 88, ապա 1942 թ. հասավ 122-ի: Դեռահասների տարեկան աշխօրերի միշին քանակը 32-ից հասավ 57-ից²¹:

Ծուտով սույն որոշումը լրացվեց մեկ ուրիշ՝ «Քաղաքաների ու գյուղական վայրերի աշխատունակ բնակչությանը կոլխոզներում, սովխոզներում և ՄՏ կայաններում գյուղատնտեսական աշխատանքներ կատարելու համար մոբիլիզա-

20 Մի Հայկական մասնաճյուղի կուարիսիվ, ֆ. 1, ց. 33, գ. 1, թ. 18—19:

21 Նույն տեղում:

շիացի ենթարկելու կարգի մասին» որոշմամբ։ Դրանց մեջ էին արդյունաբերության, տրանսպորտի, հիմնարկ-ձեռնարկությունների բանվորներ, ծառայողներ, աշխատունակ, բայց շաշխատող քաղաքացիներ, տեխնիկումների և ուսումնարանների սովորողներ, դպրոցների բարձր դասարանի աշակերտներ և այլն։ Առաջին անգամ 1942 թ. հունիսից քաղաքացին և գյուղական վայրերի աշխատունակ բնակչությունից մորիլիղացիացի ենթարկվեցին 9810 մարդ²²։ Կուսակցության և կառավարության սույն որոշումը մեծ խանդակառությամբ ընդունվեց երեանի բժշկական, գյուղատնտեսական, անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտների, պետական համալսարանի ուսանողների կողմից, որոնք ամառային արձակուրդներին մեկնեցին գյուղերը և գործնական օգնություն ցուց տվեցին գյուղատնտեսական աշխատանքներին։

Աշակերտությանը գյուղատնտեսական աշխատանքների մեջ ընդգրկելու կապակցությամբ 1941—1942 ուսումնական տարին ավարտվեց ավելի վաղ²³։ Երեանի թելմանի. անվան միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտուհի Նորա Պարոնիկյանը արտահայտելով իր համազասարանցիների կամքը, դպրոցում կայացած միտինգում ասաց. «Կառավարության ու պարտիացի որոշումը մեզ անսահմանորեն ոգեռում է։ Մենք տարեկերջի քննությունները գերազանց հանձնելուց անմիջապես հետո կմեկնենք գյուղ և ամառային արձակուրդների ընթացքում մեր ամբողջ ուժերն ու եռանդը գործի կղնենք սոցիալիստական գյուղատնտեսության օգտակար լինելու համար։ Կոլլաողային և սովորային դաշտերում կատարելիք մեր արդյունավետ աշխատանքը կիմնի մի ահեղ հարված գերմանական օկուպանտներին»²⁴։ Վաստակավոր ուսուցչուհի Վ. Հարությունյանն իր ելույթն ավարտեց այսպես. «Ես ուսումնական տարին վերջացնելուց հետո իմ

22 ՀՀՍՇՊԿ արխիվ, ֆ. 123, ց. 5, գ. 1108, թ. 1:

23 ՄԼԻ Հայկական մասնաճյուղի կուսարխիվ, ֆ. 1, ց. 31, գ. 25, թ. 28:

24 «Առվելական Հայատան», 26 ապրիլի 1942 թ.:

դասարանի (7ա) աշակերտների հետ միասին կմեկնեմ գյուղ
և ակտիվորեն կմասնակցեմ կոլխոզային դաշտերի աշխա-
տանքներին՝ մեր քաջարի կարմիր բանակին էլ ավելի շատ
կենսամթերք տալու համար»²⁵:

Ուսումնական տարին լավ ցուցանիշներով փակելուց
հետո Զափանի շրջանի 245 ուսուցիչներ և ավելի քան 3000
աշակերտներ կազմակերպված ձեռվ մասնակցեցին գյուղա-
տնտեսական աշխատանքներին: Կոլտնտեսային դաշտերում
1942 թ. ամռանն աշխատում էին շուրջ 73000 աշակերտ,
5000 ուսուցիչ, այդ թվում՝ 15000-ից ավելի կոմերիտական²⁶:
Տասնյակ հազարավոր պատանիներ ու երիտասարդներ, մըտ-
նելով սոցիալիստական մրցության մեջ, մեծ ոգերորդություն
էին առաջացնում կոլտնտեսականների շրջանում՝ ուղղմական
բերքն անկորուստ համարելու գործում:

Գյուղատնտեսական աշխատանքներին մեծ օգնություն
էին ցույց տալիս Հանրապետության բանվոր-ծառավողները:
Զայտած բանվորները մեծ ծանրաբեռնվածությամբ էին աշ-
խատում, բայց չէին զլանում օգնելու գյուղատնտեսական
աշխատանքներին: Գալով գյուղ, նրանք վերանորոգում էին
շարքից դուրս եկած մեքենաները, գործիքները, հնարավորու-
թյան սահմաններում պատրաստում նորերը, ակտիվորեն
մասնակցում դաշտային աշխատանքներին: Երևանի շինա-
րարական տրեստի գործարանի կոլեկտիվը ոչ միայն ինքը
շեֆական օգնություն ցույց տվեց Արտաշատի շրջանի ՄՏ
կայանին, այլև 1942 թ. գեկտեմբերի սկզբին իր ժողովում
դիմում ընդունեց՝ ուղղված Երևան քաղաքի արդյունաբերա-
կան ձեռնարկությունների բոլոր բանվորներին, բանվորու-
թիներին, ինժեներատեխնիկական աշխատավորներին ու ծա-
ռայողներին կոչ անելով նրանց մեծ օգնություն ցույց տալ
գյուղին²⁷: Շինտրեստի գործարանի կոլեկտիվի այս լավ
օրինակով Երևանի մեխանիկական գործարանի կոլեկտիվը

25 Նույն տեղում:

26 «Սովետական Հայաստան», 11 օգոստոսի 1942 թ.:

27 «Սովետական Հայաստան», 3 գեկտեմբերի 1942 թ.:

ևս իր հերթին վերցնում է Շահումյանի շքանի ՄՏ կայանի շեֆությունը:

Հետևելով մեծահասակների օրինակին, դեռահասները ևս խորապես ուսումնասիրում էին և տիրապետում զյուղատընտեսական մեքենաների ու գործիքների պատրաստման մասնագիտություններին և անհրաժեշտության դեպքում փոխարինում մեծահասակներին:

Այսպես, Լենինականի 13 միջնակարգ դպրոցներ 1942 թ. գարնանը տվեցին 200 տրակտորիստ, 200 կալսիչ մեքենավարներ և այլն²⁸:

Պատերազմի պայմաններում մարդկանց անձնական շահագրգուվածությունն է՝ լ ավելի բարձրացնելու համար կրկին վերանայվեց 1940 թ. սեպտեմբերի 6-ի որոշումը՝ ցրտահերկ կատարող տրակտորիստների և կոլխոզների աշխատերի վրա հավելում կատարելու կարգի մասին։ Որոշման հիմքում ընկած էր խրախուսանքի, պարզեատրման և հավելյալ վարձատրման եղանակով աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու նպատակը։ 1941 թ. նոյեմբերի 3-ին Հայկական ՍՍՀ ժողկոմինորհը և ՀԿ(Բ)Կ Կենտկոմը վերանայելով պարզեատրման և հավելյալ վարձատրման վերաբերյալ որոշումը, սահմանեցին հետեւյալ կարգը.

1. Սահմանված սեղոնային աշխատանքները կատարած տրակտորիստներին հավելում տալ ցրտահերկի ժամանակ նրանց վաստակած աշխատերի 20%-ի շափով, իսկ սահմանված նորմայից ավելի գերակատարած հեկտարների համար աշխատերը հաշվել մեկ ու կես շափով։

2. Կոլտնտեսականների համար (բանող անսպաններով կատարելու ժամանակ) աշխատերը հաշվել կոլտնտեսություններում գոյություն ունեցող զնահատումների մեկ ու կեսի շափով, իսկ դրանից ավելի վարելու համար՝ կրկնակի շափով։

3. Ցրտահերկի պլանը տրակտորներով կատարելու ժամանակ ՄՏ կայանի դիրեկտորին, ավագ գյուղատնտեսին ու

28 «Սովետական Հայաստան», 6 մայիսի 1942 թ.։

ավագ մեխանիկին պարգևատրել մեկ ամսվա աշխատավարձով²⁹:

Վերօհիշյալ որոշման համաձայն «Ունիվերսալ» տրակտորի վրա աշխատելու դեպքում առաջին 15 օրացուցային օրերի ընթացքում 35 հեկտար մշակելիս՝ տրակտորիստն ստանում էր 35 աշխօր որպես պարգև և էլի մեկ աշխօր՝ 35 հեկտարից ավելի մշակած յուրաքանչյուր հեկտարի համար։ Վարձատրության այս ձեզ մեծապես խրախուսեց բոլոր տրակտորիստներին՝ բարձրացնելու իրենց վարած մեքենաների արտադրողականությունը և դրանով իսկ սեղմ ժամկետում նրանք կատարեցին գարնանացանի հիմնական աշխատանքները։ Հատուկ ուշադրություն դարձվեց նաև կենդանի քաշող ուժի օգտագործման վրա։ Այդ ասպարեզում եղած պակասը լրացնելու համար, որպես քաշող ուժ օգտագործվեցին նաև կովերը։

Ինչպես 1941 թ. նոյեմբերի 3-ի, այնպես էլ 1942 թ. ապրիլի 13-ի որոշումները մեծապես նպաստեցին պլանների կատարմանը և բերքատվության բարձրացմանը։

Կուսակցական և կոմերիտական կազմակերպությունների, տեղական սովետների ամենօրյա դեկավարության, բարձվոր գասակարգի անմիջական օգնության շնորհիվ գյուղի աշխատավորները կարողացան հաղթահարել պատերազմի հետևանքով առաջացած մի շարք դժվարություններ։ Շուտով ավարտվեց գյուղատնտեսության վերակառուցումը պատճերազմի պահանջներին համապատասխան և նախադրյալներ ստեղծվեցին հետագա տարիները բարձր բերքի տարի դարձնելու համար։ Դրա ամենակարեղոր նախապայմանը գարնանացների կազմակերպված անցկացնելն էր։ Այդ կապակցությամբ ձեռնարկվեցին մի շարք միջոցառումներ։ Նախ տեղի ունեցան կուսակցության կենտկոմի պլենումներ միութենական բոլոր հանրապետություններում։ Հայաստանի կուսակցության կենտկոմի X պլենումը նշեց, որ հարկավոր է հասնել այն բանին, որպեսզի ցանվեն ավելի ընդարձակ տա-

29 «Սովետական Հայաստան», 4 նոյեմբերի 1941 թ.։

բածություններ, դաշտավին աշխատանքներում ներգրավվեն մեծ թվով կոլտնտեսականներ: Գարնանացանի առաջին իսկ օրից մարդիկ պետք է ձգտեն առավելագույն շափով օգտագործել ամեն ինչ, որպեսզի գարնանացանի ընթացքում բարերացվի աշխատանքի արտադրողականությունը: ՀԿ(Բ)Կ Կհնտկոմի Խ պլենումը պարտավորեցրեց ՀԼԿԵՄ Կհնտկոմին, ՀՍՍՀ ժողովով կոմմատի հետ միասին, 1942 թ. ընթացքում կազմակերպված դասընթացներում պատրաստել 500 կին տրակտորիստներ: Միաժամանակ պարտավորեցրեց երեանի և կենդինականի քաղկոմներին՝ մինչև մարտի 15-ը հաշվառման ենթարկել գյուղատնտեսության այն բոլոր մասնագետներին (տրակտորիստ, կոմբայնավար, ազգոնոմ և այլն): որոնք աշխատում էին արդյունաբերության կամ այլ հիմնարկ ձեռնարկության մեջ:

Այդ օրերին ՍՍՀՄ ժողովում սովետական կայացրեց հարեան կոլտնտեսությունների շօգտագործվող վարելահողերում կոլտնտեսություններին ցանք կատարել թույլատրելու մասին³⁰:

Հանրապետության բոլոր շրջաններում կրկնապատկած եռանդով շարունակվում էին գարնանացանի նախապատրաստական աշխատանքները: Կոլտնտեսությունները իրենց աշխատանքներն արդեն վերակառուցել էին պատերազմի շահերին համապատասխան և պայքարում էին ուղղաճակատին ու հայրենիքին ավելի շատ հաց, միս ու գյուղատընտեսական այլ մթերքներ ու հումք տալու համար: Գարնանացանի նախապատրաստական աշխատանքներում աշքի ընկան էջմիածնի շրջանի կենդինի շքանշանակիր «Անաստված», Ներքին Զեյվայի, Այգեշատի, Ֆրանգանոցի, Թալինի շրջանի Վերին Թալին, Փիրմալաքի, Զարնչայի և բազում այլ կոլտնտեսություններ: Նրանք արդեն ավարտել էին սերմացուի գտումը, դաշտ էին փոխադրել հանքային պարարտանյութն ու գոմազբը, բարձր որակով նորոգել գյուղատնտեսական գործիքները:

Գարնանացանը կազմակերպված և ժամկետին կատա-

30 «Սովետական Հայաստան», 3 մարտի 1942 թ.:

բեկու ուղղությամբ մեծ գործ կատարեցին Հանրապետության մեքենատրակտորային կայանները և մեքենատրակտորային արհեստանոցները: Լայն ծավալ էր ստացել նրանցում մրցությունը: Մեխանիզատորները սիստեմատիկ կերպով գերակատարում էին իրենց օրվա առաջադրանքները:

1942 թվականի երկրորդ կեսից Հյուսիսային Կովկասի և Անդրկովկասի համար ստեղծվում է էլեկտրական շրջան: Գերմանական զորքերը թափանցելով Հյուսիսային Կովկաս, ձգուում էին դեպի Անդրկովկաս: Երկրամասի համար այդ ժամը օրերին, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ ամենուրեք տեղի էին ունենում հայրենասիրական, հակաֆաշիստական բուռն միտինգներ: Նրանք անցնում էին ժողովուրդների բարեկամության և եղբայրության նշանաբանով, որոնց նպատակն էր մորթիլիցացնել ժողովուրդների ուժերը՝ թշնամու առաջխաղացումը կասեցնելու և նրան Կովկասից ետ շարտելու համար:

1942 թ. օգոստոսի 23-ին Թբիլիսիում տեղի ունեցավ Անդրկովկասյան ժողովուրդների ներկայացուցիչների հակաֆաշիստական միտինգը: Միտինգի մասնակիցների կողմից ընդունված կոչը նոր աշխուժություն առաջացրեց թիկունքի աշխատավորների մեջ: Անդրկովկասյան Հանրապետություններում նոր թափ ստացան արդյունաբերական և գյուղատնտեսական աշխատանքները: Հայաստանի աշխատավորները ուժերի մեծ լարման և անսասելի զրկանքների գնով հաջողությամբ կատարում և գերակատարում էին Պաշտպանության պետական կոմիտեի առաջադրանքները:

Հանրապետության գյուղատնտեսության աշխատողները չերմ հավանություն տալով անդրկովկասյան ժողովուրդների հակաֆաշիստական միտինգի կոչ-դիմումին, արտադրական նոր պարտավորություններ են ստանձնում 1942 թ. համար: Էջմիածնի շրջանի «Անաստված» կոլտնտեսության անդամները խոստանում են 1942 թ. պետությանը հանձնել 700 տոննա խաղող, պլանով նախատեսված 670 տոննայի դիմաց, ցանել 330 հեկտար տարածություն, պլանով նախատեսված 300 հեկտարի դիմաց: Էջմիածնինցիները կոչ են ա-

նում Հանրապետության բոլոր կոլտնտեսականներին՝ սըրբությամբ կատարել Հայրենիքին տրված երդումը, էլ ավելի անձնվեր աշխատանք ծավալել կոլտնտեսային դաշտերում, ուժեղացնել ուղղմանակատին ցույց տրվող օգնությունը:

Հանրապետության գյուղատնտեսության աշխատողների առաջ զրվել էր կարևոր առաջարկանը՝ 1942 թվականը դարձնել բարձր բերքի տարի: Այդ գործում մեծ դեր ունեցավ Ալթայան երկրամասի Շիպունովսկի շրջանի կոլտնտեսականների նամակ-դիմումը ուղղված Պովոլժիեի, Ուրալի, Միջին Ասիայի, Ղազախստանի բոլոր կոլտնտեսականներին, ՄՏ կայանների ու հողացին բաժինների աշխատողներին: Շիպունովսկի շրջանի կոլտնտեսականները ժամկետից շուտ կատարեցին մթերքներ հանձնելու իրենց պետական բոլոր պարտավորությունները, գերակատարեցին անասնաբուժության զարգացման պլանը և հոգ տարան ուղղմանակատին ու երկրին ավելի շատ հացահատիկ, միս, հումք տալու ուղղությամբ:

ՀԿ(Բ)Կ Կենտկոմի ԽI պլենումը 1942 թ. հուլիսի 2-ին քննարկելով բերքահավաքի ու գյուղատնտեսական մթերքների մթերման հարցը, նշեց, որ Հայաստանի կոլտնտեսային գյուղացիությունը կուսակցության կազմակերպությունների ղեկավարությամբ հանրապետությունում հաշողությամբ ավարտեց գարնանային-դաշտային աշխատանքները, գերակատարեց հացահատիկացին և այլ կուսարանների ցանքի պլանները, բայց այդ ամենը գեռնս սկիզբն էր: Գլխավորին դիմումը բերքն անկորուստ և ժամկետին հավաքելն էր ու մթերման աշխատանքների ավարտումը:

ՀԿԿԵՄ Կենտկոմի բյուրոն ենթառվ ՀԿ(Բ)Կ Կենտկոմի ԽI պլենումի որոշումներից, 1942 թ. բերքահավաքի ու մթերատվության գործում կոմերիտական կազմակերպությունների աշխատանքների մասին³¹ հատուկ որոշում ընդունից և նամակով դիմեց գյուղատնտեսական աշխատանքների հետ կապված բոլոր կոմերիտական կազմակերպություններին:

31 ՏԵ՛ս ՄԼԻ Հայկական մասնաճյուղի կուսարիսիվ, ֆ. 48, ց. 18, գ. 197, թ. 7:

Պետական պլանի համաձայն ըստ արոտավայրերի պետությանը պարտավորվել էին տալ Երևանի շրջակացքի շրջանները 1500 տ. խոտ /Երևանի կայազորի գինվորական մասերի համար/, Լենինականի շրջանները 1625 տ. խոտ (Լենինականի կայազորի համար), իսկ Կիրովականը՝ 2050 տ խոտ³²: Հովկիսի առաջին կեսից սկսվեցին խոտհնձի աշխատանքները: Առաջին շարքիրում էին ընթանում թալինի, Արտաշատի, Աղինի, Աշտարակի և Եղեգնաձորի շրջանները: Մինչև հովկիսի 16-ը նրանք հնձել էին 70613 հա խոտ և 11951 հա հացաբույս: Կամոյի (Նախկին՝ Նոր Բայազետի) շրջանի Փաշաքենդ գյուղի կոլտնտեսականները հովկիսի 29-ի տվյալներով արդեն հնձել էին 500 հա խոտ և պլանով նախատեսված 200 տ. սիլոսի փոխարեն պատրաստել 800 տ. սիլոս: Իսկ հովկիսի 24-ին Արովյանի (Նախկին՝ Կոտայք) շրջանի 30 կոլտնտեսություններն իրենց առաջին կալի 130 սալլից բաղկացած բերքը՝ կարմիր գումակը հանձնել էին պետական պահեստանիրին³³: Պետական պարտավորություններ կատարողների մեջ աւքի ընկավ հատկապես Արովյանի Օրջոնիկիձեի անվան կոլտնտեսությունը, որը հանձնեց 439 ց հացահատիկ և կատարեց իր 1942 թ. պետական պարտավորությունները:

Նույն թվականի հովկիսի 31-ին ժամկետից շուտ լրիվ ավարտեց հացահատիկի բերքահավաքը նաև Շահումյանի շրջանը: Այդ կապակցությամբ շրջկոմի քարտուղար Գալըստյանը ՀԿ(Բ)Կ Կենտկոմին հեռազրում է. «Պետությանը պարտադիր՝ կարգով հացահատիկ հանձնելու տարեկան պլանը և կարմիր բանակի հացահատիկային ֆոնդին հացահատիկ հանձնելու պլանը կատարված ևն լրիվ: Ամբողջապես հավաքված և հանձնված է պաշտպանական հեկտարների հացահատիկային բերքը»³⁴: Իսկ Հոկտեմբերյանի շրջկոմի բյուրոն օգոստոսի 4-ին քննարկելով սոցմքցման արդյունքները նալբանդյան (Նախկին՝ Փոքր Շահրիար) գյուղում, որը

32 ՀՀՍՇՊԿ արխիվ, ֆ. 123, ց. 5, գ. 1108, թ. 2—3:

33 «Առվետական Հայաստան», 25 հովկիսի 1942 թ.:

34 «Առվետական Հայաստան», 1 օգոստոսի 1942, թ.:

մրցում էր Վրաստանի Մախարաձեի (նախկին՝ Լյուքսեմբուրգ) շրջանի Նաթաների զյուղի հետ, նշեց, որ աշխատանքային 9 օրում գյուղն ավարտել է Հացահատիկային կուլտուրաների բերքահավաքը³⁵: Վերոհիշյալ շրջաններից արտադրական պլանների կատարմամբ ետ չէին մնում նաև Կիրովականի, Աղինի, Գորիսի, Սիսիանի և այլ շրջաններու: Սակայն Հանրապետությունում կային նաև դեռ ետ մնացող շրջաններ, որոնց պատճառով ընդհանուր ցուցանիշներն ամփոփելիս նկատվեցին թերակատարումներ: Հոկտեմբերի 5-ի տվյալներով Հանրապետությունը պետական պարտավորությունները կատարել էր 92,1 % -ով, բնահարկինը՝ 74,9 % -ով, կարմիր բանակին Հացահատիկային ֆոնդին հացահատիկ Հանձնելու պլանը՝ 90,4 % -ով: Այսպես, Աւագավի շրջանը, որը ուներ 21 կոլտնտեսություն, 1942 թ. ուներ 10355 հա ցանքատարածություն, որից 9467 հա միայն Հացահատիկային կուլտուրաներ էին: Այնտեղ մինչև տարեկանը հավաքված էր միայն 9113 հա բերք: Հացահատիկի համախառն արագրանքը 8225 հա-ից կազմում էր 20575 ց., որից Հացամթերում էր Հանձնված 7005 ց, որպես սերմացու պահված էր 4700 ց: 21 կոլտնտեսություններից՝ 17-ը ապահովված չէին սերմացուով և կարիք ունեին գրահ օգնության³⁶: Նույն վիճակում էին նաև Ամասիայի, Վարդենիսի (նախկին՝ Բասարգեշար), Գուկասյանի, Աղիպեհկովի և Կալինինոյի շրջանները: Հեկ Կենտկոմի ստուգող Հանձնաժողովները արձանագրեցին վերոհիշյալ շրջաններում աշխատանքների վատ կազմակերպման մասին³⁷: Ինչ խոսք, նման վիճակը կարող էր առաջացնել Հացահատիկի անտեղի կորուստ: Ուստի Հանրապետության Ժողկոմսովետը և Հեկ Կենտկոմը 1942 թ. հոկտեմբերի 8-ի որոշմամբ պարտավորեցրին այդ շրջաններին մինչև Հոկտեմբերի 15-ը ավարտել

³⁵ Մի Հայկական մասնաճյուղի կուսարիսիվ, ֆ. 90, ց. 4, գ. 230, թ. 121:

³⁶ Մի Հայկական մասնաճյուղի կուսարիսիվ, ֆ. 1, ց. 31, գ. 26, թ. 236:

³⁷ Նույն տեղում, գ. 290, թ. 59—61:

Հացահատիկի լրիվ բերքահավաքը ու պետական պարտավորությունների կատարումը: Որոշման իրականացման նպատակով Կենտկոմի անդամներն ու մի խոսմբ պատասխանառու աշխատողներ գործուղվեցին վերոհիշյալ շրջանները^{38:} Այդ տնեցավ իր դրական արդյունքները և ՀԿ(Բ)Կ Կենտկոմի XIII պլենումը անդրադառնալով 1943 թ. գարնանային-դաշտային աշխատանքներին, իրավացիորեն նշեց, որ հանրապետության կոլտնտեսությունները հաջողությամբ ավարտեցին 1942 թ. գյուղատնտեսական տարին և մեծ գործ կատարեցին 1943 թ. գարնանացանի աշխատանքների նախապատրաստման և անցկացման ուղղությամբ: Այդ տարի որոշ կոլտնտեսություններ արդեն ապահովված էին հացահատիկի սերմացուվ, ՄՏ կայանները տրակտորների և գյուղատնտեսական այլ գործիքների կազմակերպումը միջին հաշվով կատարել էին 94,4 % -ով, իսկ որոշ շրջաններ, ինչպես՝ Արտաշատի, Հոկտեմբերյանի, Իջևանի, Նոյեմբերյանի և Թալինի ՄՏԿ-ները, ժամկետից շուտ ավարտել էին տրակտորային պարկի վերանորոգումը^{39:} Լավ նախապատրաստվելու արդյունքն այն եղավ, որ հանրապետության կոլտնտեսությունները 1942 թ. համեմատությամբ 1943 թ. բերքահավաքի աշխատանքներն ավարտեցին ժամկետից շուտ և ավելի բարձր ցուցանիշներով: 1940 թ. համեմատությամբ հացահատիկի միջին բերքատվությունը 8,3 ց. 1943 թ. հասավ 9,3 ց.^{40:} Իսկ որոշ շրջաններում հասան ավելի բարձր ցուցանիշների: Այսպես, օրինակ, էջմիածնի շրջանի «Անստված» կոլտնտեսությունը եթե 1940 թ. ուներ 330 հա հացահատիկային կոլտառաների ցանքատարածություն և դրանից ստանում էր 3660 ց. Հացահատիկ, ապա 1943 թ. ցանքերի տարածությունն ի հաշիվ բամբակի ցանքերի ավելացավ և հասավ 405 հա-ի: Կոլտնտեսությունը մեկ հեկտարից ստացավ 14 ց. բերք, ընդամենը՝ 5333 ց. Հա-

38 ՀՀՍՇՊԿ արխիվ, ֆ. 40/113, ց. 6, գ. 74, թ. 50—51:

39 ՄԼԻ Հայկական մասնաճյուղի կուսարիսիվ, ֆ. 1, ց. 32, գ. 11, թ.

4—6:

40 «Սովետական Հայաստանի տնտեսական զարգացումը», էջ 262:

ցահատիկ⁴¹: Գորիսի շրջանի Կոռնիձոր գյուղի կոլտնտեսությունը 1943 թ. ստացավ 78 հազ. փութ հացահատիկ, յուրաքանչյուր հեկտարից նախատեսված 9,5 ց. փոխարեն՝ 14,5 ց: Սիսիանի շրջանի Բոնակոթ գյուղի կոլտնտեսությունը ժամկետից շուրջ ավարտեց 1466 հա հացահատիկային կուտուրաների բերքահավաքը և պետությանը հանձնեց 589 ց., կարմիր բանակի ֆոնդին՝ 159 ց. հացահատիկ⁴²: Եվ դա այն պայմաններում էր աշխատունակ մարդկանց թիվը հանրապետությունում 1940 թ. 349,4 հազ. 1943 թ. իշել էր 254,1 հազ.⁴³: Ոյդ ժամանակաշրջանում գյուղատնտեսությունը արդյունաբերությունից նոր մեքնաներ և գյուղատնտեսական գործիքներ ստանալու փոխարեն իր ունեցածից էր բաժին հանում բանակին, երկրում տիրում էր ընդհանուր անբերի իշտյուն և պարենամթերքի պահանջը քանի զնում այնքան մեծանում էր, քանի որ սկսվել էր հակառակորդի մասսայական վոնդումը մեր երկրից, և ազատագրված շրջանները մնում էին ծայրահեղ քայլքայված վիճակում: Հետեւաբար, ինչպես բանակի, այնպիս էլ ազգաբնակչության կարիքների բավարարումը հիմնականում ընկած էր թիկունքում գտնվող հանրապետությունների և մարդերի վրա, գերմարդկային ուժեր գործադրելով, կոլտնտեսականները կարողացան գյուղատնտեսական տարին փակել բարձր ցուցանիշներով:

Դեռևս տարեսկզբին Մոսկվայի մարզի գյուղատնտեսության երիտասարդ առաջավորները նամակ ուղարկեցին երկրի ամբողջ գյուղական երիտասարդությանը, կոլտնտեսությունների, սովորությունների և ՄՏԿ-ների կոմերիտականներին ու կոմերիտուհիներին, կոչ անելով կրկնապատկել, եռապատկել ուազմաճակատին ցուց արվող օգնությունը: Նրանց

41 ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի Հայրենական պատերազմի պատմության կարինետի արխիվ, այսուհետեւ՝ ՀՊՊԿ արխիվ, ֆ. 272, գ. 3, թ. 11:

42 «Սովետական Հայաստան», 15 նոյեմբերի 1943 թ.:

43 Ю. В. Арутюнян, Советское крестьянство в годы Великой Отечественной войны, М., 1967, стр. 392.

նշանաբանն էր՝ երկրին, կարմիր բանակին տալ էլ ավելի շատ հացահատիկ, կարտոֆիլ, միս, տեխնիկական կուլտուրաներ։ Գյուղական երիտասարդությունը կարողացավ պահպանել իր այդ նշանաբանը պատերազմի ամբողջ ընթացքում։ Հայաստանի գյուղի երիտասարդները միացան Մոսկվայի մարզի գյուղատնտեսության առաջավորների նամակին և իրենց առաջին ու ամենագլխավոր խնդիրը համարեցին համառ աշխատանքով ավելացնել բերքատվությունը, լրիվ օգտագործել յուրաքանչյուր մեքենա, թուզը շտալ տրակտորների պարագուրդ, վառելանյութի և յուղանյութի անտեղի վատում։ Նրանք կարմիր բանակի 25-րդ տարեդարձի կազմակցությամբ ծավալեցին սոցիալիստական լայն մրցություն։ Գյուղի կոմիտասականները, իրենց համար աշխատանքային պարտադիր կանոն ընտրեցին։ «Թեկուզ գիշերիր զաշտում, բայց աշխատանքային նորմադ կատարիր»։ Աշխուժացում ապրեց սոցիալիստական մրցությունը՝ բարձր բերքի երիտասարդական-կոմիտասական օղակների միջև։ 1943 թ. պաշտապանության ֆոնդին օգնություն ցուց տալու հետ մեկտեղ, երկրով մեկ ծավալվեց ազատագրված շբջաններին օգնելու նպատակով պլանից դուրս ցանք կատարելու համաժողովրդական շարժումը։

Գյուղատնտեսական աշխատանքներում կանանց աշխատումը լրիվ օգտագործելու նպատակով 1943 թ. մայիսի 12-ին ՍՍՀՄ ժողկոմսովետը որոշում կայացրեց ամռանը երեխանների հանդիսութ կազմակերպելու և նրանց առողջությունը ամրապնդելու մասին։ Այդ որոշման համաձայն հունիսի մեկից կազմակերպվեցին պիտներական ճամբարներ, ամռապնդին հրապարակներ, սանատորիական տիպի ճամբարներ։ Վերոհիշյալ որոշման հիման վրա Հայկական ՍՍՀ-ում ևս քաղաքներից դուրս կազմակերպվեցին 4000 երեխայի համար պիտներական ճամբարներ, 5000 երեխայի համար տեղերում ամառային հրապարակներ, 7600 դպրոցականների համար դպրոցական ճամբարներ⁴⁴, իսկ 40000

44 Մի Հայկական մասնաճյուղի կուսարիսիվ, ֆ. 1, ց. 32, գ. 59, թ. 135, 140։

երեխա տեղավորվեցին գյուղական շրջաններում կազմակերպված մանկամասուրներում⁴⁵: Նման որոշումից հետո կանայք հնարավորություն ունեցան լրիվ բնդգրկվելու գյուղատընտեսական աշխատանքների մեջ:

Զնայած 1943 թ. երկրի մի շարք շրջաններում երաշտի հետևանքով անասելի անբերրիություն եղավ, այնուհանդեռձ գյուղացիությունը պետք է բանակը և բնակչությանը ապահովեր անհրաժեշտ քանակությամբ պարենամթերքով: Զէ՞ որ առանց կոլտնտեսային գյուղացիության տքնածան աշխատանքի, անհնարին կլինիկին մեր հաջողությունները թե՛ ուղամամակատում և թե՛ թիկունքում: 1943 թ. գյուղատնտեսական աշխատանքների հիմնական ծանրությունը դեռևս ընկած էր Սիրիրի, Ուրալի, Ղազախստանի, միջինասիստական հանրապետությունների, ՌՍՖՍՀ-ի Կենտրոնական մասի և անդրկովկասյան հանրապետությունների վրա: Միութենական հանրապետություններն ու երկրամասները երկրին տվեցին ամբողջ հացահատիկի 64 %-ը, համարյա ամբողջ բամբակը, շաքարի ճակնդիկի 50 %-ը, վուշի մանրաթելի 60 %-ը: Հատկապես մեծ էր այդ շրջանների ներդրումը անասնապահական մթերքների մթերատվության գործում: Նրանք տվեցին ամբողջ մսի, կաթի, ձվի և բրդի ավելի քան 4/5 մասը⁴⁶:

1943 թ. գարնանը սկսված սոցիալիստական մրցությունը ծավալվեց ամբողջ երկրով մեկ, ինչպես և Հայաստանում: Հայաստանի շրջաններից շատերը ժամկետից շուրջ կատարեցին գարնանացանը, բերքահավաքը, պետական պարտավորությունները և կարմիր բանակի ֆոնդին հատկացվելիք հացահատիկի պլանը: Այսպես, էջմիածնի շրջանը 1943 թ. 100 %-ով կատարեց հացահատիկի դժով պետական պարտավորությունների, կարմիր բանակի ֆոնդին հատկացվելիք հացահատիկի պլանը, ՄՏ կայանների աշխատանքների բնահարկի արտադրությունը: Երշանի աշխատավորները պատ-

45 «Правда», 11 июля 1943 г.

46 «История Великой Отечественной войны Советского Союза 1941—1945», т. III, Воениздат, МО СССР, М., 1961, стр. 188.

վով կատարեցին նաև խաղողի, մսամթերումի, կաթի, պանրի, բրդի, կաշվի պետական պարտավորությունները: Կատարելով պետական բոլոր պարտավորությունները, էջմիածինցիները աշխօրերի դիմաց միջինը ստացան 2,5 կգ հացահատիկ, 50 գ յուղ, 50 գ պանիր, 2,5 կգ խաղող, 3 կգ անասնակեր և այլ մթերքներ ու 22 ռուբլի դրամ⁴⁷: Իրենց ստացած աշխօրերի հաշվին կոլտնտեսականները 15000 փութ հացահատիկ հատկացրին պաշտպանության ֆոնդի օգտին: Այս օրինակն, իհարկե, հատկանշական չէ ամբողջ հանրապետությանը, քանի որ կային լեռնային շրջաններ, որոնք հարկադրված էին աշխօրի դիմաց տալու 300—400 գ հացահատիկ: Մարտունու, Ազիզբեկովի, Ալագյազի շրջաններում 1943 թ. բաժանեցին 300—700 գ հացահատիկ, 17 գ յուղ, 20 գ պանիր, 630 գ անասնակեր և 11 ռուբլի դրամ⁴⁸:

Այսպիսի էր վիճակը նաև Սլավերդու շրջանի Շնող գյուղի «Սվերդլովի» անվան կոլտնտեսությունում: Այդ կոլտնտեսությունում հիմ 1941 թ. ամեն մի աշխօրին բաժանվեց 1,4 կգ հացահատիկ, 620 գ կարտոֆիլ, ապա 1943 թ. այն նվազեց, հասնելով 350 գ հացահատիկ, ոչ մի գրամ կարտոֆիլ, հետագա 1944—1945 թթ. հացահատիկը հասավ 700 գ, իսկ կարտոֆիլը՝ 200 գրամ⁴⁹: Իսկ նույն շրջանի «Սոց. ճանապարհ» կոլտնտեսությունը ուներ ավելի բարձր ցուցանիշներ, հիմաքար ցածր ցուցանիշները ոչ միայն կլիմայական պայմանների, այլև կոլտնտեսության զեկավարների անբավարար դեկավարման և աշխատուժի սխալ օգտագործման հետևանք էին:

Իհարկե, եղան առանձին կոլտնտեսություններ և շրջաններ, որ աշխօրին բաժանեցին միջինից ավելի բերք: Ինչպիս վերեւում ասացինք էջմիածնի շրջանը մեկ աշխօրին բաշխեց 2 և կես կգ հացահատիկ, Ղուկասյանի շրջանը միջին հաշվով բաշխեց 3 կգ հացահատիկ: Շրջանի առանձին կոլտնտե-

47 ՀՊՊԿ արխիվ, ֆ. 271, գ. 1, թ. 1, 5:

48 ՄԼԻ Հայկական մասնաճյուղի կուսարիսիվ, ֆ. 1, ց. 33, գ. 1, թ. 22—23:

49 ՄԼԻ Հայկական մասնաճյուղի կուսարիսիվ, ֆ. 1, ց. 33, գ. 7, թ. 8:

սություններ ստացան նույնիսկ ավելի բարձր բերք և աշխօռին վճարեցին ավելի շատ⁵⁰:

Այդ մասին են վկայում այն բազմաթիվ հեռագրերը, որ շրջկոմների կողմից հասցեագրված են ՀԿ(Բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Գրիգոր Հարությունյանին: Դափանի շըրջանից հաղորդում են, որ շրջանի բոլոր կոլտնտեսություններն ու կոլտնտեսականները հացահատիկի պետական պարտավորությունները կատարելուց բացի, իրենց անձնական խնայողություններից կարմիր բանակի ֆոնդ են մուտքել 15 հազ. փութ հացահատիկ⁵¹: Արթիկի շրջանի կոլտնտեսականները ժամկետից շուտ պետական պարտավորությունները կատարելուց բացի հացամթերման կայան են հանձնել 45140 փութ հացահատիկ⁵², իսկ Գուգարքի (Կիրովական) շրջանը՝ 1500 փութ հացահատիկ և 400 փութ կարտովիլ⁵³:

1944 թ. փետրվարի 4-ին ՀամԿ(Բ)Կ Կենտկոմը քննության առնելով Հայաստանի զյուղատնտեսության վիճակի ու նրա խնդիրների հարցը, հանրագումարի բերեց հանրապետությունում պատերազմական շուրջ Յ տարիների ընթացքում կոլտնտեսությունների աշխատանքը և կոնկրետ միջոցառումներ մշակեց զյուղատնտեսության վիճակի հետագա բարելավման համար: ՀամԿ(Բ)Կ Կենտկոմը նշեց, որ Հայկական ՍՍՀ կոլտնտեսությունները հաղթահարելով պատերազմական տարիների գժվարությունները, զյուղատնտեսության զարգացման բնագավառում հասան զգալի հաջողությունների: Կատարեցին պետությանը զյուղատնտեսական մթերքներ հանձնելու իրենց պարտավորությունները: 1943 թ. պետական հանձնումների հացահատիկի պլանը կատարվեց 104, կարտովիլինը՝ 110,9, մսինը՝ 100,7, կաթինը՝ 100,5 % -ով: Կոլտնտեսությունները պետական պարտավորու-

50 «Առվետական Հայաստան», 4 հունվարի 1944 թ.:

51 Մի Հայկական մասնաձյուղի կուարխիլ, ֆ. 1, ց. 33, գ. 144, թ. 31:

52 Նույն տեղում, թ. 23:

53 Նույն տեղում, թ. 24:

թյուններից բացի, պաշտպանության ֆոնդ մուծեցին 123 հազ. փութ հացահատիկ և կարտոֆիլ⁵⁴:

Այնուհետև ՀամԿ(բ)կ Կենտկոմի որոշման մեջ ասված է. «Բնդարձակվել են խաղողի և պտղատու ծառերի այգիները:

Զգալիորեն ընդարձակվել է ոռոգելի տարածությունը, որը փոփոխություն է մացրել գյուղատնտեսական կուլտուրաների տեսակների մեջ և հնարավորություն տվել ընդարձակելու տեխնիկական և արժեքավոր կուլտուրաների ցանքատարածությունը:

Հանրային անասնապահության գլխաքանակը 1940 թ. համեմատությամբ աճել է խոշոր եղջյուրավոր անասուններինը՝ 2,9, ոչխարներինը՝ 13,8, խոկ խողերինը՝ 3,4 % -ով⁵⁵:

ՀամԿ(բ)կ Կենտկոմի որոշման վերջում արձանագրված է, որ չնայած Հայաստանի կուլտուրանություններն ու կուլտուրականները պիտության առջև կատարել են իրենց բոլոր պարտավորությունները գյուղատնտեսական մթերքների հանձնման գծով, բայց և այնպես այդ դրական աշխատանքների կողքին հանրապետության գյուղատնտեսության մեջ տեղ են գտել մի շարք լուրջ թերություններ, որոնք վերաբերում են հատկապես տեխնիկական կուլտուրաների բերքատվությանը, ՄՏ կայաններին և գարնանացանի աշխատանքների նախապատրաստմանը:

Հայաստանի գյուղատնտեսության հետագա զարգացմանը օգնելու նպատակով ՀամԿ(բ)կ Կենտկոմը համապատասխան միջոցառումներ և խնդիրներ առաջարկեց ՀԿ(բ)կ Կենտկոմին.

1. Տեխնիկական կուլտուրաների (բամբակ, ծխախոտ, ձակնդեղ) բարձր բերք ստանալու նոպատակով բավարարել Հայաստանի գյուղատնտեսությունը հանքային պարարտանյութերով: Հայաստանի քիմիական արդյունաբերության բազայի վրա ստեղծել համապատասխան ձեռնարկություններ և արտադրամասեր՝ հանքային պարարտանյութեր արտադ-

54 Նույն տեղում, գ. 1, թ. 32:

55 ՄԵՒ Հայկական մասնացյուղի կուսարիսիվ գ. 1, թ. 33, գ. 1, թ. 32—33:

բելու համար: Իսկ մինչ այդ միտթենական քիմիական արդյունաբերության և հողժողկոմատներին առաջարկվեց Հայաստանին արամագրել Յ հազ. տոննա կալիի պարաբուանյութ և 5 հազ. տոննա ցինամիզ-կալցիում:

2. Գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության բարձրացման մյուս կարևոր միջոցառումը պատերազմի հետեանքով գործածության մեջ մտած արորները գութանով փոխարինելն էր: Այդ նպատակով Հայաստանին բաց թողնը-վեց 300 տ մետաղ՝ Երեանի մեխանիկական գործարանում տարեկան Յ հազ. գութան արտադրելու համար: Տեխնիկական կուլտուրաների մշակման համար Հանրապետությունը պետությունից ստացավ Կ-35 տիպի 20 տրակտոր:

3. ՄՏ կայանների աշխատանքը բարձրացնելու նպատակով ուժեղացվեց վերանորոգման-տեխնիկական բաղան և կայաններին կից կազմակերպվեցին 6 նոր մեքենատրակտորային արհեստանոցներ (Արտաշատի, Սևանի, Կիրովականի, Սիսիանի, Աշտարակի, Իշեանի): Նոր կազմակերպված արհեստանոցները շենքերով ապահովելու համար բաց թողնվեց մեկ միլիոն 500 հազ. ոռորդի և մետաղամշակման 52 հաստոց:

4. Խաղողի և պտղատու այգիների հետագա ընդարձակման և եղածի պահպանման նպատակով ՀամԿ(Բ)Կ Կենտկոմը Հայաստանի դյուլատնտեսական աշխատողների առջև խնդիր դրեց լայն պայքար կազմակերպել վնասատուների և զանազան հիվանդությունների դեմ: Այդ նպատակով միտթենական կառավարությունը Հայաստանին բաց թողեց անհրաժեշտ քանակությամբ զանազան քիմիկատներ (պղնձարշասլ, փարիզյան կանաչ, նիկոտին և այլն):

5. Հայաստանի կուսակցական և սովետական օրգանների կարևորագույն խնդիրներից մեկը ՀամԿ(Բ)Կ Կենտկոմը համարեց լեռնային խիտ բնակեցված շրջաններից բնակչությանը Հանրապետության ոռոգելի հողերի շրջանները վերաբենակեցնելը:

ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի «Գյուղատնտեսության վիճակը Հայաստանում» հարցի քննարկումից մեկ ամիս անց (1944 թ.

փետրվարի 29—մարտի 2-ը), ՀԿ(թ)Կ Կենտկոմի XVII պլենումը անդրադառնալով 1943 թ. գյուղատնտեսական տարվա արդյունքների ամփոփմանը, գարնանացանի աշխատանքների նախապատրաստմանը ու ՀամԿ(թ)Կ Կենտկոմի փետրվարի 4-ի որոշման կենսագործման ուղղությամբ կատարած միջոցառումների հարցի քննարկմանը, արձանագրեց, որ Սովետական Հայաստանի կոլտնտեսային գյուղացիությունը հաղթահարելով պատերազմական ժամանակաշրջանի դժվարությունները, հիմնականում կատարեց կուսակցության ու կառավարության կողմից 1943 թ. առաջադրված խնդիրը՝ կարմիր բանակին և բնակչությանը պարենամթերքով, իսկ արդյունաբերությանը՝ հումքով ապահովելու գործը:

Հայաստանի կոլտնտեսականները սովորությունների, ՄՏ կայանների աշխատողները, այնուհետև ասված է նույն տեղում, «կուսակցական կազմակերպությունների ղեկավարությամբ հաջողությամբ փակեցին 1943 թ. գյուղատնտեսական տարին,—և նախորդ տարվա համեմատությամբ հասան զգալի հաջողությունների։ Յանքատարածությունները 1940 թ. համեմատությամբ 1943 թ. աճեցին մոտ 39 հազ. հեկտարով։ Յանքատարածությունների աճման հետ մեկտեղ բարձրացավ բերքատվությունը։ Հացահատիկային կուտուրանների զծով աճեց 12 %-ով, կարտոֆիլինը՝ 25 %-ով։ Աճեցին նաև կոլտնտեսությունների զրամական եկամուտները։ 1942 թ. 245 մլն. դիմաց՝ 1943 թ. նրանց եկամուտները հասան 397 մլն. ոռություն։ 1943 թ. հանրապետություններում միլիոնատեր կոլտնտեսությունների թիվը հասնում էր 100-ի։ Հանրապետությունում միջին հաշվով 1943 թ. բաշխվեց 1,8 կտ հացահատիկ, 800 գ կարտոֆիլ և այլ մթերքներ՝ 1,1 կտ»⁵⁶,

Հանրապետության կոլտնտեսությունները 1943 թ. պետական բոլոր պարտավորությունները կատարելուց բացի,

⁵⁶ ՄԵԽ Հայկական մասնաճյուղի կուսարխիվ, ֆ. 1, ց. 33, գ. 1, թ. 4-6, 21:

աղատ վաճառքի կարգով պետությանը վաճառեցին 400 հազ. փութ հացահատիկ, 5000 ա կարտոֆիլ, կարմիր բանակի փոնդ մուծեցին 123 հազ. փութ հացահատիկ, կարտոֆիլ և պյուղատնտեսական այլ մթերքներ: Միայն պաշտպանական հեկտարներից հայ պյուղացին ուղղաճակատ ուղարկեց 30000 փութ հացահատիկ⁵⁷:

Հանրապետությունում 3485 հա-ովլ ավելացել է խաղողի և 5119 հա-ովլ պտղատու ծառերի տարածությունը: 1943 թ. վերջին խաղողի այդիների տարածությունը դարձավ 21.993 հա, իսկ պտղատու ծառերինը՝ 24,611 հա: Զգալի աշխատանք է տարվել այդիները դեպի նախալեռնային և լեռնային շրջանները շարժելու ուղղությամբ⁵⁸:

1940 թ. 180 հազ հա-ի փոխարեն ոռոգելի տարածությունը 1943 թ. դարձել է 198,8 հազ. հա⁵⁹: Աշխատող ձեռքերի պակասի հետեանքով պատերազմի առաջին տարիներին զագարեցվեցին մի շարք ջրանցքների (Ներքին Զանգվի, Ռևոլյուցի, Գառնիի և Նորքի) շինարարական աշխատանքները: Հետագայում նրանք շարունակվեցին հիմնականում կոլտնտեսականների, քաղաքի բնակչության և ուսանողության ուժերով: Այնուհետև պլենումն արձանագրեց, որ հանրային անասնաբուծության զարգացման բնագավառում հանրապետության անասնապահները հասել են որոշ հաջողությունների: Աճել է անասունների գլխաքանակը (բացի ձիերից), մատղաշի խնամքը գտնվում է լավ վիճակում, կատարվում են պետական պարտավորությունները, ավելացել է աշխօրին հասանելիք կաթնամթերքի քանակը, բայց և այնպիս շատ կոլտնտեսություններում կաթնամթերքն այնքան չէ, որ օգտագործվի ներկունտեսային կարիքների համար: Մեկ փուրաժային կովից նախատեսված 700 լիտրի փոխարեն 1943 թ. ստացվել է 450 լիտր կաթ: Մեկ փուրաժային ոչխարից նախատեսված 50 լիտրի դիմաց ստացվել է

57 «Առաջ հանուն հայրենիքի», 18 մարտի 1943 թ.:

58 Մէկ Հայկական մասնաճյուղի կուսարխիլ, գ. 1, գ. 33, գ. 1, թ. 7:

59 Նույն տեղում, թ. 9:

38,4 լիտր կաթ⁶⁰: Մեր կարծիքով այստեղ հաշվի չի առնվել Հայաստանում արոտավայրերի խիստ պակասը և պլանավորումը կատարվել է բարձր ցուցանիշներով:

Որպես թերություն պլենումը նշում է նաև այն, որ անասունների որոշ մասը ապահովված չէ ձմռան համար անհրաժեշտ շնչնքերով: Պատերազմի հետևանքով գոմերի շինարարությունը մասամբ կրճատվեց:

Ինչ վերաբերում է տեխնիկական կուլտուրաներին, ճիշտ է, ցանքատարածությունները որոշ չափով ընդարձակվել էին, բայց բերքատվությունը, հատկապես բամբակինը, իշել էր նախապատերազմյան մակարդակից, որի պատճառը անհրաժեշտ քանակությամբ հանքային պարարտանյութեր չունենալն էր:

Պլենումը նշեց նաև այն փաստը, որ Համեկ(բ)Կ Կհնտկոմը որպես թերություն նշել է լեռնային շրջանների խիստ ետ մնալը մնացած շրջաններից: Չնայած հանրապետության կուսակցական և սովետական օրգանների կողմից ձեռք էին առնվել համապատասխան բոլոր միջոցները ոռոգման, մերքնատրակորային պարկի ուժեղացման, ավելի կայուն և բերքատու սերմերի օգտագործման, նոր կուլտուրաների օգտագործման նպատակով, այնուամենայնիվ հնարավոր շեղավ հասնել բերքատվության կայունության և կոլտնտեսականների նյութական բարեկեցության բարձրացմանը:

Նախ՝ լեռնային շրջանները համապատասխան քանակությամբ ցանքատարածություններ չունեին, երկրորդ՝ գտնվում էին կլիմայական անբարենպաստ պայմաններում և երրորդ՝ բնակչությունը համեմատաբար ավելի խիստ էր, քան ցածրադարյան շրջաններում: Այդ պատճառով ստացած բերքը անբավարար էր: Օրինակ, Մարտունու շրջանում ամեն մի շնչին ընկնում էր 0,4 հա ցանք, Կամոյում՝ 0,5, իսկ Սևանում՝ 0,6 հա:

Ելեկով այս ամենից ՀԿ(բ)Կ Կհնտկոմի XVII պլենումը որոշում է.

1. Հանձնարարել Հայաստանի քիմիական արդյունաբերության ժողկոմատին՝ առաջիկայում գյուղատնտեսական կուլտուրաների, հատկապես տեխնիկական կուլտուրաների բարձր բերք ստանալու նպատակով ստեղծել հանքային պարարտանյութեր արտադրող համապատասխան ձևոնարկություններ և արտադրամասեր։ Ընթացիկ տարում Ալավերդու պղնձաթթվային գործարանում բացել հատուկ արտադրամաս՝ սուլերֆոսֆատ արտադրելու համար և Հենց 1944 թ. թողարկել 20 հազ. տ սուլերֆոսֆատ։ Ընդարձակել կիրովականի քիմիական գործարանի ցինամիդ-կալցիումի արտադրամասը, որը տարեկան թողարկելու է 10 հազար տոննա արտադրանք։ Կիրովականում կառուցել ազոտի գործարան, որը տարեկան թողարկելու է 26 հազ. տ ամիակացին պարաբռանյութ։

2. Արորք գործածությունից հանել և նրա փոխարեն մասսայաբար օգտագործել գութան, դրա համար առաջարկել Երևանի մեխանիկական գործարանին տարեկան արտադրել 3 հազ. գութան։

3. ՄՏ կայանների աշխատանքը բարձրացնելու նպատակով ուժեղացվեց վերանորոգման—տեխնիկական բազան և առանձին կայաններին կից կազմակերպվեցին վեց նոր մեքենատրակտորային արհեստանոցներ։ Անհրաժեշտ է նոր կազմակերպված արհեստանոցների համար հայթայթել կամ կառուցել նոր շենքեր։

4. Խաղողի և պաղատու այգիների հետապա ընդարձակման և եղածի անվնաս պահպանման նպատակով 1944 թ. Սևանում կառուցել Նիկուախնի գործարան, որն ամբողջովին կրավարարի Հայաստանի գյուղատնտեսության պահանջները։ Այդ նույն նպատակով ընդարձակել Ալավերդու պղնձաբռասպի գործարանը։

5. Համկ(բ)կ Կենտկոմի որոշման համաձայն ՀԿ(բ)կ Կենտկոմն իր համապատասխան կազմակերպությունների և Հայկական ժողկոմսովետի միջոցով ծրագրեց լեռնային շրջանների բնակիչներին հանրապետության ցածրագիր, ո-

ոռոգելի ցանցով ապահովված շրջանները վերաբնակեցնելու գործը: Այդ նպատակով շարունակվեցին մի շարք շրանցքների դադարեցված շինարարական աշխատանքները և սկսվեցին կոտայքի էլեկտրո-ջրհան կայանի և Թալինի խոշոր ջրամբարի կառուցումները, այն հաշվով, որ առաջիկա տարիներին այդ ոռոգելի վերաբնակեցված շրջանների հողացին ֆոնզը հասցվի 40 հազ. հեկտարի: Այս գործում մեծ անելիքներ ունեին նաև տեղափոխվող բնակիչները:

6. Անասնապահության գլխաքանակն ապահովելու, մատղաշը խնամքով պահելու և մթերատվությունը բարձրացնելու նպատակով առաջին հերթին անհրաժեշտ էր հանրապետության բոլոր կոլտնտեսություններն ապահովել անասունների ձմեռման համար հարմարավելու շենքերով: Այդ նպատակով Կենտկոմը որոշում է հանձնարարել շրջանային կոմիտեներին, շրջանային սովետներին և առաջին հերթին հողդողկոմատին և կոլտնտեսային վարչություններին՝ սկսելու անասնապահական նոր օրյեկտների կառուցման աշխատանքները: 1944 թ. ընթացքում կառուցել 360 անասնապահական օրյեկտ, որոնցից 90-ը խոշոր եղջյուրավոր անասունների, 81-ը՝ ոչխարների, 100-ը՝ խոզերի և 90-ը՝ թռչունների համար, որով հանրային ամբողջ հոտը կապահովվի անհրաժեշտ ձմեռանցներով:

Ելնելով վերոհիշյալից, պլենումը իր որոշման վերջում նշեց. «Ղեկավարվելով Համկ(բ)Կ Կենտկոմի փետրվարյան սլենումի դիրեկտիվներով, 1944 թվականը դարձնել բարձր բերքի տարի՝ գյուղատնտեսական բոլոր կուլտուրաների գծով, բարձրացնել անասնապահության մթերատվությունը և էլ ավելի զարկ տալ Հայաստանի գյուղատնտեսության հետագա զարգացմանը»:

ՀԿ(բ)Կ Կենտկոմը հետագա գործունեության ընթացքում իր կուսակցական կազմակերպությունների, տեղական սովետների և գյուղի աշխատավորների ակտիվ մասնակցությամբ անշեղորեն ձեռնամուխ եղավ վերոհիշյալ առաջազդուանքների կատարմանը:

Ըաղմաճակատում կարմիր բանակի փայլուն հաղթանակները, որոնք սկսվել էին Ստալինգրադի և Կորսկի դյուցազնամարտերով, ավարտվեցին Բեռլինի աշխարհացունց ճակատամարտով՝ մեծ բեկում ու աշխատանքային խանդավառություն առաջ բերեցին թիկունքում։ Պատերազմի հաղթական ավարտի շրջանը թիկունքի աշխատավորներից պահանջում էր կրկնապատկել ու եռապատկել աշխատանքային ուժերը։ 1944—1945 թթ., ինչպես և պատերազմի նախորդ տարիներին ուղղմաճակատն ու թիկունքն անխզելիորեն կապված էին միմյանց հետ։ Կարմիր բանակի ամեն մի հաջողություն պայմանավորված էր սոցիալիստական պետության տնտեսության և Հոգեռի ուժերի աճմամբ, ուղղմաճակատի յուրաքանչյուր նոր հաղթանակ ավելի ու ավելի էր ամրապնդում սովետական թիկունքը։

1944—1945 թթ. մեր ուղղմաճական արդյունաբերության մեջ տեղի ունեցան նշանակալից հաջողություններ, որոնք նախագրյալներ ստեղծեցին սպատերազմի հաղթական ավարտի համար։ Մանր ինդուստրիալի դարգացումը ոչ միայն ապահովում էր ուղղմաճական տեխնիկայի սիստեմատիկ թողարկումը, այլև պայմաններ էր ստեղծում ժողովրդական ողջ տնտեսության դարգացման համար։ Ըաղմաճական տեխնիկայի արտադրության հետ մեկանը 1943 թ. կառաջի երկրի արդյունաբերական որոշ ձեռնարկություններ անցան գյուղատնտեսական գործիքների, մեքենաների, պահեստամասերի և զանազան քիմիկատների թողարկմանը։

Գյուղատնտեսական աշխատանքների մեջ արմատական բեկման տարի հանգիսացավ 1944 թվականը։ Այդ ժամանակից սկսած զյուղ ուղարկվեցին արակտորներ, ավտոմեքենաներ, վառելանյութ, պահեստամասեր և զանազան քիմիկատներ։ Նյութատեխնիկական բազայի աճը չնայած շատ փոքր էր, բայց և այնպես ունեցավ իր գրական դերը բերքատվության բարձրացման գործում։ Այսպես, ամբողջ Միության մեջ, 1943 թ. համեմատությամբ 1944 թ. հացահատիկային կուլտուրաների համախառն բերքատվությունն

աճեց 67% -ով, շաքարի ճակնդեղինը՝ 3 անգամ, բամբակինը՝ ավելի քան 56% -ով, կարտոֆիլինը՝ 57% -ով⁶¹:

Պատերազմի վերջին տարիներին զգալիորեն բարձրացավ կոլտնտեսային դաշտերի բերքատվությունը՝ ուղմանակատից գյուղ վերադարձած հաշմանդամներին գյուղատնտեսական աշխատանքներում ներգրավման և ժամանակավորապես դադարեցված ջրանցքների շինարարության վերսկսման ու գործարկման շնորհիվ։ Այդ նպատակով ավելացել էր կառավարության կողմից գյուղատնտեսությանը հատկացված գումարների չափը։ Այսպիս, եթե 1943 թ. Հայաստանի գյուղատնտեսությանը հատկացվել էր 12,6 մլն. ռուբլի, ապա 1944 թ. այն աճել ու հասել էր 21,7 մլն. ռուբլու։ ՀԿ(Բ)Կ Կենտկոմի 1944 թ. մարտի 27-ի որոշմամբ սկսվել էին Աշտարակի շրջանի Համբերդի ջրանցքի շինարարական աշխատանքները⁶²։ Նախատեսվում էր Հայաստանում 19% -ով ավելացնել ոսոգելի հողերի տարածությունը և 1940 թ. համեմատությամբ ցանքատարածությունները պատերազմի վերջին ընդարձակել 27 հազ. հեկտարով⁶³։

Բերքատվության բարձրացմանը խթանում էին նաև այլ միջոցառումներ։ 1944 թ. հուլիսին ՍՍՀՄ ժողկոմխորհն ու ՀամԿ(Բ)Կ Կենտկոմը որոշում կայացրին. «1944 թ. բերքահավաքի և գյուղատնտեսական մթերքների մթերումների մասին»⁶⁴, որի մեջ ասված է. «Կոլտնտեսությունները պարտավոր են... բերքը խստիվ պահպանել դեռ դաշտում շքաղած ժամանակ, բերքահավաքը կալսելու, փոխադրելու և պահպանելու ժամանակ, որքան էլ առատ լինի բերքը այն պետք է հավաքվի ամբողջությամբ, մինչև վերջին հասկը»։

Այդ օրերին «Պրավդա» թերթը գրեց. «Կորուստներից

61 «Великая Отечественная война Советского Союза 1941—1945 гг.» (Краткая история), М., 1967, стр. 437—438.

62 ՄԼԻ Հայկական մասնաճյուղի կուսարժիվ, ֆ. 1, ց. 33, գ. 14, թ. 94:

63 «Посевные площади СССР, Стат. сбор.», т. 1, Госстатиздат, М., 1957, стр. 129.

64 «Սովետական Հայաստան», 22, 23 հուլիսի 1944 թ.:

միրկված հացահատիկի և այլ մթերքների ամեն մի կիւլոգրամը ամրապնդում է մեր հզորությունը, ավելացնում է մեր ուժերը՝ թշնամուն վերջնականապես ջախջախելու համար մղվող պայքարում...»⁶⁵:

Հայաստանի գյուղի աշխատավորները խորապես բմբառնելով կուսակցության և կառավարության հրամայական պահանջը, միահամուռ միացան այդ կոչպահանջին և տեղերում ձեռք առան համապատասխան միջոցներ՝ բերքն անկորուստ հավաքելու համար: Կոլտնտեսություններում բոլոր բրիգադները աշխատում էին գործավարձային սիստեմով, որի շնորհիվ հունձը կատարվում էր ավելի արագ և որակով: Կալերում սահմանված էր 24 ժամյա հերթապահություն: Կալսված հացահատիկը նույն օրը մաքրվում, կալսվում և փոխադրվում էր մթերքան կայան կամ պահեստ: Ամեն օր բերքահավաքի աշխատանքներին մասնակցում էին հաղարավոր պիոններ-դպրոցականներ: Այդ գործի դեկավարությունը դրված էր տեղի կոմերիտական կազմակերպությունների վրա: Տասնյակ հաղարավոր պիոններ-դպրոցականներ ոգերված աշխատում էին հանրապետության կոլտնտեսային դաշտերում և իրենց ժրաջան աշխատանքով մեծ օգնություն ցույց տալիս կոլտնտեսականներին: Այդ գործում օրինակելի աշխատանք կատարեցին Արարատ (նախկին՝ Վեդի) շրջանի Թայթան գյուղի դպրոցականներն ու ուսուցիչները, որոնք Ազիզբեկովի անվան կոլտնտեսության դաշտերից հավաքեցին ավելի քան 20 տ հացահատիկ, իսկ Զիմաներին պատճեն (նախկին՝ Ղարաբաղլար) բերքահավաքի աշխատանքներին մասնակցեցին շրջանի 60 ուսուցիչ և 1600 աշակերտ:

Կազմակերպված աշխատանքի օրինակ էին ցույց տալիս և հունձն անկորուստ հավաքում էջմիածնի, Շահումյանի, Հոկտեմբերյանի, Արտաշատի, Գորիսի և Կոտայքի շրջանների կոլտնտեսությունները: Արտաշատի կուաշրջկոմի կողմից ՀԿ(ԲԿ)Կ կենտկոմ ուղարկված հեռագրում նշվում է.

65 «Правда», 20 июля 1944 г.

«Երջանի կոլխոզնիկներն ու կոլխոզնիկուհիները, ոգևորված կարմիր բանակի հաջողություններով, նախորդ տարվանից 16 օր առաջ՝ հուլիսի 24-ին ավարտեցին հացահատիկային կուլտուրաների բերքահավաքը 3494 հա տարածության վրա, հացահատիկ հանձնելու տարեկան պլանը գերակատարվեց, պարտադիր հանձնումները կատարվեցին 100%-ով, կարմիր բանակի ֆոնդին կատարվող հատկացումները՝ 100%-ով, ՄՏ կայանների աշխատանքի բնավարձը՝ 103%-ով»⁶⁶:

Հոկտեմբերյանի շրջանի կուսկազմակերպությունների XVI կոնֆերանսն իր բանաձևում արձանագրեց. «Հաշվետուժամանակամիջոցում զգալիորեն լայնացնել են ցանքատարածությունները: 1940 թ. 2950 հա-ի դիմաց՝ 1944 թվականին հացահատիկային կուլտուրաների ցանքատարածությունները հասել են 3935 հեկտարի, այսինքն աճել է 985 հա-ով, միշտին բերքատվությունը հասել է 14—24 ց.: Հաշվետուժամանակամիջոցում զգալիորեն բարձրացել է կոլտնտեսականներին հասանելիք եկամուտը, իսկ կոլտնտեսությունները տնտեսապես ավելի են տարածվել, աճել են նրանց դրամական եկամուտները: 1940 թ. շրջանում եղած միլիոնատեր 5 կոլխոզի դիմաց 1943 թ. դարձել են 10 միլիոնատեր կոլտնտեսություն, իսկ 1945 թ. նրանց թիվը հասավ 15-ի»⁶⁷:

Հայաստանի բոլոր կոլտնտեսությունները միասին վեցրած հացի հանձնման 1944 թ. պետական պլանը կատարեցին 100,7%-ով⁶⁸: Նրանք պարտավորվեցին արտապլանային կարգով կարմիր բանակի ֆոնդ մուծել 200 հազ. փությացահատիկ: Այդ մասին նրանք իրենց պարտավորության մեջ գրեցին. «Կոլտնտեսականներս ու կոլտնտեսություններս հաստատ գիտակցում ենք, որ սուրբ թշնամու վերջնական շախչախման համար պահանջվում է ուժերի ավելի լարում և եռանդ, ավելի մեծ օգնություն մեր պահանջական կարմիր բա-

66 «Մովետական Հայաստան», 2 օգոստոսի 1944 թ.:

67 Մէի Հայկական մասնաճյուղի կուսարիսիվ, ֆ. 90, ց. 4, գ. 348, թ. 13:

68 Նույն տեղում, ֆ. 1, ց. 34, գ. 40, թ. 379:

նակին: Մենք պաշտպանում ենք Սովետական Ռէվրախնայի կոլտնտեսականների հայրենասիրական նախաձեռնությունը: Մեր կոլտնտեսությունները ստացել են բավական բերք և լրիվ հնարավորություն ունեն առանձնացնելու լրացուցիչ հաց տալ կարմիր բանակի ֆոնդին: Մենք գիտենք, որ հացը զինք է մեր հայրենիքի թշնամու զեմ մզվող պայքարում: Մենք պարտավորություն ենք ստանձնում մինչև 1944 թ. նոյեմբերի 1-ը կարմիր բանակի հացի ֆոնդը մուծել 200 հազ. փութ լրացուցիչ հացահատիկ և ժամկետից շուտ մթերել գյուղատնտեսական և անասնապահական մթերքները⁶⁹: Հայաստանի կոլտնտեսականները պատվով կատարեցին ստանձնած այդ պարտավորությունները և Հոկտեմբերի 30-ի տվյալներով կարմիր բանակին հատկացրին պլանից զուրս 200 հազ. փութ հացահատիկ⁷⁰:

Հանրապետության առաջավոր կոլտնտեսություններն աշխատում էին գործավարձային սիստեմով: Նրանց փորձը ցուց էր տալիս, որ գյուղատնտեսական աշխատանքներում կիրառվող գործավարձային մեթոդն ամենից ճիշտն էր, քանի որ նրա հիմքում ընկած էր կոլտնտեսականների, ընդհանրապես գյուղատնտեսական աշխատանքներում ընդգրկված աշխատողների անձնական շահագրգովածությունը, որը և բերքահավաքի հաջողության առաջին գրավականն էր: Բայց դժբախտաբար դեռևս կային կոլտնտեսություններ, որտեղ աշխատողների գործավարձային վարձատրության սիստեմն անտեսվում էր, որի հետևանքով էլ աշխատանքը տուժում էր: Այդպիսի կոլտնտեսությունների զիկավարները մոռանում էին և չէին կենսագործում ՍՍՀՄ ժողովածությունի և Համկ(բ)կ կենտկոմի որոշման այն մասը, ուր պարզ ու հստակ շարադրված էր: «Բոլոր կոլխոզներում և սովխոզներում ապահովել բերքը հավաքելու և մթերքները պետական մթերակայանները փոխադրելու աշխատանքի կազմակերպումը անհատական և փոքր խմբային (օդակա-

69 Նոյեմբերում, ֆ. 1, ց. 33, գ. 40, թ. 380—382:

70 «Սովետական Հայաստան», 31 հոկտեմբերի 1944 թ.:

շին) գործավարձի լայն կիրառման հիման վրա»: Արթիկի շրջանի Հայրենյաց (նախկին՝ Սոնգուռլու) գյուղի կոլտընտեսության № 3 բրիգադում միասին աշխատում էին 7 հնձվորներ: Օրվա վերջին նրանց բոլորի աշխատանքը կոլտնտեսության վարչությունը հաշվում էր միատեղ և յուրաքանչյուրին տալիս մեկ աշխօր: Նույն այդ ձևով էին աշխատում նաև № 1 բրիգադի 7 հնձվորներն ու 9 փոցիսողները: Եվ զարմանալի չէ, որ նրանք բոլորն էլ թերակատարում էին իրենց օրվա առաջադրանքները: Խակ Սպիտակի, Ալավերդու և մի շարք այլ շրջաններում մեծ խզում էր լինում հնձի, փոխադրման և կալսման աշխատանքներում: Սրանք իհարկե, եղակի օրինակներ էին և չէին կարող առանձին որակ տալ ընդհանուր գործին:

Հայկական սովետական սոցիալիստական հանրապետությունը ժամկետից շուտ 101,1 % -ով կատարեց 1944 թ. հացամթերումների տարեկան պլանը բոլոր գծերով (բացի բրնձից), այդ թվում պարտադիր հանձնումները կատարվեցին 100,7 % -ով, ՄՏ կայանների բնավարձը՝ 101,2 % -ով, կարմիր բանակի ֆոնդի հատկացումները 102,1 % -ով, սերմվարկի վերադարձումը 100 % -ով, հացահատիկի հանձնումը սովիսողների կողմից 100 % -ով⁷¹:

Պատերազմի ընթացքում հացահատիկային կուլտուրաների ցանքերի և բերքահավաքի ընդհանուր պատկերը Հայաստանում հետևյալն էր⁷².

Տարիներ	Ցանքած էր (հազ. հեկ- տարով)	Հավաքած էր (հազ. հեկ- տարով)	Հավաքած էր բերք- (հազ. ցենտներով)
1941 թվականին	—	332,9	2293,0
1942	332,6	320,9	1575,2
1943	358,6	329,5	1956,4
1944	356,6	344,8	2127,2
1945	354,1	335,7	2061,5

71 «Սովետական Հայաստան», 26 սեպտեմբերի 1944 թ.:

72 Ю. В. Арутюнян, Советское крестьянство в годы Великой Отечественной войны, стр. 414, 416, 418, 420, 422.

Հանքատարածությունների ավելացման հետ մեկտեղ
 հանրապետության կոլտնահսությունները, ինչպես ցույց է
 տալիս վերոհիշյալ ազյուսակը, պատերազմի տարիներին.
 Հասան որոշակի հաջողությունների նաև բերքատվության
 բնագավառում: Այսպես, 1940 թ. յուրաքանչյուր հեկտարից
 8,3 գ. դիմաց 1944 թ. հավաքվեց 9,5 գ. հացահատիկ⁷³:
 Յանքատարածությունների ընդարձակման և բերքատվու-
 թյան բարձրացման շնորհիվ բավական ավելացան կոլտըն-
 տեսությունների համախառն արտադրանքի եկամուտները:
 Հացահատիկային կուլտուրաների ցանքերի տարածության
 ավելացման հետ միասին հետագայում գգալի շափով ավե-
 լացավ նաև աշնանացանինը, եթե 1940 թ. աշնանացանի
 տիսակարար կշիռը կազմում էր հացահատիկային ցանքերի
 40 %-ը - ապա 1945 թ. այն բարձրացավ մինչև 54 %-ի:
 Հետեւաբար, ինչպես տեսնում ենք, տեղի ունեցավ թե՛ ցան-
 քերի աճ և թե՛ բերքատվության: Այս ամենի շնորհիվ հա-
 ցահատիկային կուլտուրաների համախառն բերքը 1940 թ.
 համեմատությամբ 1945 թ. ավելացավ ավելի քան 14 %-ով
 և կազմեց 3,22 մլն ցենտներ⁷⁴: Այդ ցուցանիշներն արդյունք
 էին 1945 թ. գարնանացանը կազմակերպված և ժամանակին
 կատարելուն: Հանքապետության Աշտարակի, Հոկտեմբեր-
 յանի, Ստեփանավանի, Գորիսի, Ախուրյանի, Աղինի և Սի-
 սիանի շրջանների կուսակցական, կոմերիտական և սովե-
 տական կազմակերպություններն օրինակելիորեն կազմա-
 կերպեցին գարնանացանի աշխատանքները և ժամկետին ա-
 վարակցին պատերազմի վերջին տարվա գարնանացանը:
 Այս գործում կոլտնահսություններին մեծ օգնություն ցույց
 տվեցին ՄՏ կայանները: Նախորդ տարվա համեմատությամբ
 նրանք կատարեցին 23000 հա ավելի վար և 1944 թ. 1500
 հազ. տ-ի դիմաց 1945 թ. դաշտ փոխադրեցին 1608 հազ.

73 ՄԼԻ Հայկական մասնաճյուղի կուսարժիվ, ֆ. 1, ց. 34, գ. 6, թ.
5,6:

74 Հ. Ե. Թումանյան, Հայաստանի սոցիալիստական էկոնոմիկայի գար-
գացումը, Երևան, 1962, էջ 180:

տ գոմազը, 3500 տ հանքային պարարտանյութի փոխարեն՝
12 հազ. տ հանքային աարարտանյութ⁷⁵:

Սակայն կային շրջաններ, որոնք գեռևս չէին հասել
նախապատերազմյան տարիներից ցուցանիշներին և այդ
հետևանք էր մի կողմից՝ աշխատող ձեռքերի, տեխնիկայի և
վառելանյութի պակասի, իսկ մյուս կողմից՝ կուսակցական
ու սովորական կազմակերպությունների որոշ ղեկավարների
աշխատանքի սխալ ոճի⁷⁶:

* * *

Հայրենական պատերազմը բացասարար անդրադար-
ձավ իւաղողագործության և պտղաբուժյան զարգացման
վրա, քանի որ այդ շրջանում կրծատվեցին դրանց տարա-
ծություններն, ու մասամբ էլ նվազեց բերքատվությունը:
Բերքատվության ցածր ցուցանիշներն արդյունք էին այն
բանի, որ պատերազմի հետևանքով խաղողագործական և
այգեգործական կոլտնտեսությունները զրկված էին անհրա-
ժնշտ գեղանյութերից, պարարտանյութերից և, ամենա-
կարեռը՝ պատերազմի առաջին երկու տարում խիստ կեր-
պով կրծատվել էին ոռոգման սխատեմի աշխատանքները:
Այս ամենը պատճառ դարձան, որ հանքապետության որոշ
այգեգործական շրջաններում 1942 թ. տնկած խաղողի և
պտղատու ծառերի տնկիները փշանան, Հայաստանի կառա-
վարությունը հարկադրված եղավ հարեան հանքապետու-
թյուններից նոր տնկիներ բերել և այդ հաշվին միայն նո-
յեմբերյանի ու Ալավերդու շրջաններին բաց թողնվեց 5000000
նոր տնկի⁷⁷: Պատերազմի առաջին երեք տարում տնկվեցին
3485 հեկտար խաղողի և 5119 հեկտար պտղատու ծառերի
այգիներ⁷⁸:

Հայաստանի այգեգործները 1942 թ. պլանի համաձայն

75 Մէի Հայկական մասնաճյուղի կուսարիսիվ, ֆ. 1, ց. 34, գ. 7, թ. 15:

76 Նույն տեղում, ֆ. 14, ց. 2, գ. 196, թ. 7, 8, 9:

77 Նույն տեղում, ֆ. 1, ց. 32, գ. 42, թ. 19:

78 «Կոմմունիստ», 11 փետրար 1944 թ.

պետությանը հանձնեցին 25550 տ խաղող⁷⁹, իսկ 1943 թ., ոգևորված կարմիր բանակի բաշարի զորքերի նոր հաղթանակներով, որոց շրջաններ հասան էլ ավելի մեծ հաջողությունների: Այսպես, Արտաշատի շրջանի Վ. Արտաշատ գյուղի Սվերդլովի անվան կոլտնտեսությունը (նախագահ Լենինի շքանշանակիր Գուրգեն Բաբաջանյան) 1943 թ. պետությանը հանձնեց 1900 տ խաղող և այգիների միջին բերքատվությունը հասցրեց 80 ցենտների: Այդ նույն կոլտնտեսության եկամուտները տարեց-տարի գնալով աճում էին: Եթե 1941 թ. այն կազմում էր 25200 ռուբլի, ապա 1943 թ. համարյա կրկնապատկվեց և հասավ 45800 ռուբլու, իսկ 1945 թ. այն դարձավ 5.766 հազար ռուբլի⁸⁰:

1943 թ. ընթացքում Արտաշատի շրջանից 23 կոլտնտեսություններ դարձան միլիոնատեր, նրանց ընդհանուր եկամուտը հասավ 64 մլն 300 հազ. ռուբլու: Այդ կոլտնտեսությունները միջին հաշվով աշխօրին բաժանեցին 25 ո. 70 կ. դրամ և գյուղատնտեսական այլ մթերքներ, 1942 թ. 9 ռուբլի 82 կոպեկի դիմաց⁸¹:

1943 թ. նոյեմբերի 15-ի ՀԿ(բ)Կ Կենտկոմն իր XVI պլենումում անզրադառնալով ՍՍՀՄ ժողկոմսովետի և Համկ(բ)Կ Կենտկոմի 1940 թ. սեպտեմբերի 6-ի ընդունած «Զրանցքաշինարարական աշխատանքների վերակառուցման, այգեգործության և պտղաբուծության դարգացման ընթացքը Հայկական ՍՍՀ-ում» որոշման կենսագործման հարցին, ընդդեմ որ այդ ուղղությամբ հանրապետությունում ծավալվել է զգալի աշխատանք: Չնայած պատերազմի հետևանքով շրջանցքաշինարարական աշխատանքները խիստ կրծատվել կամ կոնսերվացիայի էին ենթարկվել, բայց 1943 թ., երբ կարմիր բանակը սկսեց իր հաղթարշավը, վերսկսվեցին ներքին ջանգվի, Աղիյամանի, Թալինի, Ստա-

79 ՀՀՍՇՊԿ արխիվ, ֆ. 575, ց. 1, գ. 99, թ. 40:

80 Տե՛ս Ստ. Կուրտիկյան, Միլիոնատեր կոլտնտեսությունները, Երևան, 1951, էջ 19:

81 Մէկ Հայկական մասնաճյուղի կուսարիսիվ, ֆ. 36, ց. 6, գ. 68, թ. 4:

լինի անվան, Ուղունլարի ջրանցքների և Քանաքեռդէսի է-լեկտրագրանկայանի շինարարական աշխատանքները:

Ջրանցքաշինարարության գործում իրենց խոշոր ներդրումն ունեն Հայաստանի կոլտնտեսականները, քաղաքի աշխատավորները և ուսանողները: Հայրանական պատերազմի ժանր օրերին Ալավերդու, Ստեփանավանի և Կալինինովի շրջանների կոլտնտեսականների ուժերով ավարտվեց կոռվա ջրանցքի շինարարությունը⁸²: Նորքի ջրանցքի առաջին 10 կիլոմետրը կառուցվեց Երևան քաղաքի աշխատավորության և ուսանողության ուժերով: Ջրանցքաշինարարական աշխատանքներն ավելի ուժեղացան 1945 թ. և 1940 թ. համեմատությամբ ոռոգելի հողերի տարածությունը ավելացավ 27 հազար հեկտարով⁸³:

ՀԿ(Բ)Կ Կենտկոմի XVI պլենումը արձանագրեց, որ այդիների պահպանման և զանազան վնասատու միջատների դեմ սրացրելու համար անհրաժեշտ է ուժեղացնել դիմիական նյութերի, ծծմբաթթվի, կալցիումի, նիկոտինի, սուլֆատի, ֆորմալինի, պղնձարջասպի արտադրությունը: 1944 թ. համար նախատեսված էր արտադրել 1500 տ ծծմբաթթու, 123 տ. կալցիում, 30 տ նիկոտին-սուլֆատին, 15 տ ֆորմալին և անհրաժեշտ քանակությամբ պղնձարջասպ⁸⁴:

Հայաստանի այգեգործական շրջանները ձեռնամուխ եղան Կենտկոմի սույն որոշումների կենսագործմանը: Հոկտեմբերյանի շրջկոմի V պլենումը (1943 թ. դեկտեմբերի) անդրադառնալով այդ հարցին, նշեց, որ շրջանի կոլտնտեսություններում տնկվել է 478,5 հա խաղողի և 107,5 հա պտղատու այգի, համեմատաբար բարձրացել է այգիների բերքատվությունը: 1942 թ. 33 ց դիմաց 1943 թ. յուրաքանչյուր հեկտարից ստացվել է 45 ց. խաղող, իսկ պտղատու

82 Նույն տեղում, ֆ. 1, ց. 33, գ. 73, թ. 74:

83 «Հայ մողովովի պատմություն», Հատ. VII, Երևան, 1970, էջ 106:

84 Մի Հայկական մասնաճյուղի կուսարիսիվ, ֆ. 1, ց. 33, գ. 10, թ. 10:

այգիների բերքատվությունը 1941 թ. 26,5 ց. դիմաց՝ 1943 թ. դարձել է 37 ց.:

Համեմատաբար ավելացել էր նաև սովխողների խաղողի և պտղատու այգիների բերքատվությունը։ Շրջանի առանձին գյուղեր, ինչպիս Արմավիր, Հայկավան (նախկին՝ Թարագիրի), Այգեշատ (նախկին՝ Դուզիգիդան) ստացել էին 70—80 ց. խաղողի բերք, իսկ և 2 սովխողը և մի քանի այլ կոլտնտեսություններ մեկ հեկտար պտղատու այգուց՝ 45—68 ց. բերք⁸⁵:

Արտաշատի շրջկոմի հաշվետվության մեջ նշված է, որ 1943 թ. շրջանի կուսակցական կազմակերպությունների և կոլտնտեսային աշխատավորների կատարած բարեխիղճ աշխատանքի շնորհիվ ստացվեց բարձր բերք։ Խաղողի 3500 հա բերքատու տարածության յուրաքանչյուր հեկտարից հավաքվեց 70 ց. խաղող 1942 թ. 45 ց. դիմաց⁸⁶, Այդ գործում ինչպիս վերկում արդեն նշել ենք, առաջնությունը պատկանում է Վ. Արտաշատ գյուղի Սվերդլովի անվան կոլտնտեսությանը։

Այգեգործության և խաղողագործության ասպարեզում բարձր ցուցանիշների հասավ էջմիածնի շրջանի Լենինի շքանշանակիր «Անաստված» կոլտնտեսությունը։ Կոլտնտեսության այգեգործական օղակի օղակավար Ավետիս բիծան (Ավետիս Հարությունյան) պատերազմի ընթացքում մեկ հեկտարից ստանում էր 130—140 ց. խաղող, բացառությամբ 1945 թվականից, երբ աշնան ու գարնան ցրտահարության հետևանքով ստացավ 125 ց խաղող։ 64 ամյա Ավետիս բիծան անդադրում աշխատում էր այգիներում և ստացած եկամտից ու իր անձնական խնայողություններից 1944 թ. պետական ուազմական փոխառություն բաժնեգրվեց 10000 ռուբլի, իսկ 1945 թ.՝ 5000 ռուբլու շափով⁸⁷։

Պատերազմի տարիներին շարունակվում էին զարգանալ խաղողագործությունը և պտղաբուծությունը։ դրանց ար-

85 Նույն տեղում, ֆ. 90, ց. 4, գ. 271, թ. 27:

86 Նույն տեղում, ֆ. 36, ց. 6, գ. 68, թ. 9:

87 ՀՊԴ կաբինետի արխիվ, ֆ. 271, ց. 10, թ. 1—2:

տաղբանքի արժեքը 1945 թ. կազմեց 18,5 մլն. ռուբլի՝
1940 թ. համեմատությամբ աճելով 18 %-ով⁸⁸: Նույն չա-
փով ավելացավ նաև խաղողի այգիների տարածությունը:
Այն աճեց ի հաշիվ հանրապետության հյուսիսային շրջան-
ների: Այնտեղ, ուր դարեր շարունակ հայ գյուղացին
զբաղվում էր միմիայն հացահատիկի մշակմամբ և անսա-
նապահությամբ, սկսեց աճեցնել խնձոր, տանձ, խաղող:
Այգեգործները հատուկ ուշադրություն էին դարձնում խաղո-
ղի և պտղատու այգիների մշակմանն ու խնամքին, որի
շնորհիվ աղացովվեց բարձր բերքի ստացումը, մեկ հեկ-
տարից միջին հաշվով հավաքվեց 88 ց խաղող և 60 ց միրգ:

* * *

Հայրենական պատերազմի ընթացքում բավական ըն-
դարձակվեցին բանջարաբոստանային կուտուրաների, հատ-
կապես կարտոֆիլի ցանքատարածությունները: Հողի աշ-
խատավորը լավ հասկացավ պատերազմի հրամայական
պահանջը: Նա զգաց, «որ ինչպես ամենուր, այնպես էլ գյու-
ղատնտեսության մեջ անհրաժեշտ էր փնտրել և գտնել դե-
ֆիցիտային նյութերի ու մթերքների, այդ թվում առաջին
հերթին հացի փոխարինիչները»: Ուժեղ զարկ տրվեց կար-
տոֆիլի մշակմանը: 1941 թ. գեկտեմբերին Համկ(բ)Կ Կենտ-
կոմը և ՍՍՀՄ ժողկոմխորհը որոշում կայացրին լայնորեն
օգտագործել բաղարամերձ ամեն մի աղատ տարածություն,
որպես անհատական և կոնկրետ օգտագործման օժանդակ
տնտեսություն, որի հետևանքով ցանքատարածությունները
1942 թ. 17,759 հա-ից 1943 թ. հասան 18,565 հեկտա-
րի⁸⁹:

Գյուղատնտեսության մեջ կարտոֆիլի սերմացուի փո-
խարեն, ակաղեմիկոս կիսենկոյի առաջարկությամբ, սկսեցին

88 Հ. Ե. Թումանյան, Հայկական ՍՍՌ-ի էկոնոմիկան Հայրենական
պատերազմի շրջանում և նրա զարգացումը ետպատերազմյան առաջին
հնգամյակում, Երևան, 1953, էջ 36:

89 ՀՀՍՇՊԿ արխիվ, ֆ. 163, ց. 12, գ. 46, թ. 2—7:

օգտագործվել կարտոֆիլի աշքերը: Հայաստանում այդ մեթոդն առաջին անգամ սկսեց փորձարկել և կիրառել Արմֆանի կենսաբանական ինստիտուտի ավագ գիտական աշխատող Տիրան Տեր-Սահակյանը: Տեր-Սահակյանի մեթոդի⁹⁰ էությունը հետեւալն էր. կարտոֆիլի թարմ պալարների գագաթային մասը վազօրոք ծլեցնելու միջոցով աճուանը նորից ցանել և լրացուցիչ բերք ստանալ: Պատերազմի ծանր օրերին կարտոֆիլի բերքատվության բարձրացման զործում մեծ նշանակություն ունեցավ վերոհիշյալ մեթոդի կիրառումը:

Հեկ Կենտկոմի բյուրոն 1943 թ. գեկտեմբերի 17-ին քննարկեց Տեր-Սահակյանի մեթոդով հանրապետության երեք շրջաններում (Նոր Բայազետ, Աշտարակ, Հոկտեմբերյան) փորձնական կարտոֆիլ աճեցնելու հարցը: Փորձը տվեց՝ զրական արգյունք: Հետագայում Տեր-Սահակյանի մեթոդը լայնորեն կիրառվեց ինչպես Հիմնական, այնպես էլ օժանդակ տնտեսությունների կողմից: Կարտոֆիլի բերքատվությունը բարձրացավ մեծ մասամբ մինչև պատերազմը Վորոնեժի մարզում աճեցրած «լորի» տեսակ կարտոֆիլի միջոցով: 1943 թ. Հայաստանի կարտոֆիլի ցանքերի 93,3% -ը կազմում էր «լորի» տեսակը:

1941 թ. գեկտեմբերյան որոշման համաձայն, ինչպես ամբողջ միության, այնպես էլ Հայաստանի բոլոր հիմնարկենուարկությունների և տրանսպորտի բանվոր-ծառայողներին տրամադրվեցին համապատասխան բանակությամբ հողակտորներ՝ անձնական կարիքները բավարարելու համար: Պատերազմի պայմաններում այդ օժանդակ տնտեսությունները մեծ օգնություն ցուցց տվեցին թե՛ քաղաքացին բնակչությանը և թե՛ էվակու-հոսպիտալներին: Ըստ քաղաքների բանշաբթաբուստանային կուլտուրաներից ցանքատարածությունների պատկերը հետեւալն էր. Երևան քաղաքին տրամադրված էր 230 հա, Լենինականին՝ 2146, Կի-

90 Մէկ Հայկական մասնաճյուղի կուսարխիվ, ֆ. 1, ց. 31, գ. 296, թ. 17-20:

բովականին՝ 144, Ալավերդում՝ 170, իսկ Ղափանին՝ 110 հատարածություն⁹¹:

Կարտոֆիլը լինելով այն հիմնական կուտուրան, որը լրացնում էր հացի պակասը, ինչպես տեսնում էնք, պատերազմի տարիներին լայն տարածում գտավ Հայաստանում։ Հայաստանի կոլտնտեսություններն ու սովխողները հասան կարտոֆիլի մշակման բարձր ցուցանիշների։ Այսպես, օրինակ, Ստեփանավանի շրջանի Սվերդլով գյուղի Մոռավյանի անվան կոլտնտեսության Սարիբեկ Ղուկասյանի բրիգադան պլանով նախատեսված 510 փութի դիմաց 1943 թ. հեկտարից ստացավ 2500 փութ կարտոֆիլի միջին բերք⁹²։ Բարձր բերք ստացան ինչպես Ստեփանավանի շրջանի, այնպես էլ Կալինինոյի, Կրասնոսելսկի, Մարտունու, Ալարանի շրջանների կոլտնտեսությունները։

1944 թ. Հանրապետության կոլտնտեսություններն ու սովխողները երկրին տվեցին 11500 տ կարտոֆիլ և 15300 տ այլ բանջարեղեններ⁹³։

Հայրենական պատերազմի տարիներին գրեթե կրկնապատկից բանջարաբոստանալին կուլտուրաների ցանքատարածությունը։ Նրանց տարածությունները 1940 թ. 12 հազ. հեկտարից 1945 թ. հասան 22 հազ. հեկտարի, որից կարտոֆիլի ցանքատարածությունները 1940 թ. 7,080 հեկտարից 1945 թ. հասան 14,600 հեկտարի։ Ցանքատարածությունների ընդարձակման հետ մեկտեղ աճեց նաև կարտոֆիլի բերքատվությունը։ Եթե 1940 թ. Հանրապետությունում մեկ հեկտարից միջին թվով ստացվում էր 79,7 ց բերք, ապա 1945 թ. այն հասավ 100,0 ցենտների⁹⁴։

91 ՀՀՍՇՊԿ արխիվ, ֆ. 113, ց. 33, գ. 35, թ. 16։

92 «Սովխտական Հայաստան», 22 հոկտեմբերի 1943 թ.։

93 ՄԼԻ. Հայկական մասնաճյուղի կուսարիսիվ, ֆ. 1, ց. 30, գ. 37, թ. 97։

94 Նույն տեղում, ֆ. 1, ց. 37, գ. 1 ա, թ. 29։

* * *

Սովետական երկրի գյուղի աշխատավորները ստիպված էին մեծ դժվարություններ հաղթահարել նաև անասնապահության զարգացման բնագավառում։ Պատերազմը մեծ վնաս էր հասցրել անասնապահությանը։ Հիտերականներն իրենց զավթած շրջաններում ոչնչացրել էին միլիոնավոր անասններ և հաղարավոր հեկտարներով՝ արոտավայրեր։ Կերի համար օգտագործվող ցանքատարածությունները նախապատերազմյան շրջանի համեմատությամբ կրճատվել էին համարյա երկու անգամ։ Ինչ խոսք, այս ամենը բացասաբար էր անդրագարձել թիկունքային հանրապետությունների, այդ թվում նաև Հայաստանի վրա։ Հայաստանն իր սուլ միջոցներից մեծ քանակությամբ քաշող ուժ և խոշոր ու մանր եղջյուրավոր անասուններ էր ուղարկել ուղղմաճակատ։ Ժամանակը պահանջում էր մոբիլիզացնել անասնապահների աշխատանքը։

Բազմաճակատ մեկնածներին փոխարինեցին նորերը, թիկունքում մնացած հովիվները աշխատեցին կրկնակի, եռակի լարվածությամբ, ինամելով միաժամանակ ուղղմաճակատ մեկնած ընկերների հոտը։ Այսպիս, օրինակ, Ալավերդու շրջանի Մաթեր գյուղի հովիվներից Գ. Ավետիսյանը մեկնեց ուղղմաճակատ, իսկ մյուսը՝ Հաղարյանը հանձն տուակ խնամել ընկերոջ 600 ոչխարից բաղկացած հոտը։ Անասնապահական աշխատանքներին օգնում էին նաև թոշակառու ծերունիները։ Նրանք փոխարինում էին իրենց որդիներին, եղբայրներին և մյուս հարազատներին։ 85-ամյա Պատվական Վիրաբյանի որդին երբ մեկնում է բանակ, ծերունին, որը 20 տարի հովվություն էր արել և անցել հանդսափ, ցանկություն է հայտնում ստանձնել իր պարտականությունները։

Նախապատերազմյան տարիներին Հայաստանի կոլտընտեսությունները մեծ հաջողություններ էին ձեռք բերել հանրային անասնապահության զարգացման, անասունների ցեղային կազմի բարելավման և մթերատվության բարձրացման բնագավառում։ Պատերազմի շահերը պահանջում էին ավե-

լի արագ թափով և լայն մասշտաբով զարգացնել անասնաբուժությունը, կրկնապատիկ և եռապատիկ ավելի միս, յուղ, պանիր, բուրդ, կաշի արտադրել, պատերազմի ժամանակվատեմպերով ավելացնել անասնաբուժական ֆերմաների ապրանքայնությունը: Իսկ այս ամենին հասնելու համար անհրաժեշտ էր առաջին հերթին լավ կազմակերպել անասունների ձմեռումը (շենքերի նախապատրաստումը, կերի ապահովումը, կաղրերի ընտրությունը և աշխատանքի ճիշտ կազմակերպումը): Հայաստանի շատ կոլտնտեսություններ ժամանակին ձեռնամուխ եղան անասունների ձմեռման նախապատրաստման աշխատանքներին: Ստեփանավանի շըրջանի Ուռուտ գյուղի միլիոնատեր կոլտնտեսությունը 1941 թ. դեռ հոկտեմբեր ամսին կուտակել էր մեծ քանակությամբ անասնակեր, գոմերը լրիվ վերանորոգել ու պատրաստել էր ձմեռման համար: Զմունը լավ էին նախապատրաստվել նաև Ղուկասյանի, Ազիզբեկովի շրջանների կոլտընտեսությունները: Թերեւ պետք է նշել, որ մի շաբթ շրջաններ անպատրաստ դիմավորեցին պատերազմի առաջին տարվա ձմռանը: Նույն վիճակն էր տիրում նաև Միության մյուս հանրապետություններում ու մարզերում:

Այդ պատճառով ՍՍՀՄ ժողկոմսովետը և Համկ(բ)Կ Կենտկոմը 1942 թ. մարտին որոշում կայացրին կոլտնտեսություններում ու սովխառներում մատղաշի պահպանման և անասունների գլխաքանակն ավելացնելու ձեռնարկումների մասին: Այս որոշումը մարտական ծրագիր դարձավ բոլոր կուսակցական, սովհետական կազմակերպությունների և գյուղական աշխատավորության համար: Այդ որոշման ոգով մարտի վերջին Երևանում հրավիրվեց սոցիալիստական անասնաբուժության առաջավորների հանրապետական խորհրդակցություն, Խորհրդակցության մասնակիցները քննության առնելով ժողկոմսովետի և Կենտկոմի մարտյան որոշումը, իրենց հարուստ փորձի հիման վրա կոնկրետ միջոցառումներ նշեցին՝ սոցիալիստական անասնաբուժության հետագա վերելքի համար: «Պրավդա» թերթին այդ օրերին իր էջերում գրեց. «Սովետական երկիրը և ամենից առաջ կար-

միր բանակը բարձր պահանջներ են ներկայացնում կոլխոզային-սովորողային անասնաբուծությանը։ Կոլխոզները և սովորողները կոչված են թիկունքին և ռազմաճակատին անասնաբուծական արտադրանք մատակարարել Հարածուն շափերով։ Բացի գրանից կոլխոզները և սովորողները պետք է լրացնեն այն կորուստները, որ անասնաբուծությունը կրեց մեր մարդերի ու հանրապետությունների մի մասը գերմանական զավթիչների կողմից ժամանակավորապես օկուպացիայի և ներարկելու հետեանքով»⁹⁵։

Անասնաբուծության առաջավորների հանրապետական խորհրդակցությունը նշեց. քանի որ «մատղաշը հանրային հոտի վերարտադրության հիմնական աղբյուրն է, հարկավոր է վճռական միջոցներ գործադրել մատղաշների խնամքն արմատակես բարելավելու համար։ Պայքարն անասնաբուծության զարգացման պետական պլանի կատարման համար—պայքար է ռազմաճակատին ակտիվ ու գործուն աշակցություն ցույց տալու համար, գերմանաֆաշիստական օկուպանտների ջախչախումն արագացնելու համար»⁹⁶։

ՍՍՀՄ ժողկոմխորհի և Համկ((բ)Կ Կենտկոմի մարտյան որոշումը կարևոր խթան հանդիսացավ 1942 թ. սոցիալիստական անասնաբուծության զարգացման և երկրին ու ռազմաճակատին ավելի շատ միս ու կաթնամթերք տալու համար։

1942 թ. ամռանը, երբ Կովկասյան լեռնաշղթան զարձավ պատերազմի թատերաբեմ, Հյուսիսային Կովկասից Անդրկովկասյան հանրապետությունները էվակուացվեցին նաև մեծ թվով անասուններ։ Հայաստան էվակուացվեցին Ստավրոսովի երկրամասի «Բոլշեիկ» և «Պուտ խլեբարոբա» կոլտնտեսությունների, ինչպես նաև Գրոզնու մսի կոմբինատի և Կրասնոդարի ՇՅԿ-ի անասունները՝ թվով 102 ծի, 257 խոշոր եղջյուրավոր անասուն և 1053 ոշխար⁹⁷։

95 «Правда», 13 марта 1942 г.

96 «Սովետական Հայաստան», 31 մարտի 1942 թ.։

97 Մէի Հայկական մասնաճյուղի կուսարխիվ, ֆ. 1, գ. 32, գ. 52, թ.

1942 թ. նոյեմբերի 9-ին ՀՍՍՀ ժողկոմիսորհը որոշում ընդունեց էվակուացված անասունների ընդունման, տեղավորման և պահպանման հատուկ հանձնաժողով ստեղծելու մասին: Հանձնաժողովի նախագահ նշանակվեց ժողկոմսովետի նախագահ Արամ Փիրուզյանը: Այդ գործում աշքի ընկավ Հոկտեմբերյանի շրջանը, որը նախօրոք պատրաստված գումերում պահեց ցեղային անասուններին, ժամանակին ապահովելով նրանց կերով, պահպանելով գլխաքանակը, մատղաշի աճը, վերջում մեծ կազմակերպվածությամբ այդ անասուններն ետ ուղարկվեցին իրենց տերերին:

Անասնաբուժության զարգացման գործում վճռական դեր խաղաց նաև Կենտկոմի և ժողկոմիսորհի «Կոլտնտեսականներին լրացուցիչ վարձարման մասին» հայտնի որոշումը, որը մեծ ոգերություն և անձնական շահագրգուպածություն առաջացրեց կոլտնտեսականների շրջանում: Նրանք սկսեցին էլ ավելի բարեխղճությամբ, պատասխանատվության զգացումով վերաբերվել իրենց հանձնարարված գործին, և նրանցից շատերը հասան բարձր ցուցանիշների: Այսպիսս, Ալավերդու շրջանի Ռւզոնլար գյուղի կոլտնտեսության անասնապահ-կթվոր Պատվական Մկրտչյանը 12 մայր կովից ստացավ 12 հորթ և պլանով նախատեսված 1500 լիտր կաթի դիմաց՝ 2600 լիտր կաթ: Կալինինոցի շրջանի Սարատովկա գյուղի «Կոլեկտիվնի տրուդ» կոլտնտեսության կթվորուհի Աննա Պետրովնան 9 կովից ստացավ 9 հորթ 3205 լիտր կաթ: Գորիսի շրջանի Բրուն գյուղի հովիվ Գրիգոր Հովհաննիսյանը 990 կգ բրդի փոխարեն խուզեց 1420 կգ, պլանը կատարելով մոտ 150%-ով: Ազիզբեկովի շրջանի Կարմրաշեն գյուղի կոլտնտեսության կթվորուհի Արաքսյա Զաքարյանը 3050 լիտր կաթի դիմաց ստացավ 5728 լիտր, այսինքն իր նորման գերակատարեց 80 % -ով: Ստեփանավանի շրջանի Յաղդան գյուղի կոլտնտեսության ախոռապահ իվան Կարակալաշելը 14 ձիուց ստացավ 14 մտրուկ⁹⁸: Իջարկե, այս ցուցանիշները կարող են ավելի բարձր

98 Նոյեմբեր, գ. 31, գ. 9, թ. 167—171:

լինել, եթե բոլոր կոլտնտեսությունները աշխատեին նույն
 տեմպերով և բարեխսղճությամբ։ Հանրապետության առաջա-
 վոր կոլտնտեսականների կողքին դեռևս կային ցածր ցուցա-
 նիշներ ունեցող կոլտնտեսություններ (Կարմիրի, Իշեանի,
 Ղափանի, Դիլիջանի, Մարտունու շրջանների որոշ կոլտըն-
 տեսություններ), որի հետեւանքով հանրապետության անա-
 սունների գլխաքանակը 1941 թ. համեմատությամբ 1942 թ.
 շատ նվազեց, եթե 1941 թ. վերջին հանրապետությունում
 կար 292,3 հազար գլուխ խոշոր եղջյուրավոր անասուն, ո-
 րից միայն 54,5 հազար գլուխ կովեր, 32,3 հազար գլուխ
 խոզ, 681,2 հազար մանր եղջյուրավոր անասուն, 101,5 հա-
 զար թոշուն, 26,4 հազար ձի, ապա 1942 թ. վերջին այն
 իջավ, և, հետեւաբար, չկատարվեց ՍՍՀՄ ժողկոմսովետի և
 ՀամԿ(բ)Կ Կենտկոմի մարտյան որոշումը։ Պատկերը բա-
 վական տիպուր էր, խոշոր եղջյուրավոր անասունների գծով
 պլանով նախատեսված 340,9 հազ. դիմաց փաստորեն
 ստացվեց 269,5 հազ. գլուխ, որից կովեր՝ 66,0 հազ. դիմաց
 47,8 հազ. գլուխ, մանր եղջյուրավոր անասուններ՝ 960,0
 հազ. դիմաց 640,6 հազ. գլուխ, թոշուններ՝ 120,0 հազ. դի-
 մաց 93,6 հազ. գլուխ⁹⁹։ Այսինքն, 1942 թ. հոկտեմբերի 1-ի
 դրությամբ պետական պլանն ամբողջ հանրապետությունում
 չկատարվեց։ Անասունների գլխաքանակի անկման պատ-
 ճառներից մեկն էլ 1942 թ. անբերիությունն էր, որն ա-
 ռաջին հերթին շատ ծանր ազդեց անասնապահության
 զարգացման վրա։ Անասունները զրկված էին խտացված կե-
 րից, խիստ կրծատվեց քուսպի, ցորենի թեփի մատակարա-
 րումը, կարտոֆիլը դադարել էր անասնակեր լինելուց, այն
 հիմնականում օգտագործվում էր որպես սնունդ։ Խտացված
 կերը երբեմն փոխարինվում էր կոշտ և հեղուկ կերով, որը
 բացասաբար էր ազդում անասունների գլխաքանակի պահ-
 պանման և աճի վրա։

Եվ երբ 1943 թ. մարտին ՀԿ(բ)Կ Կենտկոմի XV պլենու-

99 «Правда», 13 марта 1942 г., Ю. В. Арутюнян. Советское
 крестьянство в годы Великой Отечественной войны, М., 1963, стр.
 426, 428.

մը նորից անդրադարձավ կոլտնտեսություններում և սովորողներում անասունների գլխաքանակի ավելացման և մթերատվության բարձրացման հարցին, իրավացիորեն նշեց, որ չնայած առանձին շրջանների (Ամասիայի, Շամշադինի, Սիսիանի, Գորիսի) կոլտնտեսությունները անասնապահության զարգացման գործում հասել էին որոշակի հաջողությունների, բայց և այնպես հանրապետությունում անասունների գլխաքանակի պատկերը դեռևս գոհացուցիչ չէր: Գյուղատնտեսության մեջ տեղ գտած մի շարք գժվարություններն առաջցրել էին անասունների գլխաքանակի անկում: Կոլտնտեսականները գործազրում էին ամեն մի հնարավոր միջոց անասունների գլխաքանակն ապահովելու և մթերատվությունը բարձրացնելու համար: Մթերատվության ասպարեզում նրանք հասսան զգալի հաջողությունների: Մի շարք շրջաններ նույնիսկ գերակատարեցին մսամթերման եռամսյա պլանը: Մեկ կովի միջին կաթնատվությունը նախապատրազման մակարդակի համեմատությամբ բարձրացավ 14 %-ով, ոչխարներինն ու այծերինը՝ 7 %-ով: Այս բնագավառում բարձր ցուցանիշների հասավ Ստեփանավանի շըրջանը: Լոռու տոհմային անասնաբուծական սովորող¹⁰⁰ մեծ դեր խաղաց կովերի ցեղի բարելավման, կաթի և յուղի արտադրությունն ավելացնելու գործում: Տնտեսությունը տարիներ շարունակ ինչպես Ստեփանավանի, այնպես էլ հանրապետության մյուս շրջանների կոլտնտեսություններին մատակարարել է շվից և սիմենտալ ցեղի կովեր:

Ստեփանավանի շրջանի անասնապահները բարձր ցուցանիշների հասսան նաև մանր եղյուրավոր անասունների՝ մերինոս և կարակուլ ցեղերի բազմացման գործում, իհարկե, պահպաննելով նաև տեղական բալբաս, մաշեկ և կարաբաղցեղատեսակները: Պատերազմական շորս տարիների ընթացքում Ստեփանավանի շրջանի բոլոր 20 կոլտնտեսություններում խոշոր եղյուրավոր անասունների գլխաքանակն ավելացավ 1036-ով, մանր եղյուրավոր անասուններինը՝

¹⁰⁰ Այս տնտեսությունը կազմակերպվել է 1922—1923 թթ.:

8607-ով, իսկ խողերինը՝ 127-ով։ Շրջանում ընդարձակվեց անասնաբուծական ֆերմաների թիվը և պատերազմի վերջում հասավ 120-ի, որոնք մեծ հաջողություններ ձեռք բերին նաև կերի արտադրության գծով։ Անասունների գլխաքանակի ավելացման, մատղաշի աճեցման և պահպանման հետ միասին Ստեփանավանի անասնաբույժները քրանացան աշխատանք կատարեցին մթերատվության բարձրացման ուղղությամբ։ Որոշակի հաջողությունների հասան շրջանի Կաթնաղբյուր, Ազարակ, Ռոռութ, Գյառուցառ, Կուրթան գյուղերի կոլտնտեսությունները։ Անասնաբուծության զարգացման բնագավառում ծավալված սոցիալիստական մրցության մեջ Ստեփանավանի շրջանը ճանաչվեց հաղթող և ՍՍՀՄ ժողկոմսովեսի որոշմամբ 1943 թ. շրջանին հանձնվեց Պաշտպանության պետական կոմիտեի փոխանցիկ Կարմիր գրոշը և զրամական մեծ պարգև¹⁰¹։ Շրջանի աշխատավորները համար ու լարված աշխատանքով այդ դրոշը պահեցին իրենց ձեռքում պատերազմի ամբողջ ընթացքում։ Նույնպիսի բարձր ցուցանիշների հասան նաև Գորիսի, Թալինի, Կամոյի, Սիսիանի, Արթիկի, Ղուկասյանի շրջանների անասնապահները։ Եթե Կամոյի շրջանում ոչխարների ու այծերի գլխաքանակն ավելացավ 18 % -ով, Սիսիանում՝ 23 % -ով, ապա Արթիկում այն հասավ 33,1 % -ի¹⁰², Խոշոր եղջյուրավոր անասունների գլխաքանակը Գորիսում ավելացավ 7,8 % -ով, Արթիկում՝ 16,2 % -ով¹⁰³:

Ղուկասյանի շրջանի անասնապահները 1943 թ. դեկտեմբերի 15-ի տվյալներով պետական պարտավորությունները կատարեցին խոշոր եղջյուրավոր անասունների գծով 100,5 % -ով, մանրերինը՝ 102 % -ով, խողերինը՝ 105 % -ով։ Կովկիթ-անասնապահ Հոռոմ Պետրոսյանը 8 տարի շարունակ խնամել է 8 կով և ոչ մի տարի մատղաշի անկում չի տվել, նախատեսված 7,5 ց կաթի դիմաց ստացել է 8,2 ց։ 8 տարվա ընթացքում աճեցրել է 54 անասուն։ Իսկ Հերիք-

101 ՀՊՊԿ արխիվ, ֆ. 279, գ. 2, թ. 68:

102 «Սովետական Հայաստան», 7 ապրիլի 1944 թ.։

103 Նույն տեղում։

նազ Անտոնյանը 4 տարի շարունակ խնամել է 7 կով, աճեցրել է 26 անասուն և չունի մատղաշի անկում: Աշխարհների միջին կաթնատվությունը շրջանում նախատեսված 45 լիտրի գիմաց հասավ 52 լիտրի: Նախատեսված 16000 տ անասնակերի գիմաց շրջանը կուտակեց 22000 տ անասնակեր, 2100 տ սիլոս, 120 տ քուսպ¹⁰⁴: 1944 թ. շրջանն ուներ 10465 գլուխ խոշոր եղջյուրավոր անասուն, 15285 գլուխ մանր եղջյուրավոր անասուն, 1134 խոզ և 406 ձի:

Հայաստանի անասնապահական կարեսը շրջաններից էր Կալինինոն: 1944 թ. հունվարի 1-ի դրությամբ շրջանն ուներ 24 կոլտնտեսություն և մեկ կոռվա ցեղային սովորոց: Դրանք բոլորը միասին ունեին 16103 գլուխ խոշոր եղջյուրավոր անասուն, 15347 մանր եղջյուրավոր անասուն, 1748 խոզ և 912 ձի¹⁰⁵:

Կովերի կաթնատվության բարձրացման և մատղաշի աճեցման ուղղությամբ զգալի աշխատանք տարավ Հրազդանի շրջանի Աթարբեկյան գյուղի կոլտնտեսությունը: Կոլտնտեսության կիրարութիւն Սաթիկ Գեորգյանը պատերազմի առաջին երկու տարում կաթնապրանքային ֆերմայում աճեցրեց 32 կով և երինց: Հոգատարությամբ խնամելով կովերին, նաօրավուր բարձրացնում էր նրանց կաթնատվությունը: Եթե 1941 թ. կթվորուժին 10,5 ց գիմաց ստացավ 14,5 ց կաթ, իսկ հորթերի միջին քաշը 85-ից հասցրեց 95-ի և 110 կգ-ի, ապա 1942 թ. կովի միջին կաթնատվությունը հասցրեց 15,5 ց և որպես լրացուցիչ վարձատրություն ստացավ 80 կգ պանիր, տարեկան վաստակելով 300—400 աշխօր: Այդ բոլորի հետ մեկտեղ նա պատրաստել էր երիտասարդ որակյալ շատ կաղդեր:

Իշեանի շրջանը ևս անասնապահական շրջան է, ուր իր հատուկ տեղն ունի «Կարմիր կյանք» կոլտնտեսության արտատեղին (յայլաղը): Տարիներ շարունակ այն ղեկավարում էր հին շոբան Հովհաննես Մովսիսյանը, որի երեք որդի-

104 «Սովետական Հայաստան», 4 հունվարի 1944 թ.:

105 ՀՀՍԾՊԿ արխիվ, թ. 130, ց. 5, գ. 42, թ. 41—42:

ները զոհվեցին կենինգրադը պաշտպանելիս։ Կոլտնտեսության արոտատեղում մինչև պատերազմը աշխատում էին 110 անասնապահ։ 1944 թ. նրանց թիվը նվազեց՝ հասնելով 58-ի։ Մեծ մասը մեկնեցին ռազմաճակատ- և նրանց փոխարինեցին ծերունի հայրերը, անշափահասորդիները, անգամ կանայք, Ռազմաճակատ մեկնածներից 16-ը արժանացել էին կառավարական շքանշանների և մեդալների, իսկ 10-ը ընկել էին քաջի մահով¹⁰⁶։

Դորիսի շրջանի ևնձորեսկ գյուղը Հայաստանի մեծ գյուղերից է։ Այն Հայրենական պատերազմի տարիներին ռազմաճակատ ուղարկեց իր 458 զավակներին, որոնցից շատերը պատերազմի տարբեր հատվածներում դարձան ճանաշված զորահրամանատարներ և հերոսներ։ Թիկունքում մնացած խնձորեսկցիները ևս պատվով կատարեցին իրենց վրա զըրված պարտականությունները։ Ոչխարաբուծության գծով ևնձորեսկ գյուղի ֆերման համարվում էր առաջավոր ֆերմա։ Նա ապահովված էր այդ գործին գիտակ մարդկանցով։ Վերջինների բարեխիղն ու աղնիվ աշխատանքի շնորհիվ ֆերմայի ոշխարների գլխարանակը պատերազմի տարիներին աճեց և հասավ 7200-ի։ Միայն 1943 թ. ֆերման 2673 մայր ոշխարից ստացել էր 2966 գառ և շորս ամսվա կաթնատվության շրջանում ստացել ու մշակել էր 75 հազ. լիտր կաթ։ Մտնելով սոցիալիստական մրցության մեջ, ֆերմայի հովիվները մինչև ամառվա վերջը՝ ամեն մի մայր ոշխարից ստացան՝ 55-ի փոխարեն 60 լիտր կաթ։ Բարձր էր նաև նույն ֆերմայի բրդատվության նորման։ Նախատեսված 5700 կգ փոխարեն 4000 ոշխարի միայն առաջին խուզից ստացվեց 6200 կգ բուրդ։

Պատերազմական տարիների դժվարությունները հաղթահարելու ուղղությամբ հայ անասնաբույզների առաջին քայլերը պսակվեցին հաջողությամբ և Հայկական ՍՍՀ Գերագույն սովետը նրանց ողերելու նպատակով իր 1943 թ. մայիսի 4-ի հրամանագրով անասնաբուծության բնագավառի

106 «Комсомольская правда», 18 января 1944 г.

36 աշխատողների պարգևատրեց Գերազույն սովետի պատվոգրով¹⁰⁷: Պարգևատրվածների թվում էին Սաթենիկ Աբովյանը (Ալավերդի), Երվանդ Բարսեղյանը, Քունիա Յակիմովան (Կալինինով), Վարսենիկ Պապյանը (Ստեփանավան), Առաքել Միքայելյանը (Թալին), Ղուկաս Հովհաննիսյանը (Աշտարակ), Վաղո Սահակյանը (Աղին) և ուրիշներ:

Ամփոփելով անասնապահության զարգացման 1943 թ. արդյունքները ՍՍՀՄ Հողագործության ժողկոմատին ուղարկված հատուկ զեկուցագրում նշված էր. «Հայաստանի կոլտնտեսությունները ընթացիկ տարվա 10 ամսում (1943 թ. նոյեմբերի մեջը) հասել են անասնապահության հետագա աճի զգալի հաջողությունների: Անաստոնների գլխաքանակն ավելացել է. խոշոր եղջյուրավոր անաստոններինը՝ 3,5 % -ով, մանրերինը՝ 16,2 % -ով, խոզերինը՝ 2,2 % -ով: Պետական պարտավորությունները կատարված են՝ ոչխարներինն ու այծերինը՝ 101,6 % -ով, խոզերինը՝ 103,3 % -ով, խոշոր եղջյուրավոր անաստոններինը՝ 95,3 % -ով»¹⁰⁸: Անհամեմատ վատ էր վիճակը թունաբուծության բնագավառում, պլանով նախատեսված 120000-ի դիմաց առ 1-ը նոյեմբերի աճեցված էր ընդամենը 94643 գլուխ, այսինքն պլանը կատարված էր 79% -ով¹⁰⁹:

Կարմիր բանակի կարիքները բավարարելու հետեանքով, 1942 թ. ինչպես Միության մյուս հանրապետություններում, այնպես էլ Հայաստանում նվազագույն շափերի հասավ ձիերի գլխաքանակը: Այդ պատճառով ՍՍՀՄ ժողկոմսովետը և Համեկը^(թ)Կ կենտկոմը 1943 թ. մայիսին հատուկ որոշում կայացրին կոլտնտեսություններում և սովորողներում ձիերի գլխաքանակն ավելացնելու, նրանց խնամքն ու պահպանումը բարելավելու միջոցառումների մասին: Գյուղի աշխատավորները մեծ ջանքեր գործադրեցին ձիաբուծության զարգացման ուղղությամբ: 1944 թ. ձիերի ընդհանուր գըլ-

107 «Սովետական Հայաստան», 8 մայիսի 1943 թ.:

108 ՄԼԻ Հայկական մասնաճյուղի կուսարիսիվ, ֆ. 1, ց. 32, գ. 52, թ.

խաքանակը Հայաստանում 17,4 հազ. էր, իսկ 1945 թ. այն դարձավ 19,0 հազ., Հասնելով 1941 թ. մակարդակին, եթե մենք ունեինք 26,4 հազ. գլուխ ձի¹¹⁰:

ՀԿ(Բ)կ Կենտկոմը սիստեմատիկ կերպով իր պլենումների նիստերում քննարկում էր գյուղատնտեսության տարբեր ճյուղերի, այդ թվում անասնապահության հետ կապված հարցերը: 1944 թ. ապրիլի 29-ին ՀԿ(Բ)կ ԿԿ բյուրոյում լսվում է Թալինի շրջանի անասնապահական ֆերմաների վիճակի մասին հարցը, որտեղ և նշվում է. «Պատերազմի տարիներին անասունների գլխաքանակի աճման գործում Թալինի շրջանի կոլտնտեսությունները հասել են զգալի հաջողությունների: 1941 թ. համեմատությամբ 1944 թ. հունվարի 1-ի տվյալներով՝ խոշոր եղջյուրավոր անասունների գլխաքանակն աճել է 24,2 % -ով, որից կովերինը՝ 90 % -ով, ոչխարներինն ու այծերինը՝ 32,2 % ով, գառներինն ու ուլերինը՝ 37 % -ով»¹¹¹: Այնուհետև բյուրոն արձանագրում է, որ չնայած նախորդ տարիների համեմատությամբ կարայութիւն աճ և զգալիորեն կրճատվել էր մատղաշների աճի անկումը, բայց և այնպես 1944 թ. առաջին եռամսյակում դեռևս ընկած էր անասունների գլխաքանակը և իշեցված մթերատվությունը: Նույնն էր վիճակը նաև Կիրովականի, Սևանի, Դափնիսի, Եղեգնաձորի և Կարմիրի շրջաններում:

Դրանց հակառակ, Կալինինոյի, Ստեփանավանի, Հռիտեմբերյանի, Կամոյի շրջանները հասան որոշակի հաջողությունների, որը և հասցրեց ամբողջ Հանրապետությունում անասնապահության զարգացման բարձր ցուցանիշների:

Հոկտեմբերյանի շրջանում ոչ միայն աճել էր անասունների գլխաքանակը, այլև նրանց մթերատվությունը: 1940 թ. 3682 գլուխ խոշոր եղջյուրավոր անասունների փոխարեն 1944 թ. շրջանի կոլտնտեսություններում կար արդեն

¹¹⁰ Ю. В. Арутюнян, Советское крестьянство в годы Великой Отечественной войны ,стр. 426.

¹¹¹ Մէի Հայկական մասնաճյուղի կուսարխիլ, ֆ. 1, ց. 33, գ. 37, թ. 68:

4217 գլուխ, և 19904 գլխի փոխարեն՝ 23669 գլուխ մանր
եղջյուրավոր անասուն¹¹²:

1944 թ. հունվարի 1-ի դրությամբ Հայաստանի 1035
կոլտնտեսությունները միասին վերցրած ունեին 4925 ա-
նասնապահական ֆերմա: Դրանից՝ 669 կոլտնտեսություն
ունեին՝ 4-ական, իսկ 366-ը՝ 3-ական ֆերմա¹¹³:

1944 թ. ընթացքում անասնապահության բնագավառում
ձեռք բերած հաջողությունների, ինչպես և անասունների ձմե-
ռումը լավ կազմակերպելու և մատղաշի պահպանման հա-
մար Հայկական ՍՍՀ արժանացավ Պաշտպանության պե-
տական կոմիտեի փոխանցիկ Կարմիր դրոշին: Իսկ 1945 թ.
Պաշտպանության պետական կոմիտեի փոխանցիկ Կարմիր
դրոշ հանձնվեց նաև Կալիխինոյի շրջանին: Ինչ վերաբերում
է Ստեփանավանի շրջանին, ապա այդ բնագավառում նա
պատերազմի ամբողջ ընթացքում իր ձեռքում պահեց
Պաշտպանության պետական կոմիտեի փոխանցիկ Կարմիր
դրոշը:

ՀԿ(Բ)Կ Կենտկոմի ՀՀՀ պլենումը անդրադառնալով
«Անասնապահության ղարգացման պետական պարտավոլու-
րությունների կատարման ընթացքին և անասունների ար-
տադրողականության հետագա բարձրացման ձեռնարկում-
ների հարցին» նշեց, որ «Պատերազմի տարիներին Հայաս-
տանի անասնապահները ժամանակին կատարեցին պետա-
կան պարտավորությունները և անշեղորեն կենսագործելով
կուսակցության և կառավարության դիրեկտիվները ոչ միայն
շպականեցրին անասունների գլխաքանակին, այլև այդ հար-
ցում հասան որոշակի հաջողությունների»: ՍՍՀՄ Վիճակա-
զրական վարչության տվյալների համաձայն Հայաստանի
կոլտնտեսություններում 1941 թ. հունվարի 1-ի համեմա-
մատությամբ 1945 թ. հունվարի 1-ին խոշոր եղջյուրավոր
անասունների գլխաքանակին աճեց 11203-գլխով, կամ
3,7 %-ով, ոչխարներինն ու այծերինը՝ 196136 գլխով կամ
29,8 %-ով, ձիերինը՝ 1009 գլխով կամ 5,4 %-ով:

112 Նույն տեղում, ֆ. 90, գ. 8, գ. 348, թ. 15:

113 Նույն տեղում, ֆ. 1, գ. 33, գ. 1, թ. 12:

1945 թ. Հանրապետության 54700 գլուխ կովից ստացված է 43400 հորթ, այսինքն 100 կովից 79 հորթ, նախորդ տարիների 71-ի դիմաց: Կամ 404000 ոչխարից ու այծից 330000 գառ և ուշ կամ 100 ոչխարից 82 գառ նախորդ տարվա 88-ի դիմաց: Կամ 8000 մայր խողից 19,338 խոճկոր, 4753 նժուզգից 2628 մտրուկ¹¹⁴:

Պատերազմի տարիներին Հայաստանում փորձեր կատարվեցին բազմացնելու անասունների ազնվացեղ տեսակներ: 1945 թ. խոշոր եղջյուրավոր անասունների կազախ ցեղից հաշվում էր 815 գլուխ, սեմենտալ ցեղից՝ 4634 գլուխ, շվից ցեղից՝ 24585 գլուխ, նեմկա ցեղից՝ 463 գլուխ, ընդամենը՝ 30496 գլուխ¹¹⁵: Խոկ մանր եղջյուրավոր անասուններից բարբաս ցեղատեսակի ոչխարներ 6631 գլուխ, մազեխ ցեղից՝ 162505 գլուխ, կարաբաղ ցեղից՝ 69369 գլուխ: Այծեր կարակուլ ցեղից՝ 6367 գլուխ, անզորական այծեր՝ 7048 գլուխ¹¹⁶: Ազնվացեղ տեսակի անասունների առկայությունը նպաստում էր անասունների թե՛ մթերատվության և թե՛ բրդատվության բարձրացմանը:

Հայաստանի կոլտնտեսականները 1942 թ. մեծ հաջողությունների հասան նաև կերի արտադրության գծով: Խոտհունձի պլանը 1942 թ. կատարվեց 125,9 % -ով, այսինքն, 80 հազ. հա ավելի, քան 1941 թ., և մթերվեց 36 հազ. տխոտ ավելի, քան 1941 թվականին¹¹⁷: 1943 թ. խոտի ցանքատարածությունները հասան 251 հազ. հեկտարի: Զնայած մինչ պատերազմյան շրջանում անասունների պահպանման համար ծավալված էր գոմերի ուժեղ շինարարություն, պատերազմի հետևանքով այն մասսամբ կրծատվեց և այնպես ստացվեց, որ շատ կոլտնտեսություններ չունեին անասունների ձմեռման անհրաժեշտ շենքեր: Համեր(թ)կ կենտկոմի

114 Նույն տեղում, ֆ. 1, ց. 34, գ. 8, թ. 82—83:

115 ՀՀՍՇՊԿ արխիվ, ֆ. 163, ց. 13, գ. 176, թ. 1—5:

116 Նույն տեղում, թ. 7—11:

117 Մէկ Հայկական մասնաճյուղի կուսարիսիվ, ֆ. 1, ց. 31, գ. 11, թ.

1944 թ. փետրվարի 4-ի որոշումից հետո զարկ արվեց անսպասազական նոր օրյեկտների շինարարությանը: 1944 թ. Հայաստանում սկսեցին կառուցել 360 շենք, որից 90-ը՝ խոշոր եղջյուրավոր անասունների, 81-ը՝ ոչխարների, 100-ը՝ խողերի և 9-ը՝ թոշունների համար¹¹⁸:

* * *

Սովհետական Միության Հայրենական Մեծ սլատերազմի տարիներին Հայաստանում լայն ժավակ ստացավ տեխնիկական կուլտուրաների, հատկապես ծխախոտի, բամբակի ու շաքարի ճակնդեղի մշակությունը, որը պետական բացառիկ նշանակություն ունեցող մեծ գործ էր: Կուսակցական, սովհետական բոլոր կազմակերպություններն իրենց առաջնահերթ խնդիրը համարեցին՝ կազմակերպել այդ գործն այնպես, որ սահմանված ժամկետին հավաքվի և պետությանը հանձնըվի բամբակի, ծխախոտի ու շաքարի ճակնդեղի ամբողջ բերքը: Հայաստանում պատերազմի տարիներին աճեցվեցին ծխախոտի նոր սորտեր և 1940 թ. համեմատությամբ ծխախոտի պլանացիաններն ավելացան 50 % -ով, իսկ շաքարի ճակնդեղինը՝ 100 % -ով¹¹⁹: Մշակվում էր նաև բամբակ, վուշ և այլն:

Շաքարի ճակնդեղի բերքի 1942 թ. պլանը Հայաստանի համար նախատեսված էր 304 հազար ցհնտներ: Այդ կապակցությամբ մարտ ամսին կենինականում կայացավ ճակնդեղացան կոլտնտեսականների հանրապետական հավաք: Հավաքին մասնակցում էին Կիրովականի, Ախուրյանի, Սպիտակի, Ղուկասյանի, Արթիկի և Ամասիայի շրջանների առաջավոր ճակնդեղագործներ: Վերջիններս կոչ արեցին բոլոր ճակնդեղագործներին՝ 1942 թ. դարձնելու շաքարի ճակնդեղի բերքատվության բարձրացման ուկորդացյին տարի: Դեմքենիսական շարժման ծավալումը ցույց տվեց, որ ագրոտներներիկական միջոցառումների ճիշտ կիրառման շնոր-

118 Նույն տեղում ց. 33, գ. 1, թ. 14—15:

119 «Коммунист», 11 февраля 1944 г.

Հիվ հնարավոր էր ստանալ բարձր բերք: Սպիտակի և Սխուրցանի ճակնդեղագործները մեկ հեկտարից ստանում էին 237—240 և 250—500 գ. ճակնդեղ: Սպիտակի շրջանի 21 կոլտնտեսությունները սեղմ ժամկետում ավարտեցին 630 հա շաքարի ճակնդեղի և 50 հա ճակնդեղի սերմացուի բերքահավաքը: Միայն 1942 թ. նրանք պետությանը հանձնեցին 73840 ցենտներ ճակնդեղ¹²⁰: Շրջանի ճակնդեղագործներից Անահիտ Հարությունյանը, Բավական Աճեմյանը, Վարդուշ Միրզոյանը և Օֆիկ Չոբանյանը 180 քմ-ի փոխարեն օրական հավաքում էին 250 քմ. ճակնդեղ: Ախուրյանի շրջանից Սիրուշ Այվազյանն առանձին հեկտարներից ստանում էր մինչև 500 գ. ճակնդեղ:

Սակայն բերքած օրինակները հատկանշական չէին ամբողջ հանրապետության համար: Ընդհանուր ցուցանիշներն ամփոփելիս պարզվեց, որ Հայաստանը ճակնդեղի գծով 1942 թ. պլանը չի կատարել: Նախատեսված 200 գ. դիմաց հեկտարից հավաքված էր ընդամենը 47,5 գ. ճակնդեղ: Այդ կապակցությամբ ՍՍՀՄ Սննդարդյունաբերության ժողկոմատը գրում է, որ «Բերքատվության այսպիսի ցածր ցուցանիշը ապացուցում է այն փաստը, որ կոլտնտեսությունները չեն կիրառում ագրոտեխնիկական կանոնները շաքարի ճակնդեղի մշակման գործում և այդ հարցում կոլտնտեսություններին Հայաստանի հողմողկոմատն ու ճակնդեղի բազան գործարար օգնություն ցույց չեն տալիս¹²¹:

Հետագայում ձեռք առնվեցին համապատասխան միջոցառումներ՝ 1943 թ. պլանը կատարելու համար: Եվ ճակնդեղագործները հասան որոշակի հաջողությունների: 1943 թ. հանրապետության ճակնդեղագործները երկրին տվեցին 29210 տ շաքարի ճակնդեղ¹²²: Իսկ 1944 թ. Հայաստանի

120 «Սովետական Հայաստան», 10 հոկտեմբերի 1943 թ.:

121 Միև Հայկական մասնաճյուղի կուսարիսիվ, ֆ. 1, ց. 32, գ. 81, թ.

կոլտնտեսությունները 1943 թ. համեմատությամբ 10 օր առաջ ավարտեցին շաբարի ճակնդեղի ցանքը¹²³:

Շաբարի ճակնդեղի ցանքատարածությունները հիմնականում ընդարձակվեցին պատերազմի տարիներին և 1940 թ. 1600 հա-ի դիմաց 1945 թ. հասան 3000 հա-ի¹²⁴:

* * *

Հայրենական մեծ պատերազմի տարիներին բարձր ցուցանիշների հասան հանրապետության ծխախոտագործները: Այդ ընագավառում հատկապես աշքի ընկան Շամշադինի, իշկանի և Ալավերդու շրջանները: Շամշադինի շրջանը 1942 թ. նախատեսված 735 տ. ծխախոտի պլանի դիմաց տվեց 935 տ. կամ պլանը կատարեց 119 %-ով, իսկ 1943 թ. 800 տ. դիմաց տվեց 1000 տ. ծխախոտ: Ծխախոտի տերեաքաղն առանձնապես հաջող էր ընթանում շրջանի Ղրղի, Նավուր, Մոսկվեղ զյուղերում, որոնք հավաքել էին 7000—9000 թելամետր ծխախոտ: Ծեկորդային ցուցանիշների հասան Ալավերդու շրջանի Սաղկաշատ, Ճոճկան, Ուղունլար զյուղերը: Շրջանի Մայիսի 1-ի անվան կոլտնտեսության ծխախոտագործներ Անտոնյանը, Մանվելյանը, Խեչեկյանը իրենց օրվա առաջադրանքները կատարում էին 150—160 % -ով, իսկ օդակավարուհի Հովհաննիսյանը 25 թելամետրի փոխարեն օրական հավաքում էր 35 թելամետր ծխախոտ:

Ծխախոտով զբաղվող շրջաններից մեկը իշկանն էր: 1942 թ. շրջանում ծխախոտացան տարածությունները 670 հեկտար էին, իսկ 1943 թ. նրանք դարձան 816 հա, սահմանված ժամկետից 50 օր շուտ պետությանը հանձնվեց ավելի քան 35 հազ. փութ ծխախոտ: Շրջանի Խաշթառակ զյուղից Ա. էկանյանի բրիգադը պլանով նախատեսված 17 տ. ծխախոտի փոխարեն պետությանը հանձնեց 21 տ: Օդակավար Աղավնի Գուլակյանի օդակը 4200 կգ փոխարեն հանձնեց 6100 կգ: Մոի գյուղի կոլտնտեսությունից № 3 բրիգադը

123 «Правда», 17 мая 1944 г.

124 Մի Հայկական մասնաճյուղի կուսարիսիվ, ֆ. 1, գ. 37, գ. 1 ա, թ.

(բրիգադիր Աշոտ էլարյան) 4500 կդ փոխարեն հանձնեց 7500 կդ ծխախոս, իսկ օղակավար Հերիք Մկրտչումյանը 2275 կդ փոխարեն 4000 կդ: Սկզբար և Ուզունթալա գյուղերի ծխախոտագործները աշխատում էին մեծ եռանդով: Ուզունթալայից Ս. Հովհաննիսյանն իր օրական նորման կատարում էր 200—225 % -ով: Շրջանում ծխախոտագործական 38 օդակների թվով 423 կոլտնտեսուհիներ լրացուցիչ վարձատրություն են ստացել 34539 ռուբլի¹²⁵:

Պատերազմի տարիներին ծխախոտի մշակմամբ սկսեցին զբաղվել լեռնային և նախալեռնային շատ շրջաններ, որի հետևանքով ցանքատարածությունները 1940 թ. 5029 հա-ի փոխարեն ընդարձակվեցին և 1945 թ. հասան մոտ 8000 հա-ի¹²⁶:

Հայաստանում մշակվող տեխնիկական կարեռը կուլտուրաներից էր բամբակը: Զնայած պատերազմի ընթացքում հացահատիկային կուլտուրաների ցանքատարածություններն ավելացնելու հետևանքով բամբակի ցանքատարածություններն զգալիորեն կրճատվեցին (17 հազ. հեկտարի փոխարեն 1943 թ. ցանեցին ընդամենը 13.517 հազ. հեկտար)՝¹²⁷, բայց և այնպես, հանրապետության բամբակագործները մեծ ջանք գործադրեցին բամբակի բարձր բերք ստանալու համար: Զէ՞ս որ պատերազմի տարիներին բամբակի նշանակությունն ավելի բարձրացավ: Բամբակը պետք էր թե՛ արդյունաբերությանը որպես հումք և թե՛ ռազմաճակատին, առավելապես հոսպիտալների պահանջները բավարարելու համար: Բամբակացան շրջանների կուսակցական կոմերիտական և սովորական բոլոր կազմակերպությունները, կոլտնտեսությունների ղեկավարները և անձամբ կոլտնտեսականները տքնաջան աշխատանք էին տանում բամբակն անվնաս աճեցնելու, բերքն անկորուստ հավաքելու համար:

125 «Սովետական Հայաստան», 18 հունվարի 1944 թ.:

126 Գր. Հարույրյան, Հաշվեառ զեկուցում ՀԿ(բ)Պ ԽՎ համագումարում ՀԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի աշխատանքի մասին, Ե., 1948, էջ 41:

127 ՀՀՍՇՊԿ արխիվ, ֆ. 163, ց. 12, գ. 47, թ. 17:

Էջմիածնի շրջանի «Անաստված» կոլտնտեսության դաշտավարական բրիգադը մեղալակիր Մարիամ Եղիազարյանի գլխավորությամբ հասավ բարձր ցուցանիշների: Այսպես, եթե բրիգադը 1941 թ. մեկ հեկտարից հավաքել էր 25 ցազա 1943 թվականին այն հավաքեց 31 ցենտներ բամբակ¹²⁸: Բրիգադի անդամներն օրական շանաքում էին 90—120 կգ բամբակ: Նույն կոլտնտեսությունում բամբակի բարձր բերք էր աճեցնում նաև Հայաստան Ամիրյանի բրիգադը: Այս բրիգադից 0 ֆիկ Դաղարյանի օղակը հասավ ռեկորդային ցուցանիշների, 18 ց. դիմաց 1943 թ. ստացավ 43—44 ց. բամբակ, որի համար Դաղարյանը պարզեատրվեց ՀՀԿԵՄ Կենտկոմի՝ պատվորով անվանական ժամացուցով, իսկ օղակը կոլտնտեսության վարչության կողմից՝ 5000 ռուբլի գրամմով¹²⁹:

Բամբակագործությամբ զբաղվող կոլտնտեսություններից առաջավոր էր համարվում էջմիածնի շրջանի Արգավանդ (Նախկին՝ Ջաֆարապատ) գյուղի կոլտնտեսությունը: Պատերազմի տարիներին ջաֆարապատցիները սիստեմատիկ կերպով մշակում էին 65 հա բամբակի տարածություն, որը ժամանակին կուտիվացիայի էին ենթարկում, քաղցանում, չորում, պայքար կազմակերպում բամբակենու հիվանդությունների գեմ: Նրանք միշին հաշվով հեկտարից ստանում էին 21—27 ց. բամբակ:

Բամբակագործության զարգացման բնագավառում առաջավոր շրջաններից էին նաև Հոկտեմբերյանի և Արտաշատի շրջանները: Բամբակի աճեցման բնագավառում բարձր ցուցանիշների հասան Արտաշատի շրջանի Այգեղարդ (Դարդալու) գյուղի «Փարիզյան կոմունա» կոլտնտեսության բամբակագործները: Նրանք այդ տեմպով շարունակեցին աշխատել նաև պատերազմից հետո և իրենց ըավագույն աշխատանքի շնորհիվ արժանացան կառավարական բարձր պարգև:

128 ՀՊՊԿ արխիվ, ֆ. 271, գ. 15, թ. 1:

129 Նույն տեղում, գ. 9, թ. 1:

Բամբակագործության դարձացմանը խթանեց ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1944 թ. փետրվարի 4-ի որոշումը: Այդ որոշման ողով, ինչպես վերևում ենք հիշատակել, հանրապետության գործարաններում սկսվեցին թողարկվել անհրաժեշտ քիմիական պարարտանյութեր՝ տեխնիկական կուտուրաների, առաջին հերթին բամբակի մշակման համար:

1944 թ. Հայաստանի որոշ շրջաններ և առանձին կոլտնտեսություններ, այդ թվում էջմիածնի շրջանի Մրգաշատ (Նախկին՝ Վերին Ալլանլու) կոլտնտեսությունն առաջին անգամ սկսեցին եղիպտական բամբակի մշակումը: Բամբակագործերը հարկադրված եղան հաղթահարելու զգալի գժվարություններ, որոնք կապված էին նոր սորտի մշակման եղանակի հետ, սակայն, հակառակ սպասածի, առաջին տարվա արդյունքները շատ գոհացուցիչ էին, բամբակի հումքի հանձնման տարեկան պլանը կատարված էր 150 % -ով¹³⁰: Բայց գոհացուցիչ չէին 1945 թ. ցուցանիշները: 1945 թ. հոկտեմբերի 18-ին ՀամԿ(բ)Կ Կենտկոմը քննության առավ «Հայկական ՍՍՀՄ-ում բամբակի բերքահավաքի ընթացքը և մթերատվության վիճակը» Հարցը և իր ընդունած որոշման մեջ արձանագրեց, որ «Հայկական ՍՍՀ-ում բամբակի հավաքման և մթերման գործում կան լուրջ ուշացումներ: Հոկտեմբերի 10-ի դրությամբ դեռևս հավաքված է պլանի միայն 18% -ը և մթերված է 7 հազ. տ բամբակ, կամ 0,6 հազ. տոննայով պակաս, քան 1944 թ. նույն ժամանակը¹³¹:

* * *

Մեղվաբուծությունը գյուղատնտեսության եկամտաբեր ճյուղերից է: Հայաստանն իր բնակլիմայական բարենպաստ պայմանների շնորհիվ դարեր ի վեր եղել է մեղվաբուծությամբ զբաղվող կարեւոր օջախներից մեկը: Հայրենական պատերազմի սկզբին Հայաստանի 1035 կոլտնտեսություններից 722-ը զբաղվում էին մեղվաբուծությամբ և ունեին 44

130 Մի Հայկական մասնաճյուղի կուսարիսիվ, ֆ. 14, գ. 2, գ. 160 թ. 29—30:

131 Նույն տեղում, ֆ. 1, գ. 34, գ. 29, թ. 9—11:

Հազ. մեղվարնտանիք: 1943 թ. անբարենպաստ տարի էր մեղվարուծության համար: Հայաստանի շրջաններից շատերում ոչ միայն բերք չստացվեց, այլև եղան այնպիսի տնտեսություններ, որտեղ մեղվի ընտանիքները չկարողացան նույնիսկ իրենց լրիվ պաշարով ապահովվել: Զնայած Հայկական ՍՍՀ ծովկոմիսորից 1943 թ. ընթացքում ձեռնարկեց մի շարք միջոցառումներ, այնուհանդերձ 1944 թ. գարնանը մեղվի ընտանիքների անկումը կազմեց $15,4\%$ ¹³²: Այդ տարիներին մեղվարուծության մեջ լայնորեն կիրառվում էր անվանի մեղվարուց Անդրանիկ Կոթողյանի մեթոդ:

Այդ մեթոդի կիրառման շնորհիվ Հայաստանում յուրաքանչյուր մեղվարնտանիքից ստացվում էր 20-ից՝ 60, նույնիսկ 80 կգ մեղր: Կոթողյանի մեթոդն ավելի դրական արդյունք տվեց մեր Միության մի քանի այլ շրջաններում ու մարզերում, ուր յուրաքանչյուր փեթակից միջին հաշվով ստացվել էր 118 կգ մեղր: Սակայն դա ընդհանուր երեսությէր և մեղվարուծության զարգացումը Հայաստանում դեռևս լավ վիճակում չէր գտնվում:

Մեղվարուծության զարգացման վիճակը վատ էր հատկապես Ստեփանավանի շրջանի Գյուլագարակ, Պուշկինո, Շորաբձի և Կիրովի կոլտնտեսություններում: Շրջկոմի բյուրոն 1945 թ. հաճախ անդրադառնալով վերոհիշյալ կոլտնտեսություններում մեղվարուծական ֆերմաների դրության հարցին, արձանագրում էր, որ հիշյալ մեղվարուծական ֆերմաներն ապահովված չեն արկղներով, անհրաժեշտ քանակությամբ մոմաթերթերով, ծածկոցների պակասության պատճառով մեղվարուծական ֆերմաները ոչ միայն չեն կազմակերպել նոր ընտանիքներ, այլև վտանգի տակ են դրել հին մեղվարնտանիքների անկորուտ պահպանումը: Տվյալ ֆերմաներում սանիտարական վատ պայմանների հետեւանքով մեղուների մեծ մասը վարակվել են փթախտ կոչվող հիվանդությամբ: Պարզ էր, որ այսպիսի պայմաններում անիմաստ էր մտածել մեղվարուծության նորմալ զարգացման և

132 Նույն տեղում, ց. 33, գ. 374, թ. 163:

պլանների կատարման մասին: Ելնելով այս ամենից, շըրջ-կոմի բյուրոն առաջարկում է վերոհիշյալ գյուղերի տեղական սովետներին և կոլտնտեսային վարչություններին շուտափութ կերպով հողամասեր հատկացնել, հատուկ մեղվանոցներ կառուցել և ձեռք առնել համապատասխան միջոցներ մեղվաբուծությունը հետագայում զարգացնելու ուղղությամբ¹³³:

Այս ամենը պատճառ դարձան, որ Հանրապետությունում պատերազմի տարիներին դանդաղ տեմպերով զարգացավ մեղվաբուծությունը և 1945 թ. մեղվաքնտանիքների թիվը հազիվ հասավ 47500-ի¹³⁴:

* * *

Հայրենական մեծ պատերազմի տարիներին զգալի աշխատանք էր ծավալվում նաև շերամապահության գծով: Բոժոժի բերքատվությունը բարձր էր հատկապես Մեղրու, Ղափանի, Քանաքեռի և այլ շրջաններում: Հայմետաքս տրեստի կառավարչի հաղորդագրությամբ հանրապետությունում 1944 թ. բոժոժի նախատեսված 160000 կգ պլանի դիմաց հոկտեմբերի 19-ին արդեն հավաքված էր 160531 կգ¹³⁵:

1944 թ. Հայաստանում կար 1192 հա տարածությամբ թթի տնկարան և 2247 հազ հատ տնկած ծառ:

Բոժոժի մթերման գծով Հայաստանը Միության մեջ գրավեց առաջին տեղը և շահեց ՍՍՀՄ տեքստիլ արդյունաբերության ժողկոմատի և ՀԱՄԿեն-ի փոխանցցիկ Կարմիր դրոշը¹³⁶: Քանի որ բոժոջի հավաքման գործը Հայաստանում դրված էր լավ հիմքերի վրա, Հայկական ՍՍՀ ժողկոմսովետը 1945 թ. ապրիլին հատուկ որոշում կայցրեց Հայաստանում թթենու մշտական յոթ տնկարան կազմակերպելու մասին, Այդ տնկարանները կազմակերպվեցին Արտաշատի, Շահումյանի, Ալավերդու, Խցեանի, Ղափանի, Գորիսի և Մեղ-

133 Նույն տեղում, ֆ. 13, գ. 3, գ. 73, թ. 19ա—20:

134 Նույն տեղում, ֆ. 1, գ. 37, գ. 1ա, թ. 30:

135 Նույն տեղում, գ. 33, գ. 374, թ. 1:

136 «Սովետական Հայաստան», 24 հունիսի 1945 թ.:

րու շրջաններում։ Բացի այդ, որոշվեց Եղեգնաձորում, Շամ-
շաղինում և Հոկտեմբերյանում յուրաքանչյուր հեկտար տա-
րածության վրա կատարել թթենու ցանքս, իսկ Արարատի
շրջանի Դավալու գյուղի կոլտնտեսության տնկարանին կից
կազմակերպել թթենու մայրացուների պլանտացիաներ՝ մեկ
հեկտար տարածությամբ¹³⁷։ Վերոհիշյալ որոշումը կիրառվեց
և տվեց իր դրական արդյունքները։

Զնայած 1945 թ. գարնան կլիմայական անբարենպաստ
պայմաններին, Հայաստանի շերամապահները հաղթահարե-
ցին բոլոր գժվարությունները և կազմակերպված աշխատան-
քի շնորհիվ հասան աշքի ընկնող հաջողությունների։ Նույն-
իսկ այնպիսի շրջանում, ինչպիսին Կոտայքն էր, որտեղ թը-
թենու տերեկի մեծ մասը ցրտահարվել էր և որդերի կերակ-
րումը մեծ գժվարություն էր հարուցում, այնպես կազմա-
կերպվեց զործը, որ բոժոժի մթերման պլանը ու միայն կա-
տարվեց, այլև գերակատարվեց։ Որդերի կերակրման շրջա-
նին զուգագիպած ցրտերը հետ զցեցին թթենու տերեկի աճը
հատկապես Մեղրու, Գորիսի և Ղափանի շրջաններում։ Սա-
կայն դա շխանգարեց զործին։ Այդ շրջանի շերամապահների
համառ աշխատանքի շնորհիվ ժամանակին կատարվեց բո-
ժոժի մթերման պլանը։ Ավելին, եթե Միության մեջ գրենա-
լի միջին բերքատվությունը կազմում էր 40—41 կգ, ապա
Հայաստանում այն հասնում էր 55 կգ-ի, առանձին շրջան-
ներում (Մեղրի, Կոտայք և այլն) այն հասնում էր նույնիսկ
62—66 կգ-ի։ Մեղրու «Նոր կյանք» կոլտնտեսությունը
1945 թ. պետությանը հանձնել էր 10 հազ. կգ բարձրորակ
բոժոժ, երկրին տալով պլանից դուրս կես տոննայից ավելի
բոժոժ, և միջին բերքատվությունը մեկ տուփից հասցնելով
ավելի քան 66 կգ-ի։ Առանձին կոլտնտեսականներ (Պ. Եսա-
յանը, Ա. Միրզոյանը, Ն. Պողոսյանը և շատ ուրիշներ) մեկ
տուփի գրենայից տվեցին 80—90 կգ բոժոժ, որն այդ ժամա-
նակի համար համարվում էր ոեկորդային։

Հայաստանում շերամի կուլտուրայի հայտնի վարպետ

137 ՀՀՍՇՊԿ արխիվ, ֆ. 123, ց. 5, գ. 1127ա, թ. 26—27։

էր համարվում էշմիածնի շրջանի նոր եվդոկիա գլուղի հնագույն շերամապահ Պ. Պշկանը: Նա իր սեփական միջոցներով 1945 թ. կառուցեց մի շերամատուն: Այնտեղ նա կերակրում էր կոլտնտեսության Յ տուփ գրենայի և յուրաքանչյուր տուփից ստանում էր 85 կիլոգրամ սերմացու բոժոժ: Շերամապահության բարձր բերքի լավագույն վարպետներ կային նաև Կոտայքի, Աշտարակի, Գորիսի, Ղափանի, Արտաշատի շրջաններում:

Պլանների կատարումից բացի, Հայաստանը հայտնի էր նաև իր բոժոժի բարձր որակով: Ծնորհիվ այդ բանի, սովետական իշխանության հաստատման առաջին իսկ տարիներից Հայաստանում կազմակերպվել էր գրենայի արտադրություն:

Շերամապահությունը մեծ եկամուտներ էր բերում կոլտնտեսություններին: Եթե նկատի առնենք կուլտուրայի մշակման կարճատև բնույթը (մոտ մեկ ու կես ամիս), ապա դրա շահավետությունն ավելի պարզ կլինի: Այսպես, Մեղրու «Նոր կյանք» կոլտնտեսությունն իր հանձնած բոժոժի դիմաց պետությունից ստացավ մոտ 400 հազ. ոռուբրու դրամ և 350 հազ. ոռուբրու արժողությամբ արդյունարերական ապրանքներ¹³⁹:

* * *

Նախորդ տարիների համեմատությամբ Հայաստանի կոլտնտեսությունները 1944 թ. բարձր բերք ստացան, ավելացավ ինչպես կոլտնտեսությունների ներտնտեսային կարիքների համար ծախսված մթերքների, այնպես էլ կոլտընտեսականների աշխօրերի վրա բաշխված մթերքների քանակը: Օրինակ, եթե 1943 թ. բերքից կոլտնտեսությունների ներտնտեսային կարիքների վրա ծախսված դաշտավարության և այգեգործության մթերքների քանակը կազմում էր 1.167.514 ց., ապա 1944 թ. այն դարձավ 1.191.353 ց.: Եթե 1943 թ. բերքից աշխօրերի վրա բաշխված մթերքների քա-

139 «Սովետական Հայաստան», 24 հունիսի 1945 թ.:

նակը կազմում էր 1.618.199 ց, ապա 1944 թ. այն կազմեց 1.850.789 ց ենտեներ¹⁴⁰:

Պարզ է, որ համեմատական շափով պետք է աճեին նաև կոլտնտեսությունների դրամական եկամուտները, որոնք արդյունք էին շուկա դուրս բերվող մթերքների վաճառքի: Եթե 1943 թ. կոլտնտեսությունները շուկայում վաճառել են 28.074 ց, հացահատիկ, 81.553 ց. բանջարեղեն, ապա 1944 թ. նրանք շուկա հանեցին 43.588 ց. հացահատիկ և 99.606 ց. բանջարեղեն¹⁴¹: Զգալիորեն բարձրացել էին կոլտնտեսությունների ընդհանուր եկամուտները: Եթե 1943 թ. հանրապետության կոլտնտեսությունների դրամական եկամուտները կազմում էին 397 մլն ռուբլի, ապա 1944 թ. հասան 580 մլն ռուբլով¹⁴²: 1940 թ. 1 կգ 727 գ հացահատիկի, 282 գ կարտոֆիլի և գյուղատնտեսական այլ մթերքների գիմաց Հայաստանի կոլտնտեսությունները 1945 թ. միշտն հաշվով ամեն մի աշխօրին բաժանեցին 2 կգ 63 գ հացահատիկի, 597 գ. կարտոֆիլ, ինչպես նաև գյուղատնտեսական այլ մթերքներ¹⁴³:

Հայաստանի կոլտնտեսային գյուղացիությունը պատերազմի տարիներին կատարեց պետական պարտավորությունները, Հայրենիքին տալով 9 մլն փութ հացահատիկի, 4,6 մլն փութ բամբակ, 960 հազ. փութ ծխախոտ, 6 մլն փութ շաքարի ճակնդեղ, 228 հազ. փութ բուրդ, 35 մլն ձու¹⁴⁴:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին կոլտնտեսություններն ամրապնդվեցին թե՛ կազմակերպչորեն և թե՛ տնտեսապես: Հայաստանի կոլտնտեսություններն ու կոլտընտեսականները պատվով կատարեցին այն դժվարագույն առաջադրանքը, որ դրված էր նրանց առջև: Կոլտնտեսային կարգը դիմացավ պատերազմի բոլոր փորձություններին,

140 ՀՀՍԾՊԿ արխիվ, ֆ. 123, ց. 5, գ. 1159, թ. 4—5:

141 Նույն տեղում:

142 ՄԼԻ Հայկական մասնաճյուղի կուսարիսիվ, ֆ. 1, ց. 34, գ. 6, թ.

7:

143 Նույն տեղում, ց. 37, գ. 1ա, թ. 30—31:

144 «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 1961, № 1, էջ 197:

պատերազմից գուրս եկավ և քաղաքականապես և բարոյապես էլ ավելի ամրապնդված:

Սակայն պատերազմի տարիներին, ինչպես Միության մյուս հանրապետություններում, այնպես էլ Հայաստանում տեղի էին ունեցել գյուղատնտեսական արտելի կանոնադրության խախտման դեպքեր^{145—147}: Այդ էր պատճառը, որ պատերազմից հետո, 1946 թ. սեպտեմբերի 19-ին, ՍՍՀՄ Մինիստրների խորհուրդը և ՀամԿ(բ)Կ Կենտկոմը որոշում ընդունեցին «Կոլխոզներում գյուղատնտեսական արտելի կանոնադրության խախտումները վերացնելու միջոցառումների մասին»: Որոշման մեջ նշված էր, որ Միության համարյա բոլոր շրջաններում կան գյուղատնտեսական արտելի կանոնադրության լուրջ խախտումներ, որոնք արտահայտվում են հատկապես աշխարերի սխալ ծախսումով, կոլտնտեսությունների հանրային հողերի հափշտակումով, կոլտնտեսային սեփականության վատնումով, կուսակցական և սովետական շատ աշխատողների շարաշահումներով, ինչպես նաև գյուղատնտեսական արտելի գործերի կառավարման դեմոկրատական հիմունքների խախտումով: Մինիստրների սովետը և Կենտկոմը խիստ քննադատության ենթարկելով նըման երեսութները, որոշեցին մատնանշված խեղաթյուրումները և գյուղատնտեսական արտելի կանոնադրության խախտումները դատապարտել որպես հակակոլտնտեսային և հակապետական, իսկ մեղավորներին ենթարկել դատական պատասխանատվության, որպես քաղաքական հանցագործների¹⁴⁸:

ՍՍՀՄ Մինիստրների սովետի և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի սույն որոշումը քննարկվեց միութենական, երկրամասային, մարզային, քաղաքային և շրջանային կազմակերպությունների ակտիվի ժողովներում, կոնֆերանսներում և այլն: Նըման ժողովներ տեղի ունեցան նաև Հայաստանի բոլոր շրջ-

145—147 ՀՀՍՇՊԿ, արխիվ, ֆ. 123, ց. 5, գ. 1159, թ. 6, 7, 8, 15—19, 57:

148 Մանրամասնությունները տե՛ս «ՍՍՀՄ Մինիստրների սովետի և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1946 թ. սեպտեմբերի 9-ի որոշումը («Սովետական Հայաստան», 21 սեպտեմբերի 1946 թ.)»:

շաններում¹⁴⁹: Ակտիվի ժողովների մասնակիցները միահամուռ միանալով Սեպտեմբերյան պլենումի վերոհիշյալ որոշմանը, խիստ քննադատության ենթարկեցին տեղերում գոյություն ունեցող գյուղատնտեսական արտելի կանոնադրության կոպիտ խախտման դեպքերը: Նրանք նշեցին՝ աշխօրերի շռայլման, ավել հաստիքների պահման, կոլտնտեսային հողերի շռայլման, կոլտնտեսային ունեցվածքի անօրինական ծախսման կամ անվճար ընդհանուր եկամուտից բաց թողնման բազմաթիվ դեպքեր: Նման օրինակներ արձանագրվեցին գրեթե բոլոր շրջաններում:

Սակայն այս ամենը որակ չէին կազմում: Դրանք չէին կարող արգելակել այն ընդհանուր հայրենասիրական շարժմանը, որ գոյություն ուներ ժողովրդական հոծ զանգվածներում: Սովետական ժողովուրդը կարողացավ հաղթահարել ամեն տեսակի զրկանքներ ու դժվարություններ և ձեռք բերել փայլուն հաղթանակներ:

Բարձր գնահատելով Հայաստանի աշխատավորների անձնուրաց աշխատանքը, սովետական կառավարությունը 361 հազ. մարդու պարգևատրեց «Կովկասի պաշտպանության համար» և «1941—1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում աշխատանքային արիության համար» մեդալներով. դրանց համարյա կեսը հայ աշխատավոր գյուղացիությունն էր:

Այսպիսով, Հայրենական մեծ պատերազմի տարիներին հայ աշխատավոր գյուղացին ճիշտ հասկացավ իր խնդիրը: Պատերազմի ընթացքում պայքարը հացի, մսի և գյուղատնտեսական այլ մթերքների համար վճռական նախապայմանն էր թշնամու դեմ տարած հաղթանակի գործում: Եվ նա այդ խնդիրը պատվով կատարեց: Իր ազնիվ ու անձնուրաց աշխատանքով կարողացավ հասնել նշանակալի հաջողությունների և իր համեստ ավանդը ներդրեց հաղթանակի մեծ ու դժվարին գործում:

¹⁴⁹ Մի Հայկական մասնաճյուղի կուսարիսիվ, ֆ. 1, ց. 35, գ. 183, 201, 207, 214, 218, 232, 241, 253 և այլն:

ՍՍՀՄ ժողկոմսովետը և ՀամԿ(բ)Կ Կենտկոմը «1945 թվի բերքահավաքի և գյուղատնտեսական մթերքների և մթերումների մասին» Հաղորդագրության մեջ նշեցին, որ «Հայրենական պատերազմի շրջանում, կոլխոզային գյուղացիության հոգատարության շնորհիվ՝ կարմիր բանակը պարենամթերքի պակասություն չզգաց: Կոլխոզները և սովխոզները բանվորներին և մտավորականներին մատակարարում էին պարենամթերք, իսկ արդյունաբերությանը՝ հումք, ապահովում էին ռազմաճակատի համար սպառազինություն և հանգերձանք պատրաստող գործարանների ու ֆաբրիկաների նորմալ աշխատանքը: Կոլխոզային գյուղացիությունը ակտիվորեն ու Հայրենիքի հանդեպ իր պարտքի լիակատար գիտակցումով՝ կարմիր բանակին օժանդակում էր թշնամու դեմ հաղթանակ ձեռք բերելու գործում»¹⁵⁰:

ԴԱԴԱԲԱՐՍԿԱՆ ՍՇԽԱՏԱՆՔԻ ՇԱՎԱԼՈՒՄԸ ԳՅՈՒՂՋՈՒՄ

Հայրենական մեծ պատերազմի ժամանակաշրջանում Սովետական Միության կոմունիստական կուսակցությունը հանդիսացավ սովետական ժողովրդի բոլոր ուժերի մորթիկացման և ռազմաճակատին ցույց տրվող համաժողովրդական օգնության կազմակերպիչը: Նա սովետական ողջ ժողովրդի և նրա հարազատ բանակի ոգեշնչող ու ղեկավարող ուժն էր:

Հայրենական մեծ պատերազմը փաստորեն հասարակական-քաղաքական տարրեր կառուցվածք ունեցող՝ սոցիալիստական և ֆաշիստական պետությունների միջև մղվող պայքար էր: Դա միայն ռազմական և տնտեսական պատերազմ չէր, այլ նաև երկու միանգամայն հակաղիր գաղափարախոսությունների պայքար: Հայրենական մեծ պատերազմի տարիներին Սովետական Միության կոմունիստական կուսակցության գործունեության կարևորագույն ուղղություններից մեկը նրա գաղափարական աշխատանքն էր թե՛ ռազմաճակատում և թե՛ թիկունքում:

150 «Правда», 17 июля 1945 г.

Պատերազմի առաջին օրերից ՍՄԿԿ կենտրոնական Կոմիտեն ամբողջ հոանդով իրագործում էր ուժերի կազմակերպումը ազրեսորին հակածարված տալու համար: Կենտրոմի անդամները, զորահրամանատարներն ու տնտեսական գործիչները զլխավորելով որոշակի տեղամասեր և ղեկավարվելով կուսակցության կենտրոմի ու սովետական կառավարության ցուցումներով, տեղերում լուծում էին կազմակերպական, ռազմական և տնտեսական անհետաձգելի հարցեր:

1941 թ. հունիսի 29-ի հայտնի դիրեկտիվներով, կոմունիստական կուսակցությունը մերկացրեց գերմանական իմպերիալիստների հանցագործ մտադրությունները և կոչ արեց սովետական ժողովրդին՝ ամբողջ աշխատանքը վերակառուցել պատերազմի պահանջներին համապատասխան, կազմակերպել համակողմանի օգնություն ռազմաճակատին: «Ամեն ինչ ռազմաճակատի համար, ամեն ինչ հաղթանակի համար» լուսնզը դարձավ սովետական մարդկանց կյանքի ու աշխատանքի հիմնական նպատակը: Բնակչության մեջ մեծ թափ ստացան քաղաքական-մասսայական աշխատանքները, որոնց հիմքում ընկած էին սոցիալիստական Հայրենիքի պաշտպանության գործում բարոյական գործոնի նշանակության մասին Վ. Ի. Լենինի և կուսակցության որոշումները: Վ. Ի. Լենինը բարձր գնահատելով ժողովրդի գիտակցական մակարդակի դերը պատերազմական պայմաններում գրում էր. «Ամեն տեսակ պատերազմում հաղթանակը վճրվին հաշվով պայմանավորվում է այն մասսաների ոգու վիճակով, որոնք ռազմի դաշտում թափում են իրենց արյունը: Համոզմունքը պատերազմի արդարացիության նկատմամբ, իրենց եղբայրների բարօրության համար իրենց կյանքը զոհաբերելու անհրաժեշտության գիտակցությունը բարձրացնում է զինվորների ոգին ու նրանց ստիպում անասելի դժվարություններ կրել»¹⁵¹:

Կուսակցության և կառավարության կողմից պրոպա-

151 Վ. Ի. Լենին, Երկեր, Հատ. 31, էջ 154:

գանդիստական մեծ աշխատանք ծավալվեց ժողովրդական լայն խավերի մեջ, կոչ արվեց անխնա պայքար ծավալել թիւ կունքում եղած դասալիքների, խուճապահարների դեմ։ Կուսակցությունն էր համախմբում ժողովրդական մասսաներին, ուղղություն տալիս և ոգերում նրանց։ Կուսակցության մեջ էր ժողովուրդը տեսնում հաղթանակի մեծ գրավականը։

Բնակչության մեջ տարվող գաղափարական աշխատանքի գլխավոր խնդիրն էր՝ սիստեմատիկորեն բարձրացնել սովետական մարդկանց գիտակցությունը, հասնել այն բանին, որ սովետական յուրաքանչյուր մարդ խոր կերպով հասկանար իր անձնական պարտավորությունը Հայրենիքի նկատմամբ, պատերազմի ելքի գործում և կարողանար իր ավանդը ներդնել գերմանաֆաշիստական զավթիչների դեմ մղած պայքարում։ Կուսակցության և կառավարության կողմից պահանջվում էր բաղաքական աշխատանքը վարել շաղկապահ, յուրաքանչյուր գործարանի, ֆաբրիկայի, կոլտընտեսության, սովորովի, հիմնարկ-ձեռնարկության կոնկրետ արտադրողական առաջադրանքների կատարման հետ, նըպաստելով աշխատավոր մասսաների մեջ հոգեոր ու բարոյական բարձր հատկանիշների (հայրենասիրություն, կարգապահություն, հայրենիքի ազատությունն ու անկախությունն արյան գնով պաշտպանելու պատրաստակամություն) դաստիարակման մեծ ու պատասխանատու դորժին։

1941 թ. հուլիս-օգոստոս ամիսներին կայացան միութենական հանրապետությունների, երկրամասերի ու մարզերի կոմիտեների բյուջեների նխտերը ու պլենումներ՝ նվիրված գաղափարական աշխատանքների վերակառուցմանը։ Երկրի կուսակցական բոլոր կազմակերպություններն ընդունեցին համապատասխան որոշումներ։ Այդ որոշումների համաձայն պահանջվում էր, առաջավոր կոմունիստներից ազիտատորներ ուղարկել հիմնարկ-ձեռնարկությունները, կոլտնտեսություններն ու սովորովները, նպատակ ունենալով մոբիլիզացնել թիկունքի աշխատավորների ուժերը՝ պաղմական պատվերներն ու արտադրական պլանները կատարե-

լու համար, ծավալել քաղմասսայական լայն աշխատանք բնակչության շրջանում՝ նրանց դաստիարակելով՝ սովետական հայրենասիրության ոգով։ Այդ օրուշումների հիման վրա մեր անժայրածիր երկրի բոլոր անկյուններում ստեղծվեց ազիտատորների լայն ցանց։ Ամենուրեք ազիտ-կոլեկտիվները համարվում էին կուսակցական, սովետական ղեկավար աշխատողներով, զիտության, գրականության ու արվեստի անվանի գործիչներով։ Ազիտացիոն աշխատանքին, որ ներկայացնում էր կուսակցության և ժողովրդական լայն մասսաների միջև եղած կապի ամենամասսայական ձևը, տրվեց առաջնակարգ նշանակություն։ Այդ օրերին «Պրավդա» թերթը գրեց. «Ազիտատորի խոսքը պետք է մեր օրերին հնչի իրեն մարտական կոչ՝ Հայրենիքը պաշտպանելու, թշնամուն ոչնչացնելու համար»¹⁵²:

Վերածվելով առաջատար ազիտացիոն կետերի, քաղաքական աշխատանքների կազմակերպչական կենտրոններ դարձան կուսակցական 5000 կարինետներ, որոնք գործում էին մեր երկրի քաղաքներում ու շրջկենարոններում։ Այդ ազիտկետերում անցկացվում էին դասախոսություններ, գիլուցումներ, կոնսուլտացիաներ և սեմինարներ պրոպագանդիստների ու ազիտատորների համար։ Այնադեպ նըրանց տրվում էին պլակատներ՝ լոգունգներ, գրքեր գրքույներ, թերթեր, ամսագրեր՝ ազիտացիոն աշխատանքն ավելի տպագործ դարձնելու համար։ Այդ օրերին Մ. Ի. Կալինինն իր «Կուսակցական մասսայական աշխատանքների մի քանի հարցեր» հոդվածում գրում էր, որ ազիտատորներն իրենց պարագմունքները պետք է պասսիվ ձևով շանցկացնեն, բավարարվելով միայն թերթերի ընթերցումով, այլև զրուցի ձևով, հարց ու պատասխանի ձևով, զանազան կամպանիաների անցկացման միջոցով։ Կուսակցական աշխատողը կամ պրոպագանդիստը, գրում էր նա, պետք է լինի վերին աստիճանի համեստ և ոչ թե ցուցամոլ, մասսայի մեջ իրեն պահի ոչ որպես քարոզող, այլ որպես սովորող, խոր-

152 «Правда», 17 июля 1941 г.

Հըրդակցող, պետք է լինի բացառիկ ազնիվ, անկեղծ և հավասար վերաբերմունք ունենա բոլոր մարդկանց նկատմամբ¹⁵³:

Պատերազմի սկզբից երկու շաբաթ անց քաղմասսայական աշխատանքներում ընդգրկվեցին Մոսկվայում ավելի քան 80 հազար, Տամբովի մարզում՝ 20 հազար ազիտատոր: Հայաստանում այդ օրերին հաշվվում էր մոտ 4 հազար ազիտատոր¹⁵⁴: Սովետական Միությունում չկար մի անկյուն, որտեղ չհասներ կուսակցության կենդանի խոսքը: 1942 թ. երկրում արդեն կար 3 միլիոն ազիտատոր ու պրոպագանդիստ¹⁵⁵:

Կուսակցությունը մեծ ուշադրություն էր դարձնում երկաթգծի կողեկտիվի մեջ տարվող քաղմասսայական աշխատանքներին: Պատերազմի սկզբում էվակուացված բնակչությամբ էշելոնները մեծ հոսանքով շարժվում էին գեղի արեկլը և ետ վերադառնում բեռնավորված զինվորներով, զինամթերքով և ուղղմական տեխնիկայով: Հաճախ կայարաններում հոծ բազմություն էր կուտակվում և հնարավոր չէր նրանց բոլորին միանգամից տեղափոխել թիկունք: Նըրանք օրերով տեղեկություն չէին ստանում ուղղմանակատում տիրող գրության մասին: Այս ամենը հաշվի առնելով Համկ(բ)Կ Կենտկոմը 1941 թ. նոյեմբերի 16ին հատուկ նամակ ուղարկեց միութենական, երկրամասային և մարզային կոմիտեներին՝ «Երկաթուղային կայարանների ազիտկետերի աշխատանքների մասին»: Նամակում առաջարկվում էր արմատապես լավացնել կայարանային ազիտկետերի աշխատանքը և պահանջվում էր «միջոցառումներ ձեռնարկել, որպեսզի ամեն մի կայարանի ազիտկետ ունենա կենտրոնա-

153 М. И. Калинин, О коммунистическом воспитании. Избранные речи и статьи, 3 изд., Изд-во ЦК ВЛКСМ «Молодая гвардия», М., 1947, стр. 119—131.

154 Մէի Հայկական մասնաճյուղի կուսարկիվ, ֆ. 1, ց. 30, գ. 881, թ. 2:

155 «История Великой Отечественной войны Советского Союза 1941—1945 гг.», т. 2, М., 1961, стр. 567.

կան ու տեղական վերջին թերթերը, ցուցատախտակների վրա փակցված լինեն սովինֆորմբյուրոյի հաղորդագրությունները, քաղաքական հարցերի շուրջ տրվեն համապատասխան տեղեկանքներ, աշխատանքները պետք է վարեն պատրաստված ագիտատորները և պրոպագանդիստները, պետք է գործի ուղիուն»¹⁵⁶:

Քաղմասսայական նշանակալից աշխատանք էին տառում կուլտուրավորական հիմնարկները: Պատերազմի նախօրեին Սովետական Միությունում հաշվվում էր 118 հազարությամբ պատուիրայի պալատ, ակումբ, խրճիթ-ընթերցարան և 95 հազ. մասսայական գրադարան: Պատերազմի հետևանքով դրանց մի մասը մնացին թշնամու կողմից ժամանակավորապես զավթած տեղամասերում, մի մասը վերածվեց հոսպիտալի, էվակուացվածների հանրակացարանի, գիշերօթիկ դպրոցների: 1941 թ. երկրորդ կեսին երկրում մնացին ընդամենը 59 հազ. ակումբային հիմնարկություն և 48 հազ. մասսայական գրադարան¹⁵⁷:

Վերոհիշյալ հիմնարկները մեծ աշխատանք կատարեցին: Նրանք հաճախ համերգներ էին տալիս զինվորական մասերում, հոսպիտալներում, գործարանների արտադրամասերում, կոլտնտեսություններում: Իրենց աշխատանքները հայրենասիրական ողով վերակառուցեցին նաև գրադարանները, որտեղ հաճախ կազմակերպվում էին պատերազմի ընթացքի մասին հաղորդող, ուազմաճակատում սովետական զինվորների սխրացործությունների մասին պատմող, ինչպես և ժողովրդի անցյալի հերոսական ավանդույթները զբրվատող ցուցափեղկեր և ցուցահանդեսներ:

Պատերազմի օրերին գաղափարական աշխատանքում բացառիկ գեր խաղացին մամուլը և ուղիուն: Սովետական ամեն մի մարդ իր աշխատանքային օրը սկսում և ավարտում էր թարմ թերթերի ընթերցումով կամ վերջին լուրերի հաղորդագրության ունկնդրումով: Ունկնդիրները մեծ ուշադ-

156 Նույն տեղում, էջ 568:

157 Նույն տեղում, էջ 569:

բությամբ էին լսում կուսակցության և կառավարության զեկավար գործիչների ելույթները, դրությունը ուղղմածակատում հատուկ թողարկումները, նամակներ ճակատից հաղորդումները: Է՛լ ավելի մեծացավ մամուլի կունեկտիվ կաղմակերպչի և մարտական պրոպագանդիստի դերն ու նշանակությունը: Բոլոր քաղաքներում, գյուղերում, գործարաններում, ուսումնական հաստատություններում, անգամ կենտրոնական փողոցներում կանգնեցվեցին ցուցափեղկեր, որտեղ փակցվում էին օրվա թերթերը, որպեսզի բոլորը հնարավորություն ունենային ընթերցելու, քանի որ թզթի պակասության հետևանքով կրկնակի կրնատվել էր թերթերի տպաքանակը: Առանձնապես դաստիարակչական և կաղմակերպչական մեծ դեր էր կատարում ՀամԿ(թ)Կ Կենտկոմի օրգան «Պրավդա» թերթը: «Պրավդա»-ի առաջնորդող Հոգվածներում Կենտկոմի և սովետական կառավարության ցուցումներով ու որոշումներով գրվում էին Հերթական կոնկրետ առաջադրանքներ, բացահայտվում էին երկրի ներքին և միջազգային հարցերը: «Պրավդան» սովետական մարդկանց դաստիարակում էր Հայրենիքին, կոմունիստական կուսակցության գործին մինչև վերջ հավատարիմ լինելու ողով, կոչ էր անում սովետական ժողովրդին հաստատ պայքարի ելնել թշնամու դեմ, նրանց մեջ խորացնում զերմ Հայրենասիրության և անձնազության զգացումները: Այդ ուղղությամբ մեծ գործ կատարեցին նաև տեղական թերթերն ու հրատարակչությունները:

Սովետական Միության կոմունիստական կուսակցության Կենտկոմը մեծ ուշազրություն էր նվիրում պրոպագանդիստական կաղրերի պատրաստմանը և ամենօրյա դեկավարություն էր ցույց տալիս նրանց աշխատանքներին: Կենտկոմի 1942 թ. փետրվարյան որոշման համաձայն երկրի խոշորագույն կենտրոններում՝ Մոսկվայում, Սվերդլովսկում, Կուչբիշևում, Նովոսիբիրսկում, Տաշքենդում, Թբիլիսիում բացվեցին պրոպագանդիստների պատրաստման երկամույթ դասընթացները: 1942 թ. ՀամԿ(թ)Կ Կենտկոմին կից պրոպագանդայի և ագիտացիայի վարչությունում ստեղծվեցին

պրոպագանդիստական 10 խումբ, որոնց կազմի մեջ մտան հայտնի պրոպագանդիստներ, կուսակցական աշխատողներ, զինվորականներ, գիտնականներ:

Ժողովրդի մորթիլիզացման գործում մեծ նշանակություն ունեցան սովինֆորմբյուրոյի հաղորդագրությունները, հակաֆաշիստական կոմիտեների (համալավոնական, երիտասարդական, կանանց) ստեղծումը, հակաֆաշիստական միտինգների անցկացումը և այլն:

* * *

Հայրենական Մեծ պատերազմի տարիներին բնակչության մեջ գաղափարական հոկայական աշխատանք ծավալեց ՍՍԿԿ-ի մարտական ջոկատներից մեկը՝ Հայաստանի կոմունիստական կուսակցությունը:

1941 թ. հոկտեմբին, ինչպես մեր անծայրածիր Հայրենիքի մյուս հանրապետություններում, այնպես էլ Հայաստանում կայացալ ՀԿ(Բ)Կ Կենտկոմի պլենում՝ նվիրված քաղաքական աշխատանքների վերակառուցմանը: Այդ պլենումից հետո հանրապետության պրոպագանդիստներն ու ագիտատուրները ժողովրդական լայն մասսաներին ծանոթացրին կուսակցության առաջադրանքներին, Սովինֆորմբյուրոյի հաղորդագրություններին, Պրավդա» թերթի առաջնորդողներին, մեր կուսակցության ու կառավարության որոշումներին, ուղղմաձակատի և թիկունքի առաջադրությունների սխրանքներին, թիկունքի աշխատողների հայրենասիրական նախաձեռնություններին: Այդ աշխատանքների մեջ ընդգրկվեցին հանրապետության կուսակցական, սովետական, կոմերիտական, պրոֆմիութենական աշքի ընկնող գործիչներ, գիտության, արվեստի և կուլտուրայի բոլոր ներկայացուցիչները:

1941 թ. հոկտեմբերի 30—31-ին ՀԿ(Բ)Կ Կենտկոմի VIII պլենումը քննարկելով պատերազմի պայմաններում հանրապետության կուսակցական կազմակերպությունների կուսակցական-քաղաքական աշխատանքի դրվածքը, նշեց, որ պատերազմի առաջին իսկ օրից Հայաստանի կուսակցական

կազմակերպությունները գգալի գործ են կատարել մասսա-
 յական-քաղաքական աշխատանքները կազմակերպված
 անցկացնելու ուղղությամբ, ուժեղացվել են ռազմաճակատին
 ցուց տրվող օգնության և թիկունքի ամրապնդման ուղղու-
 թյամբ ձեռնարկած միջոցառումները: Ժամանակին և լրիվ
 կատարվել են Հանրապետության առաջադրանքները ինչպես
 մարդկային ուժի, այնպես էլ ռեսուրսների մոբիլիզացման
 գծով: Արդյունաբերական ձեռնարկությունները ժամանակին
 փոխադրվել են ռազմական պատվերների կատարմանը: Ժա-
 մանակին ավարտվել են նաև գյուղատնտեսական աշխա-
 տանքները և պետական պարտավորությունները: Այնուհետև
 պլենումի բանաձեռում նշվում է, որ «բնակչության մեծա-
 մասնությունն ընդգրկված է ռազմական ուսուցման մեջ,
 ինչպես ընդհանուր ռազմուսի և ժողովրդական աշխարհա-
 զորի սիստեմում, այնպես էլ ուրիշ մասսայական-պաշտ-
 պանական խմբակներում: Հաջող են կազմակերպված երկրի
 պաշտպանության ֆոնդի ստեղծումը և կարմիր բանակի
 համար տաք հագուստի հավաքումը: Մեծ աշխատանք է
 տարվել վիրավոր և հիվանդ կարմիրբանակայիններին ու
 հրամանատարներին օգնություն ցուց տալու ուղղու-
 թյամբ»¹⁵⁸:

Պլենումը այդ դրական աշխատանքների կողքին նշում է
 մի շարք լուրջ թերություններ, որոնք գենես գոյություն ու-
 նեին կուսակցական-քաղաքական պրոպագանդայի բնագա-
 վառում: Հատկապես նշվեց գյուղում տարվող քաղաքական-
 մասսայական աշխատանքի ցածր մակարդակը:

ՀԿ(Բ)Կ Կենտկոմի VIII պլենումը կուսակցական կազմա-
 կերպությունների առջև խնդիր դրեց՝ ուշագրության կենտ-
 րում գնելով քաղաքական աշխատանքը, էլ ավելի ուժե-
 ղացնել ռազմաճակատին ցուց տրվող օգնությունը, թիկուն-
 քը ամրապնդելու նպատակով բարձրացնել բնակչության
 զգոնությունը, սերտ կապ հաստատել Հանրապետության տա-

158 «Советская Армения в годы Великой Отечественной войны
 (1941—1945). Сборник документов и материалов», Е., 1975, стр. 94—
 95.

րածքում գտնվող զորամասերի, հոսպիտալների հետ և նը-
րանց ցույց տալ բազմակողմանի օգնություն:

Հանրապետության բոլոր քաղկոմներն ու շրջկոմներն
իրենց աշխատանքները վերակառուցեցին ՀԿ(Բ)Կ կենտկո-
մի VIII պլենումի ոգով և հանդես բերեցին մեծ կազմա-
կերպվածություն՝ ուղղմաճակատի կարիքների հետ կապված
հարցերը զործարար կերպով լուծելու համար:

Կուսակցական կազմակերպություններն օգտագործում
էին քաղաքական ազիտացիայի ու պրոպագանդայի նորա-
նոր ձևերը: Պատերազմի հետևանքով առաջացած նոր ձևե-
րից մեկը կուսակցական խոշոր կազմակերպությունների,
հիմնարկ-ձեռնարկությունների և ուսումնական հաստատու-
թյունների կապն էր տնային կառավարչությունների հետ:
Այդ փորձն առաջինը կիրառեց Մոսկվայի Կույբիշևի շրջկո-
մը, այն շուտով տարածվեց մեր երկրի նաև մյուս շրջան-
ներում:

Տնային կառավարչություններին կցված ազիտատորները
սիստեմատիկ կերպով բնակչությանը տեղյակ էին պահում
ուղղմաճակատի և թիկունքի դրության մասին, մասնակցում
էին տվյալ շրջանում անցկացվող մասսայական միջոցա-
ռումներին: Շատ քաղաքներում քաղմասսայական աշխա-
տանքների կենտրոնը զարձան տնային կարմիր անկյուննե-
րը: Քաղաքական աշխատանք էր տարվում նաև ոռութ-
ապաստարաններում:

Ազիտացիոն-դաստիարակչական գործունեության մեջ
կարևոր գեր խաղաց ցուցադրական ազիտացիան: Մեծ տա-
րածում գտավ «Հաղորդագրությունների տախտակ», «Մըր-
ցության օրագիր», «Կայծակ» պատի թերթերի լույս ընծա-
յումը: Շատ գործարաններում սահմանվեց «Արտազրության
ճակատային կոշման արժանի» տարբերանշան, որը ամրաց-
վում էր այն բանվորի դազգահին, ով պարբերաբար գերա-
կատարում էր առաջադրանքները: Որոշ գործարաններում
օգտագործվում էր «Կայծակ» պլակատի ձեռ, նվիրված առա-
ջավոր բանվորի, բրիգադի, արտազրամասի առջև դրված
խնդրի կատարման արդյունքների վերհանմանը: Լույջ ու-

շագրություն էր գարձվում արտադրական ազիտացիային: Ազիտատորների միջոցով արտադրական ձեռնարկություններում անցկացվում էր արտադրության առաջավորների փորձի փոխանակում: Մեծ աշխատանք էր տարվում պլանները գերակատարելու և խնայողության ռեժիմն արմատավորելու համար:

Իրագործվում էին VIII պլենումի որոշումները, ՀԿԿ Կենտկոմի ազիտմասսայական աշխատանքներում հատուկ տեղ էր հատկացվում ուղղմատաշտպանական հարցերին: Այդ կապակցությամբ Կենտկոմը սերտ կապեր հաստատեց Հայաստանի տարածքում ձեւավորված կամ տեղակայված ու ուղղմաճակատում գտնվող հայկական դիվիզիաների հետ: Հաճախ Կենտկոմը լավագույն կամավոր-պրոպագանդիստների գործուղում էր այս կամ այն զորամաս՝ ազիտացիոն-պրոպագանդիստական աշխատանք ծավալելու նպատակով: Այդ կարգով միայն 1942 թ. շուրջ 200 պրոպագանդիստներ տարբեր ժամկետներում ուղարկվեցին հայկական զորամասերը¹⁵⁹: Առաջին խումբը՝ բաղկացած 53 մարդուց, մեկնեց 390-րդ հայկական դիվիզիա 1942 թ. հունվարին, երկրորդ խումբը՝ հայկական 89-րդ և 408-րդ դիվիզիաները: Գալով հայկական միավորումները, այդ պրոպագանդիստները մայրենի լեղով հայ զինվորների համար անցկացնում էին քաղմասայական պարագամունքներ, զրուցներ հայ ժողովրդի դարավոր պատմությունից, հայ զորավարների, հերոսների քաջագործություններից և նրանց օրինակով ոգևորում ունկընդիրներին կատարելու նորանոր սխրագործություններ: Այդ պրոպագանդիստներից շատերը բոլշևիկյան կրակոտ խոսքը շուրթերին զոհվեցին մեր հայրենիքի պաշտպանության հերոսամարտերում: Նրանցից էին՝ Մարկ Նալբանդյանը, Հայկ Սոխիկյանը, Երեմ Խաչատրյանը, Հայկ Միքայելյանը և շատ ուրիշներ:

Գաղափարական աշխատանքների ծավալման գործում

¹⁵⁹ ՄԼի Հայկական մասնաճյուղի կուսարիսիվ, ֆ. 1, ց. 30, գ. 48, 304, թ. 201—203, 230—233 և 304—306:

իրենց կարևոր դերն ունեին տեղական թերթերն ու ամսագրերը: Նրանք պաշտոնական հաղորդագրություններից բացի տպագրում էին նաև իրենց համալատասխան շրջանի աշխատանքային առօրյայի, հայրենակիցների խիզախությունների մասին, մեծ ոգերություն առաջացնելով թիկոնքի աշխատողների մեջ:

Պատերազմի տարիներին արմատական վերակառուցման հնիտարկվեց նաև հրատարակչական աշխատանքը: 1942 թ. սկսեցին թողարկվել սերիական գրքույներ Հայրենական մեծ պատերազմի և անցյալի զորավարների ու հերոսների կյանքի ու սխրագործությունների մասին: Դրանք նվիրված էին սպարապետ Վարդան Մամիկոնյանի, Գայլ Վահանի, Գավիթ Բեկի, Լորիս Մելիքովի, Տեր-Ղուկասովի, Հայրենական պատերազմում անմահացած հերոսներ Նելսոն Ստիփիանյանի, Հովնան Ավետիսյանի, Սերգեյ Օհանյանի, Սերգեյ Բուռնազյանի, Սարգիս Մարտիրոսյանի, Ղուկաս Մաղոյանի, Զահան Կարախանյանի և ուրիշների կյանքին ու մարտական գործունեությանը:

Այդ ժամանակից ի վեր գործում է ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի Հայրենական մեծ պատերազմի պատմության կաբինետը, որը տարիների ընթացքում մեծաքանակ փաստաթղթեր հավաքելուց բացի գարձել է հանրապետությունում Հայրենական մեծ պատերազմի պատմության ուսումնասիրման գիտական կարևոր օջախներից մեկը:

* * *

Հայրենական Մեծ պատերազմի տարիներին քաղաքական-մասսայական մեծ աշխատանք է տարվում նաև գյուղական շրջաններում: Ինչպես նշվեց, 1941 թ. Հոկտեմբերին, ՀԿ(բ)Կ կենտկոմի VIII պլենումը քննարկելով պատերազմի պայմաններում հանրապետության կուսակցական կազմակերպությունների կուսակցական-քաղաքական աշխատանքի վիճակի հարցը, իրավացիորեն արձանագրեց, որ գյուղում տարվող քաղաքական-մասսայական աշխատանքը գտնվում է ցածր մակարդակի վրա: Պէհնումը գյուղական շրջաննե-

թի կուսակցական կազմակերպությունների առջև խնդիր դը-
րեց ուշադրության կենտրոնում պահել քաղաքական աշխա-
տանքը, բոլոր միջոցներով բարձրացնել բնակչության զգո-
նությունը և էլ ավելի ուժեղացնել ուազմաճակատին ցուց
տրվող օգնությունը։ Այդ պլենումից հետո ամբողջովին վե-
րակառուցվեց գյուղում տարվող գաղափարական աշխա-
տանքի դրվածքն ու շրջանային կուսաբինետների գործու-
ներությունը։ Ամենուրեք կազմակերպվեցին ազիտկետեր և
ազիտբրիգագներ, որոնց կազմի մեջ մտնող ազիտատորնե-
րը, գիտության, գրականության և արվեստի գործիչները
սիստեմատիկ զրուցներ էին անցկացնում սովորներություն-
ի հաղորդագրությունների, ուազմաճակատի տարբեր հատ-
վածներում տիրող դրության, արտադրության առաջավորնե-
րի մասին, հաճախ նրանք լույս էին ընծայում պատի թեր-
թեր, «իլլիովիկաներ», «Կայծակ» պլակատներ։

Գյուղական վայրերում տարվող ազիտացիոն աշխա-
տանքները նոր թափ ստացան ուազմական բարձր բերքի հա-
մար համամիտութենական սոցիալիստական մրցության ծա-
վալման կապակցությամբ։ Պատերազմական իրադրու-
թյունը պահանջում էր կոլտնտեսություններում, ՄՏ կայան-
ներում և սովորներում նոր ձեռվ կազմակերպել աշխա-
տանքը։ Եվ այդ ամենը կուսակցությունը հարկադրված էր
կատարել արտակարգ ծանր պայմաններում, քանի որ աշ-
խատողների զգալի մասը մեկնել էր ուազմաճակատ։ Այս-
պես, միայն Հայաստանի կոմունիստական կուսակցության
շարքերում պատերազմի սկզբում հաշվառման մեջ գտնվող
36849 անդամ-թեկնածուից 1941—1943 թթ. սովետական
շարքերը համալրեցին 20 հազ. հոգի¹⁶⁰։ Հետեւաբար թիկուն-
քում մնացած համեմատաբար փոքրաթիվ անդամներով նա-
պետք է հաղթահարեր պատերազմի հետ կապված ամեն
մի դժվարություն։

Պատերազմի առաջին ամիսներից սկսած գյուղական

160 Տե՛ս «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմու-
թյան ուրվագծեր», Երևան, 1967, էջ 520։

բնակչության մեծ մասը զորակոշվեց գործող բանակ, որի հետևանքով գյուղում աշխատող ձեռքերի խիստ պահանջ էր զգացվում: Այդ ուղղությամբ մեր կողմից արված հետազոտությունները վկայում են այն մասին, որ Հայաստանի գյուղական վայրերից ուղղմանակատ էր ուղարկվել ավելի քան 100 հազ. մարդ և գյուղատնտեսական աշխատանքների ծանրությունը ամբողջովին մնացել էր կանանց, անշափահասների ու ծերերի ուսերին:

Նույնիսկ եղան գյուղեր, որոնց բոլոր տղամարդիկ մեկնեցին ուղղմանակատ: Ալավերդու շրջանի Օձուն գյուղը ուղարկել էր 757 մարդ, իշեանի շրջանի թերդ գյուղը՝ 653, Սկբարը՝ 574, Նոյեմբերյանի շրջանի Կողբ գյուղը՝ 445 մարդ և այլն¹⁶¹:

Քանի որ ուղղմանակատ մեկնած կոմունիստների մոտ 40 %-ը գյուղական վայրերից էին, և գյուղերում զգալիորեն պակասել էր կոմունիստների թիվը, ուստի Համկ(բ)Կ Կենտկոմը 1941 թ. նոյեմբերի 17-ի որոշմամբ նպատակաշարմար գտավ ՄՏ կայաններում և սովորողներում ստեղծել քաղբաժիններ¹⁶²: Քաղբաժինները մեր երկրի համար նորություն չեին: Ամեն անգամ, երբ ծանր դրություն է ստեղծվում մեր երկրի համար, կոմունիստական կուսակցությունը դիմում է այդ քայլին: Դրանք կուսակցական ղեկավարման արտակարգ օրգաններ են, որոնց առջև խնդիր է դրվում՝ վճռականորեն բարելավել քաղաքական-տնտեսական աշխատանքը գյուղում, բարձրացնել կոլտնտեսությունների ու սովորողների դերը և ուժեղացնել կուսակցական վերահսկողությունը նրանց նկատմամբ: 1930-ական թվականներին քաղբաժիններին առաջադրվեց նախ՝ վճռական պայքար մղել կուլակային տարրերի դեմ և ապա՝ սոցիալիստական մըրցություն ծավալել բոլոր կոլտնտեսություններում, ՄՏ կա-

161 Մանքամասնությունները տե՛ս ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի Հայքնական մեծ պատերազմի պատմության կարինետի արխիվում պահպաղ շրջանների ցուցակների ամփոփումներում:

162 ՄԼԻ Հայկական մասնաճյուղի կուսարիսիվ, ֆ. 1, ց. 30 գ. 38 դ. թ. 11:

յաններում և սովխողներում։ Քաղբաժինները կարճ ժամանակում իրենց շուրջը կարողացան համախմբել գյուղի ակտիվին և նրանց մասնակցությամբ վճռեցին կոլտնտեսային շինարարության հետ կապված շատ հարցեր։

Հայրենական պատերազմի ժամանակ, երբ նոր դժվարություններ առաջացան գյուղատնտեսական աշխատանքներում, կոմունիստական կուսակցությունը դարձյալ դիմեց քաղբաժինների ստեղծմանը։ Այդտեղ աշխատելու համար ՀԿ(Բ)Կ կենտկոմը մորիլիզացրեց փորձված կուսակցական և սովետական աշխատողների, որոնք մեծ դեր խաղացին գյուղատնտեսության առջև ծառացած խնդիրները լուծելու գործում։ Քաղբաժինների հիմնական խնդիրներից էին՝ ՄՏ կայանների, սովխողների բանվորների ու ծառայողների և կոլտնտեսականների շրջանում քաղաքական աշխատանքի բարձրացումը, պետական պարտավորությունները ժամանակին կատարելու և գերակատարելու ուղղությամբ տարվող աշխատանքի կարգավորումը։ Քաղբաժինները պրոպագանդիստների, ագիտատորների և հրատարակված թերթիկների միջոցով մասսայականացնում էին մրցությունում հաղթող կոլտնտեսությունների, սովխողների, ՄՏ կայանների և նըրանց աշխատողների առաջավոր փորձը։ Քաղբաժնի պետը ՄՏԿ-ի կամ սովխողի դիրքկոտորի քաղաքական գծով տեղակալն էր, որի վրա զրվում էր կուսակցական ու կոմերիտական կազմակերպությունների ղեկավարության և կուսակցական-քաղաքական աշխատանքի ողջ պատասխանատվությունը։ Բացի այդ, նա դիրքկոտորի հետ հավասարապես պատասխանատու էր պլանների, պետական պարտավորությունների կատարման, զանազան քաղաքական կամպանիաների կազմակերպման ու անցկացման համար։ ՄՏ կայաններում ու սովխողներում գործող քաղբաժինները կարևոր դեր խաղացին գյուղատնտեսության վերակառուցման գործում։ Դաշտային աշխատանքները հաջող կազմակերպելու նպատակով քաղբաժինները ցանքից առաջ անցկացնում էին կոլտնտեսության նախագահների, բրիգադավարների ու օդակավարների սեմինար պարապմունքներ, կազմակերպում

էին տրակտորիստների դասընթացներ, նշանակում էին ագիտատորներ՝ ամեն մի բրիգադի և օղակի համար առանձին: Հրատարակում էին մարտական թերթիկներ, ագիտատորներն անցկացնում էին զրույցներ և ընթերցումներ, քննարկում էին արտադրական հարցեր, լավագույնների փորձը փոխանցում բոլորին: Քաղբաժինները ոչ պակաս դժվարություններ էին հաղթահարում նաև բերքահավաքի և գյուղատնտեսական ապրանքների մթերման ժամանակ:

Քաղբաժինները պահպանվեցին մինչև 1943 թ. կեսերը: Իրենց գոյության ընթացքում նրանք մեծ դեր խաղացին կուտնտեսականների, ՄՏ կայանների բանվորների քաղաքական գիտակցությունը, աշխատանքային ակտիվությունը բարձրացնելու գործում: Քաղբաժինները լուրջ օգնություն ցույց տվեցին կազմերի ինչպես քաղաքական դաստիարակման, այնպես էլ նրանց որակավորման գործին: Հանրապետության բոլոր կուտնտեսություններն ու սովորությունները պատրաստեցին ավելի քան 15 հազ. տրակտորիստ, կոմբայնավար ու մեխանիկ: Մեխանիզատորական տեխնիկումներն ու դրաբոցները ավարտեցին 114 տրակտորիստ, 40 բրիգադիր, 120 կոմբայնավար և 20 մեխանիկ:

1942 թ. գարնանը «Պրավդա» թերթը կոչ արեց. «Առավելագույն ուշադրություն դարձնել կազմերի պատրաստման գործին»: Կուսակցական կազմակերպությունների կողմից մեծ աշխատանք տարվեց կուսակցության շարքերը համալրելու ուղղությամբ:

Շուտով մեր կուսակցության շարքերը համալրվեցին նոր մարդկանցով, որոնք փոխարինեցին ուղմանակատ մեկնածներին: Եվ եթե պատերազմի առաջին շորս ամսում Հայաստանի կոմկուսակցության շարքերն ընդունվեցին 1286 մարդ¹⁶³, ապա հետագա 1942—1945 թթ. նրան շարքերն են ընդունվել 14665 անդամության թեկնածու և 11442 մարդ թեկնածությունից փոխադրվել են անդամ¹⁶⁴:

163 Նույն տեղում, գ. 17, թ. 8:

164 Տե՛ս «Հայաստանի կոմկուսակցության պատմության ուրվագրքեր», Երևան, 1967, էջ 555:

Կուսակցական կազմակերպությունների այսպիսի աճը ցույց է տալիս Հայաստանի կուսկազմակերպությունների հետագա կազմակերպվածությունը և նրա կատերի ամրապնդումը մասսաների հետ:

Կուսակցության ու կառավարության 1942 թ. օգոստոսի 18-ի որոշման համաձայն ՄՏ կայաններին կից բացվեցին տրակտորիստների պատրաստման կարճատև դասընթացներ: Այդ դասընթացներում յուրաքանչյուր աշակերտ ստանում էր օրական մեկ աշխօր, վարպետը յուրաքանչյուր աշակերտի համար՝ ամսական 10 աշխօր, իսկ երեքամյա դասընթացներն ավարտելուց հետո՝ 15 աշխօր որպես պարգև¹⁶⁵: Վերահիշյալ որոշումը մի կողմից օժանդակեց նոր կադրերի պատրաստմանը, իսկ մյուս կողմից անձնական շահագրգուվածություն առաջ բերեց վարպետների մեջ՝ ավելի շատ և որակյալ կադրեր պատրաստելու համար: Այս գործում հսկայական աշխատանք կատարեցին Հայաստանի կոմերիտական կազմակերպությունները: Բավական է նշել այն փաստը, որ միայն 1943 թ. ՄՏ կայանների և շրջանային հողաբաժինների միջոցով պատրաստվեցին 7925 մասնագետ, որից 858-ը կանայք էին¹⁶⁶: Գյուղատնտեսությունը մեծ թվով կադրեր էր ստանում նաև բուհերից և տեխնիկումներից: 1943 թ. միանիզատորական դասընթացներն ավարտեցին 1858 տրակտորիստ, 198 կոմբայնավար, 84 կալսող¹⁶⁷, որոնք ՄՏ կայանները ապահովեցին անհրաժեշտ միանիզատորական կադրերով: Կոլտնտեսային մասսայական կադրեր էին պատրաստվում նաև շրջաններում: Այսպիս, միայն 1945 թ. հունվարի մեջից մինչև ապրիլի 10-ը Շամշադինի շրջանում պատրաստվեցին 20 տրակտորիստ, 30 միանի-

165 Ելի Հայկական մասնաճյուղի կուսարիսիվ, ֆ. 1, ց. 31, գ. 29, թ. 24:

166 ՀՊՊԿ արխիվ, Ֆ. 259, գ. 1, թ. 18:

167 «Правда», 13 февраля 1944г.

գատոր, 63 դաշտավարական բրիգադիրներ, 74 ծխախոտի օղակավարներ և այլն, թվով 540 մարդ¹⁶⁸,

Պատերազմի տարիներին Հայաստանում պատրաստվեց մասսայական որակավորում ունեցող 58 հաղար մասնագետ¹⁶⁹: Միայն 1943—1944 թթ. 700 մարդ առաջ քաշվեցին որպես կոլտնտեսության նախագահներ, 350 կուսակցական կազմակերպության քարտուղարներ¹⁷⁰: Դեկավար աշխատանքի առաջ քաշվեցին նաև զգալի թվով կանայք:

Քանի որ բերքահավաքը պատերազմի պայմաններում համարվում էր ռազմա: անտեսական կարևոր առաջադրանք, այդ պատճառով բերքահավաքի օրերին ամենուր քաղաքական-մասսայական լայն կամպանիա էր ծավալվում: Գյուղի կուսակցական, կոմերիտական կազմակերպությունները և սովորական տեղական օրգանները գլխավորում էին կոլտնտեսային գյուղացիության արտադրական և քաղաքական ակտիվությունը, մորթիկացնում նրա բոլոր ուժերը՝ բերքն արագ ու անկորուստ հավաքելու, մթերումները նշված ժամկետում հանձնելու համար: Հողի աշխատավորները դաշտ էին դուրս գալիս այն հաստատ համոզմամբ, որ ինչքան ավելի արագ ու անկորուստ հավաքվի բերքը և սահմանված ժամկետում պետությանը հանձնվի այն, այնքան ավելի կապահովվի մեր հաղթանակը:

1942 թ. հունիսի 14-ին ՀամԿ(թ)Կ Կենտկոմը քննարկելով «Ագիտացիոն պրոպագանդիստական աշխատանքների վիճակի մասին Պեմզայի մարզում» հարցը, նշեց, որ մարզում ագիտացիոն-պրոպագանդիստական աշխատանքները դեռևս շեն բավարարում պատերազմական ժամանակի պահանջները: Որոշման մեջ նշեց, որ մարզի կուսակցական կազմակերպությունները թուլացրել են իրենց ուշադրությունը

168 Մէի Հայկական մասնաճյուղի կուսարժիվ, ֆ. 1, ց. 34, գ. 132, թ. 4:

169 «Սովորական Հայաստանի անտեսական զարգացումը 1920—1960, թթ.», էջ 260:

170 «Հայաստանի կոմունիստական կուսակցության ուրվագծեր», Երեւան, 1967, էջ 543:

բնակչության մեջ տարվող քաղաքական ազիտացիայի նը-
կատմամբ և աշխատանք չեն տանում կազրերի գաղափա-
ռական-քաղաքական դաստիարակության ուղղությամբ:
Միաժամանակ Համկ(բ)կ Կենտկոմը դիմեց բոլոր կուսակ-
ցական կազմակերպությունների ղեկավարներին, նրանց ու-
շաղրությունը բենուելով այդ կարգի թերությունների վերաց-
ման և ժողովրդի քաղաքական դաստիարակության գաղա-
փարական մակարդակի բարձրացման վրա:

Մեկ ամիս անց Համկ(բ)կ Կենտկոմի պրոպագանդայի
և ազիտացիայի վարչությունը կրկին դիմեց կուսակցական
բոլոր կազմակերպություններին, սոցիալիստական մրցու-
թյունը զլխավորելու նպատակով քաղմասսայական աշխա-
տանքների ծավալման կապակցությամբ անցկացնել կուսակ-
ցական դռնբաց ժողովներ, արտադրական-տնտեսական ակ-
տիվի նիստեր և այլն:

Այդ նույն ժամանակ պրոպագանդայի և ազիտացիայի
վարչությունը կուսակցական կազմակերպություններին ու-
ղարկեց «Հիշեցում ազիտատորին վառելանյութի և էլեկտ-
րաէներգիայի խնայողության համար սպայքարելու մասին»
և «Հիշեցում ազիտատորին աշխատանքի մասին երկաթու-
ղային տրանսպորտը երկրորդ ռազմական ձմեռման նախա-
պատրաստելու մասին» որոշումները: Իսկ 1942 թ. վերջին
ամփոփելով՝ ազիտատորների փորձը, պրոպագանդայի և
ազիտացիայի վարչությունը մշակեց «Հիշեցում ազիտատո-
րին այն մասին, թե ինչպես անցկացնել զրուցը»¹⁷¹:

1942 թ. նոյեմբերի 5-ին ՀԿ(բ)կ Կենտկոմի XII պլենու-
մը¹⁷² կրկին անդրադարձավ կուսակցական կազմակերպու-
թյունների մասսայական-քաղաքական աշխատանքներին և
նշեց, որ զգալիորեն աճել է աշխատավորության քաղաքական
և արտադրական ակտիվությունը, միաժամանակ բացահայ-
տելով այդ ասպարեզում տեղ գտած մի շարք թերություն-

171 «История Великой Отечественной войны Советского Союза», М., 1961, т. 2, стр. 567.

172 ՄԼԻ Հայկական մասնաճյուղի կուսարխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 11,
թ. 12—13:

ներ: Պլենումը բոլոր քաղկոմներին, շրջկոմներին, ՄՏ կայանների և սովխոզների քաղբաժիններին առաջարկեց վերացնել մասսայական-քաղաքական աշխատանքում ցուցաբերած ձևական վերաբերմունքը, պարտավորեցրեց քաղկոմների, շրջկոմների քարտուղարներին և բյուրոյի անդամներին, ՄՏ կայանների ու սովխոզների քաղբաժինների պետերին, տեղական սովետների ղեկավարներին՝ ամիսը 3 անգամ մասսաների առջև հանդես գալ զեկուցումներով, դասախոսություններով ու զրույցներով:

Համկ(բ)Կ Կնտեկոմի շրջաբերականի հիման վրա 1943 թ. ապրիլին Պրուպազանդայի և ազիտացիայի վարչությունը զյուղական վայրերն է ուղարկում «Գյուղական ագիտատորի տեղեկագիր գարնանացանի համար» գրությունը, որով ցուց էր տրվում, թե պատերազմական պայմաններում ինչպես պետք էր քաղմասսայական ամբողջ աշխատանքը կինտրոնացնել քաղաքական-տնտեսական հիմնական խնդիրների կատարման վրա: Գյուղական ազիտատորը աշխատում էր բոլորի հետ հավասար, միաժամանակ անցկացնում էր թերթերի կոլեկտիվ ընթերցում, զրույցներ՝ քաղաքական և ազրոտեխնիկական թեմաների շուրջը: Ազիտատորը սոցիալիստական մրցության կաղմակերպիչն էր, նա հաշվառման էր հնթարկում մրցության արդյունքները:

ՀԿ(բ)Կ Կինտեկոմի XIV պլենումի որոշմամբ 1943 թ. գարնանացանի աշխատանքներին մասնակցեցին քաղաքներից մեկնած 400 ազիտատոր¹⁷³: Վերջիններս անցկացրեցին սեմինար պարապմունքներ՝ տեղական ազիտատորների համար: Կոնկրետ օգնություն ցուց տրվեց տեղում այս կամայն թեմայի շուրջ զրույցը հետաքրքրիր և բովանդակալից անցկացնելու գործին:

Քաղմասսայական աշխատանքների բարեհաջող կաղմակերպման ուղղությամբ ձեռք առած բոլոր միջոցները վճռական դեր խաղացին դարնանացանի անցկացման գործում: Հայկական ՍՍՀ որոշ շրջաններում գարնանացանը

173 Նոյն տեղում, ց. 32, գ. 11, թ. 26—27:

կատարեցին շատ սեղմ ժամկետում և բարձր որակով։ Այսպիս, Ստեփանավանի շրջկոմը գարնանացանից 10 օր առաջ դաշտավարական բոլոր բրիգադները ապահովեց ազիտատորներով։ Գարնանացանի գործնական աշխատանքների առաջին օրերին ավելի քան 256 ազիտատոր բաղաքականմասսայական լայն աշխատանք ծավալեցին բրիգադներում։ Ապրիլ ամսին գյուղական ազիտատորների համար շրջկոմը կազմակերպեց 19 զեկուցում, կապված 1943 թ. գարնանացանի անցկացման հետ։ Կուսշրջկոմի պրոպագանդիստներն ամեն օր լինում էին կոլտնտեսության դաշտերում և գործնական օգնություն էին ցուց տալիս ազիտատորներին՝ ազիտացիան ավելի բովանդակալից և գործոն դարձնելու համար։

Էջմիածնի շրջանում կար 432 ազիտատոր։ Շրջանում լավագույն ազիտատորի համբավ էին վայելում Մանկասարյանը (Ֆրանգանոցից), Սարգսյանը (Հայթաղից)։ Շրջանում կազմակերպվել էր 430 դասախոսություն, որին մասնակցել էին ավելի քան 13 հազար կոլտնտեսական¹⁷⁴։

Քաղաքական ազիտացիայի գործում մեծ դեր խաղացին շրջանային թերթերը և ստորին մամուլը՝ պատի թերթերը, «Իլլիովկաները», ազիտթերթիկները և ցուցադրական ազիտացիայի մյուս ձևերը։ Խրախոսելի աշխատանք կատարեց Ախուրյանի «Կոլտնտեսական» շրջանային թերթը։ Թերթի խմբագրությունը (խմբագիր՝ Վարդգես Նորյան) պարբերաբար հրատարակում էր ազիտթերթիկներ, հատուկ համարներ, նվիրված առանձին կոլտնտեսությունների և կոլտնտեսականների օրինակելի աշխատանքներին (սահմանափակ տպաքանակով)։ Շրջանային լավագույն թերթերից էին նաև Հրազդանի «Լենինի գրոշով» և Շահումյանի՝ «Նոր կյանք» թերթերը¹⁷⁵։

174 Նույն տեղում, ֆ. 14, ց. 2, գ. 116, թ. 23։

175 Տե՛ս Վ. Ամիրբեկյան, Հայաստանի մամուլը Հայրենական Մեծ պատերազմի տարիներին, Երևան, 1971, էջ 157—160։

Հանրապետությունում ազիտացիալի բոլոր միջոցները ուղղված էին սեղմ ժամկետում և առանց կորստի առատ բերք հավաքելու, պետական բոլոր պարտավորությունները ժամանակին կատարելու նպատակի իրականացմանը:

Քաղաքական, տնտեսական և ռազմապաշտպանական միջոցառումների անցկացման գործում տեղական սովետները, կոմերիտական և արհմիութենական կազմակերպությունները դարձան կուսակցական կազմակերպությունների իսկական օգնականները: Դեկավար ցուցումներ և անհրաժեշտ օգնություն ստանալով կոմունիստական կուսակցության կողմից, լենինյան կոմերիտմիությունը, որը զեկավարում էր բիկունիքի և ռազմաճակատի միլիոնավոր երիտասարդների, պատերազմի տարիներին հանդես եկավ հայրենասիրական շատ ու շատ գործերի նախաձեռնությամբ:

Դեռևս պատերազմի առաջին շրջանում Մ. Ի. Կալինինը Կույցիշև քաղաքի կոմերիտմիության ակտիվի ժողովում արտասանած իր ճառում ասել է. «Փետք է հասկանալ, որ պատերազմը խաղալիք չէ, այլ շատ ծանր փորձություն: Պատահական չէ, որ պատերազմում մարդը խակ պատանուց արագորեն վեր է ածվում հասուն մարդու, ռազմիկի... կոմերիտական կազմակերպությունները, ամեն մի կոմերիտական, պետք է իրեն և ողջ երիտասարդությանը նախապատրաստի պատերազմին մասնակցելու, իրեն ներքնապես նախապատրաստի պատերազմի բոլոր գժվարություններն ու թշնամու նենգություններն հաղթահարելու համար»¹⁷⁶: Հետագայում անդրագանալով գյուղական երիտասարդության հարցերին, Մ. Ի. Կալինինը նշում է, որ կոմերիտմիությունը զյուղում մեծ ուժ է և այն պետք է կազմակերպել: Խավ կազմակերպված կոմերիտմիությունն իր ետևից կարող է տանել ոչ միայն երիտասարդությանը, այլև մեծահասակներին, կանանց: Նա գրում էր, որ խրամատում գտնվող ռազմիկին պետք է օգնել ամեն ինչով, որպեսզի ռազմիկն ունենա

176 М. И. Калинин, О коммунистическом воспитании, М., 1947, стр. 108.

էներգիա, կովելու ցանկություն և առույգ ոդի, պետք է նրան լավ կերակրել, անել: «Ուրեմն, դուք ունեք երկու հիմնական առաջադրանք, — զրում է նա, — առաջինը ավելի լավ ցանել, երկրորդը՝ հավաքել հզոր բերք: Դրանում կարտահայտվի ձեր ծառայությունը հայրենիքին, ձեր օգնությունը ուաղմաճակատին, ձեր ամենաէֆեկտիվ մասնակցությունը ֆաշիզմի դեմ մղվող պայքարում»¹⁷⁷:

Մ. Ի. Կալինինի այս խոսքերը ոգեսրեցին մեր երկրի, այդ թվում Հայաստանի լենինյան կոմերիտմիության անդամներին: Շատ ու շատ կոմերիտականներ կամավոր մեկնեցին ուաղմաճակատ և կյանքի զնով պաշտպանեցին մեր հայրենիքը: Պատերազմի միայն առաջին երեք ամսում Հայաստանի կոմերիտական կազմակերպություններից ուաղմաճակատ մեկնեցին 20000 կոմերիտականներ, իսկ ամբողջ պատերազմի ընթացքում սովետական բանակի շարքերը համարեցին 70237 կոմերիտական¹⁷⁸:

Կազմակերպություններ կային, որոնք բանակ էին ուղարկել կոմերիտականների 70—80 %-ը: Բնորոշ է Կիրովականի կոմերիտական կազմակերպության օրինակը, որն իր 3200 անդամներից 2100-ին ուղարկեց ուաղմաճակատ¹⁷⁹: Պատերազմի առաջին և երկրորդ տարում Կիրովականի շըրշանի բոլոր կոլտնտեսություններում ստեղծվեցին կոմերիտական կազմակերպություններ, որոնց լավագույն աշխատանքի շնորհիվ պատերազմի երրորդ տարում կազմակերպության անդամների թիվն արդեն գերազանցեց մինչ պատերազմյան թվին, իսկ սկզբնական կազմակերպություններն ավելացան 25-ով, նույն պատկերն էր համարյա ՀԼԿԵՄ բոլոր կազմակերպություններում: Միայն 1942/1945 թթ. Հա-

177 Նույն տեղում, էջ 114:

178 «Հայաստանի լենինյան կոմերիտմիության պատմություն», Ե., 1968, էջ 207:

179 Մէի Հայկական մասնաճյուղի կուսարիսիվ, ֆ. 48, ց. 18, գ. 292, թ. 107—108:

յաստանի ՀԿԵՄ շարքերն ընդունվեցին 20000 պատանիներ և
աղջիկներ¹⁸⁰:

1942 թ. պատերազմի ահեղ օրերին, երբ գերմանական
զավթիչները Կովկասի դարպասների տակ էին, Պաշտպանու-
թյան ժողկոմի կարգադրությամբ Հայաստանից 2584 կոմե-
րիտական աղջիկներ ուղարկվեցին Հակաօդային պաշտպա-
նության ջոկատները¹⁸¹, զրա հետ միասին ավելի ու ավելի
շատ կոմերիտականներ էին ընդգրկվում գյուղատնտեսական
աշխատանքներում: Այսպես, եթե 1942 թ. գյուղատնտեսա-
կան աշխատանքներում ընդգրկված էին 23 հազար կոմերի-
տական, 1944 թ. նրանց թիվը հասավ 29 հազարի, իսկ
1945 թ. նրանք արդեն դարձան 34 հազար, պիոներ-դպրո-
ցականների թիվը նույն ժամանակաշրջանում 70 հազ. հասավ
103 հազ.-ի¹⁸²: Փոխարինելով ռազմաճակատ մեկնած իրենց
հարազատներին և հաղթահարելով պատերազմի հետևանքով
առաջացած դժվարությունները, հազարավոր տղաներ ու աղ-
ջիկներ տիրապետեցին գյուղատնտեսական մի քանի մաս-
նագիտությունների: Այսպես, միայն 1943 թ. հանրապետու-
թյան ՄՏ կայանների համար պատրաստվեցին 7925 երի-
տասարդ մեխանիզատորներ, որից՝ 355 կոմբայնավար, 442
կալսիչ, 804 մեխանիկ, 24 տրակտորիստ, 59 ավտովարորդ,
14 փականագործ, 24 խառատ և այլն: Այդ նույն դասըն-
թացները 1944 թ. ավարտեցին 14451 երիտասարդ, իսկ
1945 թ. մեկ ու կես անգամ ավելի¹⁸³:

Տարեցտարի աճում էր նրիտասարդական տրակտորա-
ցին բրիգանդների թիվը: Եթե 1943 թ. զրանցում աշխատում
էին 1299 կոմերիտական երիտասարդ, ապա 1944 թ. հան-
րապետության 1784 տրակտորիստներից 1662-ը կոմերի-
տական էին: Եթե 1944 թ. հանրապետությունում կար 54

180 Տե՛ս «Հայաստանի կոմոնիստական կուսակցության պատմու-
թյան ուրվագծեր», էջ 555:

181 ՄԼԻ Հայկական մասնաճյուղի կուսարիսիվ, ֆ. 48, ց. 18, գ.
416, թ. 2:

182 Նույն տեղում, թ. 8:

183 Նույն տեղում, գ. 292, թ. 130:

երիտասարդական տրակտորային բրիգադ, ապա 1945 թ. նրանց թիվը հասավ 64-ի: Հայաստանում գործում էին նաև գյուղատնտեսական գործիքների հավաքման ու վերանորոգման կոմերիտական-երիտասարդական բրիգադներ, որոնց միջոցով եթե 1943 թ. վերանորոգվեց 34221, ապա 1944 թ.՝ 65700 գյուղատնտեսական գործիք: Բոլոր բրիգադներում կոմերիտականները ցուց էին տալիս գերազանց աշխատանքի օրինակներ: Աշխատանքային բարձր ցուցանիշների հասավ նոյեմբերյանի շրջանի երիտասարդական-տրակտորային բրիգադը: Կոմերիտական վարչամբ թումանյանի ղեկավարությամբ տրակտորների վերանորոգումն ավարտվեց ժամկետից երկու ամիս շուտ, իսկ տրակտորային ամբողջ պարկի վերանորոգումն ավարտվեց 1942 թ. դեկտեմբերի 31-ին, որի համար արժանացավ ՍՍՀՄ գյուղատնտեսության մինիստրության փոխանցիկ Կարմիր զրոյշին¹⁸⁴:

Մտնելով սոցիալիստական մրցության մեջ եղբայրական Վրաստանի և Աղրբեջանի կոմերիտական կազմակերպությունների հետ, Հայաստանի կոմերիտականները ապահովեցին իրենց ակտիվ մասնակցությունը գյուղատնտեսական աշխատանքներում: 1943 թ. տնտեսական տարում կոլտնտեսություններում և ՄՏ կայաններում աշխատող 25019 կոմերիտականներ միասին վաստակեցին 5650735 աշխօր, միշին թվով յուրաքանչյուրը վաստակելով 225,9 աշխօր¹⁸⁵ այն դեպքում, եթե հանրապետությունում աշխօրերի պարտադիր մինիմումը 120 աշխօր էր:

Հայաստանի կոմերիտականները մեծ աշխատանք էին կատարում գյուղի աշխատավորությանը լենինյան գաղափարներին հաղորդակից դարձնելու ուղղությամբ: Պատերազմի տարիներին Հայաստանի լենինյան կոմերիտմիության Կենտկոմը իր 7500 ազիտատորների միջոցով ազիտացիոն-մասսայական լայն աշխատանք ծավալեց գյուղա-

¹⁸⁴ Տե՛ս «Հայաստանի լենինյան կոմերիտմիության պատմություն», էջ 258:

¹⁸⁵ Մէի Հայկական մասնաճյուղի կուսարխիվ, ֆ. 48, ց. 12, գ. 310, թ. 80:

կան շրջաններում։ Կոմերիտական ագիտատորները բացի ագիտացիոն աշխատանքից, որպես բրիգադի անդամներ աշխատում էին կոլտնտեսային գաղտերում և անձնական օրինակ ծառայում մյուսների համար։ Միայն 1943 թ. Բուհերի 445 կոմերիտական ագիտատորներ վաստակեցին 40090 աշխօր, որը նվիրեցին պաշտպանության ֆոնդին։ Այդ գործում հատկապես աշքի ընկան երեանի պետական համալսարանի և պոլիտեխնիկական ինստիտուտի ուսանողուհիներ Նուշիկ Մելիքյանը, Կիմա Խաչատրյանը, Պարզիկ Դովլաթյանը, Գոհար Հակոբյանը, Լենա Խնձիկյանը և շատ ուրիշներ¹⁸⁶։ Նրանք պարբերաբար ագիտացիոն-մասսայական աշխատանք էին կատարում բրիգադներում, օդակներում, ֆերմաներում, հրատարակում էին պատիթերթեր, «Իլլիշովկաներ», ինչպես նաև կազմակերպում էին զրական-գեղարվեստական ժամանցներ։

Քաղմասսայական լավագույն աշխատանք էին ծավալում նաև տեղի ագիտատորները։ Վարդենիսի (Նախկին Բասարգելար) շրջանում պատերազմի տարիներին կային 235 կոմերիտական ագիտատորներ։ Սրանցից օրինակելի պարագմունքներ էին անցկացնում Արամայիս Հայրապետյանը, Վալի Ռուզմանը, Խմբան Իբրահիմովը, Կարապետ Սահակյանը և ուրիշներ¹⁸⁷, որոնք իրենց զրույցներով գրավում էին ուժիայն կոմերիտականներին և երիտասարդներին, այլև մեծահասակներին։

Հայաստանում կոմերիտականները ժրաշան աշխատանք կատարեցին նաև հանքային պարարտանյութերը գաշտումադրելիս։ Եթե 1943 թ. նրանք փոխադրեցին ընդամենը 432872 տ պարարտանյութ, ապա 1945 թ. 927040, այսինքն երկու անգամ ավելի։

Գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվությունը բարձրացնելու նպատակով կազմակերպվեցին երիտասար-

186 Նույն տեղում, ֆ. 1, ց. 31, գ. 28, թ. 32—35։

187 Նույն տեղում, ֆ. 48, ց. 18, գ. 177, թ. 1։

դական-կոմերիտական բարձր բերքի օղակներ: 1943 թ. Հայաստանում կար այդպիսի 775 օղակ, որտեղ ընդգրկված էին 8410 կոմերիտականներ ու երիտասարդներ, իսկ հետագայում, 1945 թ. այդ օղակների թիվը հասավ 1648-ի, իսկ նրանցում ընդգրկվածների թիվը՝ շուրջ 15000-ի¹⁸⁸:

Բարձր բերքի երիտասարդական-կոմերիտական օղակներից առավել աշքից ընկան Թալինի շրջանի Աշուակ գյուղի երիտասարդական օղակը, որը 12 ց. փոխարհն Հեկտարից ստացավ 33 ց. հացահատիկ, ինչպես նաև Արթիկի շրջանի Սպանդարյան (Նախկին Ղուլիշա) և Գորիսի շրջանի Գորիս գյուղերի երիտասարդական օղակները: 1943 թ. բերքահավաքի աշխատանքներին կոմերիտականների ու երիտասարդների ակտիվ մասնակցությունն ապահովելու համար Աշտարակի շրջանի ԼԿԵՄ կազմակերպությունը և Արթիկի շրջանի Գետափի գյուղի կազմակերպությունը արժանացան ՀամԼԿԵՄ Կենտկոմի պատվոգրի, իսկ Թալինի շրջանի Զիթհանքով գյուղի և Ստեփանավանի շրջանի կոմերիտական կազմակերպությունները շահեցին ՀամԼԿԵՄ Կենտկոմի փոխանցիկ Կարմիր դրոշը: ՀամԼԿԵՄ Կենտկոմի բարձր գնահատականին արժանացան Հայաստանի կանանց տրակտորային բրիգադները և նրանց անդամները:

Կոմերիտական կազմակերպությունները գլխավորում էին նաև պիոներական կազմակերպությունների աշխատանքները: Նրանք գյուղատնտեսական աշխատանքների մեջ ընդգրկեցին ինչպես գյուղի, այնպես էլ քաղաքի մեծ թվով պիոներ-դպրոցականների: Եթե 1942 թ. ամառային արձակուրդների ընթացքում գյուղատնտեսական աշխատանքներում ամբողջ Հայաստանում ընդգրկված էին 70 հազ. պիոներ-դպրոցականներ, ապա 1943 թ. նրանց թիվը հասավ 99672-ի¹⁸⁹: Գյուղական երիտասարդության գլխավորությամբ պիոներ-դպրոցականներն աշխատում էին մեծ խանդավառությամբ:

188 ՀՊՊ կարինետի արխիվ, ֆ. 259, գ. 1, թ. 12:

189 Նույն տեղում:

Կոմներիտական կազմակերպությունները, դյուղական երիտասարդությունը և աշխատող կանայք դարձել էին կուտնասային արտադրության հիմնական և վճռական ուժը:

Բշնամու վերջնական չափչախման համար անհրաժեշտ էր սովորական ժողովրդի և նրա բանակի հոգեսոր ու նյութական ուժերի ավելի մեծ լարում: Պատերազմի III էտապում պահանջվում էր էլ ավելի ուժեղացնել մեր կուսակցության գաղափարական աշխատանքը, հաղթահարել նոր պայմանների հետ կապված բոլոր դժվարությունները: Բացառիկ մեծ նշանակություն ուներ քաղմասսայական աշխատանքը, թշնամու կողմից զավթված վայրերից աղատազրված բնակչության և Գերմանիայից վերադարձած սովորական քաղաքացիների շրջաններում: Մարտական գործողությունները Հայրենիքի սահմաններից դուրս մղվելուց հետո զինվորների շրջանում տարվող կուսակցական-քաղաքական աշխատանքների հիմքում դրվեցին նորանոր խնդիրներ:

1944 թ. սկսվեց եվրոպական մի շարք երկրների (Զեխսուլովակիա, Հունգարիա, Ռումինիա, Բուլղարիա և այլն) ազգատագրումը գերմանական ֆաշիզմի լծից: Ազատագրված ժողովուրդները հնարավորություն ստացան լուծելու իրենց երկրների հասարակական և սկետական կառուցվածքի հարցերը: Այդ ժողովուրդները լավ գիտեին, թե ինչ է կապիտալիզմը, բայց նրանք չգիտեին ճշմարտությունը սոցիալիստական պետության՝ մեր երկրի մասին: Տարիներ շարունակ ամբողջ աշխարհի բուրժուազիան զրապարտում էր մեր հայրենիքին, վարկաբեկում նրա նվաճումները, համառորեն պնդում ՍՍՀՄ-ի տնտեսական թուլության և սովետական մարդկանց բարոյաքաղաքական ցածր մակարդակի մասին: Երբ ֆաշիստական գերմանիայի և նրա արբանյակների դեմ մղած պայքարը բացահայտեց Սովետական Միության հղորությունը, մինչունավոր մարդիկ փոխեցին իրենց պատկերացումները սոցիալիստական պետության մասին: Նրանց մոտ ցանկություն առաջացավ ավելի մոտիկից ծանոթանալ սովետական կարգերին, մեր ժողովրդի կյանքին, նրա գաղափարախոսությանը, մշակույթին: Այդ հարցում

առանձնապես մեծ հետաքրքրություն ցուցաբերեցին այն երկըների ժողովուրդները, որտեղ սովետական բանակը մղում էր մարտական գործողություններ: Անհրաժեշտ էր օգնել իմանալու ճշմարտությունը սոցիալիզմի մասին, նրա գերազանցությունը կապիտալիզմի նկատմամբ: Դա Սովետական Միության կոմունիստական կուսակցության պարտքն էր: Եվ այն նա պատվով կատարեց:

Պատերազմի վերջին տարում կուսակցությունն իր առաջնահերթ խնդիրը համարեց՝ զբաղվել կուսակցության յուրաքանչյուր անդամի գաղափարաքաղաքական մակարդակի բարձրացման խնդրով: Դա շատ կարևոր էր, քանի որ կոմունիստների մեծ մասը կուսակցության շարքերն էին անցել պատերազմի տարիներին և հնարավորություն չէին ունեցել պատերազմի ծանր օրերին ձեռք բերելու տեսական անհրաժեշտ գիտելիքներ: Միայն 1944 թ. կուսակցության շարքերն էին ընդունվել որպես անդամ 1.125 հազար և որպես թեկնածու՝ 1.336 հազար մարդ¹⁹⁰: Այդ թվում՝ Հայաստանում որպես անդամ՝ 3710 և թեկնածու՝ 2699¹⁹¹:

1944—1945 թթ. ՀամԿ(բ)կ կենտկոմը բազմիցս անդրադապ գաղափարական աշխատանքների հարցերին, ստուգեց մի շարք մարզերում և հանրապետություններում գաղափարական աշխատանքի դրվածքը և համապատասխան որոշումներ ընդունեց այդ ուղղությամբ: ՀԿ(բ)կ կենտկոմը իր մի շարք պլենումներում (14, 16, 19, 20 և 21-րդ) անդրադապ հանրապետությունում և նրա առանձին շրջաններում քաղմասսայական և գաղափարական աշխատանքների դրվածքի հարցերին: Օրինակ՝ ՀԿ(բ)կ կենտկոմում քննարկվեցին: «Գյուղում տարվող քաղմասսայական աշխատանքների վիճակը՝ կապված 1945 թ. գարնանացանի նախապատրաստման հետ», «Ագիտ-մասսայական աշխատանքների դրվածքը իշխանի շրջանում բերքահավաքի և գյուղա-

¹⁹⁰ «Великая Отечественная война Советского Союза 1941—1945 гг.», (Краткая история), М., 1967, стр. 444.

¹⁹¹ ՄԼԻ Հայկական մասնաճյուղի կուսարխիվ, ֆ. 1, ց. 33, գ. 12, թ. 32:

տնտեսական մթերքների մթերատվության ժամանակ» և նըման հարցեր¹⁹²: Քաղմասսայական աշխատանքների վիճակի հետ կապված հարցեր քննարկեցին նաև շրջանային կոմիտեները: Ստեփանավանի շրջկումը 1945 թ. ապրիլին լսեց քաղմասսայական աշխատանքների վիճակը շրջանի Յաղդանի, Կողես և Լորիբերդ կոլտնտեսություններում¹⁹³: Այդ բալոր քննարկումների արդյունքն այն եղավ, որ քաղաքներում ու գյուղերում առավել լուրջ ուշադրություն դարձվեց մարքսինյան տեսության ուսումնասիրությանը, որի հիմնական ձևը ինքնուրուցն ուսումնասիրությունն էր: Ամենուրեք ընդարձակվեց նաև քաղաքրոցների և խմբակների ցանցը: Այդ ամենին զուգընթաց կարգացվեցին դասախոսություններ, զեկուցումներ, անցկացվեցին սեմինարներ ու կոնսուլտացիաներ: Գյուղական կուսակցական սկզբնական կազմակերպություններին կից ստեղծվեցին շրջանային կուսակցական զըպրոցներ և քաղդպրոցներ, որոնցում ընդգրկվածների թիվը երկրում հասավ շուրջ կես միլիոն մարդու:

Մեծ և պատասխանատու խնդիրներ զրվեցին գյուղական, կուսակցական և տեղական կազմակերպությունների առաջ: Բերքահավաքի հաջող անցկացումը ստացավ ուազմատնտեսական կարևոր նշանակություն: Սովետական մարտիկների՝ ուազմաճակատում ունեցած հաղթանակներով ոգեգորված, կոլտնտեսային դաշտերում աշխատանքը ընթանում էր եռակի, քառակի լարված մթնոլորտում: Կոլտնտեսականները դաշտ էին դուրս գալիս ավելի կազմակերպված և մեկ միասնական ու նվիրական ձգտումով՝ արագ և անկորուստ հավաքել հաղթանակի բերքը և բարձրորակ հացահատիկ հանձնել պետությանը: Թիկունքի հաջողություններն իրենց հերթին օժանդակում էին հաղթանակի դործին: Սակայն պետք է նշել, որ հանրապետության առանձին շրջանների կուսակցական կազմակերպությունները բարեխղճորեն չէին կատարում իրենց պարտավորությունները: Այսպես,

¹⁹² Նույն տեղում, ց. 34, գ. 30, 35, թ. 34, 48:

¹⁹³ Նույն տեղում, գ. 13, ց. 3, գ. 72, թ. 58:

Դիլիջանի կուսշրջկոմն անհրաժեշտ ուշադրություն չէր դարձը-նում ագիտմասսայական աշխատանքներին։ Կենտկոմի ստուգումները ցուց տվեցին, որ Դիլիջանի կուսշրջկոմի ագիտպրապագանդայի բաժինը չէր հետաքրքրվում կոլտընտեսություններում տարվող քաղաքական աշխատանքներով։ Շրջանի Գոշ գյուղի կուսկազմակերպությանը կից գործող երկու բաղկամբակները վազուց դադարել էին գործելուց, իսկ Շամախյան գյուղի կոլտնտեսության կուսկազմակերպության 20 անդամներից 10-ը անդրագետ էին և միայն չորսն էին լրագիր ստանում։ Շրջանում նկատվում էր կաղքերի հոսունություն։ Միայն 1943—44 թթ. փոխվել էին շրջանի 12 կոլտնտեսությունների, 8 գյուղապետների նախագահները, 25 ֆերմաների 15 վարիչները և 44 սկզբնական կազմակերպություններից 40-ի քարտուղարները¹⁹⁴. Եվ ցավալին այն էր, որ աշխատանքի մեջ ընդգրկվել էին գործին միանգամայն անտեղյակ մարդիկ։ Նման հանգամանքը բացասաբար էր ազդել կոլտնտեսային աշխատանքների վրա, որի հետևանքով իշել էին գյուղատնտեսական աշխատանքների ցուցանիշները։

Համեմատաբար հաջող էին ընթանում կուսակցական, հատկապես՝ ագիտմասսայական աշխատանքները Ստեփանավանի և Մարտունու շրջաններում։ Ստեփանավանի շրջանում մարգս-լենինյան ուսմունքն ինքնուրույն ուսումնասիրում էին 688, իսկ խմբակային կարգով՝ 1044 մարդ։ Այստեղ միայն 1945 թ. հունվար ամսին կարդացվել էր 41 զեկուցում-դասախոսություն, կազմակերպվել էր 69 խմբակային և անհատական կոնսուլտացիա, 37 տեսական կոնֆերանս և կենտկոմի դասախոսների կողմից կարդացվել էր 6 դասախոսություն¹⁹⁵։

Օրինակելի ձևով էին կազմակերպված ագիտմասսայական աշխատանքները Մարտունու կուսշրջկոմի սկզբնական

194 Նույն տեղում, ց. 36, գ. 31, թ. 95։

195 Նույն տեղում, գ. 13, ց. 3, գ. 86, թ. 1—2։

կազմակերպությունների կողմից։ Նրանց ղեկավարությամբ կազմակերպված սոցիալիստական մրցությունում հաղթող հանդիսացան Վարդենիկ (Նախկին՝ Ն. Գյողալդարա) գյուղի կոլտնտեսականները, իսկ միմյանց հետ մրցող Արծվանիստ (Նախկին՝ Ն. Ալիջալա) և Շովինար գյուղերի կոլտնտեսությունները հասան բերքատվության բարձր ցուցանիշների և աշխարհին բաժանեցին 2,5—4 կտ հացահատիկ¹⁹⁶։ Մարտունու կուսշրջկոմի դասախոսական խումբը շրջանի աշխատավորների համար կարդացել էր 205 զեկուցում և դասախոսություն, որին մասնակցել էին 25080 մարդ։ Շրջկոմի բյուրոյի որոշմամբ ակտիվի միջոցով կարդացվեց 227 զեկուցում, որին մասնակցեցին 50512 մարդ։ Կենտկոմի ուղարկած դասախոսները կարգացին 11 դասախոսություն, որոնց մասնակցեցին 1532 մարդ։ Շրջանի կոմունիստների և կոմնրիտականների գաղափարական-քաղաքական մակարդակը բարձրացնելու նպատակով կուսկազմակերպություններին կից գործում էին 31 խմբակ, որին մասնակցում էին 511 մարդ¹⁹⁷։

Լավ հիմքերի վրա էր դրված ազիտացիոն-մասսայական աշխատանքը նաև Հրազդանի շրջանում։ Այստեղ կուսշրջկոմն ամեն տարի ժամանակին վնասայում ու ընտրում էր իր ազիտ-կոլեկտիվի կազմը։ Շրջանն ուներ 37 ազիտկոլեկտիվներ, որոնցում կար 398 ազիտատոր։ Վերջիններս սիստեմատիկ կերպով բոլշեփեյան բոցավառ խոսքը հասցնում էին գյուղի աշխատավորներին և նրանց հաղորդակից դարձնում օրվա հուղող հարցերին։

Հայրենական պատերազմի տարիներին գյուղական վայրերում կարդացվել են զեկուցումներ հետևյալ թեմաներով. «ՍՍՀՄ բանվոր դասակարգի, կոլտնտեսային գյուղացիության և սովետական ինտելիգենցիայի աշխատանքային սիրագործությունները Հայրենական պատերազմի օրերին», «Լենինը սոցիալիստական հայրենիքի մասին», «Երկրորդ համաշխարհային իմպերիալիստական պատերազմը և

¹⁹⁶ Նույն տեղում, ֆ. 29, ց. 4, գ. 202, թ. 5—9:

¹⁹⁷ Նույն տեղում, գ. 201, թ. 27—28:

ՍՍՀՄ-ի միջազգային դրությունը», «Կարմիր բանակի մարտական գործողությունները և ՍՍՀՄ-ի միջազգային դրությունը», «Լենինը պետության մասին» և այլն:

* * *

Ինչպես ուսումաճակատում, այնպես էլ թիկունքում առաջին բոցաշունչ պրոպագանդիստ ու ազիտատորը համարվում էր մամուլը: Բոլշեկոյան գաղափարախոսության այդ ճշմարտացի արտահայտիչն իր էջերում արտացոլելով սովետական բազմազդ ժողովուրդների իզձերն ու ձգտումները, սպեկոլում էր նրանց աշխատանքային ու մարտակրան սխրանքների: Մամուլի կենտրոնական օրգանները՝ «Պրավդա» թերթը, «Եղվահստիա», «Կրասնայա զվեզդա», «Կոմումուլսկայա պրավդա», «Բոլշեկիկ» (հետազոտում՝ «Կոմունիստ») և այլ պարբերականներ պատերազմի ահեղ օրերին բազմակողմանիորեն լուսաբանում էին թիկունքի և ուսումաճակատի կյանքը, պատվով կատարելով կոլեկտիվ ազիտատորի, կոլեկտիվ պրոպագանդիստի, կոլեկտիվ կազմակերպչի իրենց դերն ու կոչումը:

Հայաստանում նույնպես մեծ դեր ու նշանակություն ունեցան ՀԿ(Բ)Կ կենտրոմի օրգան «Սովետական Հայաստան», «Կոմունիստ» (ոռուերեն) և այլ թերթեր ու ամսագրեր: Կենտրոնական հաղորդագրություններից բացի մեր հանրապետության աշխատավորներին և ուսումաճակատում գտնվող հայ ուսումիկներին մամուլն ամեն օր տեղյակ էր պահում պատերազմի ընթացքին, ահեղ մարտերում աշքի ընկած հերոսների սխրագործություններին, միաժամանակ անդրադառնալով նաև հայ ժողովրդի դրավոր պատմության հերոսական դրվագներին՝ նրա զավակներին ոգեսրելու նպատակով:

Գաղափարադաստիարակչական աշխատանքներում կուսակցության ակտիվ օգնականներն էին մեր հանրապետության գիտնականներն ու դասախոսները, գրողներն ու արվեստագետները, նրանք իրենց ստեղծագործություններում բացահայտում էին ուսումաճակատի և թիկունքի հերոսների

սխրանքները և այդ օրինակով դաստիարակում մշուսներին։ Ֆաշիզմի ղեմ մղվող պայքարում մեծ նշանակություն ուներ նաև անցյալի առաջավոր գրականության և արվեստի ու հայրենասիրական ավանդութների պրոպագանզումը։ Այդ տեսակետից, ժամանակին իրենց կարևոր ղերը կատարեցին Դ. Դեմիրճյանի «Վարդանանք», Ստեփան Զորյանի «Պապթագավոր» պատմավեպերը և ն. Զարյանի «Արա Գեղեցիկ» դրամատիկական պոեմը։ Հայ գրողները ստեղծեցին չերմ հայրենասիրությամբ և օտար նվաճողների նկատմամբ խոր ատելությամբ լցված վեպեր, որոնք իրենց պատմական բովանդակությամբ արձագանքեցին սովետական ժողովրդի մղած հերոսական պայքարին։

Պատերազմի տարիներին զգալի հաջողությունների հասան թատրոնն ու կինոն։ Պատերազմի երրորդ էտապում մեր կուսակցությունն ու կառավարությունը նոր միջոցառումներ մշակեցին գյուղի աշխատավորների կուլտուրական սպասարկման համար։ Այսպես, ՀԿ(Բ)Կ Կենտկոմի 1944 թ. մարտի 27-ին բյուրոյի նիստում նշվեցին միջոցառումներ գյուղական բնակչության շրջանում կինոմատակարարումը լավացնելու վերաբերյալ։ Առաջարկվեց Հայաստանի կինոֆիլմագիրի վարչությանը՝ ընդարձակել կինոյի ցանցը հանրապետության շրջաններում, հասցնելով այն 80-ի և կարձատել դասընթացներում պատրաստել 45 կինո մեխանիկ¹⁹⁸։

Հայ կինոն պատերազմի տարիներին մի քանի կարճամետրաժ գեղարվեստական հայրենասիրական ֆիլմերի արտադրությունից հետո թողարկեց «Դավիթ Բեկ» գեղարվեստական լիամետրաժ ֆիլմը։ Այդ կապակցությամբ «Պրավդա» թերթը գրեց. «Դավիթ Բեկ» ֆիլմը ոգևորությամբ կցնի հայի սիրտը, ինչպես նաև ոռուի, ուկրաինացու սիրտը, սովետական ամեն մի քաղաքացու սիրտը, իր խոր հուզականությամբ, հայրենիքի սիրով և ատելությամբ ղեպի զավթիչները¹⁹⁹։ Դավիթ Բեկի անզուգական դերակատարը՝ Հրաչյա Ներսիսյանը պարգևատրվեց կինինի շքանշանով։

198 Նույն տեղում, ֆ. 1, ց. 33, գ. 32, թ. 30—31։

199 «Правда», 18 февраля 1944 г.

Հայրենասիրական բուռն ոգևորություն, ստեղծագործական ուժերի հսկայական լարում ապրեցին հանրապետության գիտնականներն ու արվեստի գործիչները։ Նրանք հաճախ շրջում էին շրջանները, գյուղերը, կոլտնտեսությունները, հանդես գալիս ներկայացումներով, համերգներով, անցկացնում հանդիպումներ, զրուցներ, կարդում էին զեկուցումներ, դասախոսություններ։ Իրենց շեֆական աշխատանքները մեծ սիրով էին կատարում գրողներ Դ. Դեմիրճյանը, Մ. Արագին, Ն. Զարյանը, պրոֆեսոր Ա. Շովհաննիսյանը, պատմական գիտությունների դոկտոր Վ. Ռշտունին, դերասաններ Մ. Մանվելյանը, Վ. Վարդանյանը, Այդ գործի մեծ էնտուզիաստն էր ժողովրդական դերասանուհի Արուս Ռսկանյանը, որի փայլուն դերակատարումները հարյուրավոր բանակայինների և կոլտնտեսականների նամակ-գովասանքի նյութ են դարձել։ Շեֆական աշխատանքներում իրենց շանասիրությամբ աշքի ընկան Հայաստանի երգիպարի անսամբլը և Հայֆիլհարմոնիայի կոլեկտիվը։

Գաղափարական-քաղաքական այս մեծ ու բազմակողմանի աշխատանքը, որ գլխավորում էր կոմունիստական կուսակցությունը, օգնում էր սովետական մարդկանց ավելի խոր և բազմակողմանիորեն ըմբռնելու պատերազմական տարիներին տեղի ունեցող իրադարձությունները։

ԳԼՈՒԽ ԵՐԵՐԾՈՒԹ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՅՔԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՇԱԲԺՈՒՄՑ

ՍՈՅԻԱՎԻՍՏԱԿԱՆ ՄՐՅՈՒԹՅԱՆ ՇԱՅԱԼՈՒՄՑ

Սոցիալիստական մրցությունը սովետական հասարակության զարգացման օրինաշափությունն է, որի ծագումը սերտորեն կապված է սոցիալիստական արտադրական հարաբերությունների սահեղձման հետ։ Այն սոցիալիստական էկոնոմիկայի առաջարժիւ ուժն է, սոցիալիզմի ու կոմունիզմի կառուցման հիմնական նղանակը։

Կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը իրենց առջև դրված խնդիրները իրականացնում են ժողովրդական լայն մասսաների ստեղծագործական ինքնագործունեության, աշխատանքային նոր թափի ու խանդավառության շնորհիվ։ Դրա հետևանքով աշխատավորների ստեղծագործական ակտիվությունը ծնում է սոցիալիստական մրցության նորանոր ձևեր։ Մեր երկրում մրցությունը սկսվեց կոմունիստական շաբաթօրյակների, ապա սոցիալիստական մրցության և հարվածայնության, ստախանովյան շարժման, իսկ հետագայում՝ կոմունիստական աշխատանքի բրիգադների ձևերով։

Հայրենական պատերազմի տարիներին սոցիալիստական մրցությունն իր բազմապիսի ձևերով ընդուրկեց ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերը, ստանալով ոչ միայն տնտեսական, այլև հասարակական ու քաղաքական կարեռ դեր ու նշանակություն։ Եթե 1941 թ. չորրորդ եռամ-

սլակում մրցությունն առաջ բերեց 200-ականների շարժումը, ապա 1942 թ. առաջին եռամսյակը նշանավորվեց միքանի մասնագիտությունների տիրապետման, կոմերիտական ճակատային բրիգադների, կանանց տրակտորային բրիգադների ստեղծման շարժմամբ:

Դեռևս քաղաքացիական պատերազմների տարիներին վ. ի. Լենինը ասել է. «Դրությունը չափազանց ծանր է, բայց մենք չենք հուսահատվում, որովհետեւ գիտենք, որ ամեն անդամ, երբ դժվար դրություն է ստեղծվում Սովետական Հանրապետության համար, բանվորները բացության հրաշքներ են ցուցաբերում, իրենց օրինակով բաջակերում և ոգեսրում են զորքին ու նրանց առաջնորդում դեպի նոր հաղթանակներ»¹: Եվ իրոք, Հայրենական մեծ պատերազմի տարիներին Սովետական Միության բանվոր դասակարգն ու աշխատավոր գյուղացիությունը կատարեցին աշխատանքային հրաշքներ, ցուցաբերելով հոգու արիություն, կամքի ուժեղություն, ֆիզիկական ու բարոյական ամենաբարձր լարում:

Սոցիալիստական մրցությունն ամբողջովին համակեցնակ կոլտնտեսային գյուղացիությանը, որը խորապես զիտակցում էր այն մեծ պատասխանատվությունը, որ գրել էր իր վրա Հայրենիքը՝ բանակին ու բնակչությանը պարենամթերք, իսկ արդյունաբերությանը՝ հումք մատակարարելու գործում: Սովետական գյուղացիությունը համոզված էր, որ մրցության մեջ առաջավոր լինել, նշանակում է ակտիվորեն աշակցել բանակին: Այդ իսկ պատճառով մրցության միջմտան ոչ միայն անհատ կոլտնտեսականներ, օղակներ ու բրիգադներ, այլև կոլտնտեսություններ ու շրջաններ, երկրամասներ ու հանրապետություններ, թիկունքը՝ ուղմաճակատի հետ:

Ամենուրեք մրցության ղեկավարները տվյալ շրջանի կուսակցության շրջկումներն էին ու շրջանային տեղական Սովետների գործկոմները: Մեծ թափով ծավալվեց մրցու-

¹ Վ. ի. Լենին, Երկեր, Հատ. 30, էջ 64:

թյունը 1941 թ. բերքահավաքի ժամանակ: Այդ մրցության շնորհիվ էր, որ Հայաստանում հացահատիկի բերքահավաքն ավարտվեց 20 օր ավելի շուտ, քան 1940 թվականին: Հայաստանում մրցում էին բոլոր շրջաններն անխտիր. Արտաշատի շրջանը՝ էջմիածնի, Հոկտեմբերյանը՝ Արտաշատի, Գորիսը՝ Սիսիանի, Ստեփանավանը՝ Կիրովականի հետ և այլն: Միանալով Կուրբիշևի մարզի Բաւշի-Ռակովսկի ՄՏ կայանի կողեկտիվի դիմումին և մտնելով Համամիութենական սոցիալիստական մրցության մեջ, Կիրովականի ՄՏԿ-ն իր 1942 թ. արտադրական պլանը կատարեց 124,4 % -ով և տնտեսեց 3836 կգ վառելանյութ: Նրա № 1 բրիգադը (բրիգադիր՝ Հ. Այվազյան) պլանով նախատեսված 404 հա-ի փոխարեն կատարեց 580 հա վարուցանք, տալով 1039 կգ վառելանյութի խնայողություն: № 2 բրիգադը (բրիգադիր՝ Ա. Պետրոսյան) տնտեսեց 2166 կգ վառելանյութ, իսկ № 3 բրիգադը (բրիգադիր՝ Կ. Մարգարյան) պլանը գերակատարեց 70 % -ով և տնտեսեց 631 կգ վառելանյութ²:

Հանրապետության լավագույն կոմբայնավարներից էր Հրազդանի շրջանի Բջնի գյուղի կոմբայնավար Հայկարամ Գալստյանը, որը 1942 թ. հնձել էր 303 հա հացահատիկ և սիստեմատիկ կերպով տնտեսել վառելանյութը:

Պատերազմի ընթացքում առաջին գարնանացանը հաշող անցկացնելու գործում իր կարեռը դիրք խաղաց Ալթայան երկրամասի Շիպունովսկի շրջանի կոլտնտեսականների և ՄՏ կայանի աշխատողների նամակ-կոչը: Շիպունովցիները իրենց կոշում գրում էին. «Մեր արևելյան մարզերը այժմ դարձել են հացահատիկի և գյուղատնտեսական մյուս բոլոր մթերքների արտագրության հիմնական բաղան: Մեզ վրա է հիմնվում Կարմիր բանակի թիկունքը: Պատրաստվելով գարնանացանի, մենք արշավ ենք հայտարարել ուազմաճակատին ցուց տրվող օգնությունն ուժեղացնելու, մեր բոլոր ներտնտեսական ուղերվները հայտնաբերելու և օգտագործե-

2 Տե՛ս «Սոցագավ», 7 հունիսի 1942 թ.:

լու, դաշտերի բերքատվությունը և անասնաբուծության մթեռատվությունը բարձրացնելու համար»: Ապա դիմելով մերեկրի մյուս կոլտնտեսություններին, մրցության նախաձեռնողները կոչ էին անում՝ «Եիստ բարձրացրեք աշխատանքային կարգապահությունը, դաշտային աշխատանքների մեջ ներգրավեցեք ամբողջ աշխատունակ բնակչությանը»: Պատերազմի ժամանակ յուրաքանչյուր մարդու պետք է տալ աշխատանքային լրիվ բեռնավորում: Լողը, ձրիակերը կոլտնտեսությունում այս աճեղ օրերին՝ թշնամու ուղղակի աջակիցն է»³:

Շիպունովցիների կոչն իր դերը խաղաց նաև Հայաստանի կոլտնտեսականների շրջանում: Այդ օրերին սոցիալիստական մրցության պայմանագիր կնքվեց Արտաշատի և Էջմիածնի, Հոկտեմբերյանի և Մասիսի (Նախկին՝ Զանգիբառ) շրջանների կոլտնտեսությունների միջև: Մտնելով սոցիալիստական մրցության մեջ, նրանք պարտավորվեցին 1942 թ. գյուղատնտեսական տարին փակել բարձր ցուցանիշներով: Երեք ամիս հետո, երբ ստուգվեց Հոկտեմբերյան-Մասիս մրցության ծավալման ընթացքը, պարզվեց, որ որոշ գյուղերում դեռևս կան թերություններ բերքի աճեցման, բերքահավաքի և ընդհանուր կարգապահության բարձրացման ուղղությամբ: Երկու շրջանների ներկայացուցիչների խորհրդակցությունը նշելով տեղ գտած թերությունները, կոնկրետ միջոցառումներ մշակեց 1942 թ. բարձր բերք ստանալու համար:

1942 թ. մարտին, կանանց միջազգային օրվա առթիվ Համեկ(Բ)Կ ենակոմը հրապարակեց որոշում, որտեղ ասված է. «Կոլխոզների կուհիներ, ՍՏ կայաններում և սովխոզներում աշխատող կանայք, Դո՛ւք եք վճռում առաջիկա գյուղատնտեսական տարվա հաջողությունը: Դաշտերում կատարված ձեր աշխատանքից է կախված թիկունքի ու ուղղմանձակատի ապահովումը հացով, մսով, բանջարեղենով: Հիշեցեք, որ գարնանացանի կամպանիայի հաջող անցկա-

3 «Սովետական Հայաստան», 15 փետրվարի 1942 թ.:

ցումը հավասար է ուազմաճակատում տարած խոշոր հաղթության»⁴: Կենտկոմի այդ մարտական կոչը չերմ արձագանք գտավ սովետական հայրենասեր կանանց մեջ: Օրչոնիկիձեի երկրամասի առաջավոր տրակտորիստուհիները մի դիմումով առաջարկեցին կազմակերպել տրակտորիստուհիների համամիութենական սոցիալիստական մրցություն: Նըրանք պարտավորվեցին աշխատել այնպես, որպեսզի ետ շմնան ուազմաճակատի հերոսներից:

Ինչպես Կենտկոմի 1942 թ. Մարտյան պլենումի որոշումը, այնպես էլ Օրչոնիկիձեի երկրամասի տրակտորիստուհիների հայրենասիրական նախաձեռնությունը մեծ խանդավառություն առաջ բերեցին Հայաստանի կանանց շրջանում: Նրանք մտնելով սոցիալիստական մրցության մեջ, կոնկրետ պարտավորություններ ստանձնեցին՝ պայքար ծավալելու գուղատնտեսական տեխնիկային տիրապետելու համար: Կիրովականի ՄՏ կայանի տրակտորիստուհի Թարգուհի Դարբինյանը 1941 թ. կատարել էր 2600 հա աշխատանք: Մտնելով համամիութենական սոցիալիստական մրցության մեջ, նա պարտավորվեց 1942 թ. յուրաքանչյուր օր մեկ հերթափոխում վարել 3 հա տարածություն և ամեն մի հեկտարից խնայել 2 կգ վառելանյութ: Խոկ Թալինի շրջանի ՄՏ կայանի տրակտորիստուհի Խամրիկ Վարդանյանը ժամկետից վաղ ավարտեց իր տրակտորի նորոգումը, 10 %-ով կրճատեց նախատեսված ծախսերը և 5 %-ով խնայեց վառելանյութը:

Սոցիալիստական մրցությունն ավելի լայնորեն ծավալվեց և նախամայիսյան օրերին դարձավ մասսայական: Այդ առթիվ «Պրավդա»-ն գրում էր, Նոյեմբերյանի շրջանի Դեբետաշեն (նախկին՝ Լամբալու), Վերին և Ներքին Քյորվլու գյուղերի կոլտնտեսականները ժամկետից շուտ ավարտել են հացահատիկային կուլտուրաների ցանքը և պատրաստվում են բանջարեղենի ու տեխնիկական կուլտուրաների ցանքին: Նոյեմբերյանի ՄՏ կայանում 16 տրակտորիստներից 12-ը կանայք են, որոնք եկել են փոխարինելու իրենց ամուսիննե-

4 «Մոլիտական Հայաստան», 8 մարտի 1942 թ.:

րին ու եղբայրներին: Յանքի առաջին օրերին, չնայած կադրերի երիտասարդ լինելուն, ու մի տրակտոր պարապուրդ շունեցավ: Մայր և 15-ամյա որդի Չոբանյանները, աշխատելով մի տրակտորի վրա, կատարել են զգալիորեն ավելի շատ վար, քան նախատեսված էր պլանով, տնտեսելով մեծ քանակությամբ վառելանյութ⁵:

Հոկտեմբերյանի ՄՏ կայանի տրակտորիստուհի Շուշիկ Ոսկանյանը մտնելով Համամիութենական սոցիալիստական մրցության մեջ, ցուց տվեց, թե ինչպես պետք է պայքարել ու հաղթող դուրս գալ մրցություն: Վերջացնելով գարնանացանի աշխատանքները, Շուշիկն օրինական հպարտությամբ իր տեսրում արձանագրում է. «Տրակտորս 63 հա փոխարեն վարեց 93 հա և խնայեց 200 կտ վառելանյութ»: Գվարդիայի կրտսեր քաղղեկ Բոբկովը «Կոմսոմոլսկայա պրավդա»-ի էջերում կարդալով Շուշիկի աշխատանքի մասին, նրան ուղարկեց հետեւյալ նամակը. «Հեռավոր թանկագին հայ աղջիկ Շուշիկ. ես զգիտեմ ձեր լեզուն, ես երբեք չեմ տեսել քեզ և դու էլ ինձ շես ճանաչում: Դիտեմ, որ դու կոմերիտուհի ես, որ մարտական տրակտորի ղեկի առաջ նստած, դու բոլոր ուժերդ նվիրում ես ուազմաճակատին օգնելու համար, կարմիր բանակի հետ միասին ձեռք-ձեռքի տված թշշնամուն ջախջախելու համար:

Մենք՝ կարմիր բանակի մարտիկներս, որ զենքը ձեռքներիս կովում ենք ուազմաճակատում, հպարտ ենք քեզ նման աղջիկներով, որոնք թիկունքում աղնվորեն աշխատում են Հայրենիքի բարօրության համար:

Շուշիկ, թուց տուր քեզ շնորհավորել ճակատային գարնան առաջավորների տախտակին բարձրացվելու համար: Յանկանում եմ քեզ էլ ավելի մեծ հաջողություններ»⁶:

Ախուրյանի շրջանի Ղարիբջանյանի ՄՏ կայանի երիտասարդական տրակտորային բրիգադը Պարուց Բաղդասարյանի ղեկավարությամբ պլանով նախատեսված 306 հա

5 «Правда», 9 апреля 1942 г.

6 «Սովետական Հայաստան», 30 հունիսի 1942 թ.:

գարնանավարի փոխարեն հերկեց 510 հա, պլանը կատարեց 140 % -ով, տնտեսեց 1493 կտ վառելանյութ՝ և ՀԼԿԵՄ կենտկոմի կողմից 1944 թ. հուլիսին ներկայացվեց երիտասարդական տրակտորային բրիգադների մրցման մեջ հաղթող ճանաշված մասնակիցների երրորդ կարգի մրցանակի: Այդ նույն մրցման մասնակիցներից առաջին կարգի մրցանակի արժանացավ Կիրովականի ՄՏ կայանի երիտասարդական բրիգադը (բրիգագիր՝ Հարություն Համբարյան), երկրորդ կարգի մրցանակի արժանացավ Սպիտակի ՄՏԿ-ի երիտասարդական բրիգադը (բրիգագիր՝ Անդրանիկ Խառապյան):

Պատերազմի տարիներին Հոկտեմբերյանի շրջանի ՄՏ կայանը Հայաստանի այն կայաններից էր, որ մրցույթից միշտ հաղթող էր դուրս գալիս: Կայանի գիրեկտոր Գևորգ Սովիայանը լավագույն կազմակերպիչ էր և տնտեսվար: Նա կարողացավ կարճ ժամանակում կայանի աշխատանքները վերակառուցել պատերազմի պահանջներին համապատասխան: Կայանի լավագույն տրակտորիստներն ու ինձեններներն իրենց անմիջական պարտավորություններից բացի յուրացրին ռազմական տեխնիկան և սկսեցին իրենց արհեստանոցում նորոգել վնասված տանկեր, զենքի այլ տեսակներ: Հոկտեմբերյանի ՄՏ կայանի բոլոր բրիգադներն իրենց պլանները կատարում էին 120 և ավելի տոկոսով: Տրակտորիստ Հ. Սիմոնյանը նախատեսված 122 հա-ի փոխարեն միշտ կատարում էր 400 հա ավելի աշխատանք: Այս ամենի համար կայանը արժանացավ երկրորդ կարգի մրցանակի և փոխանցիկ դրոշը տարիներ շարունակ պահեց իր ձեռքում: Բացի զրանից, Հոկտեմբերյանի ՄՏ կայանը ռազմաճակատի պատվերները ժամկետից շուտ և բարձր որակով կատարելու համար արժանացավ նաև ՍՍՀՄ Պաշտպանության ժողկոմատի շնորհակալությանը⁷:

Մրցությունը լայնորեն ծավալվեց նաև կանանց տրակտորային բրիգադների միջև: Հաղթողների համար սահման-

7 ՀՊՊ կարինետի արխիվ, ֆ. 259, գ. 1, թ. 15:

8 Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հատ. 8, Երևան, 1970, էջ 107:

վեց մրցանակ և «Սովետական Միության լավագույն տրակտորիստուհուն» կրծքանշանը, որը Համեմունք կհնակոմի կողմից տրվում էր գարնանացանի, բերքահավաքի և գյուղատնտեսական այլ աշխատանքների ընթացքում առավել աշքի ընկած տրակտորիստուհիներին։ Հայաստանում առաջավոր կին տրակտորիստուհիների թվում էին թագուհի Դարբինյանը, Անիշկա Գրիգորյանը, Նատաշա Ավետիսյանը, Սեդա Մնացականյանը և ուրիշներ։

Տրակտորների, մոտոռների նորոգման և պահեստային նոր մասեր պատրաստելու պլանը գերակատարելու, ինչպես նաև 1942 թ. կատարած աշխատանքների լավ որակի համար Հոկտեմբերյանի մեքենատրակտորային արհեստանոցը պարգևատրվեց Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի Պատվոգրով⁹։ Նույն օրը լույս տեսավ ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը 1942 թ. պլանները կատարելու և գերակատարելու, ինչպես նաև վառելանյութը խընայելու և ինքնարժեքն իշեցնելու համար հանրապետության մի շարք տրակտորիստ-կոմբայնավար-մեխանիկների Գերագույն սովետի Պատվոգրով պարզեցատրելու մասին։ Պարգևատրվածների թվում էին՝ Միքայել Արգարյանը, Շուշիկ Ոսկանյանը, Գավրիլ Շշերբակովը (Հոկտեմբերյան), Հմայակ Առաքելյանը, Վասիլ Բոնդարենկոն, Սարգս Գրիգորյանը, իվան Մուրագովը (Մտեփանավան), Կարո Հարությունյանը, Հայկ Առանյանը, Հասան Ասկյար օղլի Մահմեդովը (Արտաշատ), Հայկազ Հովակիմյանը (Շամշադին), Աննա Գրիգորյանը (Կիրովական) և ուրիշներ։

Սոցիալիստական մրցությունը ծավալվում էր պատերազմի բոլոր էտապներում, սակայն այն էլ ավելի ուժեղացավ անդրկովկասյան ժողովուրդների հակաֆաշիստական միտինգից հետո, երբ թշնամին հասել էր Կովկասյան նախալեռներին։ Այդ ժամանակ մրցությունը ծավալվեց ինչպես տարբեր գյուղերի ու շրջանների, այնպես էլ թիկունքի աշխատողների և առաջավոր գծում կովողների միջև։

9 «Սովետական Հայաստան», 5 մայիսի 1942 թ.։

Այսպէս, օրինակ, Քաջաբանի Բուզյոննու անվան կոլտնտեսությունը մրցման մեջ մտավ համագյուղացի ճակատայիններ Մկրտիչ Աբգարյանի և Կարապետ Պողոսյանի հետ։ Հայկական 89-րդ հրաձգային դիվիզիայի 390 գնդի 2-րդ դասակի 3-րդ ջոկի մարտիկները (հրամ.՝ Միքայելյան) մրցում էին Ղափանի շրջանի Շիկահող գյուղի Շահումյանի անվան կոլտնտեսության դաշտավարական № 3 բրիգադի հետ։ Ճակատայիններն իրենց մրցահրավիրում գրում էին. «Մնաք Հայկական դիվիզիայի № ստորաբաժանման 3-րդ ջոկի մարտիկներս անսահման բարձր գնահատելով Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխության աննկարագրելի նվաճումները և այն վտանգի ահավորությունը, որ կախված է մեր ամենանվիրական բանի՝ Սովետական Հայրենիքի վրա, մտնում ենք նախահոկտեմբերյան սոցիալիստական մրցման մեջ՝ դիրմանաֆաշաշտական մարդակերներին շուտափով ջախջախելու և մեր երկրից դուրս շպրտելու համար»¹⁰։ Այս մրցահրավիրը շիկահողյիները սիրով բնդունեցին և իրենց հերթին պարտավորվեցին «ուագմանակատին տալ ավելի շատ հաց, միս, ծխախոտ և այլ արդյունաբերական հումք»¹¹։

Մտնելով մրցության մեջ, Կիրովականի շրջանի Յաղուբյուռ գյուղի կոլտնտեսությունն ապահովեց հացահատիկի անկորուստ բերքահավաքը։ Կոլտնտեսության բոլոր բրիգադներն ու օղակները ժամկետին ավարտեցին 900 հա խոտհունձը, պլանով նախատեսված 210-ի փոխարեն պատրաստեցին 237 տ սիլոս¹², ժամկետից շուտ պարտեցին աշնանացանն ու ցրտահերկը։ Գյուղի աշխատավորները մեծ հատկացումներ արեցին բանակի ֆոնդին։

Հոկտեմբերյանի շրջանի կոլտնտեսությունները մտնելով Համամիութենական սոցիալիստական մրցության մեջ, շերմորեն արձագանքեցին նովոսիրիսկի մարզի Զիստաօգյորնիի շրջանի «Պուտ կրհստյանինա» և Ղաղախական ՍՍՀ

10 ՀՊՊԿ արխիվ, ֆ. 266, գ. 168, թ. 5։

11 Նույն տեղում։

12 «Սոցարշավ», 4 Հոկտեմբերի 1942 թ.։

Ալթայի մարզի Կուդալինի շրջանի կողտնտեսականների գիւմումներին։ Նրանք ստանձնեցին կոնկրետ պարտավորություններ՝ բամբակի պետական պլանը կատարելու և բարձրորակ բամբակ հանձնելու վերաբերյալ։ Հոկտեմբերյանցիները պատվով կատարեցին իրենց ստանձնած պարտավորությունները և մրցությունից գուրս եկան հաղթող։

Հոկտեմբերյանի շրջանի Բամբակաշատ գյուղի գպրոցական, 17-ամյա Սսանիթ Սիմոնյանը բամբակի հավաքման օրական նորման կատարում էր 560% -ով։ Նա գերազանցիկ աշակերտութիւն էր, նույն գյուղի Օքոնիկիձեի անվան կուտնտեսության բարձր բերքի երիտասարդական օղակը (օղակավարուհի՝ Արեգնազան Ղաղաբյան) յուրաքանչյուր հեկտարից ստացավ 11-ի փոխարեն՝ 29 ց բամբակ։ Օղակի յուրաքանչյուր անդամ վաստակեց 264 աշխօր։

Կամոյի շրջանի Բագիկ գյուղի Շաքրանազ Հովհաննիսյանի օղակը պլանով նախատեսված 4 ց փոխարեն ստացավ 16 ց ծխախոտ։ Օղակի ամեն մի անդամ վաստակեց 210 աշխօր։ Ախուրյանի շրջանի Առափի (նախկին՝ Օջախուլի) գյուղի բարձր բերքի երիտասարդական օղակը Յողիկ Պողոսյանի ղեկավարությամբ 165 ց դիմաց ստացավ 463 ց շաքարի ճակնդեղ¹³։

1943 թ. բերքահավաքի աշխատանքներին կոմերիտականների ու երիտասարդների ակտիվ մասնակցությունը ապահովելու համար Աշտարակի շրջանի ԼկեՄ կազմակերպությունն արժանացավ ՀամլկեՄ Կենտկոմի պատվոգրին¹⁴, նույն պարզեին արժանացավ նաև Արթիկի շրջանի Գետափ գյուղի կոմերիտական կազմակերպությունը, իսկ Թալինի շրջանի Զիթհանքով գյուղի կոմերիտական կազմակերպությունը շահեց ՀամլկեՄ Կենտկոմի փոխանցիկ Կարմիր դըրուցը¹⁵։

Սոցիալիստական մրցությունում բարձր ցուցանիշների հասան նաև Ալավերդու շրջանի Օձուն, Հագլի, Շաթեր, Մղարբ

13 ՀՊՊԿ արխիվ, ֆ. 259, գ. 1, թ. 13—14։

14 ՀՊՊԿ արխիվ, ֆ. 272, գ. 1, թ. 10։

15 «Սովետական Հայաստան», 29 հոկտեմբերի 1943 թ.։

գյուղերի և և Եղեգնաձորի շրջանի Արփա գյուղի կոլտնտեսությունները:

Գորիսի շրջանի կոլտնտեսականները մտնելով մրցության մեջ, իրենց դիմումում մրցակից սիսիանցիներին գրեցին. «Ընկեր կոլխոզնիկներ և կոլխոզնիկուհիներ, զաշտում աշխատենք այնպես, ինչպես մեր կարմիր մարտիկները ռազմաճակատում կովում են ֆաշիստական հորդաների դեմ: Դաշտերում և ֆերմաներում կատարվող ազնիվ աշխատանքով օգնենք մեր հերոսական Կարմիր բանակին՝ արագացնելու գերմանաֆաշիստական զորքերի վերջնական ջախջախումը և սովետական հողը հիտլերյան սրիկաներից աղատագրելու պատմական միհիայի իրագործումը»¹⁶:

Էջմիածնի Լենինի շքանշանակիր «Անսատված» կոլտընտեսության (Նախագահ՝ Մաթեսոս Նալբանդյան) աշխատավորները քննության առնելով անդրկովկասյան ժողովուրդների հակաֆաշիստական միտինգի դիմումը, իրենց նամակում գրեցին. «Մենք՝ կոլխոզնիկներս ու կոլխոզնիկուհիներս, լիովին գիտակցում ենք, որ թշնամուն ջախջախելու համար կպահանջվեն դեռ շատ զոհեր, ավելի լարված մարտեր ռազմաճակատում և ավելի լարված աշխատանք թիկունքում: Եվ մենք այդ բոլոր դժվարությունները կհաղթահանք, ինչպիսի փորձությունների միջոցով էլ անցնելու լինենք»¹⁷:

Սոցիալիստական մրցությունը դուրս եկավ Հանրապետության շրջանակներից և սկսեց ծավալվել նաև տարբեր հանրապետությունների միջև: Այսպիս, դեռևս 1938 թ. մըրցակցում էին Վրացական ՍՍՀ Մախարաձիր շրջանի նախաների գյուղի և Հայկական ՍՍՀ Հոկտեմբերյանի շրջանի նալբանդյան (Նախկին՝ Փոքր Շահրիար) գյուղի կոլտնտեսությունները, Վրացական ՍՍՀ Լյուբսկմբուրգի շրջանը մըրցում էր Հայկական ՍՍՀ Կոտայքի շրջանի հետ, իսկ Աղբե-

16 «Ստալինյան դրոշով», 28 հունիսի 1942 թ.: ՄԼԻ Հայկական մասնակտությունի կուսարիսիվ, ֆ. 15, ց. 3, գ. 90, թ. 4:

17 «Սովետական Հայաստան», 30 օգոստոսի 1942 թ.:

բեջանական ՍՍՀ Ղազախի շրջանը՝ Հայկական ՍՍՀ հղկանի շրջանի հետ:

Բոլոր կոլտնտեսությունների, շրջանների և հանրապետությունների հողի աշխատավորները պայքարում էին գյուղատնտեսական ապրանքների արտադրության ավելացման համար:

Մտնելով ծավալվող նախամայիսյան սոցիալիստական մրցության մեջ, Ստեփանավանի շրջանի աշխատավորները ժամկետից շուտ ավարտեցին 1943 թ. գարնանացանը և սլանով նախատեսված 4620 հա-ի դիմաց ցանեցին 4675 հա տարածություն: Գարնանացանի աշխատանքներում հատկապես աշքի ընկավ Վարդաբլուր գյուղը: Գյուղի կոլտնտեսականներն օրական ցանում էին 50 հա տարածություն: Առաջին ինն օրվա ընթացքում վարդաբլուրցիները ցանեցին ավելի քան 400 հա տարածություն: Կիրովականի շրջանի հետ կնքած պայմանագրով Ստեփանավանի շրջանի կոլտնտեսականները պարտավորվել էին 1943 թ. մեկ հեկտարից ստանալ 115 ց կարտոֆիլի բերք: Բարձր բերքատվության համեմու համար ստեփանավանցիները դաշտերը մշակեցին ագրոկանոնների համաձայն, և, օգտագործելով առաջավոր բրիգադների ու օղակների փորձը՝ հասան բարձր բերքատվության: Կուրթան գյուղի կոլտնտեսությունը պլանավորված 115 ց փոխարեն մեկ հեկտարից հավաքեց 250 ց կարտոֆիլ: Կուրթանցիներն այդպիսի արդյունքի հասան պատրազմի տարիներին հանրապետությունում տարածված աշխատանքի գործափարձային սիստեմի կիրառման շնորհիվ, նույն շրջանի Ռուսական գյուղի Սպանդարյանի անվան կոլտնտեսության կաթնաանասնաբուծական ֆերմայի աշխատողները պլանով նախատեսված 630 անասունի փոխարեն աճեցրին 703 գլուխ անասուն¹⁸:

Զգալի հաջողությունների էին հասել նաև ստեփանավանցիների հետ մրցող կիրովականցիները: Նրանք նախատեսված ժամկետին ավարտեցին գարնանացանը և կազմակերպված անցան ցանքների մշակմանը: Շրջանի Համդա-

18 Տե՛ս «Սոցիալիստական անասնապահություն», 8 հունիսի 1943 թ.:

շիման գլուղի կոլտնտեսությունը 400 հա տարածությունից
ստացավ կարտոֆիլի ռեկորդային բերք:

Սոցիալիստական մրցությունում մեծ հաջողությունների
հասան մրցակիցներ՝ Հոկտեմբերյանի շրջանի Նալբանդյան
և Մախարաձեի շրջանի Նաթաների գյուղերի կոլտնտեսա-
կանները: Մրցությունը էլ ավելի ամրապնդեց բարեկամա-
կան սերտ կապերն անդրկովկասյան հանրապետությունների
միջև: Նրանք փորձի փոխանակմամբ օգնում էին միմյանց,
սովորում իրարից: Վրացի եղբայրները նալբանդյանցիներին
ուղղված նամակում գրում էին. «Ընթացիկ տարում մենք
պետությանը հանձնել ենք 680 հազար կտ կանաչ թեյատերեւ
և լրացուցիչ կերպով կտանք 280 հազ. կտ թեյատերեւ, միջին
հաշվով 4200 կտ մեկ հեկտարից: Բացի դրանից, մենք ուղ-
մանակատին և մեր երկրին կտանք 9 մլն ցիտրուսային
պտուղ: Մենք մեկ հեկտարից կտանանք միջին հաշվով մոտ
20 ց. հացահատիկ, անասնաբուծության զարգացման պլա-
նը 1942 թ. կկատարենք ժամկետից երեք ամիս առաջ՝ սեպ-
տեմբերին: Նույնպես ժամկետից երեք ամիս առաջ կկատա-
րենք պետության հանդեպ մեր ստանձնած բոլոր պարտա-
վորությունները, կհանձնեք 4400 կտ միս, 1100 կտ պանիր և
այլն»¹⁹:

Կնքված պայմանագրով նալբանդյան գյուղի կոլտնտեսա-
կանները պարտավորվել էին 1943 թ. բամբակի միջին բեր-
քատվությունը հեկտարից հասցնել 20 ցենտների: Իրենց
խոստումը կատարելու համար նրանք օրինակելի ձեռվ
կազմակերպեցին բամբակինու մշակումը, հատուկ ուշադրու-
թյուն դարձնելով բամբակինու օժանդակ սնուցման վրա:
Այդ նպատակով օգտագործեցին տեղական և հանքային պա-
րարտանյութեր: Բարձր բերքի համար մղվող մրցությունը
ոգեսրել էր բոլորին: Ամեն մի կոլտնտեսական իր պատվի
գործն էր համարում մրցությունից հաղթող դուրս գալ: Եվ
իրոք, նալբանդյանցիները ետ չմնալով իրենց մրցակիցնե-
րից, 1943 թ. գյուղատնտեսական տարին փակեցին բարձր
ցուցանիշներով:

19 «Մովետական Հայաստան», 9 սեպտեմբերի 1942 թ.:

Սոցիալիստական մրցությունը լայն կերպով ծավալվեց Հատկապես 1943 թ. աշնանը, երբ անդրկովկասյան հանրապետությունների բոլոր շրջաններում ու կոլտնտեսություններում սկսեց քննության առնվել Աղբբեշանի Աղդամի շրջանի կոլտնտեսականների դիմումը՝ սովետական բանակին օգնելու և սոցիալիստական մրցությունը լայնորեն ծավալելու մասին։ Աղդամցիներին հետեւցին Հայաստանի Գուգարքի (Նախկին՝ Կիրովական) շրջանի Համզաշիման, Ֆիոլետովո, Ղշլաղ, Լեռնուտ (նախկին՝ Հաշիղարա) գյուղերի և Աղինի շրջանի բոլոր կոլտնտեսությունները։ Մտնելով մրցության մեջ, նրանք նոր պարտավորություններ ստանձնեցին և այն կատարեցին մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 26-րդ տարեդարձը։ Աղինցիները մինչև հոկտեմբերի վերջը պետությանը հանձնեցին 7200 փութետավատ, ավարտեցին նաև շաբարի ճակնդեղի բերքահավաքը և կատարեցին պետության հանձնման պլանը։ Աղինցիներն իրենց պարտավորությունները կատարեցին նաև անսանաբուժության ղարգացման գծով։ Նրանք 1943 թ. պետական պլանը գերակատարեցին և նախորդ տարվա համեմատությամբ աճեցրին ավելի քան 1000 մանր և 300 գլուխ խոշոր եղջյուրավոր անասուն։

Աղդամցիների դիմումին նույն ձևով պատասխանեցին նաև Ախուրյանի, Եղեգնաձորի, Իջևանի, Ալավերդու, Էջմիածնի շրջանների կոլտնտեսականները։

Ախուրյանի շրջանում լայնորեն ծավալվեց հինգհարյուրականների շարժումը։ Շրջանի Կույբիշևի անվան կոլտնտեսությունում հինգհարյուրական դարձավ ճակնդեղագործուհի Դուխիկ Հարությունյանը։ Նրա ղեկավարած բերքի երիտասարդական ճակատային օղակի հետ մրցում էր նույն կոլտնտեսությունում աշխատող Սաղիկ Պետրոսյանի օղակը։ Մրցությունում հաղթեց Դուխիկ Հարությունյանի օղակը, որը ստանձնած 500 ց փոխարեն 1944 թ. ստացավ 567 ց ճակնդեղ և պարզեցատրվեց «Աշխատանքային գերազանցու-

թյան համար» մեղալով²⁰: 1944 թ. միայն Կույբիշևի կողմանությունը երկրին տվեց 14825 ց ճակնդեղ:

Հինգհարյուրականների մրցությունը լայնորեն ծավալվեց Սպիտակի շրջանում: Այստեղ ճակնդեղագործները 1944 թ. տնտեսական տարին փակեցին բարձր ցուցանիշներով և պետությանը հանձնեցին ամբողջ հանրապետության հանձնած ճակնդեղի 33,4 % -ը:

Հանրապետության կոլտնտեսականները բոլոր կուլտուրաների գծով 1943 թ. հավաքեցին առատ բերք, պատվով կարտարեցին իրենց պարտավորությունները պետության առջև: Բացի այդ, կոլտնտեսությունները ազատ վաճառքի կարգով պետությանը հանձնեցին 400 հազ. փութ հացահատիկ, 5000 տ կարտոֆիլ, բանակի ֆոնդը մուծեցին 123 հազ. փութ հացահատիկ, կարտոֆիլ և զյուղատնտեսական այլ մթերքներ:

Ամփոփելով 1943 թ. զյուղատնտեսական տարվա արդյունքները և բարձր գնահատելով Հայաստանի գյուղատնտեսության աշխատողների անձնուրաց հայրենասիրական աշխատանքը, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության 1944 թ. փետրվարի 8-ի հրամանագրով՝ հանրապետության գյուղատնտեսության 389 առաջավորներ պարզեատրվեցին ՍՍՀՄ շքանշաններով ու մեղալներով: Նրանցից 21-ը արժանացան կենինի, 44-ը՝ Աշխատանքային Կարմիր դրոշի, 88-ը՝ Պատվո նշան շքանշանների, իսկ 126-ը՝ «Աշխատանքային գերազանցության համար» մեդալի: Կենինի շքանշանով պարզեատրվեցին կոմբայնավար Աշոտ Նիկոյանը (Թալինից), տրակտորիստ Անդրանիկ Սարգսյանը (Էջմիածնից) օղակավարուհի՝ Հայկանուշ Գալստյանը (Ալավերդուց), կըթվորուհի Քսենյա Եկիմովան (Կալինինուից), այգեգործ Վաղարշակ Մինասյանը (Արտաշատից), կոլտնտեսության նախագահ Մաթևոս Նալբանդյանը (Էջմիածնից) և ուրիշներ:

Աշխատանքային Կարմիր դրոշի շքանշանով պարզեա-

20 Լ. Վ. Մարտիրոսյան, Առվետական Հայաստանի կանայք Հայրենական մեծ պատերազմի տարիներին, Երևան, 1968, էջ 86:

տըրվեցին Այգին Մահմեդովը (Վարդենիսից), Սավելիա Խաչիոնովը (Արտաշատից) և ուրիշներ²¹:

1944 թ. փետրվարի 4-ին ՀամԿ(բ)կ Կենտկոմը քննության առնելով Հայաստանի գյուղատնտեսության վիճակի ու նրա խնդիրների հարցը, հանրագումարի բերեց պատերազմական երեք տարիների աշխատանքը, կոնկրետ միջոցառումներ մշակեց նրա վիճակը հետագայում բարելավելու համար: ՀամԿ(բ)կ Կենտկոմը նշեց, որ Հայկական ՍՍՀ կողմանտեսությունները հաջողությամբ հաղթահարելով պատերազմի ժամանակվա դժվարությունները, կատարեցին պետությանը գյուղատնտեսական մթերքներ հանձնելու իրենց պարտավորությունները: 1943 թ. պետական հանձնումների պլանը կատարվել է. հացահատիկինը՝ 104, կարտոֆիլինը՝ 110,9, մսինը՝ 100,7, կաթինը՝ 100,5 % -ով, կոլտնտեսությունները պետական պարտավորություններից բացի պաշտպանության ֆոնդը մուծեցին 123 հազ. փութ հացահատիկ և կարտոֆիլը²²:

1944 թ. սովետական բանակի տարած փայլուն հաղթանակները մեծ ոգեսրություն առաջացրին թիկունքային աշխատանքներում: Գարնանային գյուղատնտեսական աշխատանքների նախօրյակին հրապարակվեց Հայկական ՍՍՀ Ժողովածովեատի որոշումը՝ «1944 թ. բարձր բերքի և կոլխոզային անասնաբուծության վերելքի համար Հայկական ՍՍՀ կոլխոզների սոցիալիստական մրցության պայմանները»²³: Հայաստանի կոլտնտեսականները մեծ ոգեսրությամբ ընդունեցին մրցության այդ պայմանները և ամենուրեք լայն պայքար ծավալեցին Ժողովածովեատի սահմանած փոխանցիկ կարմիր գրոշը նվաճելու, մրցության մեջ հաղթողի փառքին արժանանալու համար: Այդ մրցությունն ավելի լայնորեն ծավալվեց Ստեփանավանի, Ալավենդրու, Կիրովականի, Գորիսի,

21 «Правда», 9 февраля 1944 г.

22 Մէի Հայկական մասնաճյուղի կուսարիսիվ, ֆ. 1, ց. 33, գ. 17, թ. 117:

23 «Սովետական Հայաստան», 14 մայիսի 1944 թ.:

Կալինինոյի, Աշտարակի, Սիսիանի, Հոկտեմբերյանի, Շամշադինի կոլտնտեսություններում:

Պետության հանգեց ունեցած պարտավորությունները կոլտնտեսականները կատարեցին պատվով: Նրանք ուզմական ձևով հավաքեցին 1944 թ. բերքը և բանակին տվեցին ավելի շատ պարենամթերք: Հատկապես բարձր ցուցանիշների հասան հանրապետության անասնապահները: Անասնապահական շրջանների կոլտնտեսությունները ուժեղ պայքար ծավալեցին ֆերմաններում, բրիգադներում՝ անասնապահության զարգացման 1944 թ. պետական պլանի կատարման, մատղաշների պահպանման և անասունների մթերատվության բարձրացման համար:

Անասնապահության բնագավառում հաջողության հասնելու առաջին նախապայմանը կերի անհրաժեշտ, կայուն բազայի ստեղծումն էր: 1943 թ. հանրապետությունը խոտհավաքի պլանը կատարեց 125,5 % -ով, որի շնորհիվ կուտակվեց մեծ քանակությամբ կեր, պատրաստվեց 89.900 տ սիլոս, իսկ Կալինինոյի, Ստեփանավանի, Շամշադինի, Իշխանի շրջանները գերակատարեցին կերի կուտակման և սիլոսացման պլանները: Դրա հետ մեկտեղ վերոհիշյալ շրջանների կոլտնտեսությունները ժամանակին և բարձր որակով կատարեցին անասնապահական շենքերի կառուցման և եղած գոմերի վերանորոգման պլանները: Ապահովելով հանրային հոստի կուշտ և տաք ձմեռումը, կիրառելով ֆերմաններում զորականիկական և անասնաբուժական միջոցառումներ, կոլտնտեսություններում մեծ աշխատանք ծավալվեց անասունների զիմաքանակի պահպանման և մթերատվության բարձրացման համար:

Հայաստանի կոլտնտեսականները, կենսագործելով ՀԿ(Բ)Կ Կենտկոմի XVIII պլենումի, ինչպես նաև ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի և ՍՍՀՄ Ժողկոմսովետի «1944 թ. կոլխոզներում և սովորողներում անասունների զիմաքանակի ավելացման և մատղաշների պահպանման մասին» որոշումները, մեծ զանք գործադրեցին անասնապահության զարգացման պետական պլանը կատարելու ուղղությամբ: Մինչև հունիսի 1-ը պե-

տական պլանը խոշոր եղջյուրավոր անասունների գծով կատարվեց 100,6 % -ով, մանր եղջյուրավոր անասուններինը՝ 117 % -ով, խողերինը՝ 108,5 % -ով: Անասունների ծինը բարեհաջող կազմակերպելու հետևանքով կոլտնտեսություններում պահպանվեցին ծնված հորթերի 96,6 % -ը, գառների և ուլերի՝ 97,3 % -ը, մտրուկների՝ 94,4 % ը²⁴:

Անասնապահության զարգացման պետական պլանների կատարման և մատղաշների պահպանման գործում աշխի ընկնող ծառայություն մատուցեցին Ստեփանավանի շրջանի կոլտնտեսականները: Ստեփանավանում խոշոր եղջյուրավոր անասունների գլխաքանակն ավելացավ 104,7 % -ով, մանր եղջյուրավոր անասուններինը՝ 137,5 % -ով, խողերինը՝ 105,6 % -ով, խեկ ձիերինը՝ 102,2 % -ով: Ստեփանավանից ետ չէին մնում կալինինոյի և Սիսիանի կոլտնտեսությունները:

1944 թ. աշնանը իրար ետևից հրապարակվեցին Ուկրաինայի, Կրասնոդարի երկրամասի, Կիրովի, Ռոստովի և Սարատովի մարզերի կոլտնտեսականների և կոլտնտեսութինների դիմումներն՝ ուղղված Սովետական Միության բոլոր կոլտնտեսականներին, կոլտնտեսութիններին, տրակտորիստներին, կոմբայնավարներին, մեքենավարներին, անասնաբույժներին, գյուղատնտեսության բոլոր աշխատողներին: Դիմումներում կոչ էր արվում արժանավայել դիմավորել Մեծ Հոգածեմբերի 27-րդ տարեդարձը, ժամկետին կատարել պետական բոլոր պարտավորությունները, անկորուստ հավաքել ամբողջ բերքը և պլանից դուրս սովորական բանակի ֆոնդի օգտին հանձնել հաղարավոր փութ հացահատիկ²⁵: Արձագանքելով այդ դիմումներին, Կոտայքի շրջանի Հացավան (նախկին՝ Ավդալար) գյուղի կոլտնտեսականները պլանից դուրս բանակի ֆոնդի օգտին հանձնեցին 700 փութ հացահատիկ և իրենց պատասխան նամակում գրեցին: «Մենք ի սրտե ողջունում ենք եղբայրական Ուկրաինայի, Կրասնոդարի ու Ռոստովի կոլխոզնիկների ու կոլխոզնիկութինների նախաձեռնությունը, որը արտահայտում

24 «Սովետական Հայաստան», 11 օգոստոսի, 1944 թ.:

25 «Սովետական Հայաստան», 17 հոկտեմբերի 1944 թ.:

է մեր երկրի կոլխոզային բոլոր աշխատավորների նվիրական ձգտումներն ու ցանկությունները։ Մենք ոչինչ չենք խնայի քաջարի Կարմիր բանակի համար»²⁶։ Էջմիածինցիները Սարատովի մարզի Վոսկրեսենսկի շրջանի կոլտնտեսականների դիմումին տրված իրենց պատասխանում գրում էին, «Մենք ի սրտե ողջունում ենք վոսկրեսենսկցիների Հայրենասիրական նախաձեռնությունը և Հավանություն ենք տալիս նրանց կոչին։ Մեր կոլխոզն այժմ արդեն գերակատարել է պետությանը բամբակ հանձնելու տարեկան պլանը։ Մենք կատարել ենք նաև պետությանը խաղող և գյուղատնտեսական այլ մթերքներ հանձնելու տարեկան պլանը։ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության՝ 27-րդ տարեդարձը մենք կնշանավորենք նոր նվաճումներով և սոցիալիստական մրցությունից գուրս կզանք Հաղթանակով»²⁷։

1945 թ. մարտին Հայկական ՍՍՀ ժողկոմսովետը ամփոփեց սոցիալիստական մրցության 1944 թ. արդյունքները։ Անասուններին ձմռան պայմաններում պահելու, մթերատվության բարձրացման, անասնակերի մթերման և պետական պարտավորությունների կատարման գծով անասնապահության զարգացման բնագավառում ձեռք բերած հաջողությունների, բարձր ցուցանիշների համար հաղթող ճանաշվեցին և հանրապետության ժողկոմսովետի փոխանցիկ դրոշը շահեցին Կալինինոյի շրջանի Կալինինո գյուղի «Ավանդագրդ» և Սիսիանի շրջանի Բորիսովկա գյուղի «Ավանդագրդ» կոլտնտեսությունները։ Ժողկոմսովետի նույն որոշման մեջ նշվեց նաև 20 այլ կոլտնտեսությունների լավ աշխատանքը, որոնց թվում էին Ստեփանավանի շրջանի Միկոյանի և Մոռավյանի անվան, Կալինինոյի շրջանի «Կոլեկտիվնի տրուट» և Իլյիշի անվան կոլտնտեսությունները²⁸։

ՍՍՀՄ Պաշտպանության պետական կոմիտեն 1944 թ. ապրիլի 25-ին որոշեց բերքատվության բարձրացման, մատղաշի աճեցման, մսի մթերման և ընդհանրապես պետական

26 «Սովետական Հայաստան», 17 հոկտեմբերի 1944 թ։

27 «Սովետական Հայաստան», 4 հոկտեմբերի 1944 թ։

28 ՀՀՍԴՊԿ արխիվ, ֆ. 123, գ. 5, գ. 1127ա, թ. 8։

պլանների ժամանակին և անշեղ կատարման համար սոցիալիստական մրցությունում հաղթող ճանաչված կոլտնտեսություններին պարզեատրել փոխանցիկ կարմիր դրոշով։ Բարձր գնահատելով Հայկական ՍՍՀ հանրային անասնապահության բնագավառում 1944 թ. ընթացքում ձեռք բերած հաջողությունները, ՍՍՀՄ ժողովածովեան իր որոշմամբ կոլխոզային անասնաբուծության վերելքի մրցության հաղթողների շարքը դասեց նաև Հայկական ՍՍՀ-ն, նրան արժանացնելով Պաշտպանության պետական կոմիտեի Փոխանցիկ դրոշին և դրամական մրցանակի։ Անասնապահության բնագավառում ձեռք բերած ցուցանիշների համար Պաշտպանության պետական կոմիտեի Փոխանցիկ դրոշին արժանացավ հանրապետության Ստեփանավանի շրջանը²⁹։ Այդ կապակցությամբ Ստեփանավանի շրջկոմի քարտուղար Գ. Մանուկյանը «Սովետական Հայաստան» թերթում գրեց. «Նախապատերազմյան ժամանակաշրջանի համեմատությամբ շրջանում խոշոր եղյուրավոր անասունների թիվն ավելացել է 1630 գլխով, մանր եղյուրավոր անասուններինը՝ 6738 գլխով, խողերինը՝ 642 գլխով, մեղվի ընտանիքներինը՝ 426-ով... ներկայումս կոլխոզները պլանից ավելի ունեն 746 խոշոր եղյուրավոր անասուն, 6074 մանր եղյուրավոր անասուն, 380 խոզ և 38 ձի։ Հիշատակության արժանի է այն փաստը, որ անասնաբուծության դարգացման ընթացիկ տարվա պլանը կատարել և գերակատարել են շրջանի բոլոր կոլխոզները»³⁰։ Ստեփանավանի շրջանն այդպիսի բարձր ցուցանիշների հասավ Հայրենասեր կոլտնտեսականների անձնվեր աշխատանքի շնորհիվ։ Այդ գործի առաջամարտիկներն էին Կաթնաղբյուր զյուղի կոլտնտեսության տոհմաբուծական ֆերմայի անասնապահ Գ. Խամբերդյանը, որն իր խնամած անասուններից ստացած 63 հորթը լրիվ պահպանել էր և նրանցից յուրաքանչյուրի օրական աճը հասցը ել 600—700 գրամի, նախատեսված 450-ի փոխարեն։ Ստեփանավանի Ստալինի անվան կոլտնտեսության կթվորուհի

29 «Սովետական Հայաստան», 20 մարտի 1945 թ.։

30 «Սովետական Հայաստան», 8 օգոստոսի 1944 թ.։

Տ. կտորվենկոն իր խնամած 11 կովից ստացել էր 11 հորթ: Պլանով նախատեսված 15400 լիտր կաթի փոխարեն անվանի կրվորուհին իր խնամած կովերից ստացել էր 15545 լիտր կաթ: Աւշագրավ է նույն շրջանից Լեզան գյուղի կոլտնտեսության լավագույն աշխատանքը: Այստեղ 1943 թ. ունեցած 900 ոչխարի փոխարեն 1944 թ. ստացան 2160 ոչխար: Լեզանցիները 100 մայր ոշխարից ստացել էին 102 գառ: Յուրաքանչյուր գառի օրվա աճը հասնում էր 180 գրամի, նախատեսված 90 գրամի փոխարեն: Յուրաքանչյուր ոշխարի առաջին խուղից ստացել էին ավելի քան 1,5 կգ բուրդ:

Հետագայում Հայկական ՍՍՀ ժողկոմսովետը ամփոփելով մրցության 1945 թ. արդյունքները, հաղթող ճանաչեց և ժողկոմսովետի Փոխանցիկ դրոշը հանձնեց Հետեալ կոլտնտեսություններին. Հացահատիկային կուլտուրաների գծով՝ Թալինի շրջանի Զիթհանքով գյուղի Բուղյոննու անվան, Վարդենիսի Մեծ Մազրա գյուղի կոլտնտեսություններին, բամբակի գծով՝ Հոկտեմբերյանի շրջանի Շենավան (Նախկին՝ Քյալագարիս) գյուղի Մալիսի մեկի անվան կոլտնտեսությանը, շաքարի ճակնդեղի գծով՝ Ախուրյանի շրջանի Ազգատան (Նախկին՝ Փ. Ղարաբիլիսա) գյուղի կոլտնտեսությանը, ծխախոտի գծով՝ Շամշադինի շրջանի Մոսեսկեղի «Ինտերնացիոնալ» կոլտնտեսությանը, կարտոֆիլի գծով՝ Կրասնոսեկսկի շրջանի Օրջոնիկիձեի գյուղի «Կիմ» կոլտնտեսությանը, խաղողագործության գծով՝ Արտաշատի շրջանի Նորաշեն գյուղի Աթարբեկյանի անվան կոլտնտեսությանը, անասնաբուծության գծով՝ Սիսիանի շրջանի Բորիսովկա գյուղի «Ավանգարդ» և Կալինինոյի շրջանի Կալինինո գյուղի կոլտնտեսություններին: Սրանցից բացի նշվում են 93 այլ կոլտնտեսություններ, որոնք անասնաբուծության պլանների կատարման համար օրինակելի աշխատանք էին կատարել³¹:

Այս հաջողություններին մեր հանրապետության կոլտնտեսությունները հասան կոմունիստական կուսակցության ամենօրյա ղեկավարության և կոլտնտեսականների տքնացան աշխատանքի շնորհիվ:

31 «Սովետական Հայաստան», 20 հունիսի 1945 թ.:

Սովետական Միության Հայրենական մեծ պատերազմի տարիներին, հաղթահարելով ստեղծված բոլոր դժվարությունները, նյութական զրկանքները, սովետական աշխատավոր մարդիկ թիկունքում հայրենասիրության, ժողովրդասիրության, հասարակական շահերին ծառայելու վառ օրինակներ ցուցաբերեցին: Նրանք աշխատանքային ճիգերի ամենավերջին լարումով, հոգու արիությամբ արեցին այն ամենը, ինչ կարող էին և պետք էր անել ուղմանակատին օգնելու, պատերազմը հաղթական ավարտին հասցնելու և սովետական հայրենիքը աղատագրելու համար: Թիկունքի աշխատավորության կողմից ուղմանակատին ցուց տված նման օգնությունը իրականացավ տարբեր ձևերով:

Մեր լայնածավալ հայրենիքի բոլոր հանրապետություններում, երկրամասերում, մարզերում ու շրջաններում բանվորները, կոլտնտեսականներն ու մտավորականները հանդիս եկան համաժողովրդական օգնության հատուկ ֆոնդ ստեղծելու առաջարկով: Քաղաքներից ու գյուղերից, ուղմանակատից ու թիկունքից հազարավոր նամակներ էին ստացվում երկրի պաշտպանության և սովետական բանակի ֆոնդի կազմակերպման առաջարկներով: Այդ նամակներում կանաչք ցանկություն էին հայտնում պաշտպանության ֆոնդին հատկացնել մեկ օրվա աշխատավարձն ու իրենց զարդերը, երեխաները՝ կոպեկառկոպեկ կուտակած դրամը, ծերունիներն՝ իրենց կենսաթոշակի մի մասը և այլն: 1941 թ. հուլիսի վերջին սովետական երկրի աշխատավորներն ստեղծեցին «Երկրի պաշտպանության ֆոնդ»:

Երկրի պաշտպանության ֆոնդի ստեղծումը ծագեց տարերայնորեն, շուտով նրան մեր կուսակցությունն ու կառավարությունը ավեցին համապատասխան կազմակերպական բնույթ:

Այդ օրերին «Պրավդան» իր առաջնորդողներից մեկում գրում էր. «Պաշտպանության ֆոնդը մի նոր արտահայտություն է այն բանի, որ մեր ժողովուրդը պատրաստ է բոլոր

ուժերը նվիրել ամենառխերիմ թշնամու նկատմամբ հաղթա-
նակ տանելու համար»³²:

Մոսկվայի ավտոգործարանի կոմերիտական խմբակ-
ներից մեկն իր նամակի մեջ հայտարարում է. «Մեր ժողո-
վըրդի լավագույն զավակները կարմիր բանակի, կարմիր
նավատորմի և ավիացիայի շարքերում կռվում են սանձար-
ձակ ֆաշիստական զազանի գեմ: Մարտիկների ձեռքն էլ
ավելի շատ նորագույն վենք տալու համար մենք յուրա-
քանչյուր ամիս պաշտպանության ֆոնդը կմուծենք մեր եր-
կու օրվա աշխատավարձն այնքան ժամանակ, մինչեւ որ
ոչնչացվի անիծյալ թշնամին»³³:

Նշելով «երկաթուղային օրը», հարյուր հազարավոր
երկաթուղային աշխատողներ օդուստոսի Յ-ին կազմակեր-
պում են կիրակնօրյակ: Այդ օրվա վաստակած միջոցներն
ամբողջովին հատկացվեցին երկրի պաշտպանության ֆոն-
դին: Շուտով այս նախաձեռնություններին մասնակից դար-
ձան Սովետական Միության բոլոր աշխատավորները:

Հայրենիքի պաշտպանության ֆոնդի ստեղծման միջո-
ցառումը լայն արձագանք գտավ նաև Հայաստանում: Հա-
յաստանի աշխատավոր գյուղացիությունը, Հանրապետու-
թյան բանվոր դասակարգի ու մտավորականության հետ
միասին, մեծ ակտիվությամբ ու անձնազոհությամբ մաս-
նակցեց այդ հայրենանվեր գործին: Ամենուրեք գումարվե-
ցին բազմամարդ միտինգներ, որոնց մասնակից կոլտնտե-
սականներն ու գյուղի աշխատավորներն իրենց խնայողու-
թյուններից երկրի պաշտպանության ֆոնդին նվիրում էին
մեծ քանակությամբ հացահատիկ, յուղ, պանիր, միս, կան-
խիկ դրամ, աշխօր և այլն: Այսպես, Թալինի շրջանի կոլ-
տնտեսություններն ու կոլտնտեսականները երկրի պաշտպա-
նության ֆոնդին նվիրեցին 35 հազ. ոուրլի կանխիկ դրամ,
1200 գլուխ ոշխար, 400 կգ յուղ, 410 կգ պանիր, 500 փութ

32 «Правда», 1 августа 1941 г.

33 նույն տեղում:

Հացահատիկ, 20 հազ. ոռություն փոխառության պարտատոմս և մի գույգ ականջի ոսկյա օղ»³⁴,

Աշնակ գյուղի կոլտնտեսությունը երկրի պաշտպանության ֆոնդին հատկացրեց 5230 ոռություն կանխիկ դրամ և 40 գլուխ ոչխար, Մաստարայի կոլտնտեսությունը՝ 84 գլուխ ոչխար, 100 փութ հացահատիկ: Էջմիածնի շրջանից այդ գործում աշքի ընկան Փարաքարի, Արշալույսի, Ֆրանգանոցի և «Անաստված» կոլտնտեսությունները: «Անաստված» կոլտնտեսությունն այդ ֆոնդի օգտին նվիրեց 5 տ հացահատիկ, 200 կգ բուրդ, 8 հազ. ոռություն կանխիկ դրամ և 15 ոշխար³⁵:

Հոկտեմբերյանի շրջանի Բամբակաշատ գյուղի կոլտնտեսականներն այդ նպատակին հատկացրին 30 հազ. ոռություն կանխիկ դրամ և 388 աշխօրի հասանելիք³⁶:

Առ 23 դեկտեմբերի 1941 թ. Ստեփանավանի շրջանի կոլտնտեսություններն երկրի պաշտպանության և բանակի ֆոնդին հատկացրել էին 1941 կգ շորեն, 39100 կգ կարտոֆիլ, 1898 կգ պանիր, 429 կգ յուղ, 24216 կգ միս, 817 կգ բուրդ և 1000 ձու: Իսկ կոլտնտեսականներն իրենց անձնական միջոցներից հատկացրեցին 8175 աշխօր, 1919 աշխօռ շաբաթօրյակի կարգով, 236120 ոռություն փոխառության պարտատոմս և 36203 ոռություն կանխիկ դրամ³⁷:

Երկրի պաշտպանության ֆոնդի ստեղծման կապակցությամբ միտինգներ գումարվեցին մեր Հանրապետության բոլոր շրջանային կենտրոններում ու գյուղերում, որտեղ ելույթ ունեցողներն իրենց անսահման սերն էին արտահայտում հայրենիքի նկատմամբ, այրող ատելությունը՝ դեպի ուխտադրուժ թշնամին: Նրանք պատրաստ էին դիմելու ամեն տեսակ զոհաբերությունների՝ հայրենիքի պաշտպանության համար: Նրանցից շատ շատերը դիմում էին տալիս ուղմանակատ մեկնելու, հայրենիքի պաշտպանների շարքերը հա-

34 «Սովետական Հայաստան», 5 օգոստոսի 1941 թ.:

35 Նույն տեղում:

36 «Սովետական Հայաստան», 3 օգոստոսի 1941 թ.:

37 ՄԼԻ Հայկական մասնաճյուղի կոսարխիվ, ֆ. 13, ց. 3, գ. 28, թ. 1:

մալրելու համար: Երկրի պաշտպանության ֆոնդին նվիրա-
տվություններ էին կատարում կոլտնտեսականները, աշխա-
տանքի ընդունակները, ծերունիները: Աղինի շրջանի Ղեղաջ
գյուղից 75-ամյա Անդին տատը երկրի պաշտպանության
ֆոնդին նվիրելով 75 ռուբլու փոխառության պարտատոմս,
մեկ գառ, 5 տուփի ծխախոտ, 5 հատ ձեռքի օճառ, մեկ զուգ
բրդյա գուլպա և մեկ զուգ ձեռնոց, զյուղում գումարված
միտինգում հայտարարեց. «Զմենդի գինաք, որ իմ մինու-
ճար տղա, իմ աշքի լույս Տարոնին պախել ու մեծացրիլ իմ
լագիկու ծիկի պես և մկա էլ գացել է Կարմիր բանակ, պախե-
լու մեր չոչ երկրի խորու սահմանները»³⁸:

Միայն 1941 թ. հանրապետության 132 հազ. կոլտնտե-
սականներ իրենց 407 հազ. աշխօրի արժեքը նվիրաբերեցին
պաշտպանության ֆոնդին³⁹:

Ռազմաճակատին ցույց տրվող օգնության մյուս ձեերից
մեկը իրազործվեց սովորական բանակի մարտիկներին ձմե-
ռային տաք հագուստով ապահովելու և նվիր-ծանրոցներ ու-
ղարկելու ձևով: Այդ կամպանիան սկսեց ծավալվել 1941 թ.
սեպտեմբերից: Երկրի պաշտպանության, տաք հագուստի
հավաքման ու նվիր-ծանրոցների ուղարկման գործին հայ
աշխատավոր զյուղացիությունը հանդես բերեց բարձր կազ-
մակերպվածություն: Տաք հագուստի հավաքման կամպա-
նիայի սկզբից մինչև 1942 թ. մայիս ամիսը, ըստ հանրա-
պետական հանձնածողովի տվյալների, Հայաստանի աշխա-
տավորները, զրամի վերածած, հավաքել էին 7 մին 690 հազ.
ռուբլու տաք հագուստ⁴⁰: Խոկ մինչև 1943 թ. միայն կոլտն-
տեսային զյուղացիությունը ուղաքմաճակատ ուղարկեց մեկ
միլիոն կտոր տաք հագուստ, 3 գնացք նվիր-ծանրոցներ և
128 հազար անհատական ծանրոց⁴¹:

Հայաստանում այդ սրբազն գործի կազմակերպիչներն

38 «Սահմանապահ կոլխոզնիկ», 31 հունիսի 1941 թ.:

39 Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հատ. 8, Երևան, 1970, էջ 32:

40 Միևնույն Հայկական մասնաճյուղի կուսարիսիվ, ֆ. 1, ց. 31, գ. 45, թ.
271:

41 «Սովորական Հայաստան», 21 ապրիլի 1943 թ.:

էին Ախուրյանի շրջանի Դյուզքենդ գյուղի կոլտնտեսական-ները: Նրանք իրենց ժողովում կարմիր բանակի մարտիկներին տաք հագուստով ապահովելու մասին հայրենասիրական կոչ ընդունեցին՝ ուղղված Հայաստանի բոլոր կոլտընտեսականներին: Շուտով նրանց օրինակին հետևեցին Արթիկի, Անիի շրջանների կոլտնտեսականները: Այդ կոչին միացան նաև մյուս շրջանները: Տաք հագուստի հավաքման կամպանիան ծավալվեց երկրով մեկ: Ժողովուրդն օգնում էր իր հարազատ բանակին այն ամենով, ինչով կարող էր:

Աշտարակի շրջանի աշխատավորները, հետևելով Ախուրյանի կոլտնտեսականների օրինակին, մինչև նոյեմբերի 24-ը երկրի պաշտպանության ֆոնդին և կարմիր բանակի մարտիկներին տաք հագուստով ապահովելու կամպանիացին հատկացրին 63023 ռուբլի կանխիկ դրամ, 106000 ռուբլու փոխառության պարտատոմս, 7839 աշխօր, 28468 կգ ցորեն, 107 կգ յուղ, 2869 կգ միս, 192 կգ բուրդ, 2475 լիտր գինի, 50 լիտր օղի, 90 կգ պանիր, 2232 կգ խաղող և տաք հագուստ⁴²: Իսկ Ղուկասյանի շրջանի կոլտնտեսականները երկրի պաշտպանության ֆոնդն էին մուծել 150000 ռուբլի կանխիկ դրամ, 180000 ռուբլու փոխառության պարտատոմս, 10632 կտոր տաք հագուստ, 420 գրամ ոսկի, 6000 գրամ արծաթ, 410 գլուխ մանր ու խոշոր եղջյուրավոր անասուն: Միայն 1942 թ. պաշտպանական հետարքներից շրջանը պետությանը հանձնեց 360 ց. հացահատիկ: 1943 թ. պաշտպանության ֆոնդին և ազատագրված շրջաններին օգնելու նպատակով կատարված էր 42 հա ցանքս: Տանկացին շարասյան և ավիոէսկադրիլիացի ֆոնդին Ղուկասյանի շրջանը մուծեց 605000 ռուբլի: Դործող բանակ է ուղարկվել 1505 նվեր-ծանրոց՝ 6020 կգ քաշով: Պետական պարտադիր մթերումներից բացի, ղուկասյանցիները կարմիր բանակի ֆոնդն են

42 ՀՊՊԿ արխիվ, ֆ. 272, գ. 5, թ. 1—3, Աշտարակի շրջանի ողետարխիվ, գ. 5, 2, 22:

մուծել 250 ց միս, 777 ց հացահատիկ և 7870 ց անասնակեր⁴³: Պատկերը նույնն էր համարյա բոլոր շրջաններում:

ՍՍՀՄ ֆինանսների ժողովրդական կոմիսարիատի տրվայալներով, մինչև 1941 թ. սեպտեմբերի 11-ը երկրի պաշտպանության ֆոնդի օգտին մուծվել էր 450,1 մլն. ռուբլի կանխիկ դրամ, 800 դրամ պլատին, 32,1 կգ ոսկի, 1,484 կգ արծաթ, 1,314,012 ռուբլու օտարերկրյա դրամ և 228,3 մլն. ռուբլու պետական փոխառության պարտատոմս: Վերոհիշյալից բացի, զյուղի աշխատավորները հատկացրին նաև 9,315 տ հացահատիկ, 3,800, 5 տ անասուն և թուզուն, 2582 տ կաթ ու կաթնամթերք, բանջարեղեն և զյուղատնտեսական այլ մթերքներ⁴⁴:

Հայաստանի աշխատավորները մինչև 1942 թ. հունվար ամիսը անձնական խնայողություններից պաշտպանության ֆոնդն էին մուծել 14 մլն. 290 հազ. ռուբլի կանխիկ դրամ, 1,320 կգ ոսկի, 150 կգ արծաթ, 5590 ց միս, 4260 կգ բուրդ, 41690 փութ հացահատիկ և այլ մթերքներ⁴⁵:

Երկրի պաշտպանության և կարմիր բանակի ֆոնդի օգտին մինչև 1943 թ. վերջը ամբողջ երկրում հավաքվեց 13 մլրդ. ռուբլի (Հաշված թանկարժեք իրերն ու այլ միջոցները)⁴⁶: Պատերազմի ընթացքում այդ ֆոնդերի օգտին մեր հանրապետության աշխատավորների կողմից նվիրաբերվեց 131.047.000 ռուբլի⁴⁷:

Սովետական զյուղի աշխատավորները դրամական և նյութական միջոցներից բացի, 1942 թ. սկզբից պլանից դուրս սկսեցին ցանել ու մշակել պաշտպանական հեկտարներ, որից ստացված հեկամուտը ևս հատկացվում էր պաշտ-

43 ՄԼԻ Հայկական մասնաճյուղի կուսարիխիվ, ֆ. 86, ց. 11, գ. 87, թ. 16—17:

44 «Правда», 20 сентября 1941 г.

45 «Сообщения Совинформбюро», т. II, 1944, стр. 23.

46 «История Великой Отечественной войны», М., 1961, т. 3, стр. 202.

47 ՏԼՌ Ս. Պ. Աղայան, Ե. Մ. Խալեյյան, Ռուբագծեր Սովետական Հայաստանի, Երրորդ պրակ, Երևան, 1960, էջ 245:

պանության և գերմանաֆաշիստական զավթիչներից ազատագրված շրջանների ու քաղաքների վերականգնման ֆոնդին: Այդ գործի նախաձեռնողները Կրասնոգարի երկրամասի Ն. Կ. Կրուպսկայալի անվան և Յարոսլավլի մարզի Յարոսլավլի շրջանի Գորշիխայի կոլտնտեսության կոլտնտեսականներն էին: Վերջիններս Սովետական Միության բոլոր կոլտնտեսականներին և կոլտնտեսությներին ուղղված իրենց կոչում գրեցին. «...Մենք զիմում ենք բոլորին... յուրաքանչյուր կոլտնտեսությունում պլանից գուրս ցանել պաշտպանության, ֆաշիստական զավթիչներից ազատագրված և ազատագրվող կոլտնտեսություններին ու կոլտնտեսականներին ցուց տրվող օգնության հեկտարներ... և գիրացնել որոշ քանակությամբ անասուններ»⁴⁸:

Սովետական Հայաստանի կոլտնտեսականները լայնորեն արձագանքեցին այդ հայրենասիրական զիմումներին և պաշտպանության ու ազատագրված շրջանների կոլտնտեսությունների օգնության ֆոնդի համար ցանեցին պաշտպանական հեկտարներ: Սակավահող Հայաստանի պայմաններում դա այնքան էլ հեշտ չէր և գերմարդկային լրում էր պահանջում:

Հայաստանում այդ գործի առաջավորները Ստեփանավանի, Արտաշատի, Կոտայքի, Ամասիայի, Մեղրիի շրջանների կոլտնտեսականներն էին: Ստեփանավանի շրջանի Վարդարաբերությունը գյուղի աշխատավորները, միանալով Գորշիխայի կոլտնտեսականներին, իրենց հերթին զիմեցին շրջանի բոլոր կոլտնտեսականներին: Շուտով վարդաբերությունների խրախուսելի նախաձեռնությունը բուռն արձագանք գտավ շրջանի Ուռուտ, Աղարակ, Սվերդլով և մյուս գյուղերի կոլտնտեսություններում: Վարդաբերությունների զիմումը մեծ արագությամբ տարածվեց հանրապետության նաև մյուս շրջաններում: Բոլոր կոլտնտեսություններն սկսեցին պլանից դուրս մշակել պաշտպանական հեկտարներ: Միայն կոմերի-

48 «Սովետական Հայաստան», 24 ապրիլի 1943 թ.:

տականների ուժերով 1944 թ. մշակվեց 1396 պաշտպանական հեկտար⁴⁹:

Հայաստանի բոլոր շրջաններում միայն 1942 թ. ցանեցին 3000 պաշտպանական հեկտար հացահատիկ, ստացվեց 20274 փութթերք⁵⁰: Դրա արժեքը ամբողջովին հատկացվեց պաշտպանության ֆոնդի օգտին: Միայն 1942—1943 թթ. ձմռան ընթացքում Հայաստանի կոլտնտեսություններն ու սովորողները պետությանը հանձնեցին 15,435 տ կաղամբ, սոխ, վարունգ, գազար, սեղանի ճակնդեղ⁵¹, 17998,9 տ կարտոֆիլ:

Անդրկովկասյան ռազմաճակատի ռազմական խորհրդի որոշմամբ 1942 թ. ընթացքում Հայկական ՍՍՀ-ն պետք է ռազմաճակատ ուղարկեր 8000 տ կարտոֆիլ և 6020 տ բանջարեղեն: Նույն թվի նոյեմբերի 10-ի որոշմամբ արդեն ուղարկված էր 7668 տ կարտոֆիլ, 4174 տ բանջարեղեղեն⁵² և ժողկոմսովետի վրա պարտավորություն էր դրված մինչև դեկտեմբերի 15-ը, այսինքն մեկ ամսում, կատարել նախատեսված պլանը: Հայաստանի սպառողական կոռուպերացիայի վարչությունը և մթերումների գրասենյակը ոչ միայն 1942, այլև 1943 և հետագա տարիներին կատարեցին ու գերակատարեցին Անդրկովկասյան ռազմաճակատի զորքերին բանջարաբուտանային կուլտուրաներով մատակարարելու բոլոր պլանները⁵³:

Հայաստանի աշխատավորները 1942 թ. նոր տարվա նախօրյակին ռազմաճակատ ուղարկեցին 29640 նվեր-ծանրոց: Ստանալով այդպիսի նվեր-ծանրոցներ, հեծելազորային միավորումներից մեկի հրամանատար, Սովետական Միության հերոս Բուտիլովը շնորհակալության հետագիր ուղարկեց Հա-

49 ՄԼԻ Հայկական մասնաճյուղի կուսարիսիվ, ֆ. 48, ց. 18, գ. 430, թ. 15:

50 «Սովետական Հայաստան», 25 հոկտեմբերի 1942 թ.:

51 ՀՀՍՇՊԿ արխիվ, ֆ. 113, ց. 33, գ. 35, թ. 137:

52 Նույն տեղում, գ. 161, թ. 24—25:

53 ՄԼԻ Հայկական մասնաճյուղի կուսարիսիվ, ֆ. 1, ց. 32, գ. 65, թ. 27—38:

յաստանի Կենտկոմին. «Ես ծանրոցներ եմ ստացել Սևանի շրջանի աշխատավորներից և իշխանի շրջանի Սպիգեղ և Ռւզութալա գյուղերի կոլխոզնիկներից, կոմերիտականներից և դպրոցականներից... Ընկեր Բուղյոննին խնդրել է իր անունից շնորհակալություն Հայտնել այդ կազմակերպություններին և այդ մասին հրապարակել տեղական մամուլում»⁵⁴:

Դեռևս փետրվարի 19-ին Սովինֆորմբյուրոն հաղորդեց. «Հայաստանի աշխատավորները օրերս հերթական գնացքով նվերներ ուղարկեցին կարմիր բանակին: Նվերների թվում կա 5 տ պանիր, 1 տ կարագ, 5 տ չորացրած միրգ, 10 տակառ դինի և կոնյակ, շատ ծխախոտ և ավելի քան 8 հազ. անհատական ծանրոց: Գնացքին ուղեկցում է Հայաստանի կոլտնտեսականների պատվիրակությունը՝ հին պարտիզան Գալումյանի գլխավորությամբ»⁵⁵: Մի քանի օրում Հայաստանի աշխատավորները սովետական բանակի համար ուղարկել են 24.850 ծանրոց»⁵⁶:

Նվեր-ծանրոցների առաքումը ռազմաճակատ ուժեղացավ Հատկապես սովետական բանակի 24-րդ տարեդարձի նախօրյակին: Այդ ժամանակ ռազմաճակատ ուղարկվեց 31.380 ծանրոց⁵⁷: Հայ աշխատավոր գյուղացիությունն իր բազարի մարտիկներին ուղարկեց 11 վագոն զանազան նվերներ, մոտավորապես 100 տ ընդհանուր քաշով: Այդ կապակցությամբ Սևծովյան նավատորմի բազրաժինը հետևյալ հեռագիրն ուղարկեց Հայաստանի աշխատավորներին. «Զեր նվերներն ստացանք փետրվարի 23-ին, կարմիր բանակի և ռազմածովագին նավատորմի 24-րդ տարեդարձի օրը: Խընդորում ենք մեր սրտագին, մարտական կարմիր նավատորմային ողջույնը և սրտագին շնորհակալությունը հաղորդել Հա-

54 «Սովետական Հայաստան», 10 փետրվարի 1942 թ.:

55 Պատվիրակության մեջ էին՝ Գալումյանը (Արտաշատ), Գ. Բաբաջանյանը (Արտաշատ), Վ. Պողոսյանը (Հոկտեմբերյան), Ա. Եղինյանը (Աշուարակ), Ե. Ներսիսյանը (Շահումյան), Ե. Շահբազյանը (Էջմիածին):

56 «Сообщения Совинформбюро», т. II, 1944, стр. 113.

57 Մէի Հայկական մասնաճյուղի կուսարժիվ, ֆ. 1, ց. 31, գ. 45, թ.

յաստանի բոլոր աշխատավորներին, այն սիրո և հոգատարության համար, որ նրանք ցուցաբերել են դեպի Սևծովյան նավատորմի մարտիկները, հրամանատարներն ու քաղաշխատողները: Զեր ուշադրությունը և հոգատարությունը վկայում են մեր երկրի բազմամիլիոն ժողովրդի հետ կարմիր բանակի և ռազմածովային նավատորմի անխղելի կապի մասին, իսկ դա հաջող պայքարի և գերմանաֆաշիստական օկուպանտների դեմ անկասկած հաղթանակի երաշխիքն է:

Կեցե ՍՍՀՄ-ի ժողովուրդների եղբայրական դաշինքը»⁵⁸:

Պատերազմի սկզբից մինչև 1943 թ. սեպտեմբեր ամիսը Արտաշատի շրջանի աշխատավորները երկրին և ռազմաճակատին տվեցին 5400 վագոն գյուղատնտեսական մթերքներ, որոնցից 6 վագոնը ուղարկվեց Ուկրաինայի պարտիզանական միավորումներից մեկին: Պատվիրակության ղեկավարը Հայաստանից մեկնելիս, ուկրաինական պարտիզանների անունից հայտարարեց. «Մենք զգացված ենք Հայաստանի կոլխոզնիկների եղբայրական ընդունելությամբ: Վերադառնալով մեզ մոտ, մեր ընկերներին կպատմենք դամարլվեցիների անձնվեր աշխատանքի մասին, նրանց բարձր հայրենասիրության և հայրենիքին նվիրված լինելու մասին»⁵⁹:

Սովետական Հայաստանի երիտասարդները նվեր-ծանրոցներ ուղարկեցին Օրջոնիկիձեի երկրամասի և Ղրիմի մարզի պարտիզաններին: Միայն Կովկասի ռազմաճակատի զորքերին և սևծովյան նավատորմայիններին Հայաստանի աշխատավորներն ուղարկեցին ավելի քան 1.136.000 կտոր տաք հագուստ, 206,323 անհատական նվեր-ծանրոց և 45 վագոն սննդամթերք⁶⁰: Մայրական հոգատար ձեռքբրով պատրաստված այդ նվեր-ծանրոցները ուղարկվում էին ռազմաճակատի տարբեր հատվածներ, բոլոր ազգություններին պատկանող մարտիկները մեծ հուղմունքով էին ընդունում այդ ծանրոցները և իրենց հասցեագրված հայրենասիրական նամակները: Այդ ամենը ցույց է տալիս, որ, իրոք, սովետական

58 «Սովետական Հայաստան», 26 փետրվարի 1942 թ.:

59 «Սովետական Հայաստան», 28 սեպտեմբերի 1943 թ.:

60 Մէի Հայկական մասնաճյուղի կուսարժիւլ, ֆ. 1, կապոց 9, թ. 53:

թիկունքն ու ռազմաճակատը կազմում էին մեկ միասնական ճակատ: ՀԿԿ Կենտկոմը դեռևս 1942 թ. օգոստոսին հատուկ կոչով դիմեց Հանրապետության աշխատավորությանը՝ առաջ հագուստի հավաքման կամպանիան կազմակերպված անցկացնելու համար, իսկ հոկտեմբերին անդրադառնալով հանձնաժողովի կատարած աշխատանքներին, նշեց, որ Հայաստանի աշխատավորները մեծ կազմակերպվածությամբ անցկացրին այդ աշխատանքները և հոկտեմբերի վերջին միայն սկզբովյան նավատորմայիններին ուղարկեցին 15.700 ծանրոց, իսկ նոյեմբերին՝ Անդրկովկասյան ռազմաճակատում գործող Հայկական զորամասերին՝ 21.882 ծանրոց՝ 33 տընդհանուր քաշով⁶¹:

Հայտնի է, որ մեր բանակի ժամանակավոր անհաջողությունների պատճառներից մեկը տանկերի և մասամբ ավեցիայի պակասն էր պատերազմի սկզբում: Շուտով ամբողջ երկրում լայն կամպանիա սկսվեց այդ պակասը վերացնելու համար:

Տամբովի մարզի կոլտնտեսականները 1942 թ. նոյեմբերի 12-ին հատուկ կոչով դիմեցին մեր երկրի բոլոր կոլտնտեսականներին՝ իրենց անձնական խնայողությունների հաշվին միջոցներ տրամադրել տանկային շարասյուն կառուցելու նպատակով: Դրանով հիմք դրվեց տանկային շարասյուններ ստեղծելու համար միջոցների հավաքման կամպանիային: Տամբովցիները շուտով հավաքեցին 43 մլն. ռուբլի և խնդրեցին Պաշտպանության պետական կոմիտեից շարասյունն անվանել «Տամբովի կոլտնտեսական»⁶²:

Տամբովցիների այս լավ նախաձեռնությունը կարճ ժամանակում տարածվեց մեր անձայրածիր երկրի բոլոր շըրջաններում: Մեծ ոգեորությամբ սկսվեց ու ծավալվեց տանկային շարասյունների, մարտական ինքնաթիւնների միավորումների և հրանոթների կառուցման համար միջոցների հավաքման կամպանիան: Այդ նպատակով հավաքված միջոց-

61 Նույն տեղում, ց. 31, գ. 277, թ. 76—77.

62 «Великая Отечественная война Советского Союза 1941—1945 гг.» (Краткая история), М., 1967, стр. 287.

ների գումարը 1943 թ. գարնանը արդեն հասավ
7.0 41.230.000 ռուբլու⁶³:

Հայաստանում ևս հայրենասիրական հուժկու շարժում ծավալվեց «Սովետական Հայաստան» ավիոմիավորման, «Հայաստանի կոլտնտեսական», «Հայաստանի կոմերիտական», «Սովետական ուսուցչություն», «Սասունցի Դավիթ», «Պատանի պիոներ» տանկային շարասյուների, «Սովետական Հայաստան» զրահագնացքի և բազմաթիվ այլ շարասյուների միավորումների ու առանձին մարտական մեքենաների կառուցման համար միջոցների հատկացման ուղղությամբ:

Հոկտեմբերյանի շրջանի աշխատավորներն իրենց խնայողությունները ուղարկեցին Պաշտպանության պետական կոմիտեի հասցեով, խնդրելով կառուցել «Հաղթանակ» ինքնաթիռների միավորում և այն հանձնել բանակի գեներալ Բաղրամյանի զորքերին։ Այդ առթիվ Մերձբալթյան առաջին ուղղամաճակատի հրամանատար Հ. Բաղրամյանը Հոկտեմբերյանի շրջկոմին հնառագում է. «Խնդրում եմ հազորդել իմ սրտագին շնորհակալությունը Հոկտեմբերյանի շրջանի աշխատավորներին, որոնք սեփական խնայողություններից հավաքել են 1 մլն. 150 հազ. ռուբլի՝ մարտական ինքնաթիռների էսկադրիլիաներ կառուցելու համար։ Մեր հայրենիքի աշխատավորների ծնողական հոգատարությունը կարմիր բանակի մարտիկների մասին սլարտավորեցնում է մեզ ավելի վճռականորեն շախչախել գերմանական զավթիչներին և ավելի արագորեն ոչնչացնել ֆաշիստական զազանին իր սեփական որշում»⁶⁴։

Արտաշատի շրջանի աշխատավորների միջոցներով Մոսկվայի Հոկտեմբերյան երկաթուղային բաժանմունքի արհեստանոցը կառուցեց «Սովետական Հայաստան» զրահագնացքը⁶⁵, եթե վերջինս պատրաստ էր արդեն ուղղամաճակատ մեկնելու, Հայաստանի կոլտնտեսականները զրահագնացքի

63 «Պրազդ», 5 ապրеля 1943 թ.

64 «Բոլշևիկյան տեմպով», 9 հոկտեմբերի 1944 թ.։

65 Մէր Հայկական մասնաճյուղի կուսարժիվ, ֆ. 1, ց. 31, գ. 40, թ.

անձնակազմին գիմեցին Հատուկ նամակով, որտեղ գրված էր. «Թանկագին ընկերներ, Հայրենիքի հերոսական պաշտպաններ, մեծ է մեր ուրախությունն այն գիտակցությունից, որ մեր Համեստ միջոցները արհեստանոցի կոլեկտիվի շանքերի շնորհիվ վերածվեցին հզոր զենքի, որը էլ ավելի է ուժեղացնում կարմիր բանակի մարտական կարողությունը»:

Հայրենական պատերազմի առաջին օրերից Հայաստանի կոլտնտեսականները ոչ մի շանք չեն խնայել կենսագործելու կուսակցության առաջադրանքները կարմիր բանակին և երկրին ավելի շատ հաց, միս և արդյունաբերությանն ավելի շատ հումք տալու համար: Հայաստանի կոլտնտեսականները և աշխատավորները Հայրենասիրական մեծ խանդավառությամբ օգնել և օգնում են ռազմաճակատին, անում են ամեն բան կարմիր բանակի մարտական կարողությունը էլ ավելի բարձրացնելու համար: ...Այժմ մարտի մեջ է մըտնում «Սովորական Հայաստան» անունը կրող դրահագնացքը: Մենք խորապես համոզված ենք, որ նրա մարտական անձնակազմը բարձր կավագի օտարերկրյա զավթիչների դեմ հայ ժողովրդի մղած հերոսական պայքարի արադիցիաները և լենինի դրոշով հաղթականորեն կուլանա դեպի Արևմտաք, շախչախելու գերմանաֆաշիստական հորդաներին»⁶⁶: Նամակը ստորագրել էին Հայաստանի կոլտնտեսականների 312 ներկայացուցիչներ:

Ախորապես Ստեփանավանի և Իշեանի շրջանների կոլտնտեսականները տանկային շարասյան համար հատկացրին 7.250.000 ռուբլի⁶⁷:

Անիի շրջկենտրոն Մարտիկի կոլտնտեսականներն իրենց ժողովում քննության առնելով «Հայաստանի կոլտնտեսական» տանկային շարասյան ստեղծման համար նվիրատվության հարցը, առաջին իսկ օրը մուծեցին 130000 ռուբլի: Ծերունի կոլտնտեսական Մելիք Գրիգորյանը, որի հինգ դավակները գտնվում էին գործող բանակում, մուծեց 3000

66 «Սովորական Հայաստան», 13 հունիսի 1942 թ.:

67 ՀՊՊ կարինետի արխիվ, ֆ. 279, գ. 3, թ. 1, 2, 4:

ռուբլի և իր եղույթում ասաց. «Տանք մեր ունեցած միջոցները ուազմաճակատին, կառուցենք զրահապատ հզոր մեքենաներ մեր որդիների համար, թող մեր խիզախ զավակներն անխնա ջարդեն թշնամուն»:

Կիրովականի աշխատավորները «Հայաստանի կոլտնտեսական» տանկային շարասյան համար մուծեցին 349000 ռուբլի, իսկ, «Սովետական Հայաստան» մարտական ինքնաթիւների միավորման կառուցման համար՝ 397.000 ռուբլի⁶⁸:

Հոկտեմբերյանի շրջանի հայրենասեր աշխատավորներն անձնական խնայողություններից մինչև 1944 թ. պաշտպանության ֆոնդն էին մուծել 4 մլն. 45 հազ. ռուբլի կանխիկ զրամ, բաժնեգրվել էին 11 մլն. 894 հազ. ռուբլու պետական ուազմական փոխառություն, գործող բանակ էին ուղարկել 12 հազ. կտոր տաք հագուստ, ավելի քան 30 տնվեր-ծանրոց: Կարմիրբանակայինների ընտանիքներին օգնության կարգով տրված էր 5000 փութ հացահատիկ: Հացահատիկի պետական պարտավորությունները կատարելուց բացի Հոկտեմբերյանի կոլտնտեսականները պաշտպանության ֆոնդին հատկացրին լրացուցիչ կարգով 15 հազ. փութ հացահատիկ և 250 ց միս⁶⁹:

1942 թ. զեկոտեմբերին մարտական ինքնաթիւներ կառուցելու համար սկսվեց նոր կամպանիա: Սարատովի մարզի նովո-Պոկրովսկի շրջանի մեղվաբույժ Ֆ. Պ. Գոլովայինն անձնական խնայողություններից 100 հազ. ռուբլի տրամադրեց մարտական ինքնաթիւների կառուցման համար⁷⁰: Նրա օրինակին հետեւցին մեր երկրի շատ ու շատ կոլտնտեսականներ, ՄՏ կայանի և սովորողի աշխատողներ, կոլտնտեսության նախագահներ, կուսկազմակերպիչներ և այլն: Մեր հանրապետությունից Արթիկի շրջանի նոր կյանք պյուղ: Կոլտնտեսության կուսկազմակերպիչ Երեմ Առաքելյանն

68 «Սոցարշավ», 17 հունիսի 1943 թ.:

69 ՄԼի Հայկական մասնաճյուղի կուսարժիվ, ֆ. 90, ց. 4, գ. 348, թ. 9:

70 Ю. В. Арутюнян, Советское крестьянство в годы Великой Отечественной войны, М., 1963, стр. 208—209.

անձնական միջոցներից մուծեց 100 հազ. ռուբլի և խնդրեց այդ գումարով կառուցված կործանիլը հանձնել Սովետական Միության հերոս Նելսոն Ստեփանյանին⁷¹: Էջմիածնի շրջանի Մհեմուր (Նախկին՝ Ղամարլու) գյուղի կիտվինովի անվան կոլտնտեսության նախագահ նազար Հակոբյանը տանկային շարասյանը նվիրաբերում է 106500 ռուբլի⁷²: Արովյանի (Նախկին՝ Կոտայք) շրջանի Գեղարդ (Նախկին՝ Արթիս) գյուղի XVII կուսամագումարի անվան կոլտնտեսության կոլտնտեսական Հարություն Պետրոսյանը մուծում է 112.500 ռուբլի⁷³, Արտաշատի շրջանի Նորաշեն գյուղի Աթարբեկյանի անվան կոլտնտեսության նախագահ Եղնակ Զոբանյանը մուծում է 115.000 ռուբլի⁷⁴: Այս 100 հազարականների ալիքը տարածվեց հանրապետությունով մեկ: Այս հայրենանվեր գործի համար շատ ու շատ կոլտնտեսության նախագահներ, կուսազմակերպիչներ և առանձին կոլտնտեսականներ արժանացան Գերագույն գլխավոր հրամանատարի շնորհակալական հեռագրերին:

Հայաստանի գյուղատնտեսության աշխատողները մինչև 1942 թ. վերջը «Հայաստանի կոլտնտեսական» տանկային շարասյան համար հավաքեցին 38 մլն. ռուբլի և բանակի ֆոնդը մուծեցին 84 հազ. ֆութ հացահատիկ, կարտոֆիլ և այլ մթերքներ⁷⁵, իսկ մինչև կամպանիայի վերջը նույն ֆոնդին հատկացվելիք գումարը հասավ 43 մլն. 300 հազ. ռուբլու, իսկ գյուղատնտեսական մթերքների բանակը 130000 ֆութի⁷⁶: Բացի դրանից, պլանից դուրս 120000 ֆութ կարտոֆիլ հատկացրին քաղաքի ազգարնակշությանը:

Արձագանքիլով Ռեկրաֆնայի կոլտնտեսականների հայրենասիրական կոչին, Հայաստանի կոլտնտեսականները ևս

71 ՏԼ՛ «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 1961, № 1, էջ 199:

72 ՀՊՊԿ արխիվ, ֆ. 271, գ. 24, թ. 2:

73 «Սովետական Հայաստան», 8 հունվարի 1943 թ.:

74 Եռոյն տեղում:

75 «Правда», 29 декабря 1942 г.

76 ՄԵՌ Հայկական մասնաճյուղի կուսարխիվ, ֆ. 1, ց. 31, գ. 2, թ. 9:

կարմիր բանակի ֆոնդին պլանից դուրս հանձնեցին 200 հազ. փութ հացահատիկ⁷⁷:

Պաշտպանության ֆոնդի ստեղծմանը գործարար մասնակցություն ունեցան զյուղի կոմերիտականներն ու արտամիութենական երիտասարդները: Նրանք միջոցներ հավաքեցին «Հայաստանի կոմերիտական» տանկային շարասյան համար: Այդ նպատակով հաճախ կազմակերպվում էին կիրակնօրյակներ, արտաժամյա աշխատանքներ, որոնցից առաջացած միջոցները հատկացվում էին այդ ֆոնդին:

Կիրովականի շրջանի Վահագնի (նախկին՝ Շահալի) զյուղի կոլտնտեսային և գյուղական կոմերիտական կազմակերպությունների միացյալ ժողովը 1941 թ. հոկտեմբերի կեսերին որոշեց սովետական բանակի մարտիկներին լրացուցիչ տաք հագուստ հատկացնելու համար հավաքել «կոմերիտական շերվոնեցներ»:

ՀՀԿԵՄ Կհնտկոմի բյուրոն հավանություն տվեց Շահալիի կոմերիտականների հայրենասիրական նախաձեռնությանը և հանձնարարեց Հանրապետության բոլոր կոմերիտական սկզբնական կազմակերպություններին՝ քննության առնել շահալցիների նամակը և նրանց օրինակով կազմակերպել «կոմերիտական շերվոնեցների» հատկացումներ: Ընդամենը երկու շաբաթվա ընթացքում հանրապետությունում հավաքվեց 31.467 շերվոնեց⁷⁸:

Ալավերդու շրջանի կոմերիտականներն ու երիտասարդությունը «Հայաստանի կոմերիտական» տանկային շարասյան կառուցման համար մինչև 1943 թ. հունվարի 20-ը մուծեցին 300.000 սուբլի, Կալինինոյի շրջանը՝ 220.000, Հոկտեմբերյանից՝ 201,000, Կիրովականից՝ 180,000, Կամոյից՝ 153.000 և այլն⁷⁹:

1943 թ. հոկտեմբերին Հայաստանի կոմերիտականներն ու արտամիութենական երիտասարդներն արձագանքելով կիրովականի շրջանի Դեբեղ գյուղի երիտասարդների նա-

77 «Սովետական Հայաստան», 26 նոյեմբերի 1944 թ.:

78 «Սովետական Հայաստան», 1 նոյեմբերի 1941 թ.:

79 «Սովետական Հայաստան», 20 հունվարի 1943 թ.:

իսածեռնությանը, Հատկացումներ կատարեցին Կրասնոդոնի «Երիտասարդ գվարդիայի» անվան կործանիլ էսկազրիլիայի կառուցման ֆոնդին: Երեք օրվա ընթացքում Հանրապետության 13 շրջաններում հավաքվեց 542.000 ռուբլի, որից միայն Կիրովականի շրջանը մուծեց 200.000 ռուբլի⁸⁰:

Շատ կարճ ժամանակամիջոցում Հանրապետության կոմերիտականներն ու երիտասարդները «Հայաստանի կոմերիտական» տանկային շարասյան կառուցմանը հատկացրին 3 մլն. 200 հազ. ռուբլի⁸¹, իսկ «Երիտասարդ գվարդիա» կործանիլ ինքնաթիւնների միավորման կառուցմանը՝ մեկ միլիոն 15 հազար ռուբլի⁸²:

Հայրենական պատերազմի ծանր օրերին Հայրենիքի պաշտպանության գործում իրենց ավանդը ներդրեցին նաև գյուղական ուսուցչությունն ու աշակերտությունը: Նրանք անմիջապես ձեռնամուխ եղան գյուղատնտեսական աշխատանքներին և իրենց անձնական խնայողություններից որոշ գումար մուծեցին «Հայաստանի կոլտնտեսական» տանկային շարասյան կառուցման համար Հանրապետության պիոներ-գպարցականներն ուսուցչության հետ մեկտեղ երկրի պաշտպանության ֆոնդը մուծեցին 2 մլն. 335 հազ. ռուբլի կանխիկ դրամ, 198 հազ. ռուբլու փոխառության պարտատումս, ուազմական արդյունաբերության համար հավաքեցին 5138 տ մետաղի շարդոն, ուազմաճակատի մարտիկներին ուղարկեցին 41.400 նվեր-ծանրոց⁸³:

Մետաղի շարդոնի և գեղաբույսերի հավաքման գործում աշքի ընկան Վարդենիսի, Կիրովականի, Կալինինոցի, Ախուրյանի, Էջմիածնի, Ղուկասյանի շրջանների, Ղափանի շրջանի Աղօժանիկ գյուղի երիտասարդները: Վերջիններս հավաքեցին հսկայական քանակությամբ մետաղի շարդոն,

80 «Սովետական Հայաստան», 12 հոկտեմբերի 1943 թ.:

81 «Սովետական Հայաստան», 7 փետրվարի 1943 թ.:

82 «Սովետական Հայաստան», 15 հոկտեմբերի 1943 թ.:

83 ՀՊԴ կարինետի արխիվ, ֆ. 239, գ. 14, թ. 2:

168.350 ոռություն արժողությամբ մեքենաների մասեր⁸⁴, մեծ քանակությամբ դեղաբույսեր:

Ռազմական արդյունաբերության և ժողովրդական տընտեսության կարիքները բավարարելու համար կարեոր դեր խաղացին պատերազմի տարիներին թողարկվող պետական ռազմական փոխառություններն ու դրամաիրավին վիճակախաղի տոմսերը: Տարեցտարի ավելանում էր պետական ռազմական փոխառության բաժնեգրման գումարը: Ամբողջ Միությունում ռազմական շորս փոխառություններին բաժնեգրվեցին 90 մլրդ. ռուբլի, որից Հայաստանի աշխատավորները՝ 665 մլն. 144 հազ. ռուբլի⁸⁵: Միայն 1944 թ. մայիսի 4-ին, մի քանի ժամվա ընթացքում, Հայաստանում փոխառության բաժնեգրման գումարը հասավ 172 մլն. ռուբլու, որից 77 մլն. ռուբլու բաժնեգրվեցին կոլտնտեսականները⁸⁶:

Հանրապետության աշխատավորների համաժողովրդական օգնության ձևերից մեկն էլ վիրավոր և հիվանդ ռազմիկների բուժման, հաշմանդամների, զոհվածների, ճակատայինների, էվակուացիայի ենթարկված ընտանիքների և մանավանդ որբ և անապաստան երեխաների նկատմամբ ցուցաբերած հոգատարությունն էր: Հայաստանի առողջապահության աշխատողները մեծ դեր կատարեցին վիրավոր և հիվանդ ռազմիկների բուժման գործում: Պատերազմից առաջ Հանրապետությունում գործող հոսպիտալներին ժողկականությունը ավելացան նորերը: Հոսպիտալներ ստեղծվեցին ինչպես մայրաքաղաքում, այնպես էլ Հանրապետության մյուս քաղաքներում; շրջանային կենտրոններում և Հատկապես Արգնի, Դիլիջան, Զերմուկ, Կիրովական, Ախթալա, Ծաղկաձոր առողջարաններում և Հանգստյան տներում: Դրա հետ միաժամանակ արժանի է Հիշատակման նաև այն բացառիկ ուշադրությունը, որ սովետական բանակի մարտիկների նկատմամբ ցուցաբերեցին Սովետական

84 «Լրաբեր հասարակական գիտությունների», № 5, 1970, էջ 17:

85 «Սովետական Հայաստան», 25/4—42, 11/6—43, 12/5—44,

6/5—45:

86 «Коммунист», 5 мая 1944 г.

Հայաստանի հասարակական կազմակերպություններն ու
 ամբողջ ժողովուրդը: Ժողովուրդն իր զավակներին օգնում էր
 թե՛ բարոյապես, թե՛ նյութապես: Բոլոր կազմակերպու-
 թյունները, հիմնարկ-ձեռնարկները, կոլտնաեսությունները
 շեֆական օգնության պարտավորություններ ստանձնեցին:
 Հաճախակի կարելի էր տեսնել վիրավորի մահճակալի՝ մոտ
 գամված որևէ տնտեսություն, բանվորություն, ծառայողի կամ
 նույնիսկ զպրոցականի: Նրանք հոգում էին մարտիկի բո-
 լոր կարիքները: Յուրաքանչյուր վիրավոր իրեն դգում էր իր
 հարազատի գրկում: Դա բարձրացնում էր դինվորի բարոյա-
 կան ոգին: Այսպես, Ալավերդու աշխատավորները միայն
 1942 թ. մայիսին № 3698 հոսպիտալում հերթապահեցին 49
 անգամ, իսկ Կամոյի շրջանի աշխատավորները № 3699 հոս-
 պիտալն ապահովեցին անհրաժեշտ գույքով: Հոսպիտալի
 գրադարանին նվիրեցին 250 կտոր գրականություն⁸⁷: № 3693
 հոսպիտալի համար Կոտայքի շեֆ կոլտնտեսականները մշա-
 կեցին 3 հա բանջարանոց, իսկ Ստեփանավանի կոլտնտե-
 սականները՝ 2 հա կարտոֆիլ⁸⁸: Վիրավոր և հիվանդ՝ մար-
 տիկների նկատմամբ հոգատարությունը պետության և ժո-
 ղովրդի կողմից շարունակվեց նաև ետպատերազմյան տա-
 րիներին: Թիկոննքի աշխատավորներն ամենօրյա ուշադրու-
 թյամբ ու հոգատարությամբ էին շրջապատում զոհվածների,
 ճակատայինների ընտանիքներին, երեխաններին, հաշման-
 դամներին և էվակուացված քաղաքացիներին: Սովետական
 ժողովուրդն իր բանակը զինում էր առաջնակարգ տեխնիկա-
 յով, նրան զարձնում անխոցելի ու մարտունակ, ամենաջերմ
 սիրով ու հոգատարությամբ շրջապատում յուրաքանչյուր
 բանակացինի ընտանիքին: Դեռ Հայքինական պատերազմի
 առաջին օրերին ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությու-
 նը հրամանագրեր հրապարակեց՝ սովետական բանակի շար-
 քային, կրտսեր հրամկազմի ընտանիքներին նպաստներ
 նը-
 շանակելու մասին: Ինչպես միութենական մյուս հանրա-

87 ՀՊՊ կարինետի արխիվ, ֆ. 242, գ. 9, թ. 7—8:

88 Նույն տեղում, թ. 23:

պետություններում, այնպիս էլ Հայաստանի բոլոր շրջաններում ստեղծվեցին հատուկ ֆոնդեր՝ ճակատացյինների և էվակուացիայի ենթարկված ընտանիքներին օգնություն ցույց տալու համար։ Հայրենասիրական նման նախաձեռնություն հանդիս բերեցին էջմիածնի, Վարդենիսի, Կիրովականի, Արտաշատի, Աշտարակի, Կամոյի, Սպիտակի, Մարտունու և այլ շրջանների աշխատավորները։ Վարդենիսի շրջանի պիոներ-դպրոցականները դասերից հետո կազմակերպված օգնություն էին ցույց տալիս ճակատացյինների ընտանիքներին՝ նրանց տնտեսական աշխատանքներում։ Սպիտակի շրջանի Սարահարթ (նախկին՝ Քյուլիչա) գյուղից Մարիամ Զանազյանը ռազմաճակատում գտնվող իր ամուսնուն գրում է. «Դումի մտածիր մեր մասին; Մենք շատ լավ ենք։ Մեր ընտանիքով վաստակած 600 աշխօրի դիմաց ստացանք՝ 1900 կգ հացահատիկ, 1500 կգ կարտոֆիլ, 1200 կգ խոտ։ Կոլխոզից ստացել ենք յուղ, պանիր և այլ մթերքներ։ Ապրեն մեր կոմերիտականներն ու պիոներները, նրանք օգնեցին և հասանելիք բերքը հասցրին տուն»⁸⁹։ Կարմիր բանակում գտնվող իրենց հարազատներին ուղարկած նամակներում բանակացինների ընտանիքներն իրենց անուաննան երախտագիտությունն էին հայտնում այն շերմ հոգաւարության համար, որով շրջապատված էին իրենք։

Կուսակցությունն ու կառավարությունը համապատասխան որոշումներ ընդունեցին բանակացինների և էվակուացիայի ենթարկված ընտանիքների օգնության և զանազան հարցերի կարգավորման ուղղությամբ։ Որոշումներ ընդունվեցին էվակուացիայի ենթարկվածների տեղափոխման, տեղափորման, մատակարարման, աշխատանքով ապահովելու և այլ հարցերի մասին։ Մինչև 1944 թ. ապրիլի մեկը Հայաստանում կար 170.534 զինծառայողի ընտանիք՝ 595.062 անդամներով, որից՝ 346.964 երեխա, 20.640⁹⁰ հաշմանդամ, 6574⁹¹ էվակուացիայի ենթարկված ընտանիք, 15,371 բնակ-

89 Մէկ Հայկական մասնաճյուղի կուսարիսիվ, ֆ. 1, ց. 33, գ. 366, թ. 3։

Հությամբ, որից՝ 10.148 երեխա⁹⁰: Հեկ կինտկոմի 1942 թ.
 մայիսի 6-ի որոշմամբ Հայաստանի մի շարք քաղաքներում
 ու շրջկենտրոններում զանազան մասնագիտությունների
 գծով կազմակերպվեցին բազմաթիվ դասընթացներ: 1943 թ.
 հունիսի 30-ի տվյալներով հաշմանդամներից 12625-ը նը-
 պաստ էին ստանում, իսկ 9420-ը ապահովված էին աշխա-
 տանքով⁹¹: ՍՍՀՄ ժողկոմիորմի 1943 թ. հունիսի 4-ի որոշ-
 մամբ մեծ օգնություն ցույց տրվեց զոհվածների և ճակա-
 տայինների ընտանիքներին: Այդ որոշման համաձայն հան-
 րապետության բոլոր շրջանները հատուկ ֆոնդեր ստեղծե-
 ցին զոհվածների, ճակատայինների ընտանիքներին օգնե-
 լու համար: Կամոյի շրջանի կարմիր գյուղի «Ապարտակ»
 կոլտնտեսության ընդհանուր ժողովում որոշում կայացվեց
 վերանորոգել 200 բնակարան, վառելանյութով ապահովել
 50 տնտեսություն, 100 երեխայի բավարարել հագուստով և
 կոշիկով: Միաժամանակ կոլտնտեսության կողմից բաց
 թողնվեց գյուղատնտեսական մթերքների որոշ քանակու-
 թյուն՝ զինծառայողների ընտանիքներին օգնություն ցույց
 տալու համար⁹²: Շրջանային սովորություն պարբերաբար
 զբաղվում էին այդ հարցերով: 1942 թ. հունվարի 10-ից մինչև
 1945 թ. դեկտեմբերի 12-ը Սևանի շրջանվետը 23 անգամ իր
 նիստերում անդրադարձել է զինծառայողների, էվակուացիայի
 և նիթարկված ընտանիքների, հաշմանդամների, երեխաների օգ-
 նության հարցերին և ամեն անգամ հանել համապատասխան
 որոշում: Այսպես, շրջանվետի նիստերում քննարկվել են
 1942 թ. հոկտեմբերի 8-ին՝ «Էվակուացիայի և նիթարկված
 բնակչությանը տեղափորելու, տնտեսապես ապահովելու,
 աշխատանքով բավարարելու խնդիրը», 1944 թ. ապրիլի
 14-ին՝ «Հայրենական պատերազմի հաշմանդամներին աշ-
 խատանքի տեղափորելու և կուտկենցաղային կարիքների
 բարելավման մասին», 1945 թ. հունվարի 9-ին՝ «Շրջանի

⁹⁰ Նույն տեղում:

⁹¹ ՀՀՍՇՊԿ արխիվ, ֆ. 119, ց. 2, գ. 9, թ. 120:

⁹² «Բանբեր Հայաստանի արխիվների», 1961, № 1, էջ 201:

անապաստան երեխաների դրությունը բարելավելու մասին» և այլն⁹³:

1943 թ. հունվարի 21-ին Սնդրկովկասյան ռազմաճակատի ռազմական խորհուրդը ստուգեց անդրկովկասյան հանրապետությունների զինվորական կոմիսարիատների գործունեության արդյունքները՝ զինվորական ընտանիքներին օգնություն ցույց տալու ուղղությամբ և արձանագրեց, որ այդ գործը հանրապետության բոլոր քաղաքներում, մասնավորապես Անդրկանում ու մի քանի շրջաններում, իրոք դրված է եղել լավ հիմքերի վրա⁹⁴:

Մինչև 1942 թ. սեպտեմբերի 26-ը Հայաստան էվակուացված 18026 մարդուց աշխատանքի էին տեղավորվել 4808 մարդ⁹⁵: Ռազմաքաղաքական նշանակություն տալով զինծառայողների ընտանիքների կենցաղային պայմանների բարելավմանը, Հայաստանի կուսակցական, զինվորական և հասարակական կազմակերպությունները, հիմնարկ-ձեռնարկությունները և կոլտնտեսությունները զգալի աշխատանք կատարեցին զինծառայողների ընտանիքների նյութական դրությունը բարելավելու ուղղությամբ: Հոկտեմբերյանի կուսշըկոմի բյուրոն 1942 թ. փետրվարի 26-ի նիստի օրակարգում մտցրեց «Կարմիրբանակայինների ընտանիքներին նպաստներ նշանակելու և տալու կարգի մասին շրջկոմի 1941 թ. հոկտեմբերի 29-ի որոշման կատարման ընթացքը» հարցը: Շրջանային կոմիտեն հանձնարարեց շրջանային սովորի գործկոմին՝ այդ աշխատանքներում թերություններ լինելու դեպքում քննել սոցալբաժնի վարիչի հարցը և նոթարկել նրան պատասխանատվության⁹⁶:

Զինծառայողների ընտանիքների նյութական-կենցաղային պայմանների բարելավման ուղղությամբ հատկապես զգալի գործ կատարվեց Երևան և Լինինական քաղաքներում:

93 Տե՛ս ՀՊՊ կարինետի արխիվ, ֆ. 269, գ. 3, թ. 25, 39, 49:

94 ՀՀՍՇՊԿ արխիվ, ֆ. 40/113, գ. 8, գ. 64, թ. 80:

95 Նույն տեղում, գ. 81, թ. 9—10:

96 Մէկ Հայկական մասնաճյուղի կուսարխիվ, ֆ. 90, գ. 4, գ. 229, թ.

Այդ քաղաքների օրինակին հետևեցին նաև մյուս քաղաքներն ու շրջանները: Էջմիածնի շրջառվետը 1450 ճակատացինի ընտանիքի տվեց 46270 կդ հացահատիկ, 43.170 կդ վառելափայտ, 5.508 կդ յուղ, պանիր, մեղր և այլն⁹⁷: Ղափանի շրջանի սոցագրաժինը մինչև 1943 թ. մարտ ամիսը բանակայինների ընտանիքներին բաց թողեց 3.560.210 ռուբլու նպաստ⁹⁸: Միայն 1942 թ. ընթացքում Հանրապետությունում բանակայինների ընտանիքներին բաց թողնվեց 97.588.000 ռուբլու նպաստ և միանվագ օգնության կարգով՝ 374.400 ռուբլի⁹⁹:

Հստ 1943 թ. մարտի 1-ի տվյալների, Գորիսի շրջանում կարմիրանակայինների 2289 ընտանիք միայն 1942 թ. պետությունից ստացել էին 2445106 ռուբլու նպաստ: Հայրենական պատերազմի հաշմանդամները միայն 1943 թ. հունվար ամսին միանվագ 221869 ռուբլու նպաստ էին ստացել, իսկ հրամկազմի ընտանիքներն ատեսատառվ ստացել էին 600000 ռուբլի: Այս բոլորից բացի, կոլտնտեսության վարչությունը օգնության կարգով բանակայինների ընտանիքներին բաց էր թողել 819 առ հացահատիկ, շրջկոմի և շրջառվետի գործկոմի որոշմամբ ճակատայինների դպրոցական հասակ ունեցող երեխաներին բաժանվել էր 45000 ռուբլու արժողությամբ հագուստեղեն և կոշկեղեն¹⁰⁰:

Հայրենական պատերազմի սկզբից մինչև 1943 թ. սեպտեմբերի 1-ը Հանրապետությունում գինծառայողների ընտանիքներին բաց է թողնվել 222 մլն. ռուբլու պետական նպաստ և թշչակ, միանվագ օգնության կարգով՝ 2 մլն. ռուբլի, աշխատանքի են տեղավորվել 22.354 մարդ, մանկական հրապարակներն են ընդունվել 91 հազ. 382 երեխա, նո-

97 «Սովետական Հայաստան», 17 մարտի 1943 թ.:

98 «Առաջ Հանուն Հայրենիքի», 9 մարտի 1943 թ.:

99 Նույն տեղում:

100 Մէի Հայկական մասնաճյուղի կուսարիսիվ, ֆ. 15, ց. 3, գ. 127, թ. 2—3:

բողվել է 7600 բնակարան, նոր բնակարաններ հն հատկացվել 9.257 ընտանիքի¹⁰¹:

Հայրենական պատերազմի ընթացքում մեծ հոգատառությամբ և ուշագրությամբ էին շրջապատված ճակատայինների, զո՞վածների և էվակուացիայի ենթարկվածների երեխանները:

1942 թ. փետրվարին «Պրավդան» «Հոգատարություն երեխանների մասին» առաջնորդողում գրում է. «Ավերված քաղաքներն ու գյուղերը կարելի է նորից կառուցել. Կարելի է վերականգնել շարքից հանված ֆաբրիկաներն ու գործարանները. Բայց դժվար է նորմալ կյանքի վերադարձնել անապաստանությունից խեղանդամ դարձած, երջանիկ մանկությունից զրկված երեխային. Դժվար է բուժել հոգեկան վերբերը այն դեսահասի, որի աշքերի առջև ֆաշիստական գաղանները կախել են նրա հորը կամ տանջել մորը»¹⁰²:

Թիկունքային բոլոր հանրապետություններում, այդ թվում Հայաստանում նորմալ պայմաններ ստեղծվեցին ծնողագործ երեխանների կյանքի ապահովման, սննդի, կրթության կազմակերպման համար. Այսուղեղ որբացած երեխանները զգում էին ինչպես հարազատ օչախում. Պատերազմի տարիներին Հայաստանում գործում էին 50 մանկատուն, գիշերօթիկ դպրոց և մանկապարտեզ, որտեղ տեղավորված էին 15.648 երեխա¹⁰³. Հայ ժողովրդի կարեկից ու հոգատար վերաբերմունքի մասին է վկայում Լենինգրադից էվակուացիայի և ներարկված մանկատան սաների ծնողների նամակը, որտեղ ասված է. «Ճերմագին ողջուն Լենինգրադի ուղամաձակատից և լինինի հերոս քաղաքը պաշտպանող մարտիկներից. Մենք՝ լենինցրադի ուղամաձակատի մարտիկներս, մեր շերմ շնորհակալությունն ենք հայտնում հայ ժողովրդին այն մեծ ուշագրության համար, որ նա ցուց է տա-

101 «Սովետական Հայաստան», 6 հոկտեմբերի 1943 թ.:

102 «Правда», 4 февраля 1942 г.

103 ՏԵ՛Ռ ՀՀՍԴ արխիվ, ֆ. 40/113, գ. 9, գ. 30, թ. 27.

լիս մեր երեխաների նկատմամբ»¹⁰⁴: Այս նամակը եղակի շէ: Պահպանվել են այդպիսի հաղարավոր նամակներ:

Կանանց աշխատանքն ավելի լավ կազմակերպելու նպատակով բոլոր կոլտնտեսություններում ու գյուղերում բացվեցին մանկամասուրներ և մանկապարտեղներ: 1942 թ. Հայաստանում գործում էին 2735 մանկական հրապարակ ու մըսուր, որտեղ տեղավորված էին 100000 երեխա¹⁰⁵: Դրանք գեռնս մարտ ամսին ապահովվեցին համապատասխան շենքերով, գույքով, կոլտնտեսության վարչությունների ու տեղարդկոմբինատների կողմից անհրաժեշտ քանակությամբ աննդամթերքներով: Բավարար էր նաև դաստիարակչութիների և բուժաշխատողների թիվը: Սակայն, երբ որոշ ժամանակ անց շրջկոմները կրկին անդրադարձան մանկահրապարակների և մսուրների կազմակերպման հարցին, պարզվեց, որ ոչ բոլոր գյուղերում ու կոլտնտեսություններում էին բատեղձվել հարմարավետ պայմաններ երեխաների հանգստի համար: Այսպես, Եղեգնաձորի շրջանի Գլածոր (Նախկին՝ Օբթաքենդ), Ռինդ և այլ գյուղերում ամեն ինչ կարդին էր, այնինչ Մալիշկա, Գնիշիկ, Ենգիչա և այլ գյուղերում վատ էր կազմակերպված երեխաների խնամքը, որը և անդրադառնում էր մայրերի աշխատանքի վրա: Այդ գյուղներում կանանց անբավարար աշխատանքի հետևանքով բերքահավաքը ավարտվեց ժամանակից ուշ¹⁰⁶:

ՍՍՀՄ Ժողկոմխորհի «1943 թ. ամառային շրջանում երեխաների առողջությունը ամբապնդելու միջոցառումների մասին» որոշման հիման վրա հունիսի 1-ից մեր Միության տարբեր մասերում կազմակերպվեցին պիոներական համբարներ և ամառային հրապարակներ՝ 1.400.000 երեխայի համար, իսկ 465 հազ. երեխայի համար առողջարանային տիպի համբարներ: Հայկական ՍՍՀ-ում կազմակերպվեցին 4000 երեխայի համար պիոներական համբարներ քաղաքից

104 Ա. Ն. Մնացականյան, Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմում, Երևան, 1954, էջ 504:

105 «Սովետական Հայաստան», 25 մարտի 1942 թ.:

106 «Սովետական Հայաստան», 16 հունիսի 1942 թ.:

դորս, 5000 երեխայի ամառային հրապարակներ՝ տեղերում, իսկ 7.600 երեխայի համար՝ դպրոցական ճամբարներ¹⁰⁷:

ՀԼԿԵՄ Կենտկոմի բյուրոն, ելնելով «Ճակատայինների երեխաներին օգնություն ցույց տալու գործում կոմերիտական կազմակերպությունների աշխատանքի մասին» ՀամԼԿԵՄ Կենտկոմի որոշումից, 1942 թ. սեպտեմբերին անցկացրեց զոհվածների, հակատայինների, հաշմանդամների երեխաներին օգնություն ցույց տալու 15-օրյակ: Պիոներական կազմակերպությունները ստեղծեցին ֆեղյակցինների և թեմուրականների հազարավոր խմբակներ: Խմբակների անդամները մշակում էին ճակատայինների տնամերձ հողամասերը, հավաքում և փոխադրում բերքը, ճակատայինների երեխաների համար ստեղծում էին զրամական և մթնորային ֆոնդեր, խնամում երեխաներին և այլն: Հանրապետությունում ճակատայինների երեխաների օգնության ֆոնդին հատկացվել էր ավելի քան 2 մլն. ռուբլի¹⁰⁸, 19967 փութ հացահատիկ, 1447 փութ կարտոֆիլ: Կարիքավոր երեխաներին բաժանվել էր 18.866 զույգ կոշիկ, 16.774 կտոր հագուստ¹⁰⁹: Պետությունը և ժողովուրդը մեծ հոգատարությամբ էին շրջապատել նաև բազմազավակ մայրերին: 1941—1942 թթ. Հայաստանում բազմազավակ մայրերին տրվել է 78.042.000 ռուբլու նպաստ, իսկ միայն 1944 թվականին՝ 23 մլн. 275 հազ. ռուբլի¹¹⁰: Պատերազմի ժամանակ՝ 1942 թ. օգոստոսին ժողկոմիուրդը որոշում կայացրեց մինչև 8 տարեկան հասակի երեխա ունիցող աշխատող մայրերին ամեն շաբաթ մեկ հանգստյան օր տալ՝ երեխաներով զբաղվելու համար¹¹¹:

Ստեղծվեց հատուկ ֆոնդ՝ ազատագրված շրջանների կոլտնտեսականներին օգնելու համար: Ինչպես մյուս,

107 ՄԼԿ Հայկական մասնաճյուղի կուսարիսիվ, ֆ. 1, ց. 32, գ. 59, թ. 136, 140:

108 ՀՀՍՇՊԿ արխիվ, ֆ. 122, ց. 3, գ. 44, թ. 51:

109 «Սովետական Հայաստան», 4 ապրիլի 1943 թ.:

110 «Սովետական Հայաստան», 4 փետրվարի 1945 թ.:

111 ՀՀՍՇՊԿ արխիվ, ֆ. 113, ց. 9, գ. 196, թ. 53:

պես էլ այս կամպանիան Հայաստանի կոլտնտեսային գյուղացիությունը անցկացրեց մեծ ոգևորությամբ։ Հայաստանում այդ նպատակով ցանվեցին հատուկ հեկտարներ, որոնց եկամուտը ուղարկվում էր համապատասխան շրջաններ։ Ազատագրված շրջաններն էին ուղարկվում սերմացու, անասուն, անասնակեր, գյուղատնտեսական մեքենաներ ու գործիքներ։

Հայաստանի աշխատավորներն ավելի քան 8 մլն ոռություրամադրեցին գերմանական զավթիչների կողմից ավերված քաղաքների՝ Ստալինգրադի, Լենինգրադի, Օդեսայի, Սևաստոպոլի, ուկրաինական և բելոռուսական մի շարք այլ քաղաքների վերականգնմանը։

Այդ գործում հատկապես աշքի ընկան Ստեփանավանի շրջանի աշխատավորները, որոնք Ստալինգրադի վերականգնման համար պետքանկ մուծեցին մեկ միլիոն 266 հազար ոռություն, իսկ Լենինգրադի համար՝ 900 հազ. ոռություն Կիրովականի պիտոններ-գպրոցականները Օդեսայի գպրոցների վերականգնման համար մուծեցին 100 հազ. ոռություն, Արտաշատի շրջանի ուսուցիչները՝ 115 հազ. ոռություն և 65 հազ. ոռություն փոխառություն հատկացրին Սևաստոպոլի գպրոցները վերականգնելու գործին։ Էջմիածնի շրջանի պիտոններ-գպրոցականներն այդ նպատակին հատկացրին 300000 ոռություն։ Ստանալով Ստեփանավանի աշխատավորների ուղարկած գումարը, Ա. Ժղանովը հետեւյալ հեռագիրն ուղարկեց Ստեփանավանի շրջկոմին. «Խնդրում եմ Լենինգրադի աշխատավորների անունից իմ ողջույնը և շնորհակալությունը հաղորդել Հայկական ՍՍՀ Ստեփանավանի շրջանի աշխատավորներին՝ Լենինգրադի վերականգնման ֆոնդին 900 հազ. ոռություն հավաքելու համար։ Լենինգրադի մասին այդ եղբայրական օգնությունն ու հոգատարությունը ոգևորում է լինինգրադցիներին և նոր ուժ տալիս նրանց։

ՀամԿ(ը)Կ Լենինգրադի մարզկոմի և քաղկոմի քարտուղար Ա. Ժղանով»¹¹²։

112 «Коммунистическая партия в Великой Отечественной войне», изд-во политлитературы, М., 1970, стр. 391.

Հայրենական պատերազմի տարիներին Հայաստանի աշխատավորները միայն երկրի պաշտպանության, բանակին զինք ու սպառազինություն արտադրելու, գերմանաֆաշիստական գավթիչների կողմից ավերված քաղաքները վերականգնելու համար նվիրաբերեցին 215 մէն, 666 հազ. ոռորդ¹¹³: Կոլտնտեսականներն իրենց եկամուտի 1/5 մասը տրամադրում էին այդ նպատակին: Պարզ է, թե ինչպիսի գոհաբերությունների գնով էր սովետական ժողովուրդը օգնում ռազմաճակատին:

Թիկունքի և ռազմաճակատի անքակտելի կապի արտահայտություններից մեկն էր նաև նամակների և պատվիրակությունների փոխանակությունը, որ կատարվում էր թիկունքի աշխատավորության և ռազմաճակատի մարտիկների միջև:

Հայկական 390-րդ դիվիզիայի անձնակազմը 1942 թ. մայիսին դիմելով հայ ժողովրդին, իր նամակում գրում էր. «Հայկական զորամասերի մարտիկները, Հրամանատարներն ու քաղաշխատողները հերոսական կարմիր բանակի շարքերում իրենց նվիրական պարտքն են կատարում մեր սովհատական մեծ Հայրենիքի հանդեպ՝ անխնա ոշնչացնելով գերմանաֆաշիստական բարբարոսներին, որոնք ներխուժել են մեր Հայրենիքը»:

Ենթադրու վերջնական ջախջախումը ձեզանից ավելի մեծ ջանքեր ու զոհողություններ է պահանջում: Մենք համոզված ենք, որ ՀԿ(թ)Կ Կենտրոնական Կոմիտեի ղեկավարությամբ դուք ամեն ինչ կանեք ռազմաճակատում մեր վերջնական հաղթանակն ապահովելու համար»¹¹⁴:

1942 թ. սեպտեմբերին, երբ Հայկական 89-րդ դիվիզիան նոր էր համալրել գործող բանակի շարքերը և անցել պատասխանատու առաջարկանքի կատարմանը, ՀՍՍՀ Գերագույն սովհատի նախագահությունը հայ ժողովրդի անունից ողջունի նամակ ուղարկեց միավորման անձնակազմին:

¹¹³ ՏԵ՛՛ Ը. Պ. Աղայան, Ե. Մ. Խալեյան, Ուրվագծեր Սովետական Հայաստանի պատմության, պրակ 3, Երևան, 1960, էջ 244:

¹¹⁴ «Սովետական Հայաստան», 1 մայիսի 1942 թ.:

Նամակը հայ ուազմիկներին դիմում էր Հետևյալ կողով.
 «...Կանգնեցրեք կատաղաբար առաջ ձգտող թշնամուն: Ար-
 յունաքամ արեք նրան: ...Հայաստանի զավակներ, անվախ
 Վարդան Մամիկոնյանի, Դավիթ Բեկի Հպարտ սերունդներ,
 Անդրկովկասի եղբայրական ժողովուրդների Հետ ուսուսի
 տված... ոչնչացրեք գերմանական բարբարոսներին: Թշնա-
 մին պետք է կանգնեցվի: Նա պետք է շախչախվի: Այս է
 Հայրենիքի հրամանը, այս է Անդրկովկասի ժողովուրդների
 միասնական կամքը»¹¹⁵: Ի պատասխան զրա, հայ ուազմիկ-
 ները ՀՍՍՀ Գերազույն սովետի նախագահության նախագահ
 Մ. Պապյանին զրեցին. «Ընկ. Պապյան, շատ շի անցել այն
 օրից, երբ դուք Հայրենիքի, կառավարության անունից մեղ
 համար թանկ ու նվիրական երևանում հանձնեցիք մեղ մար-
 տական կարմիր զրոշը: Մենք այդ սուրբ պահին երդվեցինք,
 որ բարձր ու անթեք կպահենք այդ վեհ զրոշը: Եվ մենք ան-
 խախտ պահում ենք այդ երդումք: Մենք չենք ապականի մեր
 հայ ժողովրդի սիրագործական ու լուսավոր էջերը: Չենք
 մրոտի գյուղազն Հայկի, Վարդան Մամիկոնյանի, Սասունցի
 Դավիթի, Դավիթ Բեկի և մեր բոլոր հերոսական նախնիների
 պայծառ անունները, որոնք դարերի խորքից այնքան քաղցր
 են հնչում մեղ համար, մեր ժողովրդի համար»¹¹⁶:

Հոկտեմբերյանի շրջանի աշխատավորները զորամասի
 մարտիկներին, հրամանատարներին և քաղաշխատողներին
 այդ օրերին գրում էին. «Սիրելի ընկերներ, ձեր նամակի
 յուրաքանչյուր տողը կարդալիս հեծում են մեր սրտերը ու-
 րախության և հպարտության զգացումից, այն հպարտու-
 թյան, որ դուք մարտականորեն և անշեղորեն կատարում եք
 հրամանատարության առաջադրանքները և պատրաստ եք
 շախչախելու, հողմացրիվ անելու ֆաշիստական հորդանե-
 րին:

Հոկտեմբերյանի շրջանի կոլտնտեսությունները, սով-
 խողներն ու գործարանները մտնելով մրցության մեջ, այս

115 «Կարմիր զինվոր», 16 սեպտեմբերի 1942 թ.:

116 «Կարմիր զինվոր», 18 սեպտեմբերի 1942 թ.:

տարի սկսեցին աշխատել պատերազմի ժամանակվա ոգով ու տեմպերով։ Օրինակելիորեն կազմակերպեցին գարնանացանը և ամառային գյուղատնտեսական աշխատանքները։

...Սիրելի ընկերներ, դժվար է գրչի մի շարժումով շարպրել այն, ամենն, ինչ կատարվում է մեզ մոտ՝ գործարաններում, սովորողներում։ Աշխատանքային էնտուզիազմով լցված յուրաքանչյուրը կատարում է 2—3 նորմա։ Նրանք իրենց սիփական միջոցներն են նվիրում հարազատ բանակին։ Հոկտեմբերյան տոնի առթիվ գործող բանակին ենք ուղարկել 10 տ նվիր-ծանրոց։ Շրջանի կոլխոզները ավարտել են պաշտպանական ֆոնդի առթիվ ցանքած 34 հա հացատիկի, բամբակի, բանջարեղենի, խաղողի այգիների բերքահավաքը և շարունակում են 72 հա բամբակի հավաքումը... Հարազատ կարմիր բանակին կնվիրենք մեր ամբողջ սերն ու հոգատարությունը, բոցավառ ողջուն մեր հարազատներ, մեր ընկերներ, մենք ձեզ կոչ ենք անում ուղմանակատում կանգնել հղոր ու անսասան...»¹¹⁷։

Այս կոլեկտիվ նամակներից բացի, ամեն օր հազարավոր նամակներ էին ուղարկվում ղեպի ուղմանակատ ու ուղմանակատից՝ թիկունք։ Կապիտան Մամյանի 75-ամյա ծերունի հոր նամակում դրված է. «Բարե սիրելի իմ Սեդրակ։ Ջավակս, մենք շատ լավ ենք, ողջ և առողջ, քո նամակը շափականց ուրախացրեց մեզ, բոլոր կոլխոզնիկներին։ Ցանկանում ենք ձեզ հաջողություն։ Հավատացած եմ, որ շուտով կարմիր բանակը ֆաշիստներին կը նաշնչի երկրի երեսից և կարմիր դրոշը բարձր կպահի մեր հարազատ հայրենիքի վրա։ Ջավակս, մենք էլ թիկունքում մեր ջանքերը չենք խնայի մեր հարազատ կարմիր բանակին օգնելու համար, մեր երկիրը պաշտպանելու համար»¹¹⁸։

Անթիվ ու անհամար նամակներ էին ստանում ուղմանակատից թիկունքի աշխատավորները, կուտուրայի և արվեստի գործիչները, հասարակական աշխատողները։ Այս-

117 «Բոշկիկյան տեմպով», 22 նոյեմբերի 1942 թ.։

118 «Սովետական Հայաստան», 21 ապրիլի 1942 թ.։

պես, կապիտան Վարդան Խանզորյանը գերասան Գուրգեն Զանիբեկյանին գրում է. «Հարգելի Գուրգեն, թատրոնը մեծ անելիքներ ունի Հայրենական պատերազմի ժամանակաշրջանում, մենք հուսով ենք, որ չեք խնայի ձեր ուժերը, ձեր արվեստով կօժանդակեք թշնամու դեմ մղվող պայքարին: Վերջնական հաղթանակից հետո դարձյալ կգանք Հայաստան և Սունդուկյանի անվան թատրոնում կդիմանք Ն. Զարյանի «Վրեժ»-ի բեմադրությունը՝ Ձեր մասնակցությամբ»¹¹⁹:

Մազմաճակատի և թիկունքի անխափանելի կապի վկայությունն է չոկի հրամանատար Վահան Մովսիսյանի ուղարկած նամակը Հարազատներին. «Սովհատական ամրակուութիկունքը գթառատ մոր պես օգնում է մեզ: Մեր թիկունքն ու ուղմաճակատը միասնական են: Դուք անդուզ կերպով աշխատեցեք արեավառ Հայաստանի կոլխոզներում և գործարաններում, որպեսզի ձեր հերոսական աշխատանքով էլ ավելի ամրապնդեք մեր սովետական թիկունքը, մեր փառապանծ Կարմիր բանակի ուժն ու հզորությունը»¹²⁰:

Հայաստանի աշխատավորները նամակագրական սերտ կապերի մեջ էին նաև եղբայրական մյուս ժողովուրդների և նրանց զավակների հետ: Նրանք բազմաթիվ նամակներ էին ստանում պարտիղանական զանազան չոկատներից, էվակուացված ընտանիքներից, մանկատան սաների ծնողներից և այլն: Ուշագրավ են հատկապես կեննինգրազից էվակուացված № 82 մանկատան սաներից մեկի հոր՝ ավագ լիյտենանտ Ի. Պուգաչի նամակի հետեւյալ տողերը. «1942 թ. սկզբին Հարազատներիս հետ իմ կապը կտրվեց: Այդ միջոցին վախճանվել էր կինս, որդիս մնացել էր միայնակ... կեննինգրազի № 82 մանկատունը փոխադրվեց Հայաստան: Այդտեղ երեխաները առաջին իսկ օրից իրենց զգացին այնպես, ինչպես տանը: Ութ ամսվա բլոկազա ապրած երեխաների համար, որոնք ապրել էին կեննինգրազի ոմբակոծությունը, արվեց ամեն ինչ, որպեսզի նրանք մոռանան այդ սարսափ-

¹¹⁹ Նույն տեղում:

¹²⁰ ՀՊԴ կարիքնետի արխիվ, ֆ. 292, գ. 2, թ. 11:

ները, կարողանան նորից վազվակել, զվարճանալ, ծիծաղել: ...Մի մարտի ժամանակ ես վիրավորվեցի և բուժման համար ինձ ուղարկեցին հարավ: Այդտեղից ես մի քանի օրով գնացի Երևան, իմ երեխայի մոտ:... Այդտեղ երեխաներն աճում են մի ընտանիքում, ամեն բանի մէջ երեսում է և սեր, և հոգատարություն: ...Վերապառնալով ուղմաճակատ, ես հանգիստ եմ իմ երեխայի համար: Այն ամենը, ինչ ես տեսա, ավելի մէծ եռանդ է ներշնչում ինձ: Ես էլ ավելի շեշտակի կարլածիմ գերմանական իժերին... Ես ուղում եմ իմ շնորհակալությունը Հայտնել կուսակցական ու սովետական օրգաններին՝ մեր երեխաների նկատմամբ ցուցաբերվող մեծագույն հոգատարության և ուշադրության համար: Դժվարանում եմ համապատասխան խոսք գտնել: Կասեմ պարզ լեզվով՝ նավաստիական իմ շնորհակալությունը ձեզ, Հայ ընկերներ»¹²¹:

Քաղաքական խոշոր նշանակություն ունեցավ Հայ ժողովրդի նամակը՝ ուղղված ուղմաճակատում գտնվող իր զավակներին: Այդ նամակի կապակցությամբ «Պրավդա» թերթն իր առաջնորդողում գրել է. «Հայ ժողովուրդը հնագույն ազգերից մեկը լինելով, բազմիցս կանգնած է եղել ֆիզիկական լիակատար բնաշնչման, իր ազգային մշակույթի լիակատար կործանման եղրին: Մեծ է նրա թշնամիների ցուցակը: Դրա սկիզբը հասնում է մինչև զարավոր հնությունը: Դերմանացի զավթիչները եղբափակում են Հայկական վշտի, Հայկական թագածի զառը տարեգությունը»¹²²: Այդ պատմական նամակ-կոչը ստորագրել էին Հակական ՍՍՀ ավելի քան 335 Հազ. աշխատավոր¹²³: Ժողովուրդը շերմ սիրով լցված խոսքեր է հողում ուղմաճակատում գտնվող իր զավակներին, հիշեցնում այն սրբազն պարտքը, որի համար նրանք ուղմաճակատ էին մեկնել: Հայ ժողովուրդը, նրա ամեն մի ընտանիք պահանջում էր Հայ մարտիկից՝ «Հվերադառնալ տուն,

121 «Սովետական Հայաստան», 2 հունիսի 1944 թ.:

122 «Պրավդա», 27 փետրվարի 1943 թ.:

123 Տե՛ս «Հայ ժողովրդի խոսքը ուղմաճակատում գտնվող իր զավակներին», Երևան, 1943, էջ 41:

մինչև վերջին օկուպանտը շոշնչանա»¹²⁴: Հայաստանի աշխատավորները նամակում պատմում էին թիկունքում կատարած իրենց անդուլ աշխատանքի մասին, ապա կոչ անում հայ մարտիկներին՝ նորանոր սխրագործություններով և հերոսություններով բազմապատկել իրենց զենքի փառքը, հաստատակամորեն շարժվել դեպի արևմուտք և տուն վերադառնալ միայն հաղթանակով:

Հայ ժողովրդի նամակի ուղարկումը ուղղմաճակատ մեծ իրազարձություն էր: Հայկական բոլոր միավորումներում, ստորաբաժանումներում տեղի ունեցան միտինգներ, ժողովներ, որտեղ մանրամասնորեն քննարկվեց նամակի տեքստը: Նամակը հասավ Լինինգրադի, Դոնբասի, Սև և Աղովի ծովերի հայ պաշտպաններին: Այն մեծ հետաքրքրությամբ կարդացին ուսւան ու ուկրաինացին, վրացին ու աղբեջանցին, ուղրիկն ու դաղախը և մյուս աղքերի մարտիկները: Այդ կոչունքանց ևս ոգեշնչեց նորանոր սխրագործությունների: Ամեն մի հայ ուղղմիկ երդվեց սրբությամբ կատարել մայր ժողովրդի պատգամը և տուն վերադառնալ միայն հաղթանակով: Հայ մարտիկներն իրենց հերթին բազմաթիվ պատասխաննամակներ ուղարկեցին Հայաստան:

89-րդ հայկական հրաձգային դիվիզիայի անձնակազմն իր ժողովրդին գրեց. «Այդ նամակը մեզ էլ ավելի խոր ատելությամբ, վրեժի կոչեց հայ ժողովրդի ամենաոփերիմ թըշնամիների՝ գերմանական օկուպանտների գեմ:

...Մենք երդվում ենք մեր պատվով, մեր զոհված ընկերների արյամբ, բարբարոս ֆաշիստների կողմից անարդված ու խոշտանգված մայրերի, քույրերի, մանուկների արցունքով ու արյամբ, որ վրիժառու կլինենք դահիճ հիտլերականների նկատմամբ»¹²⁵: 409-րդ հայկական հրաձգային դիվիզիայի անձնակազմը գրեց. «...Մեր սուրբ պատյան շենք դնի, մինչև շհասնենք լիակատար հաղթության, մինչև շոշնչացնենք վերջին հիտլերականին, որը ներխուժել է մեր սովետական հո-

124 Կույն տեղում, էջ 14:

125 «Հայ մարտիկների պատասխանը հայ ժողովրդին», Երևան, 1944, էջ 19, 24, 25:

դը»¹²⁶: Ռազմաճակատում գործող ստորաբաժանումներից մեկի հայ մարտիկները գրում են, «Մենք հրճվում ենք ու պարծենում, որ մեր մասին ոչ մի բոպե չի մոռանում Հայաստանի կառավարությունը և մեր մայր ժողովուրդը: Գերմանական զավթիչների գեմ մղվող մարտերում մեր մայր ժողովրդից ստացվող ամեն մի նամակ, ամեն մի լուր մեզ նոր ուժ և եռանդ է տալիս»:

Անինգրադի ռազմաճակատի մի խումբ մարտիկներ ի պատասխան հայ ժողովրդի նամակի, գրում են, «Թանկագին ծնողներ, քույրեր, եղբայրներ և կանայք, մենք ստանալով Զեր կոչը, խոստանում ենք Զեր առաջ կատարել ձեր բոլոր ցուցմունքներն անշեղորեն և լինել հավատարիմ սոցիալիստական ժողովրդի առաջ, որը շուտով կտոնի իր փողոցներում մեր ժողովրդի սքանչելի հաղթանակի օրը»¹²⁷:

Հայ ժողովրդի նամակին պատասխանեցին նաև այլ ստորաբաժանումներում ծառայող հարյուրավոր անհատ հրամանատարներ, քաղաշխատողներ, շարքային մարտիկներ:

Կարելոր նամակներից մեկն էլ նամակ-զեկուցագիրն էր, որ 89-րդ թամանյան հայկական զիվիվիայի անձնակազմը բեղլինյան մարտերից հետո ուղարկեց հայ ժողովրդին: Այդտեղ հայ թամանցիները հաղթողի օրինական հպարտությամբ և վեհ զգացմունքներով պատմում են Կովկասից Բևոլին անցած 3700 կմ մարտուղու, աշքի ընկած հարյուրավոր հերոսների սխրագործությունների, ձեռք բերած հաջողությունների, մայր ժողովրդին իրենց տված խոստումը պատվով կատարելու և հաղթարշավով Սովհետական Հայաստան վերադառնալու մասին:

Թիկունքի և ռազմաճակատի անխղելի կապի վառ արտահայտություններից մեկը պատվիրակությունների այցն էր ռազմաճակատ և ռազմաճակատից թիկունք:

Առաջին պատվիրակությունը, որ կազմված էր կոլտըն-

126 Նույն տեղում, էջ 5:

127 ՀՊՊ կարինետի արխիվ, ֆ. 292, գ. 2, թ. 35:

տեսականներից (ղեկ. Գալումյան), ուազմաճակատ մեկնեց 1942 թ. փետրվարին: Այն ուղեկցում էր կարմիր բանակի մարտիկների համար նվեր-ծանրոցներ տանող գնացքին: Մի փոքր ուշ, 1942 թ. մարտի սկզբներին, ուազմաճակատ մեկնեց Գերագույն սովետի նախագահության պատվիրակությունը (ղեկ. Մ. Պալյան), որը Ղրիմի ուազմաճակատում մարտնչող Հայկական 390-րդ (Հրամ.՝ գնդապետ Ս. Զաքյան) դիվիզիային և նրա գնդերին մարտական դրոշներ ու նվեր-ծանրոցներ հանձնեց: Հայ ուազմիկներն ընդունելով մարտական դրոշները, երդվեցին պատվով կատարել Հայ ժողովրդի պատգամը, փառքով պսակել մարտական դրոշները: Այնուհետև ուազմաճակատ մեկնեցին արվեստի և կուլտուրայի գործիչներից կազմված պատվիրակությունները՝ Հայաստանի սկետական Զազ նվագախմբի անձնակազմը (ղեկ. Ա. Այվաղյան), Հայկական երգի-պարի վաստակավոր անսամբլը (ղեկ. Թ. Ալթունյան) և շատ ուրիշներ:

1942 թ. հոկտեմբերին Հայաստանի կուսակցական-սովետական աշխատողներից կազմված մի պատվիրակություն մեկնեց 89-րդ Հայկական դիվիզիա: Ժամանելով ուազմաճակատ, կուսակցական-սովետական դեկավար աշխատողները տեղում ծանոթացան գորամասում ստեղծված դժվարություններին և ստորաբաժանումների հրամանատարներին ու քաղաքաշատողներին օգնեցին՝ Հաղթահարելու այդ դժվարությունները:

1942 թ. հոկտեմբերի վերջին Հայաստանի գրողների Միության պատվիրակությունը (ղեկ. Գեղամ Սարյան) եղավ 408-րդ Հայկական դիվիզիայում: Պատվիրակության անդամները չերմ հանդիպումներ ունեցան միավորման անձնակազմի հետ:

1943 թ. հոկտեմբերին թաման թերակղի ժամանեցին Հայաստանի գրողների և մամուլի մի խումբ աշխատողներ (ղեկ. Հ. Մկրտչյան): Հանդիսավոր պայմաններում պատվիրակությունը հանդիպում ունեցավ դիվիզիայի անձնակազմի հետ, այնուհետև նրա առանձին անդամները եղան տարբեր ստորաբաժանումներում ու ուազմիկներին պատմեցին Հայ-

յաստանի աշխատավորների թիկունքում ձեռք բերած հա-
ջողությունների մասին և նրանց անունից ողջունեցին դի-
վիզիայի ողջ անձնակազմին՝ թամանում տարած փառավոր
ձաղթանակի առթիվ¹²⁸:

Պատերազմի ընթացքում կարմիր բանակի գործող զո-
րամասներում, ուղղմածովային նավատորմում միայն գեղար-
վեստական սպասարկում են կազմակերպել և շեֆական օդ-
նություն ցույց տվել արվեստի 156 ներկայացուցիչ:

Փոխադարձ այցով ուղղմածակատից եկել են Հայկա-
կան 89-րդ, 409-րդ, գվարդիական 51-րդ դիվիզիաների
պատվիրակները: Վերջիններս մայր Հայրենիք էին գալիս
իրենց ողջ անձնակազմի նամակ-Հանճնարարականներով:
Նրանք չերՃ ու հուզիչ Հանդիպումներ էին ունենում Հանրա-
պետության աշխատավորության հետ: Այդ Հանդիպումների
ընթացքում նրանք պատմում էին Հայկական միավորում-
ների ձեռք բերած մարտական հաջողությունների, մարտե-
րում աշքի ընկած ուազմիկների սիրազործությունների մա-
սին:

1943 թ. նոյեմբերին, երբ 89-րդ դիվիզիան թամանյան
անվանումն ստանալուց հետո, իր անդրանիկ պատգամա-
վորներին ուղարկեց Հայաստան, ի պատիվ դիվիզիայի
պատվիրակության (ղեկ. մայոր Գ. Կարապետյան), Հայկա-
կան ՍՍՀ Գերազույն սովետում կազմակերպվեց ընդունելու-
թյուն, որի ժամանակ պատվիրակներին Հանճնվեցին ՀՍՍՀ
Գերազույն սովետի նախագահության պատվոգրերն ու թան-
կարժեք նվերները: Պատվիրակության անունից շնորհակա-
լություն Հայտնելով, Զահան Կարախանյանը (որն այդ ժա-
մանակ արգեն ներկայացված էր Սովետական Միության
հերոսի կոչման) արտասանում է հետեւալ խոսքերը. «Այն
մարտական դրոշը, որ դուք ուղղմածակատ մեկնելիս, Հայ
ժողովրդի անունից Հանճնեցիք մեզ, մենք այն կրակի ու բո-
ցերի միջով պատվով առաջ ենք տարել և կտանենք նաև ա-

128 ՏԵ՛ս «Առաջ Հանուն Հայրենիքի», 24 հոկտեմբերի 1943 թ.:

ուաշիկայում և կօծենք այն հաղթանակների փառքով»¹²⁹: Հերոսի խոսքերն իրականացան: Թամանյան անվանակոչմանն արժանացած 89-րդ հրաձգային դիվիզիան պատրազմի բոցերի միջով իր դրոշը կովկասյան նախալեռներից հաղթանակով հասցրեց Բեռլին և դարձավ Կարմիր դրոշի, Կարմիր աստղի, Կուտուզովի 2-րդ աստիճանի շքանշանակիր թամանյան հայկական հրաձգային դիվիզիա:

Դվարդիական 51-րդ դիվիզիան իր պատվիրակությունները Յ անգամ ուղարկեց մայր հայրենիք (1942 թ. Հոկտեմբերին, 1944 թ. ապրիլին և 1945 թ. նոյեմբերին):

Թիկոնք ժամանեցին նաև 409-րդ դիվիզիայի պատվիրակները, որոնք իրենց զեկուցագրի մեջ նշեցին. «Մենք՝ հայ մարտիկներս և սպաներս հավաստիացնում ենք մեր հարազատ ժողովրդին, որ մինչև վերջ կկատարենք Զեր նամակնակազը և մեր հայրենիքի մյուս ժողովուրդների զավակների հետ միասին հերոսաբար կմարտնչենք վայրագ թշնամու դեմ, մեր հաղթանակի ժամը մոտեցնելու համար»¹³⁰:

Ինչպես տեսնում ենք, Հայաստանի աշխատավորները, այդ թվում կոլտնտեսալին գլուղացիությունը ամբողջ պատերազմի ընթացքում ուղմանակատի և իր հարազատ բանակի համար արեց այն ամենը, ինչով կարող էր օգնել հաղթանակի գործին: Սա հայրենիքի նկատմամբ ունեցած իսկական համաժողովրդական սիրո արտահայտությունն էր:

Գնահատելով թիկոնքում աշխատավոր ժողովրդի կատարած ծառայությունները, Սովետական Հայաստանի 25-ամյակի առթիվ ՍՄԿԿ Կենտկոմն ու ՍՍՀՄ ժողկոմսովետը իրենց ողջույնի հեռագրում գրում են. «Հայրենական պատերազմի տարիներին հայ ժողովուրդը պատվով կատարեց իր պարտքը Հայրենիքի հանդեպ: Հայ ուղմիկները, Սովետական Միության մյուս ժողովուրդների զավակների հետ միասին անձնվիրաբար պաշտպանում էին մեր հայրե-

129 Ք. Գ. Գրիգորյան, Սովետական Միության հերոս Զահան Կարախանյան, Երևան, 1954, էջ 33:

130 «Սովետական Հայաստան», 4 փետրվարի 1944 թ.:

նիքի ազատությունը և անկախությունը։ Հայաստանի բանվորները, կոլտնտեսականները և ինտելիգենցիան անդուչ կերպով աշխատում էին թշնամու դեմ հաղթանակ նվաճելու համար»¹³¹։

131 «Պավղաց», 25 նոյեմբերի 1945 թ.։

Ե Զ Ր Ա Փ Ա Կ Ո Ւ Մ

Սովհետական Միության Հայրենական մեծ պատերազմը մեծագույն փորձություն էր նաև սոցիալիստական գյուղատնտեսության համար։ Պատերազմը կրկին անգամ ցուց տվեց կոլտնտեսային կարգերի կենսունակությունը, նրա մեծագույն առավելությունը մանր սեփականատիրական տընտեսությունների հանդեպ։ Գյուղատնտեսության մեջ արտադրության միջոցների կոլտնտեսային-կորհետիվ սեփականությունը Սովհետական Միության հաղթանակի գրավականներից մեկն էր։ Պատերազմի ընթացքում երևան հկան և ամբողջ ուժով գրսեռովեցին կոլտնտեսային գյուղացիության վառ հայրենասիրությունը, աշխատանքի մեջ նրա անձնագոհությունը և սովհետական կարգերին մինչև վերջ նվիրված լինելը։ Սրանք գործոններ են, որոնք բազմապատկեցին մեր հայրենիքի հզորությունը և ապահովեցին հաղթանակը թշնամու նկատմամբ։

Պատերազմի տարիներին սովհետական ժողովրդի հաղթանակների կազմակերպիչն ու ուղղություն տվողը կոմունիստական կուսակցությունն էր։ Վ. Ի. Լենինը դեռևս 1920 թ. ասել է. «Առանց երկաթե և պայքարում կոփիլած կուսակցության, առանց այնպիսի կուսակցության, որը կարողանա հիտեւել մասսայի տրամադրությանը և ազգել նրա վրա՝ անհնարին է հաջող կերպով այգախսի պայքար մղել»¹։ Պատերազմի ժանր օրերին էլ ավելի զոդվեցին սովհետական ժողովրդի և նրա զեկավար կուսակցության կապերը։ Հայաստանի կոմունիստական կուսակցությունը, հանդիսանալով Սովհետական

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, Հատ. 31, էջ 35։

Միության կոմունիստական կուսակցության առաջավոր ջոկատներից մեկը, գաղափարական, դաստիարակչական և կազմակերպչական մեծ աշխատանք ծավալեց թիկունքում։ Հանրապետության կուսակցական կազմակերպությունները սովետական մարմինների հետ միասին արագ թափով վերակառուցեցին ժողովրդական տնտեսությունը, երկրի ամբողջ միջոցները ներդրեցին ռազմաճակատի կարիքները բավարարելու գործում։

Հայրենական պատերազմի տարիներին էլ ավելի կոփվեց ու ամրապնդվեց բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը, որով հօդս ցնդեց ֆաշիստների այն ենթադրությունը, թե իբր նրանց կհաջողվի իրենց կողմը գրավիլ Սովետական Միության գյուղացիությանը։ Ընդհակառակը, պատերազմում էլ ավելի ամրացավ սովետական պետության դասակարգային հիմքը՝ բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության անխախտ դաշինքը։ Այդ մեծ փորձության տարիներին մեկ անգամ կս հաստատվեց, որ բաղաքի և գյուղի աշխատավոր մասսաների դաշինքը սովետական հասարակության գլխավոր ու վճռական ուժն է, նրա առաջընթացի ու հաղթանակների կարևոր պայմանը։ Այդ դաշինքը հանդիսացավ սովետական հասարակարգի բարոյաքաղաքական միասնության վառ արտահայտությունը, բանվոր դասակարգի և գյուղացիության անքակտելի մարտական միությունը։

Քանի որ պատերազմը ամեն մի ժողովրդի նյութական ու հոգեկոր բոլոր ուժերի բազմակողմանի քննությունն է, ինչպես ասել է Վ. Ի. Լենինը², ապա նրա բախտը որոշվում է ոչ միայն ռազմադաշտում, այլև թիկունքում՝ հացահատիկի ու բամբակի դաշտերում, գործարաններում ու ֆաբրիկաներում։ Սովետական Միության տարած պատմական հաղթանակի գործում իր արժանի ավանդն ունի սովետական գյուղը։ Մեր քաջարի բանակը, որն այդքան հաստատակամ ու մարտունակ եղավ, դիմացավ ամեն տեսակ փորձություն-

ների, դա թիկունքի ամրության և միասնության շնորհիվ էր, որի մեջ իր համեստ ծառայությունն ունի կոլտնտեսային գյուղացիությունը։ Սովետական Հայաստանի գյուղացիությունը նույնպես պատվով բռնեց իր քննությունը պատերազմում և սովետական ողջ գյուղացիության հետ միասին օգնեց կարմիր բանակին՝ պատերազմը հաղթականորեն ավարտելու գործում։

Գյուղացիությունը բանվոր դասակարգի հետ միասին բարեխղճորեն կատարում էր կոմունիստական կուսակցության, սովետական կառավարության, կարմիր բանակի բոլոր առաջադրանքները։ Նա ուղմամթերքի և սպառազինության հետ միասին պետք է արտադրեր մեծ քանակությամբ պարենամթերք ու հումք։ Դա, ինչ խոսք, արտակարգ ծանր առաջադրանք էր, քանի որ այդ ամենը նա պետք է կատարեր պատերազմի հետեանքով առաջացած մի շարք գժվարությունների պայմաններում, գործադրելով գերբնական ուժ։

Ներքին արտադրական ոեզերվներն անկորուստ օգտագործելու, աշխատանքները ղեկավարելու և պետության առաջադրանքները ժամկետին կատարելու ուղղությամբ մեծ աշխատանք ծավալեցին ՄՏ կայաններում և սովորզներում (1941 թ. նոյեմբերին) ստեղծված քաղբաժինները։

Պատերազմի պայմաններում գյուղատնտեսության վերակառուցման հիմնական հարցերից մեկը գյուղական ամբողջ բնակչությանը արտադրության մեջ ներդրավելն էր։ Քանի որ աշխատող ձեռքերի գերակշռող մասը մեկնել էր բանակ, պետությունը կազմակերպչական որեէ միջոցառում ձեռնարկելիս հիմնականում հենվում էր կոլտնտեսականների հայրենասիրության վրա։ Պատերազմի ընթացքում փոխվեց աշխօրերի վարձատրման կարգը, օգտագործվում էր պարտագիր մինիմումի սիստեմը ոչ միայն մեծահասակների, այլև անշափահասների նկատմամբ։ Կոլտնտեսային արտադրության մեջ վճռական դերը պատկանում էր կանաց, պատանիներին ու աղջիկներին, որոնք փոխարինում էին տղա-

ձարդկանց, թե՛ որպես արտադրության կազմակերպիչներ, թե՛ որպես անմիջական արտադրողներ:

Գյուղատնտեսության վերակառուցման մյուս կարևոր հարցը նյութական միջոցների առավել խնայողաբար օգտագործումն էր: Վառելանյութի և պահեստամասերի կրծատման հետեւանքով վերակառուցվեց գյուղատնտեսության նյութատեխնիկական բազան: Մերենաները նորոգվում էին հին մասերի հաշվին, ինչպես նաև տեղում համապատասխան փոխարինիչներ արտադրելու միջոցով: Գործածության մեջ դրվեցին կողտ վառելանյութը, արորն ու գութանը, դաշտացին աշխատանքներում լայնորեն օգտագործվեց կենդանի բաշող ուժը:

1944թ. իրազրությունը մասամբ փոխվեց: Կարմիր բանակի հաղթարշավի շնորհիվ սովետական կառավարությունը հնարավորություն ստացավ որոշ միջոցներ տրամադրել նաև թիկունքին: Գյուղատնտեսությունը սկսեց ստանալ պահեստամասեր, վառելանյութ, որը մասամբ բարելավեց կոլտընտեսությունների ու սովորությունների աշխատանքները: Ռազմադաշտից վերադարձողների հաշվին գյուղը ստացավ նոր, կոփված կաղը: Այս ամենը զգալիորեն օժանդակեցին արտադրության ցուցանիշների բարձրացմանը: Այս գործում մեծ էր անձնական շահագրգուվածության սկզբունքի լայնորեն կինսագործումը: 1944 թ. փաստորեն գյուղատնտեսության համար գարձավ վերելքի տարի:

1944 թ. Հայաստանի կոլտնտեսությունները ևս ժամկետից մեկ ամիս շուտ, սեպտեմբերի 25-ին, կատարեցին հացահատիկի հանձնման պլան՝ 100,7% -ով, կարմիր բանակի հացահատիկի ֆոնդի պլանը՝ 102,5% -ով: Հաջողությամբ կատարվեցին անասնապահության մթերումների պլանները³:

Զնայած այս ցուցանիշներին, գյուղատնտեսության ընդհանուր մակարդակը նախապատերազմյանի համեմատությամբ դեռևս ցածր էր: ԶԷ՛ որ պատերազմի հետեւանքով

3 ՏԵ՛ս ՄԵՒ Հայկական մասնաճյուղի կուսարիմիվ, ֆ. 1, կ. 7, գ. 40, թերթ 379—382:


ավերվել էր 98000 կոլտնտեսություն, 1876 սովորող, 2890 ՄՏ
կայան⁴: Դրանց համապատասխան պակասել էր անասուն-
ների և թռչունների գլխաքանակը, կրծատվել էին ցանքա-
տարածությունները, արոտավայրերը և այլն: Ժողովրդական
տնտեսությանը և հատկապես զյուղատնտեսությանը պատե-
րազմի հասցրած վնասներն այնքան աշուելի էին, որ դրանց
վերականգնելը միանգամից անհնարին էր: Չնայած այս ա-
մենին, անդրդվելի մնաց կոլտնտեսային կարգը, որի բա-
զայի վրա ետպատերազմյան տարիներին տեղի ունեցավ
զյուղատնտեսության վերականգնումը և հետագա զարգա-
ցումը: Այդ գործին մեծապես նպաստեցին ՍՍՀՄ Գերագույն
սովետի նստաշրջանում ընդունված «ՍՍՀՄ Ժողովրդական
տնտեսության վերականգնման ու զարգացման 1946—
1950 թթ. հնգամյա պլանի մասին» օրենքը⁵, ՀամԿ(Բ)Կ
Կենտկոմի 1947 թ. Փետրվարյան և հատկապես 1953 թ.
Սեպտեմբերյան պլենումների որոշումները: Սովհատական
ամբողջ ժողովրդի հետ միասին Հայաստանի կոլտնտեսային
գյուղացիությունը ևս պայքարեց երկրի ավերված շրջաննե-
րը վերականգնելու համար և ետպատերազմյան հնգամյակ-
ների տարիներին ձեռնամուխ եղավ զյուղատնտեսության
զարգացման գործին: Այժմ էլ կյանքում կենսագործելով
ՍՄԿԿ ԽՍՎ համագումարի առաջադրած խնդիրները, հայ
աշխատավոր զյուղացիությունն իր ավանդն է ներդնում մեր
երկրում կոմունիստական հասարակարգի կառուցման գոր-
ծում:

⁴ «История Великой Отечественной войны Советского Союза 1941—1945 гг», т. VI, М., 1965, стр. 31.

⁵ «Правда», 21 марта 1946 г.

Բ ԱՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՎՐՅՈՒՆ	5
ԳԼՈՒԽ առաջին—Գյուղատնտեսուրյան վերակառուցումը պատերազմի պահանջներին համապատասխան	13
ԳԼՈՒԽ երկրորդ—Սովետական քիկունքը ռազմանակատիւմութ նենարան	21
Գյուղը ռազմանակատիւն	21
Գաղափարական աշխատանքի ծավալումը գյուղում	96
ԳԼՈՒԽ երրորդ—Հայատանի կոլտնտեսականների հայրենասիրական շարժումը	131
Մոցիակատական մրցության ծավալումը	131
Համաժողովրդական օգնությունը ռազմանակատիւն	152
ԵՐԱՖԻԱԿՈՒՄ	190



ԳԵԱՐԻԿ ԳՐԻԳՈՐԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈԼՏՆԵՑԵՍԱՅԻՆ
ԳՅՈՒՂԱՅԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱՋՄԻ
ՏԱՐԻՆԵՐԻՆ (1941—1945)

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ
պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակչական խմբագիր
Ա. Հ. ՇԱՂՋԱՄՅԱՆ
Գեղարվեստական խմբագիր
Հ. Ե. ԳՈՐԾՎԱԿՈՅՅԱՆ
Նկարիչ
Ա. Կ. ԳԱՅԱԳԱՐՅՈՅԱՆ
Տեխնիկական խմբագիր
Հ. Մ. ՄԱՆՈՒԶԱՐՅՈՅԱՆ
Մրգագիշ
Զ. Գ. ՆԱԹԱՆՅՅԱՆ

ՎՀ 04654 Պատվեր 637 Հրատ. 5076 Տպաքանակ 1000
Հանձնված է շարվածքի 18.05.1979 թ.: Ստորագրված է տպագրության
26/11. 1979 թ.: Տպագրական 12, 25 մամուլ. պայման. 10,3 մամուլ,
Հրատ. 8,63 մամուլ: Բող:զթ № 1, 84×108¹/32: Գինը 1 ս. 35 կ.: Տպա-
տեսակ՝ «գրքի սովորական»: Տպագրություն՝ բարձր:
Հայ. ՍՍՀ ԳԱ Հրատարակություն, Երևան, 375019, Բարեկամության 24 գ.
Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակության Երևանի տպարան,
Բարեկամության, 24:

Издательство АН Арм. ССР, Ереван, Барекамутян, 24г.
Типография издательства АН Арм. ССР, Ереван, Барекамутян, 24.

1 0. 35 4.:

A 1
64543

ԳԱԱ Դիմնարար Գիտ. Գրադ.



220064543